



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ԲԱՆԱՍԵՂԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԵՎԱԿ Պ.

Ս 411 Եղիցի լույս:
Բանաստեղ. (Պարույր
Սևակ).— Եր., Նախ-
րի, 1992.— 400 էջ:

Պարույր Սևակի
«Եղիցի լույս» ժողո-
վածուի ճակատագի-
րը ողբերգականորեն
նման եղավ հեղինա-
կի ճակատագրին:
Գրքի առաջին տպա-
քանակը (1989 թ.)
թոնագրավվեց:

Ժողովածուն լույս
տեսավ հետմահու,
հայտնի կրճատում-
ներով ու «խմբա-
գրումներով», որոնց
վրա դրված էր ժա-
մանակի սև թաթը:

Մեծ բանաստեղծի
վերջին ժողովածուն
հայ ընթերցողին է
հասել բնագրային ա-
ղավաղումներով:

Ընթերցողին առա-
ջին անգամ ներկա-
յացվում է ժողովա-
ծուի ամբողջական
անխաթար բնագիրը:
Նրանում տեղ են գը-
տել 51 նոր բանա-
ստեղծություններ, որ
հեղինակը նախապես
մտահղացել է մտցնել
ժողովածուի մեջ:

Կազմեց և ծանո-
թագրեց՝

ԱՐՄԵՆ ՊԱՐՈՒՅՐԻ
ՂԱԶԱՐՅԱՆԸ

4702080202 (5)

Ս _____ 92

705 (01)

ԳՄԻ 84Հ7—5

ISBN 5—550—00784—0

© «Նաիրի» հրա-
տարակչություն, կազ-
մելու, ծանոթագրելու և
ձևավորման համար,
1992



ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ

ՆՈՐՈՐՅԱ ԱՂՈԹՔ

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Ծա՛տ եմ վախենում
Բյուրավոր ու բո՛ւք հավատացյալից,
Բյուրատեսք ու սո՛ւտ հավատացյալից:
Եթե աստված եք՝
Փչեցե՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,
Հանգրե՛ք նրանց ջահերն այլազան,
Որ... եղիցի լո՛ւյս:
Եվ ո՛չ մի գավթում մի՛ ընդունեցեք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացված է:
Մերժեցեք նրանց զո՛հն էլ խոստացյալ,
Որ... զոհ չգնա ինքը հավատը՝
Մաքո՛ւր-վսե՛մը,
Անկե՛ղծ-անսո՛ւտը:
Ու թե աստված եք՝
Ամուր փակեցեք ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց՝
Անգի՛ր-իներասիո՛ւ-հաշվեկշռվա՛ծ այն աղոթքների,
Որով խաբում են ո՛չ իրենց,
Այլ ձե՛զ:
Եվ—բավական է—հասկացե՛ք ընդմիշտ,
Որ աստծուն նո՛ւյնիսկ հայհոյողները
Ծա՛տ ավելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացրել է ինքը հավատը՝
Խոցվա՛ծ-արյունո՛տ,
Այրվո՛ղ-ապտակվա՛ծ,

Յավա՛ծ-ճչացո՛ղ,
Մանո՛ւկ հավատը,
Որ հայր դառնալու համար է ծնվել:
Ու եթե հայր եք՝
Մի՛ թողեք,
Որ սուտ հավատացյալներն սպանեն նրան:
— Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է ավելի...

9.XI.65

Զանաթի

ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ

Առավոտ լուսո՛ւ,
Առավոտ մի ջի՛նջ,
Զի՛նջ, ինչպես... ոչի՛նջ,
Զի՛նջ, սակայն դեռ պա՛ղ:
Ու ես անհասկացող
Անջատում եմ ինձ
Աշխարհից ծանոթ
Ու պարպում եմ ինձ,
Դարձնում մի անոթ,
Որ լոկ դատարկ չէ,
Այլ նաև անօդ:
Եվ... նո՛ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժմ եթե ոչ ձեզ բոլորիդ,
Ապա գոնե ի՛նձ, միայն ի՛նձ համար,
Որպեսզի նախ ե՛ս
Եվ հենց ի՛նձ վրա
Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթե լինի այս անգամ սարքին՝
Նո՛ր միայն վստահ հանձնեմ ձե՛զ նաև,
Եվ ապրեք այնտեղ դուք մարդավայելի:
Ես՝ պատրանազերծ,
Բայց և հուսազեն,
Այս դեռ անվավեր ու նոր աշխարհում
Էլ չե՛մ զբաղվում ու չե՛մ զբաղվի
Չեղածի վրա եղածի թերին իզո՛ր քննելով,
Երազի վրա երեխայաբար անո՛րջ դնելով,
Կեղծված դրամով կեղծ բան գնելով,

Ոչ էլ ճարահատ ու միտումնորեն
Մահանալու պես անվերջ քնելով:

Ես՝ զարթնած արդեն,
Բայց դեռ անլվա,
Հեղուկով մի կուց,
Որ պարզևում է ձնհալն անխուսափ,
Նախ զովացնում եմ դեմքն իմ՝ հիվանդի՛,
Իսկ հետո՝ ամե՛ն տեսակ հիվանդի՛
Մա՞րդ լինի, երկի՞ր, թե՞ հավատ,— մե՛կ է:
Զովացնում նրանց ամենքի դեմքը՝
Իմ ամենաբույժ մատների հետքը
Անջինջ թողնելով սրա ու նրա
Դեռ գոց կուպերի,
Դեռ փակ շուրթերի,
Տակավիճ քնկոտ երեսի վրա:

Ու բոլորի՛դ մեջ,
Անխտիբ բոլո՛ր-բոլո՛ր-բոլորի՛դ,
Ինչ-որ սիրելի մի բան եմ գտնում,
Սիրելու ինչ-որ արժանի մի բան,
Որ հավանաբար
Ա՛յն ժամանակ է ստեղծվել արդեն,
Երբ հին չորս ոտքից երկուսը
Անդարձ
Մենք կորցրեցինք...

Եվ վեճ բարձունքից աններողության
Ես, քարի նման, վար եմ թավալվում՝
Հասնելով փափուկ ա՛յն ստորոտին,
Որից քիչ անդին
Ծահիճն է ապրում
Իր հավերժական ինքնածին կյանքով,
Եվ, քարի լեզվով, ասում եմ. «Այբ, Բեն»,
Այսինքն՝ «Արեգակ»,
Կամ՝ «Եղիցի լույս»...

16.111.67.

Արգիի

ԼՈՒՅՍ ԶՎԱՐԹ

Լո՛յս, լո՛յս զվարթ...
Եվ ո՛չ թե լույս երեկոյի,
Ի մտանել արեգական,
Այլ լույս զվարթ արդար գոյի՛
Ծաղատողն առավոտի...

... Ծնրադրյալ Բնությունն է ելնում ոտի.
Գիշերային ժամերգությունն է վերջանում:
Եվ Լուսաբացն է մոտենում դանդաղորեն,
Իբրև հսկիչ մի Լուսարար՝
Մարելով ու հանգցրնելով
Ամեն տեսակ լապտեր ու լամպ:
Եվ արեգակն է բարձրանում
Քրմապետի վսեմությանը:
Եվ ծուլ փոված ստվերները մարմնամսեղ
Սկսում են կարծես իրենք իրենց մարսել՝
Մասթափվում-գիհարում են,
Հետզհետե դառնալով ձիգ
Ու սլացիկ՝
Պարուհու պես մի թխամորթ:
Արշալույսն է շարունակում ածել փողը իր ծիրանի,
Որի բոլոր նեղ ծակերից լայն շաղվում է
Ինքը Արդար Արեգակը,
Եվ հնչում է ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
«Լո՛յս, լո՛յս զվարթ»...

Լո՛յս, լո՛յս զվարթ,
Լույս զվա՛րթ ու գերազանցի՛կ,

Լույս երգեցի՜կ ու նվագո՛ւն:
Դու՛ առաքյալ ամենօրյա,
Որ բերում է միայն հավատ,
Բայց ի դերն հանում-վանում
Եվ քողածածկ-ծպտյալ հույսեր:
Դու՛ սուրհանդակ, բայց և կավատ,
Դու՛ հետախույզ, բայց և մատնիչ,
Բայց ամենից առաջ՝ միշտ սե՛ր
Եվ ամենից հետո՝ միշտ սե՛ր...
Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Անձրևի պես
Տեղա այնպե՛ս,
Որ աշխարհում
Լոկ մի՛-միա՜կ ստվեր մնա,
Այն էլ միայն երկնի՛ վրա՛
Լոկ անձրևի՛ ստվերը կոր՛
Ծիածա՛նը...

Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Այնպե՛ս գործիր,
Որ նկարիչ քո մատներով
Վառեկներն իսկ, գունազարդված,
Դառնան կարծես արաղաղներ
Ու վերերգեն յուրատեսակ՝ ծուղրուղուով՝
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
«Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ»...

Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ,
Ծաղվի՛ր,
Մաղվի՛ր,
Թաղվիր այնպե՛ս և այնքան խո՛ր,
Որ մենք չապրենք՝ ինչպես ձուկը
Իր մշտամութ-անլուսամուտ պետության մեջ,
Որ քո հմուտ-ամենամուտ շողերի տակ

Ծածկամիտ ջուրն անգամ դառնա անկեղծ-հատակ,
Եվ անաղմուկ քո զարկերից ու քո տաքից
Զթրծըված ամեն երազ իսկույն ճաքի,
Ու վերերգվի մինչև անգամ ա՛յդ ճաքոցով
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.
«Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ»...

19.111.67

Արզեհի

**ՋԱՅՆԻՎ ԵՐԿՐՈՐԴ
ԱՌ ՏԵՐ ԿԱՐԴԱՄ**

Թողություն տուր, Տե՛ր, ծանրը Խավարին,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Թող ծառե՛րն անգամ (առանց և քամու)
Հարգանքով Նրա առջև կեռանան,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Մենք պահանջ չունենք,
Մենք գոհ ենք նույնիսկ,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Մենք խոստանում ենք,
Եվ մենք իսկապե՛ս
Նրան չե՛նք կարող ու չե՛նք մոռանա,
Միայն թե թող Նա թողնի հեռանա...

Իսկ թե հա՛րկ լինի, նամանավանդ պետք,
Ես Խավարի հետ կմեկնեմ Ինքըս՝
Դառնալով Նրա թագավորության
Հին Հպատակն ու նոր Քաղաքացին՝
Անդարձ կմեկնեմ Խավարի հետ Ես,
Միայն թե մեր այդ մեկնումից հետո
Ժամանի ինքը Արշալո՛ւյսը,
Գա՛,
Ու եթե մի քիչ տխրի, որ չկամ,
Բայց մի քիչ հետո
Եվ ուրախանա՛, որ իմ կորստով
Կորել է նաև ինքը Խավարը...

Արշալո՛ւյսը գա,
Եվ իր կտրված պորտից պոկվելով՝
Նորածին օրը ալ-կարմիր շնչի
Եվ ինքն էլ զգա,
Որ իր այդ շնչով խոնավ ու տաքուկ
Այնպե՛ս է լցվում աշխարհը կրկին,
Ինչպես տկճորը արնագույն գինով,
Եվ այդ լցումի թրթիռը հսկա
Մանրիկ անցնում է մեր իսկ ներքինով՝
Իբրև մի սարսուռ,
Որ մեզ կապում է անտես կապերով
Աստվածների հետ,
Դարձնում նրանց հետ մեզ հարաբերող,
Բայց և առնչում մեզ օվկիաններից,
Որոնց անվախճան ու տարուբերող
Մակընթացություն-տեղատրվությունն
Այլ բան չէ արդեն,
Քան թե աննշան մեր զարկերակի
Նշանակալից արձագանքը մեծ
Մեզնից սկսվող տարածության մեջ...

17.111.67

Արզնի

ԼՈՒՅՍԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Եթե մթության խտացումից է միշտ լույսը ծնվում,
Մի՞թե մենք կյանքում քիչ մութ ենք ծամել՝ հացի փոխարեն,
Եվ մի՞թե քիչ ենք քնել մեր քունը մղձավանջային՝
Մեզ, վերմակի տեղ, ծածկելով մթան մազեղեն քուրձով...

Մութը՝ անասեղ՝ կարկատանել է մեր աչքե՛րն անգամ,
Իր գույնն է խառնել և մեր արյա՛նը,
Կարմի՛ր արյանը,
Որ չորանալիս սևանում է միշտ,
Եվ չոր արյամբ էլ սևն է շատանում,
Այսինքն՝ մութը...

Անգամ ամեն ծառ,
Ամեն թուփ ու խոտ
Կարծես ճոճվում է, որ ավլի մութը:
Բայց ճոճմամբ իրենց ո՛չ թե ավելում,
Այլ հավելում են նրանք նույն մութը՝
Իրենց ստվերո՛վ...

Կույր ծնվածները բարի են անչափ:
Կարող է կարծել միայն մարդը չար,
Թե կույրերն անվերջ աղոթք են անում,
Որ ընդարձակվի կայսրությունն իրենց,
Ու թագադրվի մո՛ւթը,
Այդ մո՛ւթը՝
Իրականների մեջ իրականը,
Տիրակալների մեծ տիրակալը...

Եվ իսկապես էլ՝ մեր թիկունքն է մութ.
Անցյալը գիտենք գրքերով միայն:
Գուցե առավել մեր ճակատն է մութ.
Գրքերն են ճառում գալիքի՛ց նաև:

Մո՛ւթը առջևից—մո՛ւթը ետևից,
Մենք՝ երկու մթան նեղիկ արանքում,—
Էլ ի՛նչ է մնում, որ էլ ի՛նչ անենք:
Պիտի սեղմըվենք աչ ու ձախ թևից,
Սեղմըվե՛նք անվերջ—անվերջ խտանա՛նք,
Բայց... չբթանանք այնքան, որ կարծենք,
Որ եթե մթան խտացումից է միշտ լույսը ծնվում,
Ապա կծնվի ինքնաբերաբար՝
Ինչպես Հիսուսը Միածին Կույսից,
Մի՞նչև իսկ առանց... «Եղիցի լույս»-ի...

9.XI.65

Զահարյի

19.III.67

Արզնի

ՎԱՌԵՑԵՔ ԼՈՒՅՍԵՐԸ

Երազել է տալիս մութը,
Իսկ երազել մենք չենք ուզում:

Մենք ուզում ենք

Սին երազի երկար կապը քաշե՛լ-քաշե՛լ
(Ինչպես երկար թել ունեցող փուշիկների
թելն են քաշում մանուկները),

Սին երազի կապը քաշե՛լ

Ու ձգելով քերել նրան

Նստեցընել մեր ծնկներին՝

Սեր խաղացող աղջկա պես,

Եվ նայելով

Նրա լպիրշ ու խլրտուն աչքերի մեջ՝

Համբերահատ և բարկացած արուի պես նրան քիթել.

— Խո՛ւքդ ասա. այո՛ կամ ո՛չ...

Որովհետև չունենք այսքան հանդգնություն,

Որովհետև համբերահատ ու բարկացած արուներ չենք.

Որովհետև սեր խաղացող աղջրկան մենք

Չե՛նք զորելու նստեցընել մեր ծնկներին.

Որովհետև երկար թելով փուշիկ ունեն

Մանուկները, բայց ո՛չ թե մենք.

Որովհետև երազել է տալիս մութը,

Իսկ երազել մենք չենք ուզում,

— Ծո՛ւտ, վառեցե՛ք լույսերն ամեն...

Յ.Ճ.ԵՅ

Երևան

ԾԱԿԱՏԱՄԱՐՏ ՊԱՏԻ ՀԵՏ

Ես բարության պապակից եմ մխում հիմա...

Ու վերստին կանգնած եմ ես ինքս իմ դիմաց

Ինքնադժգո՛հ,

Ինքնապարսա՛վ

Ու խոսվո՛ւն:

(Բարությունն այս ինձ խեղդում է կամա՛ց-կամա՛ց)...

Կեղծի՛ք ու տե՛ր,

Ծի՛շտ ու ծառա՛,—

Դուք չե՛ք հոգնել այս խոսքերից գոռ ու գոռան,

Որ չեն մեխվում՝ ազգանվան պես՝ ամեն դռան,

Բայց դարձել են ճակատագիր

Ա՛յն համազանգ-համաճակատ մոլորակին,

Որ զգվել է այս խոսքերի արձագանքից՝

Սրտախառնուք զգալո՛ւ չափ,

Եվ դրանից է պտտվում՝

Այդ զգվանքի՛ց:

Պտտվում է ու պտտվո՛ւմ:

Դե եկ ու մի՛ խղճա նրան...

(Բարությունն այս ճգնում է ինձ, ճխում է ինձ

Իր կանացի գաղջ գրկի մեջ ու շոգ բռան)...

Ես նախկինն եմ, բա՛ն չի փոխվել.

Առաջվա պես ուժն եմ սիրում,

Նախ և առաջ՝ ո՛ւժը,

Հետո՝ ո՛ւժը կրկին,

Բայց այս ա՛րգամ արդեն ո՛չ ձեր հասկացածը.

Կարեկցանքի՛
Եվ բարության՝ն ուժն ահարկու,
Որ գորեղ է, ինչպես... հացը,
Հգոր, ինչպես... մանկան լացը,—
Կարեկցանքի՛
Եվ բարության՝ն ուժն ահարկու:

(Եվ հաղթում է նա ինձ հիմա՝
Հայրենիքի՛ կանչի նման)...

Համարյա թե պարտված արդեն՝
Ես թիկնել եմ ահա քարին,
Եվ իրար հետ ջերմություն ենք փոխանակում
Ես ու քարը՝
Անգամ առանց սակարկության,
Ու մինչև իսկ չնայելով
Դարձյա՛լ նայում մեր դեմ փոված-ծոված գետին,
Որ շարունակ
Իր ափերի կա-չկան է գույքագրում,
Որպես անխիղճ և անհոգի մի հարկահան:

(Բարությունն ինձ գերի տանում հարկի դիմաց
Ու կես գնով վաճառքի է հանում հիմա)...

Ինչքա՛ն կուզեն
Այս գետի պես թո՛ղ ինձ անվերջ գույքագրեն.
Իմ կա-չկան այս է որ կա՝
Այս ահարկու բարությունը,
Իմ թշնամի՛ն,
Ոխերի՛մը,
Որ ուզում է խեղճիս խեղդել
Ցավով թաքուն, բաց պայքարով,
Բայց... չի՛ կարող,

Որովհետև գետն ինչքան էլ ահեղ լինի՝
Ափերն էլի շա՛տ ավելի գորավոր են,
Ինչպես որ կյանքն է գորավոր բարությունն:

(Բարությունը, վերջ ի վերջո, ես կխեղդե՛մ,
Թե չարացնող կյա՛նքն էլ չօգնի՝
Խեղդվելիս... մե՛ջըս կխեղդեմ)...

29.X.65
Զանախի

ԱՐԽԱՐՀԻ ՀԻՆ ՍՊԻՆԵՐԸ

Ա՛խ, այս աշխարհի հին սպիները...

Մեր նույնիսկ առո՛ղջ մտերի մեջ էլ նրանք են նվում
Եվ տառապանքով հարստացնում են մեզ ու մեր կյանքը,
Որ ամհամեմատ աղքատ կլիներ,
Եթե ամենքն լինեինք առողջ,
Ինչպես արջառը
Կամ անանուխը:
Էլ ինչո՞ւ եք դուք, սիրելիներ՛րս, այսպես վախենում
Հին սպիների կազդուրիչ ցավից:

Եվ այդ ո՞ւմ է պետք
Պատգամախոսի մեր ծիծաղելի վատահոյությունը,
Եթե օրենսդիրն այն ցավն է միայն,
Որի ծնունդն ենք:
Ու կնճիռների վայրիվերումը
Բնավ էլ պա՛ր չէ,
Այլ մի այնպիսի՝ արարողություն,
Որով ամեն օր սրբագործվում է ինքը ճակատը:
Ուրեմն էլ ինչո՞ւ, սիրելիներ՛րս, ինչո՞ւ խուսափել
Հին սպիների հարուցած ցավի սրբագործումից:

Եվ ցա՛վն է արդյոք վտանգավորը,
Թե՞ հենց այն դեղը,
Որով ձգտում ենք ցավը դարմանել,—
Այս տափակ հարցին
Ո՞վ պիտի իր սուր պատասխանը տա,
Այդ ո՞ր հիմարը:

Եվ ո՞վ կարող է ցավի հետ վիճել,

Այդ ո՞ր հիմարը:

Եթե ցավի հետ վիճելը նույնն է՛,
Ինչ ծովի վեճը աղաջրրի հետ:
Ուրեմն՝ էլ ինչպե՛ս, սիրելիներ՛րս,
Մենք ինչպե՛ս պոկվենք ինքներս մեզնից
Եվ ինչո՞ւ պոկվենք:

Ուր որ է կրկին կիջնի գիշերը
Եվ մեր վրայով կանցնի ծանրորեն՝
Մամլիչի՛ նման,
Եվ մեզ համարյա իրո՛ք կսպանի՝
Մի յոթ-ութ ժամով:
Բայց չե՛նք մեռնի մենք.
Մեր ապրած մահը և վերապրումը
Կսամլենք կյանքի երեսի վրա՝
Մեր ոտքի՛, ձեռքի՛, մտքի՛ հետքերով
Եվ ցավի՛... երբե՛ք չբարեփոխվող ուղղագրությունամբ,
Որ մանուկ օրը, աշակերտի պես,
Սկսի հեզել գրերը կյանքի՛
Մեր ոտքի՛, ձեռքի՛, մտքի՛ հետքերը
Ցավի չփոխվո՛ղ ուղղագրությամբ,—
Մի հի՛ն դասագիրք, սիրելիներ՛րս,
Որ ինչո՞ւ վառենք՝ քարածղխի տեղ...

Ուրե՛մն ի՞նչ անենք, սիրելիներ՛րս:
Այսուհետև էլ գոհությա՛մբ կրենք
Եվ դեռ ավելի՛ն՝
Հոշակենք օրե՛նք
Մեր ցա՛վը՝
Լա՛վը...

4.XII. 64

Երևան

9.XI.65

Ջանաբյուհ

ԽԱՐՈՒՅՎ ՍԱՌՈՒՅԾԻ ՎՐԱ

Թողե՛ք,

Որ ձեզ էլ մասնակից դարձնես
Անմեկին հույսի ձեր շհամտեսած անուշությանը:
Եվ ճաշակեցեք ու թաթախվեցեք
Հավատացյալի երեխայական միամտությամբ,
Որովհետև մեր հարստությունը վշտե՛րը չեն լոկ,
Ու միայն տանջանք-ովայտա՛նքը չէ մեր պահուստը փակ.
Եվ որովհետև մտահոգությունն այլ բան չէ,
Քան թե եքի փնտրտուք.
Եվ որովհետև կյանքն—ի՛նչ էլի լինի—ընդլայնում է մեզ,
Ինչպես լեռների կատարներն են միշտ հեռացնում կրկին
Ա՛յն հորիզոնը,
Որ փակ է թվում լեռան ոտքի տակ.
Եվ որովհետև ես սիրում եմ ձեզ,
Բոլորի՛դ սիրում,
Ու բոլորիցըդ ոմանք՝ նաև ի՛նձ...

Ուրեմըն թողե՛ք,

Թողե՛ք,

Որ ձեզ էլ դարձնես մասնակից
Ա՛յն նախածանոթ հույսի համտեսված անուշությանը,
Որ մեր երեկվա
Ու մեր այսօրվա անուժությանը
Ասում է. «Կա՛նգ առ»՝
Ավշավորելով ո՛վ գիտի ի՛նչով,
Ու մեր մարմնական անարմատ ծառի
Անհասկանալի աշխատանքը մույթ
Տալիս է իր պարզ պտուղը՝

Ծիծա՛ղ,

Ժպի՛տ,

Գոհությո՛ւն

Եվ «փա՛ռք աստըծու» գոչելու կարիք...

Եվ փա՛ռք աստըծու,

Որ մեր աչքերը

Լոկ թխսավայր չեն բու-ագոավների,

Այլ նաև փեթակ՝ լցված շողերով,

Եվ ականջները՝

Մարդաձև ծառի մեր փշակը գույգ,

Դամբարաններ չեն լոկ սրտնեղության,

Այլ նաև խոր բույն՝

Լի՛ ամեն տեսակ տաք ձայնեղությամբ:

Եվ փա՛ռք աստըծու,

Որ մենք կարող ենք մեզ մաքրել այնպե՛ս,

Ինչպես օվկիանն է ինքն իրեն մաքրում:

Եվ փա՛ռք աստըծու,

Որ աղմուկների հասունացումից

Թագադրվում է ո՛չ թե գիշերը,

Այլ օ՛րն է ծնվում:

Եվ փա՛ռք աստըծու,

Որ մեր հոգու մեջ

Եթե կա ամիս տերևաթափի,

Ապա կան օրեր և աստղաթափի՛,

Եվ աստղաթափի՛...

Հազա՛ր բերան փառք:

28, 29. X. 65

Զահարի

Մաքրություն է պետք՝ տեսքով մեխակի՛,
Որ հողը մեխի հողին՝ իրենով,
Եվ իր բուրմունքով սուսնի անս
Օղը հողի հետ ու մեզ էլ՝ անանգ...

Մաքրություն է պետք՝ տեսքով սոխակի՛,
Որ միայն իրեն՝
Լո՛կ իրեն ծանոթ մի այբուբենով
Միշտ էլ երկրային ազդանշաններ հողի տիեզերք
Եվ պատասխաններ թերևս ստանա,
Մեզ համար անհա՛յտ, լո՛ւրջ պատասխաններ...

Մաքրություն է պետք
Եվ կերպարանքով, տե՛ս, ա՛յն թռչունի,
Գլխարկը կարմիր— ինքը սև համակ
Հենց ա՛յն թռչունի,
Որ իր կտուցը երկինք է ցցել
Եվ աղոթում է
Անփարսխ-անհոտ կարդինայի պես
Ո՛չ թե մեր հոգու,
Այլ այս աշխարհի մաքրությա՛ն համար...

Մաքրությո՛ւն է պետք...

Մաքրություն է պե՛տք,
Որ քարերն անգամ
Ներքնապես զգան
Իրենց երբեմնի հեղուկ վիճակում,
Որ արտաշնչեն բույսերն էլ... արև՛
Եվ ո՛չ թե միայն անտես թթվածին,
Որ մարդն էլ իրեն լավ զգա այնպես,
Ինչպես մեղեդին՝ վսեմ տաճարում,

ԱՇԽԱՐՀԻՆ

ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

Աշխարհին, այո՛, մաքրությո՛ւն է պետք՝
Ա՛յն հերոսների տխրունակ տեսքով,
Որոնք մեռնում են... անգործությունից...
Նաև ա՛յն կանանց, որոնք մինչև մահ
Ծանաչում են լոկ մե՛կ տղամարդու...
Եվ կերպարանքով ա՛յն տղամարդկանց,
Որոնք քայլում են գլխահակ թեպետ
Ու միայն իրենց ոտքի տակ նայում,
Բայց իրենց միտքը, անկախ իրենցից,
Իրենց լքելով՝
Թռչում է վերև,
Իսկ երբ հոգնում է՝ գալիս, ճայի պես,
Թառում է մարդու ախտի և բախտի
Համաշխարհային օվկիանի վրա...

Մաքրություն է պետք՝ ժպիտի՛ ձևով,
Որ մտնենք նրա տաք քաղցրության մեջ,
Ինչպես մեղուն է փեթակն իր մտնում:

Մաքրություն է պետք՝ ծիծաղի՛ ձևով,
Որ ժայթքի մեր շուրջ,
Մեզ չհարցնելով՝
Կոհակ առ կոհակ գա, մեզ լվանա
Առանց օճառի և առանց ջրի...

Գույճը՝ հանճարեղ կտավի վրա,
Եվ խաղալիքը՝ մանկան ձեռներին...

Աշխարհին... մանկա՛ն մաքրություն է պետք,
Եվ հենց ա՛յն մանկան,
Որին ամեն օր աշխարհ են բերում
Նաև աշխարհի... անմաքորները,
Մինչևիսկ նրա՛նք՝ անմաքորներ՝ըրը,
Քանզի... աշխարհին մաքրությո՛ւն է պետք..

27, 31.X.65

Զանախչի

ԱՄՊՈՏ ԵՂԱՆԱԿ

Խելքըս հալվում է ոսկորներիս մեջ,
Հալվում ու հոսում արյան պես անգույն՝
Իմ ոսկորները դարձնելով ասես սպիտակ երակ:
Ու ես դառնում եմ... համատարած սիրտ.
Ծարժումներս ամեն՝ սրտի բաբախում,
Բոլոր ձևերըս՝ շարժումներ սրտի...

Տե՛ր աստված, դու բարի՛ն կատարես...

Իսկ դրսում ցուրտ է,
Դրսում՝ ամպ ու զամպ,
Իսկ դրսում հիմա տարանցիկ քամին
Տոմսակ է փոխում ա՛յն կայարանում,
Որ ո՛չ մի տեսակ ցուցանակ չունի:
Եվ խշրտուքը անօգ ծառերի՝
Ծնչառությա՛ն պես,
Հնոցի՛ նման՝
Խուժում է սրտիս համատարածը,
Խուժում, գրավում ու նստում ծանրը՝
Չինգիզ խանի՛ պես,
Լեճկ Թեմուրի՛ պես
Ու թուրքի՛ նման:

Տե՛ր աստված, դու բարի՛ն կատարես...

Անվավեր սիրո հորձանուտի մեջ
Գլուխս եմ հանում ես՝ լուռուսի պես.
Մինչև կզակըս արդեն ջրատույզ՝
Չեմ խեղդվում դարձյալ:

Իսկ հետամնաց արփին, վերջապես,
Ծագում է դրսում,
Ծագում կեսօրին,
Աշխարհը ներկում ծաղր ու ծանակով:
Տարանցիկ քամին մեկնում է հեռու,
Ամպերը մատնում-դավում են իրար,
Ու խշրտուքը մրսող ծառերի
Հրդեհում է ինձ, կրակի մատնում՝
Չիճգիզ խանի՛ պես,
Լենկ Թեմուրի՛ պես,
Ու թուրքի՛ նման:

Տե՛ր աստված, դու բարի՛ն կատարես...

Իզությունն օդի սիրտս է խոռվում,
Սիրտըս, որի մեջ, արյան հետ մեկտեղ,
Հոսում է նաև իմ խելքը հալված:
Ու վերջանում է ահեղ անձրևով
Ինքնամատնությունն անարգ ամպերի:
Սևերես երկինքն ինքնաբավորեն
Դառնում է իսկույն պարզերես կրկին
Ու մթնոլորտը՝ արդեն լուսուղիտ:
Եվ ժամանակն է կախվում օդի մեջ՝
Նո՛ւյն Չիճգիզ խանի հորդայի նման,
Նո՛ւյն Լենկ Թեմուրի բանակի հանգույն
Ու մորեխի պես միևնույն թուրքի՛:

Տե՛ր աստված, դու բարի՛ն կատարես...

Սառչում են դանդաղ
Երակներս ամեն ու ոսկորներս.
Ո՛չ հալած խելքի,
Եվ ո՛չ էլ արյան հոսք ու ընթացում:
Ու վավերացված սիրո ճանկերից
Մնում է միայն մի սիրտ բզկտված՝
Արդեն ավերվա՛ծ,

Ավարվա՛ծ արդեն,
Որպես երբեմնի մի քաղաքամայր,
Որով անցել է տարանցիկ քամին՝
Նո՛ւյն Չիճգիզ խանը,
Նո՛ւյն Լենկ Թեմուրը,
Միևնույն թո՛ւրքը:

Տե՛ր աստված, փառքըդ շա՛տ լինի...

8, 19.XII.62
Երևան

ԹԱԽԾԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քայլում եմ այնպե՛ս,
Ոտներըս կարծես լինեն ուրիշի,
Այնպե՛ս կանգ առնում,
Ուրիշն է կարծես կանգ առնում այստե՛ղ՝
Այս քաղաքային լճակի առաջ,
Ու նայում այնպե՛ս,
Կարծես ուրիշի աչք եմ փորձարկում:
Եվ այս վիճակը տևում է այնքան,
Մինչև որ հանկարծ
Մի ժանիքավոր-գիշատիչ քամի
Վրա է ընկնում
Ու քաղաքային այս խեղճ լճակն է հոշոտում քինով:
Եվ ջուրը կարծես չի՛ լալիս անգամ.
Ջուրը տենդո՛ւմ է...

... Մի ժանիքավոր թախծ էլ հիմա
Մխվել է իմ մեջ, ինչպես անձավում,
Եվ հոշոտում է իմ էությունը:

Ա՛խ, փախստական իմ էությունը պետք է ե՛տ բերել,
Մի կերպ ե՛տ բերել, թեկուզ խաբելո՞ւմ,
Թե չէ դատարկված իմ քարանձավում
Ամայությունն է զկրտում անվերջ,
Թե չէ արթնացած իմ շղջիկներն են աչքերիս զարկվում,
Իրենց լարծուն թևերով կախվում իմ թարթափներից,
Իբրև գորշ կաթիլ հոգու արցունքի՝
Ա՛յն համաչափված կաթոցքի ձևով,
Որ ընդամենը լուկ քա՛ր չի ծակում,
Այլ համբր և խուլ վայրկյաններին էլ պարզևում է ձա՛յն

Եվ դրանով իսկ կետադրում է անտրրո՞ն օրը.
— Կե՛տ-գի՛ծ-կե՛տ... գի՛ծ-կե՛տ...

Ու եթե կետն ու գիծը միացնենք,
Դու ի՞նչ ես կարծում,
Մի՞թե սլաքներն իմ ժամացույցի ետ-ետ չեն գնա,
Որպեսզի... կրկի՛ն եղածը լինի
Ու ներկայանա անցյա՛լը դարձյալ:
Մի՞թե այս «միթե»-ն
Չի ծլարձակվում ո՛չ մի բարությանը:

Չէ՛,
Երազախաբ լինելուց երբեք զավակ չի՛ ծնվում...
— Կե՛տ-գի՛ծ-կե՛տ... գի՛ծ-կե՛տ,—
Օտար մի ձեռք է կարծես միացնում կետն ու գիծն իրար
Եվ դրանով իսկ չափում է մի կերպ
Զսպանակաձև թախծի... մոտավո՛ր երկարությունը...

Ու ես զգում եմ ճառագայթների ճնշումն ինձ վրա
Եվ ծանրությունը՝ քիբերիս խորքում:

Ու ետ դառնալով քայլում եմ այնպե՛ս,
Ոտներըս կարծես լինեն ուրիշի.
Նայում եմ այնպե՛ս,
Կարծես ուրիշի աչք եմ փորձարկում.
Ու եթե թախծում՝
Ուրիշի՛ սրտով...

Նույն ժանիքավոր-գիշատիչ քամին՝
Հոշոտված լճի դիակը լքած,
Իր մագիլներն է խրում գլխիս մեջ,
Նաև թիկունքիս,
Եվ չի՛ հասկանում,
Որ իմ գլուխը ինքս չէ բնավ,
Եվ ուրիշինն է թիկունքըս նաև...

Մանուկներն այստեղ խաղում են գնդակ,
Մանուկներն այնտեղ գնում են դպրոց,
Մանուկներն անվերջ երթն են խանգարում
Նախրի պես անցնող մեքենաների
Եվ մի մուրվա՛ծ-շվարա՛ծ քեռու,
Որ քայլ է փոխում ուրիշի՛ նոտքով,
Եթե նայում է՝ ուրիշի՛ աչքով,
Եվ մտածելով գլխո՛վ ուրիշի՛
Առայծըմ այն է հասկացել միայն,
Որ երազախար լինելուց երբեք զավակ չի՛ ծնվում...

16, 17.11.64
Երևան

ԳԻԾԵՐԱՄՈՒՏ

Ինքնաշարժերը,
Որ մինչև հիմա ասես կույր էին
Կատվի նորածին ձագերի նման,
Իրար ետևից աչքերն են բացում:

Ու լուռությունը
Արդեն ամեն ինչ հրմշտորում է,
Որ իրեն համար կարգին տեղ բացի.
Եվ այդ տևական հրմշտոցից է,
Որ հեռացած են թվում լեռները:

Գինովանում է մենակությունը՝ Խայամի նման,
Գինովանում ու հայհոյում... աստծուն:
Բարի շների հաշոցն էլ հիմա
Հաշոց չէ կարծես,
Աղոթք է՝ հղված հայհոյված աստծուն,
Որ հայհոյողին գթաբար ների:

Մութը դառնում է գրատախտակի ջնջոց սպունգե,
Մինչդեռ երկինքը
Դանդա՛ղ պատվում է աստղաեղյամով:

Եվ սկսում են մարդիկ քիչ խոսել
Եվ ցածր խոսել,
Քանի որ լույսերն ու լապտերները
Ավելի լավ են խոսում-գրուցում:
Եվ ամեն մի տուն
Ազդանշան է ճամփում տիեզերք՝
Մանկական լացով,

Կանչով մայրական,
Մեքենաների,
Անասունների,
Ասես կետզծված շշակ բառաչով
Եվ, ամենից շատ, լույսերով այս ևույն,
Որ մարում-վառվում-թարթվում են անվերջ,
Կարծես թե ինչ-որ մի և՛ր Մորզեի
Նո՛ր այբուբենի համապատասխան:
Իսկ հետո,
Երբ որ մարում են արդեն ձայներն այս բոլոր
Ու լույսերն այս ևույն,
Երևի նաև հասնում է պահը
Տիեզերական պատասխանների,
Որ ընդունում են մարդիկ... քնի մեջ՝
Մղձավանջի կամ երազի տեսքով:
Բարի երազըս՝ ձե՛զ, սիրելիներ՛ր,
Ու ձեր մղձավանջն՝ ի՛նձ, ձեր սիրելո՛ւն...

• XI. 65
Չանախչի

ՆԱՄԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Դու ի՛նչ ես ուզում:
Դու շա՛տ բան կուզես,
Բայց ես որտեղի՞ց քո ուզածը տամ:

Չե՛ս ուզում արև մի քառակուսի
Ու եռանկյունի մի լուսին, գիտե՛մ:

Դու ապառնիից մահու չափ հոգնել
Եվ ապառիկ ես ընդամենն ուզում
(Պատմություն կոչված անբերրությունի՞ց):
Իսկ ես քեզ ինչպե՛ս ապառիկն այդ տամ,
Երբ ի՛նքս եմ ուզում ապառիկ ուզել
(Իմ մեծահարուստ... համբերությունի՞ց):
Բայց դու մի՛ նայիր ինձ այդպես՝ ցաված.
Ես չեմ մերժում քեզ,
Ես նա եմ, հենց նա՛,
Ով մարդկանց մերժել չի՛ կարողանում...

Տե՛ս, գունափոխված ծառերը բոլոր
Իրենց սաղարթի ձուլածո ոսկին
Առանց զնգոցի մանրում են անվերջ,
Վերածում էժան թղթադրամի՝
Գնելով իրենց հանգիստ քնելու իրավունքը թանկ:
Ես թողն եմ աշնան ու կտակառուն,
Ու թույլ եմ տալիս, որ դու տեր դառնաս
Մի ամբո՛ղջ խտիտ թղթադրամի.
Բարո՛վ վայելես:

Կտրուկ քարափով վերջացող լանջը
Իր հնադարյան խզարով քարե,
Տե՛ս,

Համառում է կտրել երկնքի կապտաշիղ կողմը:

Ու ես էլ ահա

Մեկնած մատների իմ աղեղնաձև-անմաշ սղոցով
Ջանում եմ կտրել մի պատառ աշուն.

Ա՛ն, որ ձմռանը ցրտում չտխրես:

Քամին ավազից ու փխրուն հողից
Երեխայական լեռնապարեր է սարքում անընդհատ
Եվ դժգոհելով՝ երեխայի պես,
Հե՛նց տեղն ու տեղն էլ սարքածն է քանդում՝
Քանդածը կրկին վերաշինելու ան՛ր ախորժակով:
Լիազորված եմ ես քամու կողմից,
Ու եթե կուգես՝ մի վայրկյան հետո
Սարքեմ ու տամ քեզ մի ո՛ղջ լեռնաշխարհ.
Քեզ համար ապրի՛ր
Եվ շնորհակալ մի՛ լինիր բնավ,—
Դրանով դու ինձ կվիրավորե՛ս:

Էլ ի՞նչ ես ուզում:

Իսկ թե հոգնել ես դու ապառնիից
Եվ ապառիկի հույս ունես դարձյալ,
Ոչի՛նչ չես շահի ինքդ դրանով,
Իսկ ես դրանից շա՛տ եմ վնասվում,
Քանի որ ցավով տեսնում եմ կրկին,
Որ մարդկանց առաջ գո՛ր է բացվելըս,
Դաշտի պես փովել ու տարածվելըս.
Դարձյա՛լ չեմ տեսնում ու չեմ ճանաչում,
Թաքստոցներ եմ փնտրում կանաչում...

Թե քեզ չես խղճում՝ ինձ խղճա գոհե
Ու խոսքիս վերջին նվոցը լսիր.

Երբ որ աստղերը
Արդեն հոգնում են անշարժությունից,
Վերևից իրենց նետում են ջուրը,
Որ բարի քամին ման ածի իրենց:
Դո՛ւ,
Որ հոգնել ես քեզ միշտ պատեպատ խփելուց,
Արի՛,
Ապրիր հոգուս մեջ,
Որ չունի պատեր, որոնց դու խփվես:
Ապրի՛ր հոգուս մեջ,
Որ չես դեզերի նաև մտովին,
Որ դու կնստես ու կիշխե՛ս անգամ՝
Ա՛յն զարմանալի առատության հետ,
Որ այնտեղ տե՛ր է, արքայից արքա՛:

Ի՛նքքդ հասկացիր
Եվ ուրիշների՛ն դու լավ հասկացրու,
Որ ոչի՛նչ-ոչի՛նչ ձեզ տալ չեմ կարող.
Ես լոկ կարող եմ ձեզ սիրե՛լ... այսքա՛ն:

12.11.64

Երևան

ՊԱՐԱՊՈՒԹՅՈՒՆ

Զգիտեմ՝ ի՞նչ անեմ:

Պատեպատ եմ զարկվում:

Հազար բան եմ տնտղում՝ կույրի նման,

Ու հասկացած նրա ինչ-ինչոցը՝ կրկին

Պատեպատ եմ զարկվում:

Զգիտեմ՝ ի՞նչ անեմ:

Լավ է էլնեմ-զնամ, տամ փողոցին տուրքը.

Կամ հավաքեմ հարկըս նույն այդ փողոցներից:

Սակայն ինչի՞ զնամ, եթե կարիք չունեմ:

Եվ իմ տասը մատով իմ զույգ աչքի համար

Բանտի ճաղերի պես ինչ-որ բան եմ սարքում՝

Ծակատըս սեղմելով մտածում եմ,

Թե ի՞նչ անեմ հիմա: Եվ բանտային

Ծաղի արանքներից լուռ հաժում է

Իմ հայացքը տարտամ: Զղայնացած հագում,

Աչքերս ազատում եմ ճաղից տասնամատնյա.

Թո՛ղ որ ապրեն ազատ,

Ո՞ւմ են վնաս տվել:

Եվ աչքերս էլ իսկույն շան պես վազում,

Դեմ-դիմացիս պատ ու ցանկապատին

Փակցրված հայտերը և ազդերը բազում

Հոտոտում են, շան պես, որ ինձ օգնեն

Իմ երեկոն մի տեղ վաճառելու համար՝

Մի թատրոնի

Կամ թե

Մի համերգի տոմսով...

«Երբ ժամանակ լինի» ասելով չե՞ր,

Որ անցավ մեր կյանքը,

Մինչդեռ այս վայրկյանին՝

Ժամանակի վիժվա՛ծք և գործի սո՛վ...
Եվ իմ ներսի ճայնը

Խաղաղությամբ մի բույժ
Սկսում է ճնշել ու մամլել ինձ այնպե՛ս,

Որ ես քիչ է մնում «հե՛յ-հե՛յ» գոռամ՝

Նախրապանի նման կամ հովվի պես.

Թո՛ղ իմ հոտ ու նախրի մտքովն անգամ չանցնի,

Թե անտեր են իրենք:

«Հե՛յ-հե՛յ» կանչելն, անշո՛ւշտ,

Նո՛ւյնպես գործ է:

Բայց ես հո չեմ կարող

Անվերջ «հե՛յ-հե՛յ» կանչել:

Ուրի՛շ գործ եմ ուզում:

Իսկ ի՞նչ:

Այդ էլ գուցե աստվա՛ծ գիտի...

Պատասցել է մուրը արդեն վաղուց:

Ես հայացքով զարկվում նրա խավար պատին՝

«Լույս զվարթ» եմ երգում իմ մտքի մեջ

Եվ «Առավոտ լուսո»:

Սա էլ գործ է, հարկա՛վ,

Սակայն շատ լո՛ւրջ մի գործ,

Իմ ուժից վե՛ր մի գործ:

Եվ իմ ձեռքով, ահա՛, խմբավարի նման,

Կեղծ նոտայի վրա ինքս եմ ինձ ընդհատում,

Եվ այդ ինքնասաստման սուր շարժումից

Ձեռքերս սկսում են լուռ մտածել...

Ձեռքերս սկսում են լուռ մտածել,

Որ ձեռքերը (իրե՛նք) ունեն կյանքում

Ծա՛տ ավելի գաղտնիք, քան թե սիրտը՝

Այդ ինքնագոհ-գոռոզ-մեծամիտը...

Ու ձեռքերս հիմա չեն թվում ինձ

Ինչ-որ հավելվածներ անհարկավոր:

Ես իրար եմ զարկում նրանց ամուր
Ու թողնում եմ այդպես.
Թող կո՛խ բռնեն
Կամ աղոթե՛ն գուցե, — ի՛նչ կամենան:

Իսկ ոտներըս,
Խանդո՞տ այս ոտներըս,
Ինձ հանում են ւրեղից և ստիպում քայլել՝
Հավանաբար, թաքուն մտածելով,
Թե դրանից աչքիս կբարձրանա
Նաև իրե՛նց հարգը...

Նո՛ւյն վայրկյանին
Ես հիշեցի հանկարծ, որ առավոտ կանուխ
Բեռնամեքենայով ձիեր էին տանում,
Հասկանո՞ւմ եք, այո՛,
Չե՞ք հասկանում:
Այո՛, ձիե՛ր՝
Նրա՛նց,

Որ բյուրավոր դարեր
Իրենց մեջք ու թամբով ամե՛ն ինչ են տարել,
Ողջ մարդկային ցեղի պատմությունը կրե՛լ,
Իրենց սմբակներով պատմությունն այդ գոե՛լ,
Նրա փոշին սրբել իրենց պոչո՞վ:
Ահա նրանք, այո՛, բեռ են դարձել հիմա
Այս քո փոշտացող մեքենայի համար,
Որ և այսօր, խնդրե՛մ, քո դարավոր
Փոխադրականդ է փոխադրում...

Բեռնամեքենայի թափքում՝ ձիե՛ր,
Վախից կծի՛կ դարձած, դողդողացո՞ղ ձիեր,
Ամեն շրջադարձի ու կեռմանի վրա
Մե՛զ պես (մարդո՞ւ նման) ճկվո՞ղ-թեքվո՞ղ,
Մե՛զ պես (և ավելի՞) զգուշացո՞ղ ձիեր...
Ես ձեզ այդ վիճակից ինչպե՛ս հանեմ, ձիե՛ր:
Լացըս զուպեմ ու ձեր... ցա՛վը տանեմ, ձիե՛ր...

Եվ իմ ներսում,
Որտեղ պարապությունն արդեն
Իր պյուրոսյան տխուր հաղթանակն էր տոնում՝
Տեսնելով իր գլխին մի կեղծ դափնեպսակ,
Իսկ իր չորսքոլորքում՝ ստույգ դիեր, —
Նո՛ւյն իմ ներսում հիմա, այս վայրկյանից,
Վրնջում են ձիե՛ր,
Խրխնջում են ձիե՛ր,
Դոփո՞ւմ,
Բերաններից կրա՛կ թափում
Ձիե՛ր...
Ձիե՛ր,
Այսքան ձիե՞ր...

Եվ ոտներըս, իբրև յուրատեսակ «մեղա»,
Ինձ կտրում են փափուկ մահճակալից,
Տանում-նստեցնում են ա՛յն աթոռին չորուկ,
Որի առաջ կա մի... տանջված գրասեղան:
Տանում-նստեցնում են այդ աթոռին չորուկ,
Որպեսզի... ե՛ս հիմա ձիեր տեղափոխեմ.
Ձիեր տեղափոխեմ ի՛մ միջոցով — ձե՛ր մեջ,
Որ վրնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,
Որ վրնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,
Դոփո՞ղ,
Բերաններից կրա՛կ թափող
Ձիե՛ր...

31.X.65

Զահարյի



ԴԻՍԿԻՆԵՐ

ՄԻԱԶՔԱՆԻՆ

Մի աչքով եմ նայում կյանքին:
(Երկրորդ աչքըս ապակուց է):
Եվ մի հատիկ իմ այս աչքով
Ծառ եմ տեսնում,
Իսկ երկրորդով՝ ավելի՛ շատ,
Որովհետև
Առողջ աչքով ես տեսնում եմ,
Իսկ կույր աչքով... մի՛շտ երազում...

14.11.63

Երևան

ՄԻՈՏՆԱՆԻՆ

Մի ոտ չունեմ,
Ուստի և ձեր երկուսի տեղ
Երեքն ունեմ:
Երկու ոտով,
Ինչ դուք չունեք և հեշտ կոչում եք «հենակներ»,
Ես մայթերն եմ կետադրում,
Որ մարդկային կյանքի վեպը դյուրին կարդա
Մայթագրեր ընթերցելու ընդունակը,
Իսկ երրորդով,
Որի համար ինձ կոչում են միտունանի
Երրորդով էլ տնտեսում եմ տան ծախսերը՝
Ձեր գույգի տեղ միշտ կենտ կոշիկ պատվիրելով:
Չե՞ք նախանձում...

[Զանախի]

(1965, հոկտեմբեր, նոյեմբեր)

Սրան՝ հերթով՝ կախ է տալիս
Սողոման ատամների կեռ-կատարից,
Կախ է տալիս,
Բայց չի խեղդում,
Որովհետև փոխարկվում է նորից ձկան...

Իսկ իր դիմաց հաց իսկ չկա,
Այլ փշրանքներ չոր ու ցրիվ
Հին սփռոցի ամպած-զամպած դեմքի վրա՝
Աստղերի պես...

Դեռ թեքված է
Ու ճոճվում է վաղորձց դատարկ գավի վրա,
Ինչպես... ահեղ մի անդունդի:
Եվ գավի մեջ
Նա թերևս պարզ տեսնում է
Մի ցամաքած հատակ... ծովի,
Հենց ա՛յն ծովի, որ կատացվեր,
Եթե կլանքում իր կոնծածը
Կուտակեին մի տեղ հանկարծ:
Մինչդեռ հիմա՝ դատա՛րկ մի շիշ,
Որ սեղանը դարձրել է
Հրթիռարկման հրապարակ,
Եվ մի դատա՛րկ գավաթ ցնփոր,
Որի վրա,
Ինչպես ահեղ մի անդունդի,
Ինքը թեքվել ու ճոճվում է:

Ու ճոճվում է... լոկ կե՛նտ մի գավ բան խմելուց...
Եվ ինքն անգամ չիմանալով՝
Երագում է... հրազենի մի կե՛նտ գնդակ,
Որով իր դեմ տնկված շիշը, ինքն էլ մեջը,
Վեր կսուրար չեպի երկինք
Ու կտանե՛ր-կհասցընե՛ր
Իր իսկական... հայրենիքը՝
Քառասյին միգամածը...

30.111.67
Արզեի

ՀԱՐՔԵԾՈՂԸ

Նա հեռվել է հին սեղանին արմունկներով
Ու ճոճվում է—ու ճոճվում է
Արդեն դատարկ գավի վրա,
Ինչպես... ահեղ մի անդունդի...

Անթարթ փայլը
Իր աչքերի ճնթթորված բոլորակի
Ասես լինի արտացոլք մի հեռավոր մոլորակի,
Որ չունի լույսն իր սեփական...

Եվ իր գլխով,
Ուր փլված է միջնորմ ամեն
Ու ջարդված է ամեն փական,
Պտտվելով դեգերում է այն քստսը,
Որ եղել է ծնող մայրը
Այդ միևնույն մոլորակի...

Իր դեմ-դիմաց տնկված շիշը
Պատրաստ է, տե՛ս,
Կարծես երկինք սլանալու՝
Մի նորօրյա հրթիռի պես,
Որ վառելիք չունի սակայն...

Կրծած-թողած դեղին մեջքը աղաձկան
Ծա՛տ է մման սողոման լեռնապարի,
Որ սրա պիշ-չոված աչքում
Մեծանում է վայրկենապես
Ու... ճոճվում է,
Իսկ փուլ գալիս

ԽԵՂԿԱՏԱԿԸ

- Որտե՞ղ եմ ապրում քամիները:
- Պալատների մեջ:
Եվ, անշո՛ւշտ, մեր իսկ ունագներում:
- Որտե՞ղ է մեռնում լուսությունը:
— Քարոզների մեջ:
Եվ բռնադատված մեր իսկ ունկերում:
- Որտե՞ղ է պահված արյունը մեր տաք:
— Մեր հին թշնամու եղունգների տակ,
Մկրատի՛ կարոտ կեռ եղունգներում:
- Որտե՞ղ եմ մեռնում բոլոր կուռքերը:
— Ծափ ու ծծողայի ծանրության ներքո,
Նաև խունկերում:
- Իսկ գորանում է մեր խելքը որտե՞ղ:
— Ո՛չ գանգում,
Այլ մեր վերքերո՛ւմ:
- Իսկ որտե՞ղ է մեր փրկությունը:
— Մե՛ր,
Եվ, ավա՛ղ, ո՛չ մեր ձեռքերում...

25.X.62

Երեւան

ԾԱՂՐԱԾՈՒՆ

Վճռել եմ այսօր ձեզ զվարճացնել...

Ես, ինչ խոսք, այսօր պիտի բոց չուտեմ
Կամ կույ տամ դաշույն
Ու կլլածիս տեղ
Բերնիցքս հանեմ թաշկինակ կամ ծիտ,
Ինչպես անում եմ
Ծատ սովորական ձեռնածուները:

Եվ գլխիս վրա չպիտի դնեմ
Մի հսկայական երկաթե գերան
Ու կախ տամ վրան
Մութ-ճութ կիսամերկ կանայք սիրունիկ,
Ինչպես անում եմ, գիտե՛ք, կրկեսում:

Եվ ո՛չ էլ պիտի ես արջ պար ածեմ
Մի զույգ շնիկի հաշոց-նվագով...

Կարող եմ նաև դդումից սարքել
Արև՝ թե կուզեք, թե կուզեք՝ գլուխ...
Սատուոնից սարքել լայնեզր գլխարկ
Եվ տեղն ու տեղն էլ նվիրել սիրով
Ծխախոտագործ մի ընկերուհու...
Իսկ գլխարկից էլ կարողնաւ սարքել
Կամ մարշալ
Եվ կամ...
Ախար, բարեկա՛մ,
Ախար ինձ համար ո՛չ մի բան չարժի
Փայտին տալ, ասե՛նք, ուղեղի ծալքեր,

Ուղեղից... հավի համեղ կուտ սարքել,
Կուտից՝ կերակուր հասարակական...

Սակայն ես այսօր
Չե՛մ գրադվելու նման բաներով:

Ես այսօր պիտի ձեզ հավատացնեմ,
Չե՛զ հավատացնեմ—ի՛նձ վհատեցնեմ,
Որ հենց վաղվանից,
Պատվով ու հարգով,
Բանտարկյալները գազանանոցի
(Փղից սկսած ու հասած օձին),
Առա՛նց խտրության ու տարբերության,
Բոլո՛րը պիտի ստանան կարգով
Համապատասխան շքանշաններ
Եվ... ինչի՞ համար.
Լոկ համբերությա՛ն...

Ծքանշաններ կստանան, այսպե՛ս,
Բոլո՛րը,
Գուցե գեթերից քացի՝
Ա՛յն հին էշերից, որ մինչև այսօր
Չեն դարձել կարգին-լավ քաղաքացի.
Երբեմըն, դարձյա՛լ, տալիս են քացի՝
Իրենց վանդակի ճաղերին թեպետ,
Բայց մեկ չե՛ միթե. քացի է քացին...

Հույս ունեմ, որ դուք
Ինձ հավատացիք,
Ուստի թույլ տվեք՝ շարունակելով՝
Չե՛զ հավատացնել—ի՛նձ վհատեցնել,
Որ ճշմարտություն իսկույն ասելը
Դարձել է մի բան՝ այնքա՛ն հասարակ,
Որքան... ներեցե՛ք... որքան... միզելը:
Ուստի ասե՛մ ձեզ՝ բարեկամների՛ս,
Որ այսու և ետ բացառված հաշվեք

Հիվանդություննը երիկամների՝
Կա՛յ կոչվի, թե՛ մապ,
Քա՛ր կոչվի, թե՛ մար,—
Մեկ չե՛ ձեզ համար...
Ուստի ո՛նց չասեմ բարեկամներին,
Որ այսու և ետ պետք չէ սուտ ծախել,
Այլ, ինչպես ինքըս, մեջքից պոչ կախել
Ու... քշե՛լ կծող ճանճերին բոլոր՝
Դրանք կոչվեն մի՞տք, մտատանջություն՞ւն,
Թե՛ հոգետագնապ,—
Մի՞թե նույնը չէ...

Եվ ես,
Վերջապե՛ս,
Էլ ինչպե՛ս, ինչպե՛ս
Չե՛զ վհատեցնեմ—ի՛նձ հավատացնեմ,
Որ ահա այսպե՛ս,
Ծի՛շտ ու ճի՛շտ այսպես
Ա՛յն դեղին ցուլը,
Որ ուզում էի աշնանը գնել,
Կերավ ա՛յն կահաչ բանջարեղենը,
Որ ուզում էի գարնանը ցանել:
Ի՛նչ չտեսությունն,
Ի՛նչ չտեսությունն...

Ուրիշ ի՞նչ:
Ոչի՛նչ:
Ոչինչն էլ՝ քո պինձ,
Քո պինչն էլ՝ իմ պոչ
Եվ... ցտեսություն՞ւն...

15, 20.111.67

Արզեհի

ԽԱՂԱԼԻՔ ՍԱՌՔՈՂԸ

Ես կարող էի ամեն տեղ լինել
Եվ ամեն տեղ էլ ես կարող էի ճշարտ
«Չե՛մ ուզում» և կամ «Ուզում եմ»:
Բայց ես ամեն տեղ չեմ եղել բնավ
Ու չեմ էլ լինում,
Իսկ ուր լինում եմ՝
Ես ինձ մտքիս մեջ ասում եմ. «Չասե՛ս»:
Ես ինձ մտքիս մեջ ասում եմ. «Չասե՛ս»
Եվ իմ չասածը թողնում ամենքին,
Որ նրանք հետո տնտղե՛ն-շոշափե՛ն:
Ու երբ հասկանան,
Թե ինչ են իրենք տնտղել-շոշափել՝
Այլևս չասել չեմ կարողանա
Ու կասեմ.
— Գիտե՛ք,
Վճռել եմ դառնալ խաղալիք սարքող
Եվ, հավատացե՛ք, իրո՛ք կդառնամ:

... Աշնան պաղ քամուց ծառերն են շարժվում,
Ինչպես որ մարդու գլխում շարժվում է
Միտքը ճյուղավոր,
Եվ ցերեկային ամպած երկնքից
Ներքև են թափվում
Աստղերի պաղ-պաղ կաղապարները,
Որ ավելի կարճ կոչվում են «տերև»:
Ես խաղալիքներ կձուլեմ այդ պաղ կաղապարներով:
Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ
Լուռ կասեմ. «Չասե՛ս»,
Իսկ ի պատասխան հարցնողի հարցի

Ես կասեմ. «Որջո՛ւյն»:
Չգիտեմ, թե նա իմ մասին արդյոք ի՞նչ կ'ուտածի,
Իսկ նույն այդ պահին չեմ կարողանա ես չմտածել,
Որ կար մի աղջիկ...
Եթե ես ասեմ, որ մոռացել եմ անունը նրա,
Ինձ հավատացեք այնքան, որքան որ
Յուրաքանչյուրդ է հաստատ հավատում
Աշխարհի տարբեր լրագրորեին:
Եվ ամեն անգամ, երբ ես ուզում եմ
Աշխարհին հայտնել անունը նրա,
Ինքքս ինձ դարձյալ ասում եմ. «Չասե՛ս»:
Իսկ այդ աղջիկը, գիտե՛ք, ասում էր.
«Երբ Բեթհովեն եմ լսում՝ թվում է,
Թե ես քայլում եմ ծովի վրայով»...
Ես ունեմ նաև ճի՛շտ կաղապարը և այդ աղջրկա,
Տաք կաղապարը:
Ու խաղալիքներ ես պիտի ձուլեմ ա՛յդ կաղապարով,
Տա՛ք կաղապարով:

Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ
Լուռ կասեմ. «Ասա՛»:
«Դատա՛րկ բան, — կասեմ, —
Ընդամե՛նն արժի մի... անցած մի կյա՛նք»...

Այսպես՝ կարող եմ ամե՛ն բան սարքել.
Այդ իմպեսների մասին են ասում,
Թե մարդու տղան ոսկի ձեռք ունի:

Եվ ամեն անգամ,
Երբ ես նայում եմ իմ այս ձեռքերին,
Իմ ձեռքերը միշտ ինձ ասում են. «Հը՞»,
Որ հա՛րց չէ բնավ,
Այլ պատասխան է իմ լռին հարցին:
Իսկ ամեն անգամ
Ես էլ ձեռքերիս նայում եմ այնպես,

Ինչպես նոր պեղած իրիճ է նայում հնարանն անփորձ,
Եվ ասում էմ. «Հա՛»,
Որ պատասխան չէ, այլ հարց է շոշված:
Եվ իմ ձեռքերը գլուխ թափ տալիս,
Իսկ իմ գլուխը ձեռքով է անում,
Ու... հասկանում եմ, որ ես չե՛մ կարող
(Եվ աշխարհումըս ո՛չ ոք չի կարող)
Լոկ մի՛ բան սարքել՝
Ա՛յն միայն,
Ինչիճ ճշմարտություն են կոչել աշխարհում:
Լոկ ա՛յդ չի սարքվում,
Թեպես և անվե՛րջ, դարե՛ր շարունակ
Ջանում են սարքել
Անունով աստճո՛ւ,
Տիրակալների հրամաններո՛վ,
Պարանո՛վ,
Որ լոկ իր պնդությունն է որոշում
Մարդկանց պարանոցներիճ.
Ջենքո՛վ,
Որ մարդկանց կրծքերի վրա
Ուսուցանում է կետադրություն:
Սարքո՛ւմ են այսպես:
Դարե՛ր շարունակ:
Անդուլ սարքում ա՛յն, ինչ-որ չի՛ սարքվում,
Ուրեմըն նաև չի՛ կարող քանդվել:
Սարքո՛ւմ են:
Իսկ ես ումի՛ց եմ պակաս:
Եվ... վնովա՛ծ է,
Ե՛ս էլ այսուհետ
Ճշմարտություն եմ սարքելու, և շա՛տ:

Ու պիտի ծախե՛մ,
Ծախեմ ամենո՛ր՝
Որ կամենում են, թե չեն կամենում.
Խաչմերուկներո՛ւմ
Ու խանութների դռների՛ առջև.

Մայթերի՛ վրա
Եվ արձանների պատվանդանների՛ն,
Թե՛ գրքերի մեջ,
Թե՛ ամբիոններից:
Ու երբ ինձ մարդիկ հարցնեն. «Ի՞նչ արժի»,
Կպատասխանեմ արդեն ո՛չ թե ես,
Այլ այն խաղալիք անշիկը:
Եվ նա
Կասի ոչ այլ ինչ,
Քան հենց իր գինը.
«Դատա՛րկ բան, — կասի, —
Ընդամե՛նն արժի մի... անցած մի կյա՛նք»...

... Ու պիտի որ ես, ինքնե՛րդ էլ գիտեք,
Ծա՛տ հարստանամ իմ առևտրով:
Եվ այնքա՛ն պիտի ես հարստանամ,
Որ... համերգի տոմս առնեմ ու...
... գնամ Բեթհովեն լսեմ,
Եվ ինձ էլ թվա,
Թե ես քայլում եմ ծովի վրայով...
Իսկ թե այդ պահին
Գարո՛ւն թե աշուն կլինի դրսում,
Մի՛թե նույնը չէ: Եվ ի՛նչ բանն է իմ:
Մի՛թե նույնը չէ և ի՛նչ բանն է իմ,
Թե քամուց պիտի ծառերը շարժվե՞ն,
Ինչպես որ մարդու
Գլխում շարժվում է միտքը ճյուղավոր,
Եվ ցերեկային ամպա՛ծ թե չամպած
Երկնքից պիտի թափվե՞ն-չթափվեն
Գունեղ աստղերի պաղ կաղապարներ,
Որ ավելի կարճ կոչվում են «տերև»...

Ու տուն գնալիս
Եթե ինձ հանկարծ մեկն ասի. «Բա՛րև»,
Ես ի պատասխան կասեմ. «Ի՞նչ արժի»:
Թե պատասխանիս վրա ծիծաղեն ինչ-որ աղջիկներ,

Որոնց անունը չգիտեմ իրոք,
Իբրև պատասխան ես կասեմ.
«Չունե՛մ ձեր կաղապարը»:

Եվ կխոնրվեն նրանք իմ շուրջը.
Մարդիկ սիրում են միշտ խոսեցընել նրանց,
Ում իրենք խելառ են հաշվում:
Եվ կկամենան իմանալ իմ ով կամ ինչ յիները:
Ձեռներըս նորի՛ց ինձ կասեն. «Չասե՛ս»:
Ես ի՛նքս էլ, ի՛նքս էլ ինձ կասեմ. «Չասե՛ս»:
Սակայն խաղալիք սարքող վարպետը
Ի՛մ իսկ բերանից,
Ի՛մ իսկ բերանով
Արդեն կբռա՛ ու կկրկընի՛
Հնավաճառի ելեշումով.
«Մշմարտություն՝ ւն եմ ծախում, սարքովի՛»...

24.X.62
Երևան

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍԻ ԳԼԽԱՎՈՐԸ

Լսո՛ւմ եք ինձ:
Բավակա՛ն է,
Հանեցե՛ք ձեր դիմակները:
Հանեցե՛ք,
Որ քամու ձեռքով
Ձեզ կարոտած օդն ապտակի
Ձեր իսկական դեմքը տխեղծ,
Եվ շող-շաղափն արեգակի
Սրսկումի նման ծակի
Ընդարմացած ձեր դեմքը խեղճ,
Որի ծանոթ նմանությամբ են հորինված
(Մի՛ մոռացեք) աստվածները (մի՛ մոռացե՛ք)...

Ամաչեցե՛ք աստվածներից
Եվ հանեցե՛ք դիմակներդ,
Բավակա՛ն է:

Ես չեմ կարող նշել ճշտված թվականը
Եվ ժամանակը ճշգրիտ.
Բայցևայնպես այս հանդեսը,
Որ սկսվել է շա՛տ վաղուց,
Ավարտի է հասնում արդեն...

Բարոյական այն պարապը,
Որ շատ վաղուց
Ամենքիս մեջ հորանջում էր
Կարծես անչար և անվնաս,
Հիմա արդեն չարչարում է ու տանջում է՝
Վերածվելով մի անհատնում զկրտոցի...

Եվ թույն-փոշին ա՛յն խարտոցի,
Որ բանում է գիշեր ու զօր,
Բանում ինքնին և ինքնավար,
Նո՛ւյն թույն-փոշին հետզհետե
Ամե՛ն ինչի վրա թառում,
Խառնըվում է ամե՛ն ինչի՝
Հացի՛,
Երգի՛,
Մտքի՛,
Ծնչի՛:

Եվ խարտվածքի հոտ կփչի
Ծուտով արդեն ամե՛ն ինչից՝
Հացի՛ց,
Երգի՛ց,
Մտքի՛ց,
Ծնչի՛ց...

Հանեցե՛ք ձեր դիմակները,
Որ գեթ մի քիչ դյուրին շնչե՛լ կարողանաք...

Ինքնե՛րդ ասեք.

Բավական չե՞

Դուք ձեզանից ձեզ գողանաք

Եվ տեղն ուրիշ մեկին դնեք ձեր փոխանակ:

Բայց չափազանց ճշտապահ է արեգակը.

Երբ որոշյալ ժամը հասնի՝ կլուսանա:

Ձեր արթնացումն այնժամ արդեն

Կնմանվի մի պայթյունի՛,

Մի պայթյունի՛,

Ձե՛զ եմ ասում,

Որից հետո

Լուրջունն ու Փոշին պիտի գոտեմարտեն

Չգոյության գահի համար...

Ինչ-որ բանի

Ինքը աշխարհն է սպասում,

Ինչպես մի օր, չիմանալով,
Սուսաննան էր մերկ սպասում... ծերուկներին...

Իսկ դուք եկեք մի՛ սպասեք.

Հանեցե՛ք ձեր դիմակները,

Ծանաչեցե՛ք ինքներդ ձեզ

Վերջի՛ն անգամ,

Վերջի՛ց առաջ...

Պարն ավարտվել

Ու խաղն արդեն վերջանում է:

Հանեցե՛ք ձեր դիմակները:

Ուշացումի ամե՛ն պահից

Իմ վիճակը

Ձեր փոխարեն լրջանում է,

Որովհետև ինձ է տրված, դժբախտաբար,

Հիշեցնելու ձեզ վերստին ու վերջապես,

Որ ուշացած արթնացումը

Կնմանվի մի պայթյունի՛,

Որից հետո

Լուրջունն ու Փոշին պիտի գոտեմարտեն

Չգոյության գահի համար...

Դուք առայժմ դեռ լսում եք,

Ուստի նաև ի՛նձ լսեցեք

Ու հանեցե՛ք դիմակներդ.

Արդեն խաղը վերջացա՛ծ է...

Իսկ եթե դեռ պիտի խաղաք,

Է՛հ, խաղացե՛ք, խնդրե՛մ, ինչքան սրտների ուզի.

Խաղ խաղացեք ինքներդ ձեզ և իրար հետ,

Բայց... առանց ինձ:

Ես այլևս չեմ մասնակցում

Ո՛չ թե խաղին,

Այլ մինչև իսկ և մատաղի՛ն,

Թե մորթվողը

Մարդկայնություն-մարդկությունն է...

Ու ես արդեն ո՛չ բողոքում,
Ո՛չ ողորում,
Ո՛չ էլ կոկորդս եմ կեղեքում:
Ինչի՞ համար
Կամ ո՞ւմ:
Հիմա
Ես ջանում եմ լոկ... չլինե՛լ՝
Ամբողջովին դառնալ... դիմա՛կ:

1, 2.IV.67

Արզե՛ի

ՄԱՆ Ա.

ԻՐԵՐԻ ԴԵՄՔՆ ՈՒ ԴԻՄԱԿԸ

Իրերի դե՛մքը:

Իրերի դե՛մքը...

Իրերն ապրում են մի բոլորովին անծանոթ կյանքով,
Լոկ իրե՛նց համար,
Մի՛միայն իրենց:
Մինչդեռ մե՛զ համար
Նրանք պարզապես թատրոն են խաղում՝
Հե՛նց որ, քանի դե՛ռ նայում ենք նրանց:
Իսկ երբ չե՛նք նայում,
Հենց որ չենք նայում՝
Նրանք հանում են դիմակներն իրենց
Ու ծաղրում են մեզ՝ լեզու հանելով:
Իսկույն հանում են դիմակներն իրենց
Ու նայում իրենց դեմքով իսկական,
Որ խաղացկուն է (հավատացե՛ք ինձ),
Եվ արտահայտի՛չ,
Եվ խոսո՛ւմ-խոսո՛ւմ՝
Քամիների հետ վիճող ծառի՛ պես,
Լեռնային գետի՛
Ու գեղեցկուհո՛ւ...

Իրերի դե՛մքը:

Իրերի դե՛մքը...

Ա՛յ, եթե լինէր մի ճար ու հնար
Նկարել նրանց հենց ա՛յն պահերին,
Երբ նրանք իրենց դիմակն են հանում
Ու դրսևորվում բուն տեսքով իրենց:
Նկարել թաքո՛ւն, ինչ-որ անկյունի՛ց,
Անակնկալի՛ բերելով նրանց.
Նկարել նրանց... կոճակի ծակո՛ւյ
Կամ ինքնահոսի անտես սողանքո՛ւյ.
Նկարել այնպե՛ս.

Ինչպես որ ծածուկ կինոաստղի են լուսանկարում՝
Օրը ցերեկով տաք քնքշություններ փոխանակելիս,
Հանցագործին են լուսանկարում՝
Իր հանցանքի հետ գրկախառնըված,
Եվ Լուսնին՝ իր մութ—հակառակ կողմից...

Օ՛ր թատերական դիմակներ հագած իրերն այս բազում...
Ես համոզվա՛ծ եմ, ես հաստա՛տ գիտեմ.
Նրանք ինձանից վախենում-քաշվում-ամաչում են միշտ,
Ինչպես մերկ կինը՝ անսպասելի հայացքից օտար:
Եվ ամբողջ կյանքում նրանք մշտապես մի բան են անում՝
Դիմակ են դնում-դիմակ են հանում,
Ի՛նչ է թե իրենց դեմքը չտեսնեն ավելորդ անգամ:
Եվ նրանք, գիտե՛մ, մահս են ցանկանում,
Որպեսզի... ապրեն առանց դիմակի...

Բայց երբ կատարվի տենչանքը նրանց,
Նրանցից ոմանք
(Կամա թե անկամ, ուրախ թե տրտում)
Կուղեկցեն իմ դին
Եվ ինձ հետ մեկտեղ կթաղվե՛ն անգամ,
Ինչպես որ անցած դարերում հին-հին
Հոմանի, ծառա, ճորտ էին թաղում
Իրենց վախճանված տիրոջ հետ մեկտեղ...

Անդիմա՛կ արդյոք, թե դիմակ հագած
Իրերն են սիրում ետմահո՛ւ սիրով,
Սիրում են նրանց՝ ի՛մ իսկ ճորտերին...

ՄԱՍՆ Բ.

ԻՐԵՐԻ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարծում եք, թե մե՛նք, մե՛նք ենք մտովին
Լուռ մեճախոսում մեճ-մեճության մեջ:
Ո՛չ.

Մինչև անգամ մեր լռին խոսքում
Իրերն են մեզ հետ զրուցում անվերջ,
Այդ բարիներ՛րը,
Որովհետև մեզ խղճում են նրանք:
Եվ այդ պահերին
Կենդանանում է
Ու շնչավորվում ամեն իր այնպե՛ս,
Որ մինչև անգամ մեճության մեջ էլ մեզ մեճակ չզգանք
Եվ չապրենք կիսատ ու պոստ կյանքով:
Նրանք բարի են
Ու խղճում են մեզ՝
Մեճ-մեճակներին:

Եվ մեճակության այդ պահերին է,
Որ մենք չենք ցրվում չորս կողմի վրա՝
Սալահատակին վերևից ընկած կույր կաթիլի պես,
Այլ ներամիտիվում,
Կենտրոնաձգվում ձախից ու աջից
Եվ ստանում ձևն ա՛յն մսե խաչի,
Որ ունի մարդը,
Եթե փորձում է թռչել կամ լողալ:

Իսկ մեճության մեջ մարդն ի՛նչ էլ անի
Թռիչք չե՛ կամ լող:

Իսկ մենության մեջ՝ լողա՛ս թե թռչե՛ս,
Մե՛կ է՝ չլռել չե՛ս կարողանա...

Ու լուրջունը,
Որ համատարած մի ականջ է լոկ
Եվ ունի միայն մե՛կ զգայարան՝ լոկ լսողություն,
Այդ լուրջունը ուռչում է անվերջ,
Ասես մանկական փուչիկի նման,
Լցվելով ուռչում-ուռչելով լցվում
Մեր անլսելի խոսք ու զրույցով
Ու հետզհետե դառնում վիթխարի՝ մի օդապարիկ,
Որ եթե հանկարծ կամենա պոկվել՝
Մե՛զ էլ, մեր տո՛ւնն էլ վերև կհանի
Ու—թի՛ն—կտանի՛...

Բայց լուրջունը,
Որ համատարած մի ականջ է լոկ,
Եվ ունի միայն մե՛կ զգայարան՝ լոկ լսողություն,
Որքան ուռչում է՝ թանձրանում նույնքան
Ու դառնում կարծես
Մեզ համար մի նո՛ր՝ երկրո՛րդ... հայրենիք.
Հայրենիքի պես չփոխատրվող,
Հայրենիքի պես չփոխադրվող...

Դրսում
Երևի աստղերն են ելնում՝ ողջ շքախմբով,
Իջնում է նորից
Մի ճշմարտապես աստվածաշնչյան գիշեր
Պարզունակ ու նույնքան խորունկ,
Որ ով ուժ ունի՝ վայելի իրեն:
Դրսում
Երևի կենտ-կենտ լույսերը փորձում են խախտել
Նախապատմական վեհ լրջությունը Մեծն Խավարի:
Դրսում...
Մե՛զ հնչ, թե ի՞նչ է կատարվում դրսում:
Մենք ներսում
Մենակ ենք, բայց և մենակ չենք կարծես.
Իրերը բարի
Ամե՛ն ինչ մեր շուրջ կենդանացնում են ու շնչավորում,
Որպեսզի... մենք էլ հասնենք հենց իրենց առքին ու փառքին.
Թե իր են իրենք,
Մենք էլ՝ մենության ժամին ահարկու,
Մենք էլ՝ իրենց պես՝ դառնանք իր,
Այսինքըն՝ իր—ականանք:

ՄԱՍՆ Գ.

ԻՐԵՐԻ ԴԱՏՆ ՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ

1.

Մենք դատավոր ենք ամենքս էլ մի քիչ:
Եվ մենք դատում ենք ու դատավարում
Յուրաքանչյուր օ՛ր,
Նույնիսկ ամեն ժա՛մ:
Եվ մենք դատում ենք՝
Մեր գլխի թեթև թափահարումով,
Ծպոցով աչքի,
Խեթմամբ հայացքի,
Հոնքերի խաղով, ուսի թոթափմամբ,
Աջի կամ ձախի ա՛յն շարժումներով,
Որոնք օդի մեջ արձանագրվում
Ու կարդացվում են ոչ ավելի վատ,
Քան ամեն տեսակ ուրիշ փաստաթուղթ:

Մենք դատավոր ենք ամենքս էլ մի քիչ:

Ես էլ եմ մտնում այդ ամենքի մեջ
Ու դատավոր եմ նաև ե՛ս մի քիչ:
Եվ այսօր պիտի ես դատեմ... մարդկա՞նց:
Ո՛չ, այսօր պիտի ես դատեմ իրե՛ր
Ու դատապարտեմ առարկաների՛:

Ահա աթո՛րք:
Ունի բազմաթիվ այլ մականուններ:
(Դարեր շարունակ շատ է գործածվել, օրինակ, գահը):
Սա, ինչպես գիտեք, չորքոտանի է
Եվ չորքոտանի կոչվածների մեջ

Ուժեղագույնն է քուրի՛ց՝
Վագրի՛ց ու փղի՛ց անգամ:
Մենք բարի եղանք.
Կատվի և շան հետ

Սրան էլ մենք մեր տունն ընդունեցինք,
Որ մեզ ծառայի,
Ինչպես դարեդար (շնորհակա՛յ ենք) ծառայել են մեզ
Չորքոտանիներ եզը, ձին, շորին

Ու վերջիններիս ազգական էջը:
Բայց թշվառական ա՛յս չորքոտանին՝
Աթոռ ասվածը,
Սա այնտե՛ղ հասավ,
Որ մեզ, ներեցե՛ք, էջի տեղ դրեց:
Աթոռ կոչվածը, ինչպես գիտեք դուք,
Նրա համար է, ո՛ր. նստենք վրան:

Սակայն պարզվում է,
Որ սրա վրա նստողի վրա
Սա ինքն է նստում...

Սա՛, որ ծառա է
Եվ պարտավոր է ծառայել մեզ միշտ.
Մեզ է դարձրել իր անարգ ծառան.
Սա՛, որ ծառա է ու դարձել է տե՛ր,
Կդատվի իբրև... մի չար ապստամբ՝
Այսի՛նչ Օրենքի Այնի՛նչ Հողվածով:

Եվ այսուհետև պիտի՛

Ա ռ ա ջ ի ն .

Աթոռ ասելիս հասկանանք վարակ
Եվ զգուշանանք՝
Ինչպես վարակից:

Ուստի և՛

Ե ր կ ր ո ր դ .

Աթոռից միշտ էլ գերծ պահել նրա՛նց,
Ում ինքը կյանքը դեռ չի սրկել
Ա՛յն ախտականխիչ համապատասխան շիճուկով,

Որի մի ասեղն արծե... մի բանտարկություն
Կամ մի այնպիսի... առաքինություն,
Որ ենթակա չէ առք ու վաճառքի:

Եվ այսո՛ւհանդերձ՝

Ե ր ր ո ր դ .

Ով նստեց Աթոռի վրա
(Կամ՝ այլ կերպ ասած՝ գրավեց Աթոռ,
Կամ՝ արժանաշավ բարձրր Աթոռի),
Օրենքի ուժով պարտավոր է նա
Հիշել, որ ինքը երկոտանի է,
Այն էլ՝ բարձրագույն,
Եվ ո՛չ մի դեպքում իրավունք չունի
Վերստին դառնալ նո՛ր չորքոտանի,
Առավել ևս՝ չորքոտանու նո՛րտ:
Հակառակ դեպքում
Այս նո՛ւյն ամբիոնից,
Այս նո՛ւյն բերանով կհնչի արդեն
Այնի՛նչ Օրենքի Այսի՛նչ Հողվածը...

2.

Հաջորդի՛ն բերեք:

Ինչպես տեսնում եք՝ սա մի գլխարկ է,
Եթե ավելի ճիշտ պիտի ասենք՝
Գլխարկի տեսակ:
Իսկ ահա սա էլ տեսե՛ք, զգեստ է,
Իսկ առավել ճիշտ՝ համազգեստ:
Տեսա՞ք:

Ուրեմըն այսպե՛ս.
Այս զգեստի հետ
Ով որ դնում է գլխարկ այստեսակ,
Նա դադարում է... և մտածելուց:

(Այստեղ կա փոքրիկ մի անճշտություն,
Որ կամենում եմ հենց ինքքու շտկել՝
Դատապաշտպանի խոսքը կանխելով:
Դատավարական իմ այս խոսքի մեջ,
Որտեղ որ պետք է, ինքնե՛րըդ դրեք
Այնպիսի բառեր, որոնք մեր լեզվով
«Մեղմացուցիչ դեպք հանցանագ» կասվի,
Իսկ դասագրքում՝ «միջանկյալ բառեր»:
Դրանք են՝ «ոմանք... շատերը... հաճախ...
Երբեմըն... ցավոք... իհարկե... ոչ միշտ...»
Եվ բոլոր սրանց ազգականները):

Դառնանք մեր գործին:
Ուրեմըն այսպե՛ս.
Այս զգեստի հետ
Ով որ դնում է այստեսակ գլխարկ,
Նա դադարում է և մտածելուց:
Սակայն մի՞թե մեզ, ինչպես ասում են,
Պատիվ է բերում չմտածելը:
Եվ ճի՞շտ ենք անում,
Երբ մեզ վարժում ենք չմտածելուն,
Ի՞նչ է թե հանկարծ... սխալ չգործենք:
Նախ՝
Այսպես վարվելն անարգանք է մեծ
Մեր Դատարանի և Իրավունքի հասցեին: Այո՛:
Ի՞նչ է ստացվում.
Եթե ոչ մեկը սխալ չգործի,
Էլ ո՞ւմ մենք դատենք:
Եթե այդպես է՝
Ուրեմըն դեմ եք մեր... Դատարանի՛ն,
Մեր Արդարադա՛տ,
Նակ Անկաշա՛ն,
Նակ Հարազա՛տ,
Ժողովրդակա՛ն մեր Դատարանին,
Որովհետև մենք
Առանց սխալի չենք կարող ապրել,

Ինչպես չի կարող
Ավտոտեսուչը՝ առանց վթարի,
Ծաղկավաճառը՝ առանց մեռելի,
Եվ առևտրի ամե՛ն աշխատող՝
Առանց ապրանքի անչա՛փ պակասի,
Ու շատ-շատերն էլ
Առանց հենց ահա այս համազգեստի
Եվ այս գլխարկի,
Որ կախարդական գլխարկ է կարծես.
Դրեցի՛ր թե չէ՛ էլ չե՛ս մտածում,
Գլխիդ փոխարեն
Արդեն գլխարկըդ՝ սա է մտածում:
Իսկ ի՞նչ ստացվեց.
Որ կարելի է աշխարհում ապրել
Եվ առանց գլխի՞,
Միայն գլխարկո՞վ:

Չեղա՛վ, ընկերնե՛ր, իսկապե՛ս չեղավ:

Ինչ ասել կուզե, որ մենք՝
Օրենքի և Իրավունքի
Սպասավորներ ու ծառաներըս,
Ունենք Օրենքի պաշտամունք, այո՛,
Բայց... պաշտոնապե՛ս ձեզ պիտի ասեմ,
Որ կույս օրենքը բռնաբարում է
Ո՛չ թե հատուկեմտ անձ-անհատների,
Այլ նաև ամբողջ ժողովուրդների՝
Իսկ եթե այլ կերպ սա ձևակերպենք՝
Բացառությունն է կուսություն խախտում,
Եվ դրանից է
Ծնվում մեր մանուկ Արդարությունը:
Եթե ոչ՝ գիտե՛ք, թե ի՞նչ կստացվի.
Երբ մենք արթուն ենք՝ մեր խիղճն է քնած,
Երբ խիղճն է զարթոնում՝ մենք ենք քուն մտել...

Բայց վերադառնանք մեր կիսատ դատին:
Այսպե՛ս ուրեմըն.

Անգլիարկ լավ է,

Սակայն անգլո՛ւխ... անկարելի է:

Ուստի մենք,

Որ միշտ գլուխ ենք դատում,

Այսօր կդատենք նաև մի գլխարկ՝

Այսինչ (առայծրմ նույնիսկ Չգրված) Օրինագծի

Այնինչ Հողվածի Այդինչ Հատվածով:

Ա. Այսուհետև համազգեստ հագնող ամե՛ն ոք պիտի

Իր (այսպես ասենք) համագլխարկը դնելուց առաջ

Ասի հետևյալ մի քանի բառը՝

Ծոտասելուկի՛, ո՛չ աղոթքի պես.

«Գլխարկըս օգենմ—գլուխըս պահենմ,

Գլխարկըս օգենմ—գլուխըս պահենմ»:

Իսկ եթե հանկարծ սխալմամբ ասի՝

«Գլուխըս օգենմ—գլխարկըս պահենմ»,

Կարող է այդօր նա տանը մնալ

Ու մինչև անգամ գործի չգնալ,

Եվ պիտի հաշվեն

Դա շատ հարգելի՛ բացակայություն:

Բ. Դպրոցական համազգեստները խստիվ արգելել...

Այսօրվա համար ո՞վ մնաց:

Բերե՛ք:

Յ.

Ահա՛, տեսնո՞ւմ եք,

Սա քառանկյունի մի թուղթ է,

Որին մենք թերթ ենք ասում

Եվ կամ լրագիր:

Սա հաղորդում է վատ ու լավ լուրեր,

Ծառեր՝ բազմաթիվ,

Դիպվածներ՝ սակավ,

Հայտարարություն ու դամբանական

Եվ եղանակի տեսություն՝ վերջում,

Հենց խմբագրի ճակատից վերև...

Այս դեռ սկիզբն է մեղադրանքի:

Սրա հանցանքի և արդեն գործած

Մեղքերի երկա՛ր շարադրանքին

Անցնելուց առաջ

Հայտարարում եմ ընդմիջում՝ մինչև...

Ներեցե՛ք մի պահ:

Մինչև ընդմիջում հայտարարելը

Իմ բարոյական պարտքն էմ համարում

Ե՛վ ըստ երկու բառ ասել ըստ հարկի՝

Նախ ձե՛զ դիմելով,

Իմ մեծապատի՛վ ատենակալներ:

Մեր ձեռքով սարքված

Իրերն իրավունք ունե՛ն իշխելու,

Բայց ո՛չ մեզ վրա:

Այսօր դատում ենք լուկ մի քանիսին:

Այսպես կդատենք բոլորի՛ն նաև՝

Մինչև հասկանան,

Որ մեր իսկ սարքած

Իրերն իրավունք չունե՛ն իշխելու

Գոնե մե՛զ վրա:

Եթե Օրենքը,

Որ նմանապես մենք ենք ստեղծել,

Եթե Օրենքն էլ ի՛ր լիներ, դիցուք,

Մինչև իսկ նրա՛ն մենք կդատեինք:

Զգուշացնում ենք.

Թո՛ղ վախենա նա

Եվ չվերածվի անկենդան իրի,

Այսինքն՝ թող նա

Չըհամարձակվի... իր—ականանալ...

28.X.65

1.XI.65

Չահախլի

ԴԱՐԱԿԵՍԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

ԴԻՄԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՕԳՈՒՏ ԱՆԴԻՄԱԿՈՒԹՅԱՆ

Ե՛ս՝ հեղինակ պարականոն գրքերի
Եվ չգրված օրենքների վերծանող,
Ասում եմ ձեզ.

— Մի վախեցեք վատթարից,
Նա է լավի օժանդակը թաքնըված...

Ե՛ս՝ հողախտով տառապողըս ողջ կյանքում,
Խոնավության բանտարկյալըս ու գերիս,
Տալիս եմ ձեզ իմ ցավըզգա ոտքերիս
Խորհուրդը խոր և հրամանն ահարկու.

— Խոնավությունն ունի ծաղիկ անարմատ,
Որ ծաղկում է ծիածանի յոթ գույնով,
Որ բորբոս եմ կոչում նրան աշխարհում:
Երբ բորբոսն է քարտեզ գծում մեր հացին
Կամ մեր հոգում,

Կամ երկրի մի անկյունում,
Զո՛ւր միամիտ կրակապաշտ մի՛ դարձեք.
Արեգակը պիտի խնդա՝ ձեզ վրա,
Պիտի խնդա՛,

Ո՛չ թե հասնի ձեր կանչին:
Ուրեմն ինձ պես խոնավապաշտ եղեք դուք,
Դարձեք ինձ պես հավատացյալ՝ բորբոսի
Եվ ապրեցեք նրա գծած քարտեզի
Մի անկյունում, ինչպես ցավը՝ հողի մեջ...

Ե՛ս՝ անվավեր խլիրտների թվացույց
Եվ մասնագետ հոգեհարցման,

Ես հիմա
Ասում եմ ձեզ.

— Հավատն ինչքան պակասի,
Այնքան հույսը կավելանա ձեր սրտում,
Որովհետև վատահելը լավ է շատ,
Բայց չափից շատ վատահելը՝ մի աղետ,
Որ չի կախվում թշվառական մեր գլխին,
Այլ անում է, քաղցկեղի պես, մեր ներսում...

Ե՛ս՝ նո՛ր գուշակ ըստ ստվերի և շուքի,
Ասում եմ ձեզ.

— Ստվերները կարճանում
Ու շուքերը երկարում են... առանց մե՛զ,
Բայց մենք պիտի շուքից հյուսենք ամուր թուկ,
Բայց մենք պիտի սյուներ շինենք ստվերից՝
Սպասելով, թե ե՛րբ պիտի այդ թուկով
Ու սյուներով մի օր սարքվի կախադան
Ստի՛ համար, որ հերաթափ գլխի պես
Չի՛ սանրվում, քայց սանրի պես շիկացած
Մեր ուղեղի զանգուրներն է հարթեցնում...

Ե՛ս՝ այդ ստի փխալների սրբագիր
Եվ ուշացող արդարության խմբագիր,
Ասում եմ ձեզ (մի՛ զարմացեք), որ իրոք
Ամենամեծ միամիտին աշխարհում
Մարդիկ Աստված կամ Արարիչ են կոչել:
Եվ ասում եմ ու հիշեցնում վերստին,
Որ աստծուն էլ այդ միամիտ,
Եվ աստծո՛ւն
Եթե երեք սուտ աղոթքով դու դիմես,
Ապա չորրորդ սուտ աղոթքով չե՛ս խաթի...

Ե՛ս,
Որ Աստծուն Աստվածատուր եմ կոչում.
Ե՛ս՝ խեղճերն խոռվարար-խոռվիչ,
Աստվածամերձ-աստվածարկու մի շատված,

Ասում եմ ձեզ, երկրորդելով երրորդում,
Որ երկնքում իրո՞ք չկան աստվածներ:
Նրանք վաղուց երկրի վրա են բազմած,
Բայց ո՞չ ուղտի սապատի պես, այլ ուղտի
Անտանելի բեռի նման, որ մի օր
Ցած կնետի համբերատար ո՞ւղտն անգամ:
Խոռվության սերմը, իբրև մանանեխ,
Տարածվում է արտանշշմա՛մբ մեր բերնի,
Տարածվում է երկրից երկիր, վարակում
Մինչև անգամ աստվածներին հողեղեն,
Որ մեր հոգում ունագնդակ են խաղում,
Որ խրվել են մեր կոկորդում՝ իբրև խորիս,
Եվ մեր լեզվից կախ են տվել կեռերով
Անվերջ նեխո՞ղ, բայց չփտո՞ղ մի դիակ...

Խոռվության սերմը, իբրև մանանեխ,
Իբրև որում մի փրկարար, իբրև ախտ,
Ահավասիկ և նրանց է վարակում:
Եվ ահա ե՛ս՝ մանանեխի մի պտղունց,
Մի բուռ որում, ախտի մանրէ մի սրվակ,
Ուզում եմ ձեզ ուրախացնել՝ ասելով.
— Երբ աստվածներն են խոռվում իրարից՝
Մարդիկ իրար հասկանալ են սկսում...

17.XI. 63
Ծրեան

ԴԱՐԱԿԵՍԻ ՀԻՄՆԸ

1.

Առաջներում մերպեսներին
Այրում էին խարույկի մեջ...

Հիմա պիտի խարույկ վառենք մենք ինքներըս,
Խարույկ՝ մեզնո՛վ:
Աղը կրակ է հանգցրնում:
Բայց մենք պիտի մեր կրակով աչքն էլ վառենք,
Որ ավելի բոցավառվենք,
Այնպե՛ս վառվենք,
Որ չմնա նույնիսկ մոխիր ու մնացորդ...

2.

Առաջներում մերպեսներին
Կա՛մ քառատում, կա՛մ սպանում էին դանդաղ՝
Մեր մարմնի մեջ ցից խրելով,
Ինչպես քորոցն են մխրճում
Թիթեռնիկի եղա՛ծ-չեղած մեկ օրվա մեջ...

Հիմա պիտի մենք ինքներըս հանգիստ ճստենք
Հեռուստացույց-աշտարակի բարձրը ցցին,
Որպեսզի մեր սուր դեմքերով ու խոսքերով
Մենք ինքներըս ցզվենք-մնանք
Ողջ մարդկության ականջներում ու աչքերում՝
Իբրև նշտար ապաքինման,
Իբրև ասեղ սրսկումի...

3.

Առաջներում մերպեսների ականջն էին հատում հիմքից,
Կտրում ձեռքը, կտցում աչքը, հատում լեզուն
Կամ ճակատին խորատալում անջինջ խարան՝
Համարելով մեզ չար կախարդ,
Սուտ մարգարե:

Իսկ մենք հիմա պիտի արձակ ու համարձակ
Վերադառնանք վաղցրական մեր արհեստին՝
Դառնանք կախարդ... մեր բարությանը,
Գեղեցիկի ու վսեմի նոր հարությանը,
Եվ մարգարե դառնանք իրոք՝
Ա՛յն անվանի և անանուն խոտերի պես,
Որ զգում են մոտալուտը արեգակի,
Եվ կամ թե չէ ա՛յն գազանի մաշկի նման,
Որ փոխվում է՝
Եղանակի փոփոխումը նախզգալով...

4.

Առաջներում մերպեսներին նայում էին,
Ինչպես նայել ու նայում են բորոտներին:

Եվ, ճիշտն ասած, մենք իսկապես
Բորոտներ ենք, սակայն... Աերսից:
Թաքուն տեղից, ցուրտ առնելուց
Դուրս է տալիս շուրթը ոմանց,
Իսկ մեր՝ Աերսը,
Իսկ մեր՝ հոգին:
Կարմիր-կարմիր թշտիկներով
Մենք պատված ենք Աերսից այնպես,
Ինչպես հոնի աշնանային ծառը դրսից:
Մեր Աերսն ամբողջ ասես լինի համակ խոտուտ,
Ինչպես կուրծքը Աորահարսի:
Քոր է գալիս մեր Աերսն ամբողջ...

Ու... մեր Աերսով-Աերաշխարհով
Մենք քսվում ենք ու քսվում
Ողջ աշխարհի ելունդներին,
Բարի ձեռքին մարդկայնության,
Միրո սուր-սուր եղունգներին
Եվ ցատումի սանրին քերող...

5.

Սոխի գլխի տեղ էին մեզ դնում հաճախ:
Մենք, որ սոխի գլուխ չէինք բուրբուղին,
Մենք նման ենք սոխի գլխի լոկ այնքանով,
Որ նրա պես բազմաշերտ ենք, բազմափաթեթ:

Եվ մենք հիմա մեզ ինքներըս
Պիտի բացենք հոժարակամ,
Բացենք շե՛րտ-շե՛րտ, փաթե՛թ-փաթե՛թ,
Երբ որ պետք է՝ թեկուզ կծու սոխի՝ նման,
Երբ որ պետք է՝ արդեն ծաղկի կոկոնի՝ պես:
Պիտի բացվենք հոժարակամ
Փաթե՛թ-փաթե՛թ ու շե՛րտ առ շե՛րտ,
Մինչև հասնենք մեր միջուկին՝
Ինչպես մայրերն են սպառում իրենց կաթը,
Մինչև իսպառ մենք սպառվենք,
Ինչպես այրերն են սպառում
Որդեսերման զորությունը...

6.

Կան խայտառակ ժամանակներ,
Երբ մարդ եթե իր բերանին կապ չի դնում,
Ապա նրա ձեռք ու ոտքին
Ուրիշներն են դնում կապանք:

Մենք մեր լեզվի կապն ենք կտրել,
Որովհետև, ճիշտ է, լեզուն չունի ոսկոր,
Բայց կարող է... ոսկոր չարդել,
Նաև կապանք ձեռք ու ոտքի:
Մենք, որ մարդ ենք ծնվել մորից,
Ո՛չ, չենք ուզում դառնալ նորից
Ինչ-որ ընձուղտ երկարավիզ ու բծավոր,
Մենք չենք ուզում դառնալ ընձուղտ,
Որ փիզներըս չերկարացնենք
Դեռ չեղած ու չլիճելիք
Բան տեսնելու հիմար հույսով:

Մենք չենք ուզում ընձուղտ դառնալ,
Որ մեր մաշկին անհուր աստղեր չդաջոտեն՝
Մեզ դարձնելով մի սուտ երկինք:
Եվ չենք ուզում ընձուղտ դառնալ,
Որովհետև ընձուղտ կոչված այդ վիթխարի
Ո՛չ մի անգամ ամբողջ կյանքում
Ձայն ու ծպտում չի՝ արձակում...

Մենք ուզում ենք գործի լեզո՛ւն,
Բայց ո՛չ իբրև երկանք ստի
Ու ջրադաց խաբեության:
Դժվար բան է սուտ ասելը,
Բայց սուտ ասելն ավելի է հեշտ ու դյուրին,
Քան թե անվերջ սուտ լսելը:
Ռատինաձև սուտ ծամելուց մենք զզվել ենք:
Լավ ապրանքը ինքն է ծախվում,
Ու վատն է, որ պիտի գովես:
Իսկ մենք դեմ ենք ամե՛ն տեսակ փերեզակի...

Մենք ծնվել ենք, աշխարհ եկել
Ո՛չ թե թվալ-երևալու խաբեությամբ,
Այլ լինելո՛ւ,
Ա՛յն լինելու, ինչ կանք իրոք:
Մենք ծնվել ենք, որ մարդկության
Հազար ու մի «իմչու»-ներից գոնե մեկի
Հարցապնդող աչքում միանենք

Մեր գոնե մե՛կ պատասխանը
Եվ դրանով գոնե մաս-մաս վերադարձնենք
Օտարացվող էությունը մեր մտքերի,
Որ չխամրեն սրանք այնպես, կարծես իսկույն
Չորացնում են ծծողական կոչվող թղթով
Եվ մեզ տրված մեծությունից
Թողնում միայն մի անընթաց թղթի կտոր,
Որ կոչվում է «Ստացական»...

7.

Հարյուր տարին մեկ են ծնվում մեծություններն այս
աշխարհի,

Բայց ամեն օր հարյուր մեծ է գալիս աշխարհ.
Ծնվում են մեծ, բայց չեն թողնում, որ դառնան մեծ:

Մենք ծնվեցինք...

Ու սնվեցինք

Ծատ ավելի «ալերույա-օլսանանա»-ով,

Քան թե հացով սովորական...

Ծարպտո մուժն էր վարագուրում

Կիսաքաղցի մեր աչքերը:

Փայտոջիլներն էին կծում ու կծոտում

Երազները մեր անմարմին:

Բայցևայնպես մերպեսները կարողացան

Պատիվն իրենց պահել ճերմակ

Եվ խիղճն իրենց պահել մաքուր՝ աղի մման,

Որովհետև մերպեսները

Նախընտրում են զրկվել գլխից,

Քան խոնարհել գլուխն իրենց նրա՛նց առաջ,

Ովքեր լուրջ-լուրջ փորձ են անում

Ողեղ հատել՝ դրամի պես

Ու միտք դաջել՝ լաթի մման:

Մերպեսները, ո՛չ, երբևէ
Ծունկ չեն ծալում կուռքի առաջ

Եվ չեն համում իրենց աչքը ա՛յն պատճառով,
Որ այդ կուռքը, կիկլոպի պես, մեկ աչք ունի:
Ծա՛տ-շա՛տ՝ նրանք կկոցում են մեկ աչքն իրենց,
Որ... ավելի հեռո՛ւն տեսնեն ու պա՛րզ տեսնեն:

Բայց սիրում են նրանք իրենց ծուկը ծալել՝
Անտանելի ցավն աշխարհի
Որևէ կերպ բարձրացնելու
Եվ արևի կիզարանում մոխրացնելու նպատակով:

Բայց սիրում են նրանք իրենց ծուկը ծալել՝
Գեղեցկության մերկ ծնկներին շուլավելու՛,
Հողի տաքուկ բուրմունքի մեջ լուռ հալվելու՛,
Մանուկների աչքերի մեջ նկարվելու՛ երազանքով...

Մենք թռչում չենք,
Որ մի կաթիլ ջուր ըմպելով՝
Կտուցներըս անմիջապես երկինք տնկենք:
Ով ուզում է իր ջուրն ըմպել աղբըրակից,
Նա չի՛ կարող չխոնարհվել,
Նա չի՛ կարող ծնկի չգալ:

Եվ չի՛ կարող չխոնարհվել,
Ու չի՛ կարող ծնկի չգալ՝
Ով ուզում է նայել խորքը ջրհորների,
Որոնք նույնպես ուրիշ բան չեն,
Քան թե կուռքեր՝
Արձանները ա՛յն աղջամուղջ-մթնշաղի,
Որ ներաշխարհ կամ հոգի է կոչվում դարեր:
Եվ մերպեսներն ա՛յդ կուռքին են երկրպագում,
Խոնարհվում ու ծնկի գալիս
Ա՛յդ կուռքերի առաջ միայն՝
Նրանց մոթին հայելու մեջ
Իրենք իրենց ճանաչելով...

8.

Ու գալու է մի ժամանակ,
Երբ որ պիտի մարդիկ նաև մերպեսների՛ն երկրպագեն՝
Ոչ կուռքի՛ պես,
Ո՛չ էլ աստծու,
Այլ... հերոսի՛,

Որովհետև մենք լավ գիտենք,
Որ շատ հաճախ
Բռունցքով ենք զարկում մեխի ծակող ծայրին,
Մեր բռունցքով՝ մուրճի տեղակ:
Բայց դրա հետ գիտենք նաև.

— Բռունցքը չէ,
Որ սարքվել է մուրճի ծանոթ օրինակով,
Այլ մուրճն է հենց,
Որ սարքվել է մեր բռունցքի նմանությամբ:
Ու մենք գիտենք.
— Եթե քամին

Ընդամենը մեր մազերի հետ է խաղում,
Ապա ինքը եղանակը խաղ է անում... մեր գլխի՛ հետ:
Բայց ասողերը իրենց կյուր-ճերմակ սանրով
Հանգստարար շարժումներով ամեն անգամ
Հարդարում են քամուց գզված մեր մազերը
Ու դրանով հավատացնում իրենց ու մեզ,
Որ առայժմ... մեր գլուխը իր տեղումն է...

Այս հավատով ու հույսով է, բարեկամըս,
Որ աշխարհում մերպեսները ամեն գիշեր
Աղքատ քնում ու զարթնում են հարստացած...

18—20.XI. 63

Երևան

ԱՌԱՋԱՌԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ
ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ԵՎ
ԾՕԳՐԻՏ ՍԱՐՔԵՐԻՆ

Հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Հաշվեցե՛ք հապա,
Թե ի՞նչ ավիքով, քանի՞ վայրկյանում
Եվ քանի՞ գրամ արյուն է հոսում աղջկա սրտից
Դեպի ամոթխած այտերը ձրա՛
Առաջ բերելով ա՛յն բռնկումը ջերմամիջուկյան,
Որ մինչև արսօր, միամտաբա՛ր, շիկնանք ենք կոչել:
Եվ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում
Մեր մթնոլորտված աչքերի միջով,
Երբ հանկարծակի ձրանք դիպչում են ուրիշ աչքերի,
Եվ այս փոխադարձ ճառագայթումը
Վտանգավո՛ր է մեր սրտի համար,
Թե՛ օգտակար է:

Հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Հաշվեցե՛ք հապա, թե մեր ասիերով
Քանի՞ կիլովատ հոսանք ենք տվել
Երեխաների մազերին փափուկ ու թաթիկներին,
Մեր սիրածների իրանին ճկուն,
Ուներին ճկուն մեր տատիկների,
Եվ մեր ստացածն ինչքա՛ն է պակաս
Կամ ինչքա՛ն ավել:

Թե չե՛ հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Հաշվեցե՛ք, խնդրե՛մ, հաշվեցե՛ք նաև,
Թե մեզնից գո՞նե մե՛կը իր կյանքում
Քանի՞ կնոջ է տեճանքով նայել,
Քանիսի՞ն՝ մաքուր մի հիացմունքով,
Քանիսի՞ն՝ միայն եղբոր քնքշությամբ...
Նշեցեք նաև տեղերն ա՛յն կանանց,
Որ կարող էին մեզ խորունկ սիրել,
Բայց մենք այդպես էլ չհանդիպեցի՛նք:
Եվ թիվն ասացեք ա՛յն մանուկների,
Որ կարող էինք ունենալ կյանքում,
Բայց մենք չունեցա՛նք ու չե՛նք ունենա:
Եվ թիվը նաև ա՛յն մանուկների,
Որ պիտի մերը լինեին կարծես,
Բայց մերը չեղա՛ն...

Թե չե՛ հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Մենք դեռ մի կարգին չգիտենք նույնիսկ,
Թե այդ ինչի՞ց է մարդը ծիծաղում,
Մի՞միայն մարդը,
Եվ ո՛չ մի ուրիշ կենդանի էակ:
Դուք մեր ծիծաղի
Ալիքների թիվն ասացեք հապա,
Ցույց տվեք նրանց գույները պես-պես
Եվ քմծիծաղի ու քրքջոցի
Տարբերությունը հասկացրեք մեզ...

Էլեկտրոնական ձեր գանգով հուժկու
Ու ճառագայթուն-անսպիտակուց-կիկլոսյան քիթով
Տարրալուծեցեք կարտոն էլ հապա,
Բաղադրեցեք այն ծուխն էլ անտես,
Որ անջատվում է միշտ այդ կարտոնից
Եվ ո՛ր է քաշվում...

Թե չե՛ հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...

Ա՛յն թվականը նշեցեք հիմա,
Գեթ այն մոտավոր, մոտալուտ տարին,
Երբ որ, վերջապե՛ս, ազգերը խոցված
Պիտի ողջանան կամ սափաքիմվեն,
Եվ վիրավորող ազգերն ստանան
Հատուցումն արդար ու չքեկանվող:
Թե չե՛ շատերը, քանի՛ դար արդեն,
Հույսները կտրած անողորմ աստծուց՝
Սպասո՛ւմ են դեռ:
Սպասո՛ւմ են դեռ:
Դո՛ւք՝ նո՛ր աստվածներ նո՛ր ժամանակի,
Սուտ դուրս չգալիք գեթ դո՛ւք, գոնե դո՛ւք...

Հաշվեցե՛ք հապա ու թիվն ասացեք
Երկրներ կապող ա՛յն կամուրջների,
Որոնց վրայով
Կուզեի՞ք նաև մե՛նք անցած լինել,
Բայց դեռ չե՛նք անցել
Ու չե՛նք անցնելու...

Թիվը ցույց տվեք
Ա՛յն երազների և անուրջների,
Որ այս քառով են կոչվում աշխարհում
Լոկ ա՛յն պատճառով,
Որ չեն կատարվո՛ւմ...

Անկասկածելի թիվը նշեցեք ա՛յն կասկածների,
Ինչից մենք հաճախ հասունացել ենք,
Առավել հաճախ՝ վաղաժամ թռչնել...

Ցույց տվեք գիծը հիասթափությա՛ն,
Եվ հուսանք,
Որ դա գեթ չի ունենա ձևը կայծակի...

Եվ գիծը նաև հուսախաբությա՛ն,
Որ մեր կյանքի հետ

Վա՛յ թե հենց կազմի զուգահեռություն,
Իսկ զուգահեռը զուգահեռի հետ
Զի՛ հատվում կարծես...

Եվ թիվն ասացեք
Մեր ա՛յն ժամերի, անթի՛վ-անհամա՛ր,
Որ ծանր ու թեթև ժամանակներում կորա՛ն-գճացի՛ն
Ինչ-որ հերթերի
Ու երթերի մեջ
Եվ ընթերցման մեջ ա՛յն բազմալեզու օրաթերթերի,
Որոնց սևաքոց գլխազրեթից
Ամեն առավուտ
Հրանդանների կենտ աչքն է նայում մեր զույգ աչքերին,
Սուգանավերն են մեր տենչանքները հոգու մեջ սուգում,
Զրածընային արկերն են ուզում
Մեր երակների կարմիր արյունից
Մերմակ ջուր ծնել...

Այսքանից հետո պիտի՛ որ հաշվեք
Եվ ասե՛ք, թե դեռ քանի՛ տոնն ատոմ ճեղքելուց հետո
Հեշտ կարելի է այս Երկրագնդի միջուկն էլ ճեղքել:
Պիտի՛ որ հաշվեք,
Թե դեռ ի՞նչ գեներ ծնելուց հետո
Մայրը կրկնի զավակ ծնելու կարողությունից:
Թե այսքանն ասեք՝
Էլ հարկ չի՛ լինի, որ ասեք նաև
Ծանրության չափը հավատազրկման.
Կմնա միայն, որ պարզաբանեք,
Թե ի՞նչ հրաշքով
Հավատազրկման այդ բեռնն ներքո
Մի՞նչև վիզներս չենք խրված հողում՝ սուր ցցի՛ նման...

Բարեկամաբար ասացե՛ք նաև.
Քանի՛ տարին մեկ աշխարհ է գալու
Ա՛յն անդերսեռյան մանուկը,
Որից

Թագավորները պիտի իմանան,
Որ մերկ են իրենք:
Եվ խնդրեն՝ նաև ավելացրե՛ք.
Այդ իմանալով՝
Թագավորները
Ծածկո՛ւմ են արդյոք մերկությունն իրենց,
Թե՛ շարունակում կրկին մերկ մնալ
Եվ հակառակը կամեցողներին
Հարկադրում են՝
Աշխարհում ապրել կապվա՛ծ աչքերով...

Եվ ասե՛ք գուցե,
Թե բեթոնվեճյան խլությունն արդյոք
Չի՞ կապվում բնավ
Ա՛յն ահագնացող պայթյունների հետ,
Որ կատարվում են հիմա աշխարհում
Եվ վե՛ր աշխարհից:
Ու թե կապ ունի, խնդրե՛մ, պարզեցե՛ք.
Աշխարհը հիմա
Անթիվ-անհամար բեթոնվեճերո՛վ կընթանկանա,
Թե՛ կավելանա պարզապես թիվը խլացածների...

Հաշվեցե՛ք նաև, մի վերջի՛ն անգամ,
Թե այդ ի՞նչ ձևով,
Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի
Դեռ կարելի է մարդուն մա՛րդ պահել
Եվ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել Մա՛րդ...

26.X. 62

Երևան

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Ետում է ջուրը,
Ասես թոքերի բորբոքում ունի մինչևիսկ սա էլ:
Իսկ բուժո՛ղն ով է,
Եթե հիվանդ ես հիմա և ինքրդ,
Ու քեզ բուժում են
Նաև թե՛ կոչված նո՛ւյն ետման ջրով,
Որ նմանապես
Թոքերի ուժեղ բորբոքում ունի...

Հիվանդ հայացքը
Մուգ մատախուղի վեհ վերելակով
Թագավորաբար լեռն է բարձրանում,
Ինչպես երևի բարձրացել են գահ...

Տեճոտ հայացքը
Հիմա հաճում է դիմացի ձորում,
Որտեղ պառկած են այլազան քարեր՝
Բրածոյացած նախնիների պես...

Թեպետ իրար հետ վաղուց եք ծանոթ,
Թեպետ ծանոթ է պապերի՛դ անգամ,
Բայց քրտնած գլխով տված քարևիդ
Չի՛ պատասխանում:
Դուրս տված քերձով ճամփած ժպիտիդ
Չի պատասխանում նո՛ւյնպես:
Իսկ ինչո՞ւ:
Որովհետև իր անունը... Ժայռ է,
Ինքն էլ երբևէ
Ոչ միայն կյանքում չի հիվանդանում,
Այլև... անմահ է...

Աստված իրեն հետ:

Դու թե՛ յըդ խմիր:

Սառե՛լ է:

Տեսա՛ր. ջրի թոքերի բորբոքումն անցավ:

Կանցնի և քո՛նը:

Հապա եկ փորձենք. տաքություն չունե՛ս:

... Ջերմաստիճանի որոշման համար

Ձեռքը դնում են մարդու ճակատին:

Այդ շարժումի մեջ չկա՛ խոր իմաստ

Եվ խորհուրդ խորին, — ո՛վ ի՛նչ է կարծում:

Իսկ աշխարհումըս բանտեր քի՛չ կային,

Որ ստեղծեցին նաև այս մե՛կը՝

Այս ջերմաչափը:

Եվ ի՛նչ հանցանք է գործել սնդիկը,

Որ տառապում է մեճախցի մեջ...

Բայց գոնե լավ է,

Որ սնդիկային այդ մեճախուցը

Լայն է ավելի, քան մարդկայինը:

Լա՛յն է, թե՛ երկար, — միևնույնը չէ՛:

Իսկ շատ չես խոսո՞ւմ.

Չէ՛ որ հիվանդը

Այսքան խոսելու իրավունք չունի:

... Կլոնե՛մ:

Կուզես՝ կքնե՛մ անգամ,

Միայն թե... ջարդե՛նք այս ջերմաչափը:

Թվում է, թե իմ հիվանդությունը

Ո՛չ թե իմ մեջ է,

Այլ սրա՛, սրա՛՝

Այս ջերմաչափի՛:

Ուրեմըն ջարդե՛նք այս ջերմաչափը,

Եթե ես մեղք եմ՝ սնդիկն առավել...

Յ.Մ. 65

Զահախի

ԱՆՏԱՌԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Անտարբերությունը...

Ուխտյալ թշնամու պես հետևում է նա ինձ,
Բուսնում խոտի՛ նման,
Թառում փոշո՛ւ նման,
Խեղդում խորխի՛ նման:
(Գերանդի՛ եմ դառնում,
Խոզանա՛կ եմ դառնում,
Հա՛գ եմ դառնում):

Եթե կարճակոճրդ իր հասակը ներեր
Ու ձեռքը հասցըներ իմ կոկորդին բարակ՝
Խեղդամահ էր արել նա ինձ վաղո՛ւց:
(Եվ մինչ նա շարունակ ձեռքն է մարզում-վարժում
Ես էլ աշխատում եմ հասակ գետել անվերջ):

Իմ բերանն է փակում հազա՛ր ու մի ձևով,
Իր համբույրո՛վ անգամ,
Սո՛ւտ համբույրով նույնիսկ:
(Եվ մարմինս է դառնում համատարած բերան,
Ու բերանըս փակող համբու՛յրն անգամ, նա՛՛ է,
Որ... Ես խոսքս խոսեմ,
Ասելիքս ասեմ
Եվ դրանով մարդուս ի՛ր դասի մեջ դասեմ,
Մեզ ասո՛ւմ են ասում,
Ո՛չ անասուն)...

Ա՛խ, այս մշտափոփոխ-ինքնաբեկող,
Ամե՛ն ինչի տակից միշտ դուրս եկող

Անտարբերությունը,
Որ հիմա էլ արդեն, երբ այլ հնար չունի,
Աշխատում է մի կերպ ինձ ներշնչել,
Թե խոսելը նույնն է, ինչ... ստելը:
(Ու ես ծա՛նրր-ծա՛նրր լռությունը
Բարձրացնում եմ խոսքի աստիճանի:
Ու ես ծա՛նրր-ծա՛նրր խոսքը իջեցնում եմ,
Դնում պատվանդանին քար լռության,
Եվ այդ միությունից ծնվում է այն քիճը,
Որ սերում է սիրո՛ւց,
Բայց ո՛չ երբեք պարտքից,
Ու կարճ կոչվում է Միշտ,
Երկար՝ Մշմարտություն):

... Եթե ինձ ծնողը ինձ չի ուզում պահել,
Թող որբանոց հանձնի, վնաս չունի՛:
(Ծա՛տ ավելի լավ է որբ մեծանալ,
Քան թե ամբողջ կյանքում ապրել միշտ ո՛րբ)...

9.XI. 65

Չաեախի

ԱՇԽԱՐՀ... ԱՇԽԱՐՀ

Ո՛չ ու փո՛ւյ աշխարհ,
Որ չես հանձնվում իմ տաք ձեռներին,
Որպեսզի փրչոտ մազերդ սանրեմ
Իմ ջերմ մատներով՝
Անմայր մնացած
Միճուճար որդուն սիրող հո՛ր նման:

Սո՛ւտ ու փո՛ւտ աշխարհ,
Որ իմ մազերն ես հանգուցել ամուր
Ամեն մի ծառիդ ու ամեն խոտիդ,
Ամեն էակիդ մազիդ ու մատին,
Ծոշափուկներից, քեղիկ ու թաթից,
Եվ իրար ձգում փոխադարձորեն
Ու ձգձգում ենք նորից ու նորեն,
Որ... ինքքդ ապրես համակշռված,
Իսկ ես էլ...

Իսկ դու
Ե՛րբ ես իմ մասին մի քերական հարցնում,
Ո՛չ ու փո՛ւյ աշխարհ,
Սո՛ւտ ու փո՛ւտ աշխարհ:

Իսկ չե՛ս վախենում, որ հանկարծ... մեռնեմ:
Ես վախենում եմ, շա՛տ եմ վախենում,
Բայց ո՛չ ինձ համար,
Այլ լոկ քե՛զ համար.
Իսկ եթե հանկարծ իմ մահով խախտվի
Համակշռված այս վիճակը քո,
Ո՞նց պիտի լինես,
Ի՞նչ պիտի անես:
Տե՛ս, որ իմ մահով քեզ չկործանե՛ս,
Սո՛ւտ ու փո՛ւտ աշխարհ,
Փո՛ւյ ու ո՛չ աշխարհ...

9.XI. 65

Չաեախի

ՄԽԱԼ ԽՈՍԲ ՄԽԱԼԻ ՄԱՍԻՆ

«Ես ոչ սթի չեմ դիմում,
բայց ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»
Վ. ՍԱՐՈՅԱՆ

Գծվել է զարուհը:

Եվ օդը գինով է:

Եվ լույսի՛ց, լուկ լույսի՛ց կարող է մայրանալ,

կարող է մայրանալ... մինչև իսկ չքե՛րը:

Մինչդեռ ես կրում եմ ուժից վեր այս բեռը՝

Իմ գլխի՛ և սրտի՛ այս բեռը,

Որի տակ

Իննամեն մարմինըս քարշում եմ ութամեն:

Քարշում եմ:

Չե՛մ խորհում:

Եվ դա իմ խորհելն է:

Չե՛մ լսում:

Չե՛մ ուզում ընդունել ո՛չ մի ձայն:

Բայց անվերջ լսվում է, թե՛ իմ մեջ, թե՛ իմ շուրջ.

«Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»:

... Ինչ-որ բան սխալ է հենց Երկրի առանցքում,
Որ ուղի՛ղ չի անցնում, այլ ինչ-որ թեքությա՛մբ:

Ինչ-որ բան սխալ է մինչև իսկ լույսի՛ մեջ,
Որ պիտի՛ ունենար ծանրություն ու կշիռ:

Թե կրոնն է սխալ՝ այդ վաղո՛ւց հայտնի է,
Բայց մի տեղ սխալ չե՛ և հավա՛տ կոչվածը:

Ինչ-որ բան սխալ է ճշմարտի մեջ անգամ,
Եվ ստույգ կոչվածն է ստուգվել աղերսում:

Ինչ-որ բան սխալ է և արյա՛ն, արյա՛ն մեջ,
Չհեղվե՛ր, հեղվելիս ինչո՛ւ է մակարդվում:

Թե ձեռքն է զավաթին երկարվում հուսահատ՝
Սխալ է և գիճի՛ն.
Չի՛ խցվում կոկորդում:

Սխալ են ջրե՛րն էլ,
Հոսում են վերից վա՛ր,
Վերից վա՛ր,
Վերից վա՛ր՝
Անընդհատ անկում է:

Կոշկատակն է սխալ,
Հողից է մեզ կտրում:

Սխալ է և հողը,
Առնրվում-ծախվում է:

Սխալ է կրակն էլ,
Ինչի՛ս է մխալը:

Լոռությունն է սխալ,
Մեր թևերն է փետրում:
Իսկ անկե՛ղծ խոսելը... սխալ ու սխա՛լ է:

Իսկ ի՛նչն է տարբերում և ի՛նչն է անջատում
Փակուղի ասվածից, հորիզոն կոչվածը,
Եթե սա՛՝ ոտքերըդ, նա աչքերդ է հատում:

Սխալ է ջարդելը,
Բայց չե՛ որ դրանից
Երկրաչափն է կարծեմ օգտվում արանքում,
Ձևերն են բազմանում այդ ջարդում-փշրումից:

Միսս կա թերևս և նրա՛նց արարքում,
Որ անկեղծ ձգտում են շտկելու սխալը
Եվ ամեն մի սխալ շտկելիս, ակամա,
Գործում են նո՛ր սխալ,
Միսս է ձգտո՛ւմը:

Ինչ-որ բան, ու լո՛ւրջ բան, անկասկա՛ծ, սխալ է
Եվ մարդու մարմնի մեջ,
Մի գլխով ի՞նչ անել,
Երբ այսքա՛ն դժվար է անսխալ ապրելը...

Հետո ի՞նչ դուրս եկավ,
Միսս է ատե՛լը,
Միսս է սիրե՛լը,
Այրվե՛լը,
Միսս՛լը:

Միսս է, անկասկա՛ծ, և այսպես դատելը,
Ռստի և այս երգը...սխալի՛ց սխալ է...

19, 20. V
25. VII
22. IX
10. X. 61
Օրհան

ԿԱՅԱՆԱԼԻՔ ԶԲՈՍԱՆՔ

Վճռել եմ հաստա՛տ,
Պիտի շո՛ւն պահեմ...

Եվ ամեն գիշեր,
Երբ միլիոնավոր հոգևած կոշիկներ
Դռան մուտքի մոտ
Լաթերի վրա մտնեն խորունկ քուն՝
Արդեն չպաշտվող տոտեմների պես,
Երբ նեղ օրերից այլևս ազատված
Մեր հագուստների կոճակները խեղճ
Ազատ շունչ առնեն մի քանի ծամով,
Ու փողոցներով երբեմն սուրա
«Ծտապ օգնության» մեքենան միայն՝
Իր զույգ աչքերի ճառագայթներով
Պոզահարելով խավար ու ստվեր,—
Ծանրս հետ պիտի էլնեմ ման գալու,
Որ մտերմաբար ասուլիս անենք
Անդորրության մեջ կեսգիշերային,
Քաղաքի պարսապ պողոտաներում:
— Իմ նախա՛-նախա՛-նախապապերի ազնի՛վ օգնական,
Գազա՛ն երբեմնի,
Այսօրվա նույնիսկ քաղաքաբնա՛կ շուն իմ, սիրելի՛ս,—
Ես նրան կասեմ,—
Քո ականջներում առայժմ չկա
Հեռախոսային լար ու լապիող,
Եվ քո բնական հոտառությունը չի չարաշահվում,
Որ իմ մշահոտ-ճենճերահոտով
Մտածմունքներին ու տվայտանքին նյութը որոշվի
Քիմիական ստույգ տարալուծությամբ:

(Նա պոչով օդում «այո» կզծի):

Ամենքս էլ մի քիչ շուն ենք, շո՛ւն եղբայր,
Մեր անխախտելի հավատարմությանը
Առ Աստված:
Որին հիմա ամենքս «Գալիք» ենք կոչում,
Եվ առ Հայրենիք,
Որ ձեր շնային լեզվով, կարծում եմ,
Կոչվում է «Ռսկոր»,
Եվ առ այն եզր, որ եզ չէ միայն,
Այլ «Սեր» է նաև,
Ինչին շնային լեզվով, երևի,
Դուք «Ծուծ» եք կոչում:

(Նա պոչով գետնին «դիցուք» կզծի):

Ամենքս էլ մի քիչ շուն ենք, շո՛ւն եղբայր,
Եվ ամեն մեկս էլ մեր հաչոցն ունենք:
Եվ միևնույն անգամ լույսերն են հաչում՝
Լուսավորիչների բացուխտի քերտով.
Այս լուսազղներն են հաչում համրորեն՝
Իրենց գույների տուրևառությանը.
Եվ հանրակառքի ուղիներն այս գույգ՝
Իրենց զնգոցի երկար կաղկանձով:
Իսկ մարդի՜կ...
Ոմանք իրե՛նք չեն հաչում.
Նրանց տեղ իրենց սրտե՛րն են հաչում՝
Կարոտի՛ քերտով ու տառապանքի՛...
Եվ կա մի հաչոց, որ լաց է կոչվում,
Կա՛, որ կոչվում է հառաչ, հեկեկոց,
Կա՛, որ կոչվում է աղաղակ ու ճիչ,
Կա՛, որ կոչվում է ծիծաղ կամ քրքիչ:
Այս վերջին հաչն է ինձ շատ դուր գալիս,
Թեպետ շատ հաճախ ինձ տեսնում ես դու
Ոչ թե խնդալիս,
Այլ դառն լալիս:

(Նա պոչով կասի մի հաստատ «այո»):

Իսկ նրանք, իմ շո՛ւն, ովքեր շա՛տ են շուն,
Իրե՛նք են հաչում, ըստ որում, գիտե՛ս,
Մենք հաչոց ունենք հազա՛ր մի տեսակ,
Մինչ քեզ ծանոթ են մի քանիսը լուկ...

Այնպես որ, շո՛ւն իմ, ամենքս էլ իրոք
Մի որոշ չափով շուն ենք, եղբա՛յրս:
Ու շուն եմ ե՛ս էլ՝ ամենքի նման,
Նրանցից գուցե այնքանո՛վ տարբեր,
Որ ես մերժում եմ պատասը ճարպոտ,
Ինձ մի ոսկորն էլ հերի՛ք-հերի՛ք է...

(Նա պոչն է տնկում՝ իբրև հարցական):

Ոնց եմ ոսկորով որկո՛րըս լցնում:
Աստղերից ցատկող լվեր բռնելով,
Հոգու ջրհորի ջրիմուռներով,
Ա՛յն քարաքոսով, որ «խիղճ» է կոչվում
Եվ ամենից շատ (թե անկեղծ ասեմ)՝
Ա՛յն արմատներով, որոնց մեր լեզուն
Կոչում է «ջղեր»:

(Այս խոսքիս վրա, իբրև միջակետ,
Ծունըս կղնի մի քերան հաչոց:
Փողոցով կանցնի մի քարակ քամի՝
Ջանալով ավել ստվերն իմ ու շան:
Լուռ կհորանջի մի լապտեր աղոտ՝
Արդեն ձանձրացած ա՛յն ցուցանակից,
Ում ծառայում է տարիներ անվերջ):

Եվ գկոտոցը իմ կոշիկների
Մի պահ չի հնչի ամայության մեջ,
Որովհետև ես պիտի կանգ առնեմ
Ցուցանակների մի խմբի առաջ

Ու շանքս ասեմ.

— Նայի՛ր, շո՛ւն եղբայր,

Նայի՛ր այս բազում ցուցանակներին:

Տեսնո՞ւմ ես, շո՛ւն իմ, պատերն էլ ունեն

Իրենց պատային ճակատագիրը,

Որ «ցուցանակ» է կոչվում մեր լեզվով:

Եվ համատարած գրագիտության

Այս աննախադեպ լուսավոր դարում,

Երբ հազարավոր տարիներ առաջ

Մեռած լեզուն էլ վերծանվում է հեշտ,

Եվ մինչև անգամ

Լուսնի հակառակ երեսն են կարդում

Ու Վեներայի

Կամ Մարսի օղբ դարձնում այբուբեն,—

Մեր երկտողանոց ճակատագիրը մնում է դարձյալ

Անընթեռնելի՛ և անմեկնելի՛...

(Այս խոսքիս վրա

Ժուճըս իր ետին ոտներից մեկը կկտրի գետնից

Եվ անդաստիարակ-անկիրթի նման

Կթորջի պատի քարը սրբատաշ,

Ու մենք միասին տուն կգանք կրկին,

Որ միլիոնավոր կոշիկների հետ:

Իմոնք էլ քնեն մուտքի դռան մոտ՝

Արդեն չպաշտվող տոտեմների պես,

Եվ նեղ օղերից այլևս ազատված

Խեղճ կոճակներն էլ իմ վերնաշապկի

Ազատ շունչ առնեն մի քանի ժամով)...

Իսկ շունըս...

Սակայն ես դեռ շուն չունե՛մ

Եվ չգիտեմ էլ՝ արժե՞ ունենալ:

Իսկ եթե նրա ականջների մեջ

Հեռախոսային լար ու լսափող թաքցրած լինե՞ն

Ու չարաշահեն նրա քնական հոտառությո՞ւնը

Եվ իմ մշահոտ-ճենճերահոտով

Մտածումըքներիս ու տվայտա՛րքիս նյո՛ւթը որոշեն
Զիմիական ստույգ տարրալուծությամբ:

Վճռել եմ հաստա՛տ.

Ժուն չե՛մ պահելու...

20, 21, 26.XI. 63

Երևան

ՄԱՆԿԱԿԱՆ ԾՈՃՔ

Կապույտ-կապարե մեմակության մեջ անծիր երկնքի
Թռչուններն իրենց երգն են չորացնում:
Մինչդեռ լեռների պղնձե-պաղած միայնության մեջ
Ավելացնում են ես էլ աչքերիս թացությունը տաք:
Եվ հորիզոնը, ամառվա տապից,
Դարձել է կարծես մանկական մի ճոճք:
Ա՛խ, երանի՛ թե նա ինձ քնացներ
Եվ կամ ստիպեր,
Որ ուրախության ճիչեր ճչայի:
Սակայն այդ ճոճքից
Ռժժեղանում է միա՛յն ու միա՛յն գլխապտույտըս,
Որով մի հսկա զերո է գծվում՝
Իր մեջ առնելով
Ի՛նձ,
Թռչունների՛ն,
Երկի՛նք ու երկի՛ր,
Եվ դուրս թողնելով
Լոկ հորիզոնն ու մեմակությունը,
Որպեսզի... մեկը ճոճվի՛ ու ճոճվի՛,
Մյուսն էլ... քարանա ու հավերժանա...

Ո՛չ մի ժամանակ,
Ո՛չ մի ժամանակ,
Մենք այնպես մեմակ ու մեմիկ չէինք,
Ինչպես որ հիմա,
Երբ միասին ենք բոլորս առավել,
Քան թե որևէ ուրիշ ժամանակ...

10.XI. 65
Չանախի

ԱԾՆԱՆԱՅԻՆ ՎԱԼՍ

Մի մոռացկոտ անձրև
Ու մի երկչոտ քամի
Դաշնագիր են կնքել մեկմեկու հետ՝
Բնա՛վ չհարցնելով կամքն աշխարհի,
Ու գործի են անցել.
Ծաղ են տալիս... տաղտուկ:

Տերևները կրկին գործադուլ են անում,
Եվ ծառերի կանաչ գործարաններն արդեն
Էլ չեն արտադրում ո՛չ թթվածին,
Ո՛չ էլ դեղին շրջուն,—
Հե՛րն անիծած:

Ու ծվատված ձանձրոյթն ամենքիս մեջ
Երազում է հիմա հնավաճառ միայն:
Ա՛խ, թե պատուհանից մեկի ձայնը խոպոտ
Խուժեր սենյակ.
«Ձանձրո՛յթ, հին-մին ձանձրո՛յթ կառնեն»...

Եվ ամենքս ենք հիմա կիսով մեմակ,
Եվ ամենքս ենք հիմա կիսով տխուր՝
Հոգնած մե՛ր իսկ բոլոր շարժումներից,
Եվ ձևերի՛ց ամեն
Եվ մտքերի՛ց բոլոր...

Օդը հաստանում է մառախուղով,
Ու մշուշով երկինքն է ցածրանում.
Որ քարակի թելը համբերության
Ու վեր քարձրանալիս ճիչ ճնգոցով հատվի:

Եվ ամենքսս հիմա վատ բաներ ենք հիշում,
Եվ ամենքսս հիմա հոռետես ենք դարձել,
Ամեն ինչից զզված,
Զզված նաև մեզնից:
Եվ մեր քիթ ու մոթից քնծիծաղ է կաթում,
Ինչպես ամեն ծառից՝ կենտ-կենտ տերև,
Ինչպես ջրհորդանից՝ անձրևաջուր կեղտոտ,
Քիվից՝ պղտոր կաթիլ,
Տոխպ տաղտուկ՝ հոգուց...
Կաթո՛ւկ-կաթո՛ւկ-կաթո՛ւկ,—
Հե՛րն անիծած...

Այս մոռացկոտ անձրևն ու այս երկչոտ քամին,
Տիրությունն այս բարակ և տաղտուկն այս պարարտ,
Նաև վատն ու հոռին
Պարագույգ են կազմել
Ու պարում են-պարո՛ւմ-պարո՛ւմ հիմա
Մեր փողոցո՛ւմ,
Տա՛նը,
Մեր սենյակո՛ւմ ձեղլիկ:

Երկրագունդն է պարում նույն վալսը հին ու նոր,
Տարվա եղանակներն անվերջ նույնն են պարում,
Նույնն է պարում կյա՛նքը,
Նույնն է պարում մի՛տքը:
Այս ի՛նչ խենթություն է,—
Հե՛րն անիծած...

Եվ ինչ է դեռ մնում, որ ի՛նչ անենք:
(Զանձրույթ առնող չկա.
Մենք ամենքս ենք ծախող):
Զանձրույթի հետ կազմենք լավ պարագույգ
Ու պտըտվենք մե՛նք էլ,
Մե՛նք էլ պարենք
Խենթացնող այս վալսը՝ խենթի նման,
Պարենք մեր անձկացած ու նեղացած հոգո՛ւմ,—
Ի՛նչ ուզում է լինի.
Հե՛րն անիծած...

16.11. 64
Երևան

ՀՊԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Երբ վերջալույսն է մխրճվում ամպերի մեջ՝ սանրի նման,
Ու հոտոտող բարակ քամին, շնիկի պես, կանգ է առնում
Ամեն թփի, ծառի, գուղձի և ամեն մի մարդու առաջ.
Ու երբ ցուրտը երիտասարդ ցույց է տալիս իր ուժն արդեն՝
Ստիպելով շապիկ կոճկել ու մրմնջալ խոսքեր դժգոհ.
Ու երբ մթան թավշի վրա օրվա հաշոցն է խլանում,
Իսկ հատ ու կենտ լույսերն ասես դառնում են հին
զարդանկար,—

Միամի՛տ եմ դառնում նորից,
Հավատում եմ արդարության՝ն,
Ու թվում է, թե ես պիտի իմ... բնական մահով մեռնեմ...

14.XI 63
Երևան

ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Դու՝ 20-րդ և, անտարակույս, հորեյանական,
Դու՝ հյուլեական,
Կարծես էական
Եվ ավելի քան կարծես քանական,
Բայց նաև նույնքան խելագար դարի,
Ո՛վ քաղաքացիդ անգոր ու հզոր,
Անորոշության ցավով ես հիվանդ,
Անորոշության անդարման ցավով,
Որ բողբոջում է բջիջներիդ մեջ,
Ծաղկում է անգամ քո զույգ բիթերում,
Նյարդերդ է խեղդում ճյուղերով իր պիրկ
Եվ իր թունավոր սաղարթն է բերում
Խառնելու գլխիդ մազերին անգամ:

Անորոշության ցավով ես հիվանդ,
Անորոշության ահարկո՛ւ ցավով...

Եվ ինչպե՞ս ապրես միայն անցյալով,
Եթե ներկադ էլ
Արդեն չի ծախավում այլ բանի վրա,
Քան վաղվա մասին պարսպ խորհելու...
Ի՞նչ է սպասվում այս մոլորակին,—
Ի՞նչ պատասխանես:
Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ,—
Ինչպե՞ս իմանաս:
Ի՞նչ է բուսնելու այս թշվառ հողին:
Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ...
Կրակն ես ընկել մտքերի ձեռքից:
Ազատո՞ւմ չկա: Եվ պրծո՞ւմ չկա:

Կա մի վիթխարի՜ անորոշություն,
Որ տորիչելյան դատարկության պես
Երբեք չի՛ լցվում:

Կա մի անսահմա՛ն անորոշություն,
Որ սողոսկում է՝ օդի պես՝ այնտեղ,
Որ կա ծակոտիք:

Կա մի որոշյա՛լ անորոշություն,
Կրկնակաղապար՝ ընկույզի՛ նման:
Եվ ինչպե՞ս ապրել
Թունոտ ու կարծր կաղապարների
Անշունչ արանքում,
Էլ ինչպե՞ս ապրել...

Աղն էլ է ծանոթ արցունքոտվելուն
Ու կուրանալուն՝
Խոնավությունի՛ց,
Ինչպես որ մարդը՝ անորոշության
Օվկիանին անախ:
Իսկ ո՞ր է ցամաքն ու չորությունը...

Ցեմենտ կոշվածը
Կարգին շնչում է միայն ջրի՛ մեջ.
Մինչդեռ այդ խեղճը շնչահեղձվում է
Հեցց ի՛ր իսկ փոշով,
Ինչպես որ մարդը՝ անորոշությամբ:
Իսկ ո՞ր է ջուրը...

Արևի շողերն ուզում են մտնել
Նաև եղջի թփուտի մեջ թավ,
Բայց, դադողվելով, բեկվում են կողքի:
Թող ցույց տան՝ նույնիսկ եղջի՛ թփուտ,
Որ չի ստվերվում անորոշությամբ,
Եվ բնակավայր դու կդարձրնես
Այդ եղջր՝ուղը...

Թե ծառ լինեիր
Դու կարտասպեիր սեփական խեժով
Եվ թո կեղեով թե չ շրջափակած՝
Քեզ կբուժեիր:
Բայց թո արցունքը
Քեզ կրծոտում է... սնդիկի՝ նման,
Եվ այս աշխարհի ցավերի դիմաց
Դու կեղևահան ծառ ես մարդանև,
Եվ կեղևահան այդ ծառի վրա մնում եմ հիմա
Քիչ թե շատ առողջ այս թո աչքե՛րը՝
Լեցո՛ւն, լեփ-լեցո՛ւն անորոշությամբ...

Անորոշության ցավով ես հիվանդ,
Անորոշության ոխերի՛մ ցավով,
Որ մահի է տենչում:
Բայց մահ էլ չունես.
Կարգին մեռնելու համար էլ
Պիտի մարդ բախտ ունենա...

Եվ գուր մի՛ հարցրու. «Ուրեմն ի՞նչ անել»:
Այդ պատասխանը թեզ ե՛ս չեմ տալու:
Ինձ նմանները եկել են աշխարհ
Եվ այսուհետև աշխարհ եմ գալու,
Որ իրենց կյանքով ցույց տան ինչ չանե՛լ:
Այսքա՛նը միայն:
Իսկ մնացածի համար դիմեցեք
Դուք դարձյա՛լ ցավին,
Անորոշության անորո՛շ ցավին...

11.VII. 61
Մոսկվա
1.XI. 65
Զահարչի

ԲԱՐԵՎ

— Բա՛րև,—

Մեկ հատիկ այս բառն եմ ասում՝
Կնքված անձնագիր ցույց տալու նման
Կենսագրություն պատմելու նման,
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես:

Եվ կուզենայի՛,
Ծա՛տ կուզենայի,
Որ այս բառն իրոք դառնար անձնագիր
Աշխարհո՛ւմ համայն
Ամենքի՛ համար:

Եվ կուզենայի՛,
Ծա՛տ կուզենայի,
Որ նմանապես այս բառը լիներ
Նոր և իրական մի «Բացվի՛ր, Սեզա՛մ»:

— Բա՛րև,—

Ասեիր գնացքին,
Նավին
Կամ օդանավին
Ու ներս մտնեիր.
«Բարև»-ըդ իբրև տոմսակ ընդունվեր:

— Բա՛րև,—

Ասեիր կնոջն անծանոթ,
Ու նա թեզ սիրեր հենց նո՛ւյն վայրկյանին

Կամ ներումնահայց ժպիտով ասեր,
Թե բարևե՛լ են քեզանից առաջ:

— Բա՛րև,—

Ասե՛իր, և պարզ երկինքը
Իսկո՛ւյն անձրևներ, եթե պետք է դա:

— Բա՛րև,—

Ասե՛իր լուսկյաց հողին,
Եվ նա ծլարկեր ու հասկավորվեր:

— Բա՛րև,—

Ասե՛իր մահի՛ն էլ անգամ,
Եվ նա հասկանար, որ քեզ մոտ գալով՝
Ինքը շտապե՛լ,
Ծա՛տ է շտապել...

Բա՛րև-ը դառնար իրական ու նոր մի... «Բացվի՛ր,
Սեզա՛մ»:

Եվ այն ժամանակ եթե արջին էլ ասե՛իր

— Բա՛րև,—

Նա էլ միգուցե հենց նույն վայրկյանին
Խաղալիք դառնար մեր մանկան համար
Եվ մի այնպիսի՝ կարգին խաղալիք,
Որ ո՛չ լարվում է, ո՛չ էլ հասարակ բանից փչանում:
Այսպես էլ՝ օձը ծերերի ձեռքին ձեռնափայտ դառնար,
Կոկորդիլոսը դառնար պահարան խաղալիքների,
Կախարան դառնար եղջերուն վայրի,
Եվ փոթորիկը՝ բեմի պարախումբ,
Մարդն էլ՝ Մա՛րդ իրոք...

Անկարելի բան աշխարհում չկա՛,
Եթե աշխարհում իշխում է բարին,
Որ մեր բերանում դարձել է

— Բա՛րև,—

Ուրեմն՝ անձնագիր ցույց տալու նման,
Կենսագրություն պատմելու նման
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես՝

— Բա՛րև,—

Քե՛զ
Ու
Ձե՛զ,
Ծանո՞թ-անծանո՞թ իմ սիրելիներ:

Թո՛ղ անկարելին դառնա կարելի
Աշխարհի՛ւմ համայն,
Ամենքի՛ս համար,
Դառնա կարելի վաղն ու հենց հիմա,
Դառնա կարելի մե՛կ բառով՝

— Բա՛րև...

19. 11. 64
Երևան

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Նորից երկնքով հիմ արշալույսն է սիգալով սիգում,
Որպեսզի մեր ճոր ու քաղաքակիրթ հիշողության մեջ
Միշտ էլ թարմ մնան... առասպելները:
— Բարի լո՛ւյս, իմ ճո՛ր և իմ... առասպել՛:

Ինչպե՛ս քնեցիր:
Ի՞նչ երազ տեսար:
Ի՞նչ գեշ երազից արթնացար վախով:
Եվ երազիդ մեջ

Դու պատահաբար չտեսա՞ր ճրան,
Ով—ի՛նքդ էլ գիտես—քեզ գիտի այնպես,
Ինչպես հիվանդն իր հիվանդությունը...

Լույսը բարի է
Եվ բարին լույս է... այնքան ժամանակ,
Քանի դեռ սրտերն այդ «բարի լույս»-ը,
Դարերո՛վ մաշված այդ «բարի լույս»-ը
Լսում են կարծես առաջի՛ն անգամ
Եվ ամեն անգամ փշաքաղվում են տաք փաղաքշանքից
Ու նվաղումից սարսըռում այնպես,
Ինչպես երևի
Մութ երկրաշարժից բույսն է սարսըռում ու փշաքաղվում...

Ես փոքր-ի՛նչ հետո դուրս կգամ փողոց,
Որ հետախուզեմ վիճակը օդի՝
Թունդ ներծծելով ծխամոլի պես:
Եվ վա՛յ թե թվա, թե ամեն ինչից
Բուրմունք է գալիս թարմով աղջրկա

Ու կամ ծաղկածայր փշոտ վարունգի:
Եվ վա՛յ թե թվա, թե բոլոր մարդիկ
Ի՛նձ են կողոպտում՝ օդը շնչելով,
Քանի որ օդը... քեզնո՛վ է լեցուն,
Ու քեզ են նրանք ներշնչում կարծե՛ս...

Հանգել են արդեն լույսերը բոլոր,
Եվ լոկ այս կիկլոպ լուսանիշներն են, որ արևի դեմ
Ծիսաքրմական գոռոզությունը կորցրած թեպետ՝
Պատվիրանի պես կրկնում են դարձյալ
Իրենց գունային երրորդությունը՝
Բոլոր տանձազերծ մեքենաներին տեղում մեխելով
Կամ վայրկենապես քշելով առաջ:
Մի՞թե կանաչը պիտի կուրանա
Աշխարհի բոլոր լուսանիշներում,
Որ ես էլ կրկին, կանչելու մման, կարոտով արեմ.
— Բարի լո՛ւյս, իմ լույս կանա՛չ ու... կարմի՛ր:

Ամալի մի պատառ արևն է ծածկում.
Ակնոց է դնում արևը կարծես:
Ես անակնո՛ց էլ պարզ տեսնում եմ քեզ
Եվ զգում եմ քեզ ինձ այնքա՛ն մոտիկ,
Որ կարծես նույնիսկ քո շունչն եմ շնչում,
Մինչդեռ դու ինձնից հեռո՛ւ ես այնքան,
Որքան կիկլոպը՝ այս լուսանիշից:
Բայց մեզ կապում է մի ո՞ղջ պատմություն,
Փառահե՛ղ, անմե՛ղ, անմե՛ռ պատմություն,
Եվ մի «բարի լույս», որ չունի՛ վախճան:
Նա պիտի հնչի մեզնի՛ց էլ հետո
Եվ այնպե՛ս հնչի,
Որ մերպեսները
Նո՛ւյն փաղաքշանքից միշտ փշաքաղվեն,
Նո՛ւյն նվաղումով սարսըռան տաքով,
Ինչպես բույսերը՝ մութ երկրաշարժից:
— Բարի լո՛ւյս, իմ կյա՛նք և իմ... պատմությո՛ւն...

ԲԱՐԻ ԱԶՈՂՈՒՄ

Կենտ աչքն է ճմլում արևը կրկին՝
Պաղ առավոտվա մաքուր լվացված,
Սակայն չարդուկված թաշկինակ-ամպով,
Ու մանուկ օրն է ձգվում-հոբանջում:

Եվ սիամական երկվորյակի պես
Իրար կցկցված խոփերը, նորի՛ց,
Հլու-հնազանդ ա՛յն տըրակտորին,
Որ գոմեշների, եզների, ձիու
Արքայատունը գահագուրկ արեց,—
Խոփերը նորի՛ց
Այստեղ ու այնտեղ
Ծեր Երկրագնդի հին մաշկն են քորում՝
Կարծես թիմարում,
Եվ ակունները իրար են դարավում՝
Էջերի նման.
Հողը թերթվում է,
Իսկ ընթերցումը կլիճի հետո,
Երբ արեգակը
Իր բժշկական սուր ասեղները խրեղով հողում՝
Ավյուն սրակի
Եվ դուրս քաշի ծիւ, հասկավոր ցողուն:

— Բարի աջողո՛ւմ:

Արևը հողից ձգում-հանում է ոչ միայն ցողուն:
Արևը ճան շենքեր է ձգում ու հանում հողից:
Եվ մարդ արարածն իր իսկ ստեղծած ա՛յն ընձուղտներով,
Որ մետաղ ունեն ոսկորների տեղ
Ու ջղերի տեղ ճոպան պողպատե,—

Բաբելոնական իր նոր ու հսկա աշտարակներին
Մարդ արարածը մատուցում է քար,
Խճաշաղախ է մատակարարում,
Եվ արհեստական պսպղուն աստղեր՝ ապակու տեսքով,
Իսկ ինքը՝
Պունո՛ւր, աննշմարելի՛,
Կարկիճի նման ոտքերն է չռել
Ծիճարարական հրապարակում կամ պատի վրա.
Ուզում է ասես իր ոտք-կարկիճով
Չափել իր անցած-անցնելիք ուղին:

Կալել են արդեն քամու շուրթերին
Հյութեղ տերևներ,
Եվ, տե՛ս, սաղարթի կանաչ երկնքից
Կարճ-անհամաչափ ընդմիջումներով
Ամբողջ ժամանակ
Ցած են թրմփում
Փոքրիկ գույնզգույն օդապարիկներ՝
Տեսքով խնձորի, դեղձի կամ տանձի:
Եվ շնորհալի այգիների մեջ սկիզբ է առնում
Մի աշնանային հալոցք արտաոց:
Հաստագոլոր ծառերն իրենց կաթոցքի
Հեռագրային պարզ այբուբենով
Կանչում են մարդկանց,
Որ գան ու շոյեն
Գգվաճքի կարոտ իրենց վարսերը:

Եվ հողի տակից
Գլուխն է հանում մինչև իսկ սոխը՝
Ստորերկրյա արևն այդ գաջաջ,
Ու լոին մարգի կանաչ մթան մեջ
Ասես բացվում է արևածագը:
Արդար նախանձից ու չարությունից
Տե՛ս, լոլիկներն են մուգ-կարմիր դառնում՝
Մանրակտորակ արևների պես խավարում ասես,
Ոմանք՝ մասնակի

Եվ ոմանք՝ լրիվ:
Գազարն իր ոսկով
Խաղալիքային գլխիվայր շոջված բուրգեր է տարքում
Եվ կամ թոչելու պատրաստ հրթիռներ խաղալիքային,—
Ո՛վ ինչ իմանա:
Նրա ոսկու մեջ
Մաղձոտ սխտորն էլ կտրում է արծաթ:
Արծաթ է պտղում և մարդկանց դեմքին՝ քրտինքի տեսքով:
— Բարի աջողո՞ւմ:

Ոմանք ջութակի կամ դաշնամուրի բոնի օգնությամբ
Պարան են հյուսում անհայտ ձայներից,
Որ մարդիկ իջնեն իրենց խորքը մութ
Կամ իրենց խորքում շնչահեղձվելիս վերստին փրկվեն:
Ոմանք գույներից նոր կյանք են ձևում,
Որ մարդկանց աչքը ողջ կյանքում հագնի:
Ոմանք բայերի խոր գաղտնիքներն են ուսումնասիրում,
Զանում են հանել ածականների դիմակը ողորկ,
Որ ասուլիսեն Անհայտության հետ
Եվ նրա խորունկ խորհուրդը քանան ամենքի առաջ:
— Բարի աջողո՞ւմ:

Կնճիթը խրած անլեզու ծաղկի լի արատան մեջ՝
Իր ցերեկային բաց կողոպուտն է ավարտում մեղում:
— Բարի աջողո՞ւմ:

Որթանն միջատն իննանն ճամփով իր քույնն է սողում:
— Բարի աջողո՞ւմ:

Մի համեղ մամիկ ընկույզ է ջարդում թոռնիկի համար
(Թող փուտը՝ պակաս՝, սերտը՝ շա՛տ լինի):
— Բարի աջողո՞ւմ:

Իսկ դո՛ւ, սիրելի՛ս, որ կար ես անում՝
Ասեղդ թելած երազի թելով,
Կամ սրտատրոփ սեղան ես քանում՝

Ծածկելով ոչ թե սիրոցով միայն,
Այլ նաև տաքո՛ւկ-տաքո՛ւկ կարոտով,
Եվ ապաստմից ջերմում ու դողում,—
Մի վայրկյան հետո
Կտեսնես, որ քո դուռը կբախվի,
Եվ շրթերիցըս, մի վայրկյան հետո, սիրով կկախվի
(Համբուրի՛ց առաջ) քնքշանքըս շողուն.
— Բարի աջողո՞ւմ:

18.11. 64

Երևան

ԲԱՐԻ ԻՐԻԿՈՒՆ

Արեգակն է թեքվում:
Կարճանում է օրը:
Եվ լեռները նորից երեխա են ծնում՝
Ստվերների տեսքով,
Որ մեծանում քիչ-քիչ
Ու թաղում են իրենց ծնող մորը:

Պտտահողմը՝
Հենված ոտնաթաթի վրա,
Խոյանում է երկինք՝
Հաստատելով
Ժխտված առասպելը համբարձումի:

Ցրտող օդում դանդաղ թարտում է
Մի կտոր տաք մարմին,
Որ թռչուն է կոչվում:

Ինչ-որ կին է կանգնած խուփ դաշտի մեջ,
Եվ ոտների տակով անց է կենում
Երկրագնդի անտես այն առանցքը,
Որի երևացող մասն է ինքը:

Առա՛նց հանցանքի մեջ բռնըվելու,
Առա՛նց վկաների առկայության
Ինքըս մեղավոր եմ ինձ ճանաչում
Ու վախվորա՛ծ-քաշվա՛ծ մրմնջում եմ հեռվից,
Մրմնջում եմ արդեն ո՛չ թե սրան,
Այլ այն մեկին՝ իմի՛ն, հեռավորի՛ն.
— Բարի իրիկուն քեզ, ի՛մ մեճավոր...

15.XI. 81

Երևան

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ

Ուռնացած երեկոյի մեջ լույսերը կեռ-կտուցավոր
Վաղուց են գիշերը պեղել:
Մայրերը էլ չեն հորանջում մարդկային կրունկների տակ:
Փողոցներն ավիած են արդեն.
Մնացած կեղտերը մթան պիտի որ արևը մաքրի:
Քնել է— և աչքերը բաց—
Քնել է ողջ քաղաքն արդեն:
Եվ մի՞թե դեռ չես քնել դու.
— Սիրելի՛ս, քեզ գիշե՛ր բարի:

Ճյուղավոր թախիծն ուզում է դեռ պատվել նաև սաղարթով,
Որպեսզի հետո, երևի, ստվեր տա, թունո՛ւտ մի ստվեր:
Այդ թունոտ ստվերի ներքո քնի՛ ո՛վ որ կուզենա,
Բայց ո՛չ դու.
— Քեզ գիշե՛ր բարի:

Կննջեն պահակներն անգամ՝
Գիշերվա ա՛յն հովիվները,
Որ զգոն լույս ու լամպերի շնադին հսկողության տակ
Մշտապես արածեցնում են մակաղված զգուշությունը:
Միայն ե՛ս բովանդակ գիշեր աչքերըս պիտի չփակեմ,
Քանի որ ամեն կերպ հիմա քո տեղն է բռնել կամենում
Մի ծանոթ պառաված օրիորդ՝
Այս կաշուն անքնությունը,
Որից ինձ չեն փրկում նաև քնաբեր կոչված դեղերը:
Ու ես այդ անքնությունից՝
Պառաված օրիորդից այս նույն,
Այնպես եմ վախենում հիմա,
Ինչպես որ երեխան է միշտ վախենում բուժակ բժշկից:

Դո՛ւ գոճե՛, դո՛ւ եղի՛ր առողջ
Ու քնի՛ր.

— Քեզ բարի գիշե՛ր:

Ես կյանքում ինչքա՛ն գիշեր եմ ունեցել,—
Դժվար է ասել,
Քանի որ այդ հաշիվը պարզ չի արվում թվաբանությամբ,
Այլ միայն սիրո՛ մատնեքով,
Որ գուցե ծալվեն հաշվելիս,
Բայց դժվա՛ր, դժվա՛ր թե բացվեն:
Ես կանեմ այդ հաշիվը բարոյ,
Դա թող ի՛նձ, իսկ ինքը՛ր քնի՛ր.
— Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր:

Մի բարակ-քաղաքավարի անձրև է եկել ծամերով,
Եկել է առանց դադարի,
Եկել լոկ կարծես ի՛նձ համար,
Քանի որ արթուն մարդ չկա՛.
Բոլորը քնած են վաղո՛ւց:
Դե՛, դու էլ աչքերը՛ր փակիր.
— Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր:

.
.

Հենու չէ առավոտն արդեն:
Եվ—գուցե արևի ահից—
Դադարեց անձրևն էլ հիմա:
Անձրևն էլ դադարեց հիմա,
Մինչդեռ դու... շարունակվում ես:
Նաև դո՛ւ դադարիր մի քիչ.
Խղճա՛ ինձ և ի՛նքդ էլ ասա.
— Սիրելի՛ս, քեզ բարի գիշե՛ր...

9.11. 64
Երևան

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ

Իմ սենյակի մեջ
Գարնան հալոցքի պատրանք էր ցրում
Լվացարանի ծորակը ծանոթ.
(Սիրտըս կարոտ էր մտերի՛մ ձայնի)...

Ջրհորդաններում
Նորից տանջվում էր ջուրը թալկացած,
Որ մեկ-մեկ նաև ուշքի էր գալիս
Եվ ուրախ լալիս՝
Նո՛ւյն վաղածանոթ-ընտանի ձայնով.
(Սիրտըս կարոտ էր հարազա՛տ ձայնի,
Որ դեռ չէ՛ր հնչում)...

Ապակիների լուռության վրա
Անրուրմունք-անգույն ծաղկունքը ցրտի
Լուռ թախծում էին,
Ինչպես որ նույնիսկ բեկզիճն էր թախծում
Սառած-կանգ առած մեքենաների երակների մեջ.
(Սիրտըս կարոտ էր սպասվա՛ծ ձայնի,
Որ պիտի՛ հնչեր)...

Ու ես կարծես թե շատ էի նման այն տիպ-նկարին,
Որ իր թափանցիկ թաղանթի ներքո
Տանջվում է սաստիկ, խեղդվում է ասես,
Ու երազում է մի ձեռք մանկական,
Որ թրջի հրեն
Ու շրջի թղթին:

Եկա՛ր,
Թրջեցիր քո քնքշանքի մեջ

Մանկականից էլ անմեղ ձեռքերով
Ու փակցրրեցիր մաքրությանը քո,
Որ ես ազատվեմ ճնշող թաղանթից
Եվ պայծառացած գույներով զնգամ...

Դո՛ւ չշտապեցիր,
Կյա՛նքը չուշացավ,
Որ... մեր անձնական օրացույցի մեջ
Մե՛կ օր էլ ներկի ալ-կարմիր գույնով
Եվ գորշությանն իր տա նրանգ տոնի:

Եկա՛ր,
Որ (բա՛վ է) էլ չապավինեմ
Կարոտ հոլովող բառերին ծխոտ,
Եվ որ (հերի՛ք է) ձեռքերս ալկըս չսովեմ կրկին:

Եկա՛ր,
Եվ եկար՝ առողջությա՛ն պես,
Որ... իմ երբեմնի
Հիվանդությունն էլ վերհիշեմ հիմա
Քնքշությանը թաքուն
Եվ հասկանալի մի գորովանքով:

— Բարո՛վ ես եկել:

Եկա՛ր:
Եվ եկար՝ վարպետության՛ն պես.
Փոքր-իճշ ուշացած, սակայն մեկընդմիշտ:

— Գալուստըդ բարի՛:

Եկա՛ր,
Որ նույնիսկ ամենաանզո՛ր բառը («Տե՛ր աստված»)
Հանկարծ վերածվի ամենազորե՛ղ բառի («Տե՛ր աստված»):

Տե՛ր ու սե՛ր աստված,
Իրավ չի՞ ասված,
Որ մահիճները երբ հարդարված են՝
Արդեն չե՛ն ապրում, արդեն մեռա՛ծ են:
Եկա՛ր,
Որ նրանք հարություն՛ն առնեն՝ սրբերի՛ նման...

25—29.11. 64

Երևան

ԲԱՐԻ ԾԱՆԱՊԱՐԶ

Եթե աշխարհիս ճանապարհները
Լիճեհն միա՛յն միակողմանի՝
Լոկ գալո՛ւ համար,
Եվ ո՛չ գնալու...

Բայց բիլ երկնքի աստղագիր թղթին
Իր վայրկենական վարժ ձեռագրերով
Շանթն է վերստին ինքնաշարժ գրում
Ասես պետի պես ստորագրում.
Ա՛յն պետի,
Որի մականունն է Կյանք, անունն՝ Անհրաժեշտ.
Դու մեկնե՛ս պիտի.

— Բարի ճանապարհ:

Տե՛ս,
Ծիռ Կաթինը կարծես թե լինի մի ուղեփակոց
Մայրուղու վրա կողպ Տիեզերքի:
Բայց ամպերն ահա կծածկեն նրան,
Ու քեզ կթվա,
Թե ճանապարհը քացված է արդեն.

— Բարի ճանապարհ:

Պտղած ծառերը կկոցահարի անձրևը շուտով,
Բայց չի կարենա կոցածն իր ուտել.
Նա ընդամենը կոցով կկծի
Ու ցած կգցի՝
Այնքա՛ն են հասած:
Նո՛ւյնքան հասած է միտքը մեկնումիդ.

— Բարի ճանապարհ:

Ծառերի վրա,
Նրանց սաղարթի հովանու ներքո,
Եվ թռչուններն են համազումարվել.
Նո՛ւյնպես քննում են հարցը մեկնումի:
Ու շուտով նրանք սուր եռանկյունով
Պիտի չափչփեճ երկինքն անկար՝
Քարտեզագրման քնազդով ծածուկ:
Դո՛ւ էլ չես կարող և պիտի չվես.

— Բարի ճանապարհ:

Քեզ հասկանում եմ և լա՛վ հասկանում.
Անհայտի կանչը վախեցնում է մեզ,
Բայց անկարելի-անհնարին է այդ կանչը չանսալ
Եվ չհետևել այդ ահեղ կանչին...

Հասկանում եմ քեզ և լա՛վ հասկանում.
Տարածությունը ձգում է այնպես,
Ինչպես... անդունդը կամ վիհը,
Հիշի՛ր,
Ինչպես... անդո՛ւնդը կամ վի՛հը:
Եվ դու
Կարո՞ղ ես չափել խորքերը նրանց
Գլխիվայր անկման քո թիռ-թռիչքով:
Իսկ մենք մեխված ենք՝ ցուցանակի՛ պես՝
Ապրելու տենչով մեխված ենք կյանքին:
Հանե՛լ ես քեզնից այդ մեխերը դու...

— Բարի ճանապարհ:

Մեր ծերությունը
Կարող է հանկարծ մեզ հարցնել մի օր.
«Իսկ որտե՞ղ, ասե՛ք,
Ինչպե՞ս երևաց,
Ինչո՞վ երևաց
Ջահելությունը ձեր ամենագոր»:
Գնո՞ւմ ես: Գնա՛:
Բայց խորհի՛ր նաև,
Թե քո ծերության անխուսափ հարցին
Դու ի՞նչ ես մի օր պատասխանելու:

Ասել-ասում են, թե լավ է այնտե՛ղ,
Որտեղ մենք չկանք:
Իսկ ես պնդում եմ, որ լավ է այնտեղ,
Որտեղ չե՛նք կարող չլինել ու կա՛նք:
Դու ինձ կարող ես հիմա չլսել:
Եվ մի՛ էլ լսիր:
Գնա՛,
Որ ինքրդ նո՛ւյնը հասկանաս
Եվ հասկանալով նաև համկացնես,
Որ աշխարհումըս ճշմարտությունը չի՛ հետազոտվում.
Ճշմարտությունը ապրվո՛ւմ է լուկ:

— Բարի ճանապարհ:

Կյանքի վճռական բոլո՛ր պահերին
Միշտ էլ լուր եմ մի քանի բուպե:
Այդպես էլ՝ նաև ճանապարհելիս:
Եվ կարճ են խոսում ճանապարհելիս,
Նաև՝ հապշտապ:
Ահա թե ինչու
Հոգուս խորքերում ու լեզվիս վրա
Բազմակետերն են խոսքերին հաղթում,

Եվ ինչ-որ զեռուն քառեր են վխտում՝
«Իհարկե... սակայն... և այսուհանդերձ»...
Եվ, այսուհանդերձ, թերևս գուցե

— Բարի... վերադա՛րձ:

22.11. 64
Երևան



ՆՈՐԻՅ ԶԵՆ ՍԻՐՈՒՄ
ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

ՍԵՐԸ

1.

Նա գալիս է մի՛շտ էլ ճամփաներով անհա՛յտ
չքարտեզագրված,

Ինչպես ջուրն անձրևի կամ հալոցքի:

— Սերն է:

Հողանդացիք ծովի՛ց, ամենազո՛ր ծովից
Հող են հափշտակում,
Խլում պատա՛ն-պատա՛ն, Աշխա՛ր-Աշխա՛ր:

— Սերն է:

Երբ վիթխարի նավը մոտենում է դանդաղ
Նավարկելի գետի ցածրը կամուրջներից,
Սրանք թևերն իրենց վեր են տնկում,
Իսկույն անձնատուր են լինում կարծես:

— Սերն է...

2.

Հետըզ գրուցողին պատախա՛ն են տալիս՝
Խելոք, կարգին-սարքին մեքենայի նման,
Մինչդեռ մտքով, անվե՛րջ, նրա՛ հետ են խոսում,
Ով հեռու է քեզնից,
Լոկ անունն է քեզ մոտ,
Իբրև մի անձնագիր, որ... չի կնքված:

— Սերն է:

Քներակիդ զարկը կաթոցքի է նման,
Ա՛յն կաթոցքի, որ (ճի՛շտ) քար է ծակում:
Անքնությունն անվերջ հյուսում է ցանց մի խիտ,
Որով ձո՛ւկ չեն որսում,
Խեղդում են մա՛րդ:

— Սերն է:

Քնքշացել ես այնքա՛ն
Ու խոցելի՛ դարձել,
Կարծես թե ապրում ես առանց մաշկի:

— Սերն է:

Երկու աչքեր, անվե՛րջ, հետապնդում են քեզ,
Երկու աչքեր, ասես մի զույգ դրոշմ,
Իրենց անջնջելի տիպն են դնում
Կյանքի՛դ, խմած ջրի՛դ, ողջ աշխարհի՛
Եվ մինչևիսկ արյան գնդիկների՛դ վրա,—
Երկու աչքեր՝
Դրո՛շմ,
Կնի՛ք,
Խարա՛ն...

— Սերն է...

10.111. 64

Գիլիզան

ՆՈՐԻՑ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ,
ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

Այդ ո՛վ է ասել՝ նորից եմ սիրում:
Նորի՛ց չեմ սիրում, սիրում եմ կրկի՛ն...

Ու երբ միգչևիակ այլուրից (դեռ տա՛ք)
Դու նո՛ւյն մարմինն ես հիշում քնազդով,
Երբ հոտն էլ սուրճի նրա՛ն հիշեցնում
Եվ քո գունազարդ քնի փոխարեն
Անքնությունն է փոում ապիտակ.
Երբ աստղերն իրենց կլորակ սանրով
Մազերդ եմ սանրում, իսկ դու վերստին
Ծոյանքի սովոր քո մազերի մեջ
Նո՛ւյն հանգստարար մատներն ես զգում,
Երբ օտար մեկի շարժումի, դեմքի
Նմանությունը հեռու-մոտավոր
Ոտներդ է ասես դնում գիպսի մեջ,
Իսկ միտքդ բեկում այնպե՛ս կտրական,
Ինչպես լույսերի վետվետումներից
Երկաթագծերն եմ կարծես ջարդոտվում.
Երբ անձրևներից հողն ասես թթվում
Եվ ստիպում է ռուճո՞ւ՛վ էլ զգալ,
Որ մեճակ ես դու իբրև մի... Իզրեկ,
Իսկ ինչ-որ մի տեղ կամ հեճց քո կողքին
Կա մի Իքս ուրիշ, առանց որի դու
Խնդիր չե՛ս կազմի, ո՛չ էլ կլուծես,—
Մի՛շտ, ամե՛ն անգամ պաշարում է քեզ
Նույն զգացումը անճեղք ու անդուռ,
Եվ հասկանում ես, որ մարդն, ի վերջո,

Նորի՛ց չի սիրում, սիրում է կրկի՛ն,
Քանզի կա մթին մի կախյալություն
Ջղի և արյան, հոգու և կրքի.
Քանզի նշանը հանման-գումարման
Այդ մե՛նք չենք դնում լուծվելիք խնդրում.
Քանզի թեպետև բախտ մենք ենք փնտրում,
Բայց բա՛խտը,
Բա՛խտը,
Բա՛խտն է մեզ ընտրում...

Ուստի միգչևիակ սիրառատ հոգին
Նորի՛ց չի սիրում, սիրում է կրկի՛ն...

6.11. 64

Ծրկահ

ՀԱԳՈՒՍՏՈՎ ԾՆՎԱԾԸ

Գործըս թողած՝
Ես քեզ համար
Նոր հագուստներ եմ հորինում,
Որովհետև ես չգիտեմ,
Թե դու ի՞նչ ես հագնում հիմա:
Եվ գարունը՝
Այս նոր ու հին
Ճարպիկ-ճարտար ջուլհակուհին,
Ի՛մ պատվերով ու քե՛զ համար
Շորտուհու պես
Անձեռագործ կերպասներ է ձեռագործում
Ու դիպակներ զանազան ու զարմանազան,
Եվ թվում է, թե ընկել եմ
Ինչ-որ աշխարհ խորհրդավոր ու բազմաբույր,
Ինչպես... ինչպես դեղատունը:
Եվ թվում է,
Թե քեզ համար շոր ընտրելը
Հեշտ է այնքա՛ն,
Որքան լեցուն դեղատոնից
Սովորական դեղ խնդրելը,
Հե՛շտ ու դյուրին՝
Իր սեփական ազգանունը ասելու չափ:
Բայց... քիչ հետո հասկանում եմ,
Որ դա հեշտ է,
Ինչպես մարդու երկու աչքում
Միանգամից ու նույն պահին նայելն է հեշտ:
Փորձե՛լ ես դու:
Հապա փորձի՛ր...

Ու հիմա քեզ հագցրնելու գործըս թողած՝
Մտածում եմ,
Որ կան կանայք
Եվ աղջիկներ կան աշխարհում,
Որոնց մարմինն ասես ճշում ու հայցում է
Իրեն փրկել հանդերձանքի կաշկանդումից.
Թեպետ միշտ էլ հագա՛ծ-կապա՛ծ՝
Մե՛րկ են քայլում նրանք կարծես:
Իսկ դո՛ւ...
Ուրի՛շ, ուրի՛շ ես դու:
Դու ծնվել ես
Կարծես այդպե՛ս՝ հենց հագուստո՞վ...
Քո սեփական ստվերն անգամ
Քեզ փաթաթվում-ծածկում է քեզ՝
Խորհրդապաշտ թիկնոցի պես...
Ո՛չ մի կոպիտ միտք ու տենչանք
Քեզ չի հասնում,
Իսկ հասնելիս՝
Քեզ դիպչելով ընկրկում է
Ու վնասում
Հենց այդ մտքի կամ տենչանքի տիրոջն իրե՛ն,
Իրե՛ն գցում իր իսկ աչքից...

Ուրի՛շ ես դու:
Քոպեսներին սիրում եմ լոկ,
Միա՛յն սիրում:
Քոպեսների անունն ի՞նչ էլ դրած լինեն՝
Իմպեսները միշտ կոչում են նրանց... Մ ա թ ի ա մ:

24.111. 64

Դիլիշահ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Մարիա՛մ, լսո՛ւմ ես,
Տեսնո՛ւմ ես, Մարիա՛մ,
Ու երբ բացում եմ իմ լուսամուտը,
Ասես բացում եմ
Գծված ջերմուկի գազաուստ մի շիջ:
Դրսում անձրև է շեղակի մաղում,

Նույն լուսամուտով երկինք եմ թռչում,
Որ արդեն հիմա՝ անձրևից հետո,
Վճիտ է ու ջիճջ՝
Քո հայացքի՝ պես,
Եվ լայնատարած ու հեռագնաց՝
Ինչպես ժպիտըդ:
Հետո երկնքից ընկնում եմ սարին,
Որտեղ վեհորեն ժայռերն են թառել՝
Նախապատմական թռչունների պես...

Դու ի՛նձ չես մերժում:

Դու աշխատում ես ժխտել ինքըդ քե՛զ:
Եվ քո մերժումի սուտ-սուտ խոսքերից
Կարող եմ խրտնել ես այնպես դյուրին,
Ինչպես... քարեղեն այս թռչունները:
Հիմա հասկացա՞ր...

Տե՛ս

Հորիզոնի գիղգ-գգվոտ գոգին
Իր գանգրագիսակ գլուխն է դրել
Մեկնրված դաշտը՝
Մի անտառապատ մեծ լեռան տեսքով,

Որի անունը քչերը գիտեն,
Ինչպես որ իմը:
Իսկ ո՞վ չգիտի, Մարիա՛մ, անունըդ,
Որ հորիզոնի նման է, Մարիա՛մ.
Երբ ընկրկում եմք՝
Նա մոտենում է,
Երբ մոտենում եմք՝
Հեռանում է նա...

Գեթ մեկի՛ համար,
Գոնե ի՛նձ համար մի՛ լիճիր կյանքում
Այս քո անվան պես կամ հորիզոնը,
Որ... երբ մոտենամ՝
Դու չհեռանաս...

24.111. 64

Դիվիզան

ՍՈՒՐՇԻ ԳԱՎԱԹԻ ԴԻՄԱՑ

Դու մի հորինված էակ ես գուցե
Ու հանդիպել ես ինձ մտքումըս լոկ:
Բայց իրական ես, ինչպես բուրմունքը
Հողի՛,
Վարունգի՛,
Խոտի՛,
Մատիտի՛:
Եվ ես ուզում եմ, որ շրջապատես
Ինձ ա՛յդ բույրերով,
Լոկ ա՛յդ բույրերով՝
Հողի՛,
Վարունգի՛,
Խոտի՛,
Մատիտի՛:
Բույրով մանկության,
Բույրով մաքրության...

Ի՛նչ զարմանալի աչքեր ունես դու,
Կարծես թե լինեն երկվորյակ լճեր
Հին հրաբխի զույգ խառնարանում:

Ի՛նչ հրաշագործ նայվածք ունես դու,
Ինչի նայում ես՝ քե՛զ ես նկարում:

Ծոծրակդ կարծես մթին անտառի բացատ է գողտրիկ,
Ուր տիոված են միայն հասմիկներ:

Մազերիդ բույրից
Հին աստվածներն են հարություն առնում

Դամբանում իրենց՝
Ռունգներում իմ տաք:

Քնքշորեն ասված ամեն խոսքը քո
Եթեր է ճամփում ուղիորակներ,
Որոնց կարող է ամե՛ն ոք որսալ,
Ով երջանկության տառերը գիտի:

Քո նայվածքի հետ
Ինքրդ քեզանից զատվում-անջատվում,
Բազմապատկում ես ինքդ քեզ կարծես՝
Ծարժանկարի ժապավենի պես,
Որ... հազարնե՛րը հիպնան՝ ձրի՛:

... Հազարի՛ նման մի աղջիկ ես դու,
Ում գտել եմ ես՝ մեկըս հազարից,
Եվ հիմա՝
Քեզանից աստծո՛ւ չափ հեռու,
Նստած եմ ահա տխուր-երջանիկ
Ու դեռ փակ կրծքիդ տաք կաղապարով՝
Ծերմակ գավաթով, սև սուրճ եմ խմում,
Որ անքնությունն իր բույնը հյուսի
Լարված ջղերիս մերկ ծառի վրա:

Ու եթե մեկը սուրճով բախտ բացեր,
Ապա կարող էր գուշակել անտուտ,
Որ ես ինքնակամ ու սիրահոժար
Մնացած կյանքիս կեսը կտայի,
Միայն տեսնեի գրկիդ... թուխ մանուկ,
Ինչպես որ քեզ եմ իմ գրկում տեսել...

11.111. 64
Գիլիլեա

ԱՎԵԼՈՐԴ ԱՆՀՆՎԱՏՈՒԹՅՈՒՆ

Քո անունով, Մարիամ,
Քո անունով,
Այստեղ նահանջում է ձմեռն արագ:
Ամառն ստանց հերթի՝
Գարունի՛ց էլ առաջ,
Նպաստով է ապրում՝ քո անունով...

Եվ այստեղ կա մեկը քո անունով:
Ու երդվում եմ ես քեզ՝ քո՛ անունով,

Որ ատում եմ մի քիչ
Եվ սիրում եմ նույնքան
Օտա՛ր այս աղջըկան՝ քո անունով:

Նա ինչպե՛ս է ապրում քո՛ անունով.
Ինքը դո՛ւ չես, և նա... քո անունով:
Ուստի ատում մի քիչ
Ու սիրում եմ նույնքան
Օտա՛ր այս աղջըկան քո անունով:

Ես կանչում եմ նրան քո անունով,
Ու... տանջում եմ ես ինձ քո՛ անունով,
Իսկ նա իմ տանջանքից չի հասկանում ոչի՛նչ,
Այսքա՛ն անհասկացող՝ քո անունով:

Բայց կանչում եմ նրան քո անունով,
Կանչում այնպես, ինչպես մարդիկ հնում
Կանչում-կոչում էին ռզիներին բարի...
Ռզիդ չի՛ հայտնվում՝ քո՛ անունով:

Ուրեմն աշխարհումըս իրո՞ք չկա
Ու չի՞ լինում իրոք ո՛չ մի ռզի...

Ես ավելորդ անգամ, վա՛տ իմ,
Անհավա՛տ իմ,
Անհավատ եմ դառնում... քո՛ անունով:

20.111. 64
Գիփշահ

ԲԱՐԵՆՈՍ ԵՂԻՐ ԻՄ ԵՎ ԻՄ ՄԻՋԵՎ

Օգնի՛ր ինձ, Մարիամ,
Անաղարտ մնամ
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մեջ,
Որ դժգոհություն բառով է կոչվում:

Դժգոհությունից ես շա՛տ եմ դժգոհ:
Օգնի՛ր ինձ, Մարիամ,
Եվ ասեմ՝ ինչն՛վ.
Բարեխոս եղի՛ր ի՛մ և ի՛մ միջև,
Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ:

Ես խոսվել եմ նաև աշխարհից.
Ե՛կ ու վերստին հաշտեցրո՛ւ դու մեզ,
Թե չէ ես այսպես ապրել չե՛մ կարող:

Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին
Լիացա՛ծ, ժպտո՛ւն ու գո՛հ աչքերով՝
Հաղթելով և՛ քաղց, և՛ պապակ-փափագ:

Ուզում եմ ապրել անչար ու բարի՝
Գմբեթի ճեղքում բուսած տուղտի պես...

Մի բու թառել է իմ զույգ աչքերին.
Թոցրո՛ւ նրան:
Մի ձու սպիտակ ինձ քիթ է դարձել.
Կորցրո՛ւ այդ ձուն:

Ծանճեր են նստած ինձ վրա
Այնպե՛ս,

Ինչպես քունջութը՝ կաթնահունց հացին:

Ժանճը քունջո՛ւթ չէ.

Հացըս չի՛ ուտվում:

Ժանճով է լցված իմ գե՛րսը գան,

Ինչպես վարսանդը՝ խաշխաշի սերմով:

Խաշխաշ չե՛մ ուզում.

Կակա՛չ դարձրու:

Ասում եմ, իբր, կապույտի վրա

Չեմ նստում ճանճեր:

Լսո՛ւմ ես, Մարիա՛մ,

Ինձ ներս ու դրսից կապո՛ւյտ հագցրու...

26.XI. 63

Երևան

ԿԱՐՈՏԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄԸ

Ես իմ մթի՛ն-մթի՛ն կարոտն այնպե՛ս գիտեմ,
Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին...

Իմ իսկ շարժումները ես չեմ տեսնում,
Իրերն իրենց տեսքը թաքցրնում եմ ինձնից,
Բայց անսխալ արդեն և անսայթաթ
Ես շարժվում եմ այնտեղ,
Ապրում այնտեղ,
Գուցե այն ինքնալար ժամացույցի նման,
Որի սլաքները պոկելուց էլ հետո
Աշխատում է դարձյալ՝ ցույց չտալով
Այլևս ո՛չ րուպե և ո՛չ էլ ժամ...

Ու ճոճվելով մթան և մեճության միջև՝
Ես կարոտն եմ ուզում տարրալուծել
Քիմիկոսի նման, որ հասկանամ
Բնությունը նրա և խորհուրդը խորին:
Իմ ձգտումի վրա, ջանքիս վրա
Հեռվից քրքշում է ջուրը ջրհորդանի՝
Անասելի՛ հեռվից,
Անդսելի՛ հեռվից:

Մի քաղքենի թռչուն հեղուկ գեղգեղանքով
Իր խեղճ գոյությունն է երգ դարձրնում անքամ՝
Անլսելի՛ հեռվից,
Անորսալի՛ հեռվից:

Բառերն սկսում եմ անձս վիրավորել,
Որովհետև նրանք ինձ եմ արձագանքում

Անորսալի՛ հեովից,
Աններելի՛ հեովից:

Պատից պատ եմ քայլում, և քայլերիս
Ջայնը թվում է, թե շատ է հեովից գալիս,
Աններելի՛ հեովից,
Անկարելի՛ հեովից:

Թեպետ կույր չեմ բնավ,
Սակայն շուրջս նայում
Ու չեմ տեսնում ոչի՛նչ,
Որովհետև
Հաճախ մեր աչքերը ջոկվո՛ւմ-պոկվո՛ւմ մեզնից
Ու գնալո՛ւմ գնում և հասնում են այնտե՛ղ,
Որտեղից մենք հիմա շա՛տ ենք հեռու,
Անկարելի՛ հեռու,
Անհնարի՛ն հեռու:

Մենք ինքներըս վազում մեր հետևից
Ու չե՛նք կարողանում ինքներըս մեզ հասնել:
Ու չե՛նք կարողանում ինքներըս մեզ հասնել...

Եվ հենց դա՞ չէ արդյոք, որ կոչվում է կարոտ...

4, 5.11. 64
Երևան

ԱՅՍՊԵՍ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ

Պարտականության ու սիրո միջև
Այդ ես եմ տնկված՝
Ուղեփակոցի գերանի նման...

Եվ որտեղ որ է
Ես ինձ արմատից ինքքս կպոկեմ,
Այսինքրն՝
Կելնեմ ու լուռ կգնամ հենց Օրենքի մոտ,
Կասեմ.

— Վերցրո՛ւ ինձ,
Քո օրենսգրքի կետերից մեկը դարձրո՛ւ ինձ, կասեմ:
Դարձրո՛ւ ինձ, կասեմ, այն «Չի կարելի՛»-ին,
Այն «Ո՛չ»-ը,
Այն «Չէ՛»-ն,
Որ մեզ խեղդում է
Կրծքի չբուծվող հեղձուկի նման...

Ու եթե հարցնես կատակասերի՛ն,
Ծարպոտ կծպտա ու կհոհոս,
Թե աքաղաղը
Ջուրկ է ձեռքերից լոկ ա՛յն պատճառով,
Որ հավն էլ չունի իրան ու հագուստ:
Իսկ ես... (ի՛նչ կատակ)... տնքոցով մի քույր
Ասում եմ, ինչպես պաղատում եմ գույթ.
— Առե՛ք ձեռքերըս, խնդրեմ, կտրեցե՛ք,
Որովհետև ես, ահա՛, տնկված եմ
Պարտականության ու սիրո միջև՝
Ուղեփակոցի գերանի նման,
Եվ որովհետև ես այսուհետև

Կարի՞քը չունեմ իմ այս ձեռքերի,
Եթե նա՛ չկա,
Ում մի ժամանակ «իմա» էի ասում,
Եվ ասում այնպե՛ս,
Որ բուդդայաբար պագած գորտերը
Առվի եզերքին

Պշած աչքերով ինձ էին նայում
Եվ, հավանաբար, ջանք էին անում միտը պահելու
Կարճ, բայց կրակված այդ բառը («ի՛մըս»)...

Հիմա դու իմն ես, որքան որ իմն է... Մադագասկարը,
Հիմա դու իմն ես,
Որքանով իմն է... Հաբեշտանի արքայադուստրը,
Որովհետև ե՛ս,
Ես ի՛նքս եմ տնկված պարտականության ու սիրո միջև՝
Ուղեփակոցի գերանի նման...

Այսպես չե՛ն սիրում:
Այսպես... մեռնում են մի դանդաղությամբ,
Որով փտում են հին նավակները ծովախորշերում...

14.XI. 63
Երևան

Դ Ռ Ա Ն Ջ Ա Ն Գ Ի Ա Ռ Ա Ջ

Ես կոճակն եմ սեղմում.
— «Բո՛րբ»,— զնգում է զանգը,
Իսկ սենյակիդ ներսում արձագանքում՝ «բոսո՛ր»:

Սպասում եմ: Մի պահ:
Մի պահ: Թե՛ ողջ մի կյանք,
Որ նման չէ, ավա՛ղ, հոսող ջրի կյանքին:
Սպասում եմ՝ և «մո՛թ»—
Ջայնը ետ է դառնում
Եվ չակերտի նման ինձ իր մեջ է առնում:
Դու չե՛ս վերադարձել:
Սուտ է ուրեմն, այո՞,
Թե կա մի վեցերորդ ինչ-որ զգայարան:
Սուտ է ուրեմն, այո՞, մանկությունից ծանոթ
«Սիրտս վկայում է» այն խոսքը, որ գուցե
Մարդկայինն է բոլոր խոսքերի մեջ մարդկանց...

Ու կոճակն եմ սեղմում՝ կոկորդի՛ պես,
Եվ այդ խեղճ կոկորդը խոխոտում է խոպոտ:
«Գո՛րշ»,— սողում է ձայնը՝ հորանջի՛ պես՝ դանդա՛ղ:

Սպասում եմ: Մի պահ: Թե՛ բովանդակ մի կյանք,
Որ խաչվում է քո տան սանդուղքների գլխին,
Խաչվում՝ պաշտամունքի չարժանացած:
Սպասում եմ և՛ «սև»,
Ջայնը գույնի փոխված՝
Կրկին ետ է դառնում
Եվ ինձ առնում
Իր սև շրջագծում մահագդային...

Դու տա՛նը չես: Պա՛րզ է: Դու չե՛ս վերադարձել.
Որբ ես թողել ն՛ ինձ,
Ե՛վ մի ամբողջ քաղաք,
Եվ հերթել ես մի բան, որ հաստատել է պետք.
Ա՛յն, որ կա վեցերո՛րդ զգայարան
Եվ որ մարդկանց «սիրտը վկայում է» իրո՛ք:

Ու կոճակն եմ սեղմում.
«Սե՛ր»,— ճշում է զանգը,
Իսկ սենյակիդ ներսում արձագանքում՝ «կարո՛տ»...

Սպասե՛լ եմ: Որքա՛ն...
... Ու երբ վերջին անգամ
Բթամատս նորից կոճակին եմ դնում՝
«Բո՛րք»,— հնչում է անվերջ, ղողանջում է կրկին,
Եվ այդ «բորք»-ի հուժկու արձագանքը («բոսո՛ր»)՝
Արդեն լուսաբացի կիսաքնում
«Բարի լույս» է հնչում բոլո՛ր կանանց համար,
Որոնց ես չեմ սիրում, որովհետև
Քեզ եմ սիրում նույնիսկ ա՛յն ժամանակ,
Երբ որ իմ դեմ դուռըդ բաց չի լինում:

22. X. 62
Երևան

Ի Ր Ի Կ Ն Ա Մ Ո Ւ Տ

Իր արդուզարդից օրը մերկացավ՝
Խափշիկուհու պես,
Ու մնաց այնպես, ինչպես կար՝ սևո՛ւկ:
Աստղերը վերում՝
Ծնիկների պես,
Պազեցին կրկին:
Ցրտեց:
Լույսերը հետո՛ կվառվեն:

Օրվա այս պահին
Մեղք է զբաղվել որևէ գործով:
Մեղք է մի՛նչև իսկ շոյել ու սիրել:

Թո՛ղ զսպանակված և ամենամուտ լուրջունը գա,
Ու նրա շնչից՝
Թոքերի նման դանդա՛ղ ուռչելով՝
Ամանեղենը թո՛ղ խոհանոցում ինքն իրեն զնգա,
Իսկ քարանձավում մեր ականջների
Թո՛ղ չղջիկի պես ձայները քնեն,
Եվ աստվածները զարթնեն մեր հոգում՝
Մեզ հաշտեցնելով ցրտին ու մթին...

Ի՛նչ լավ է, որ քո
Նորածնորեն դիզված մազերում
Ունես հնարույր բարության հետքեր՝
Թե՛լեր սպիտակ:

Ի՞նչ լավ է, որ դու լոռում ես կողքիս՝
Անտառաբնակ աքիսի նման,
Իսկ քո տամկացած աչքերում հիմա
Թառում են ահա փոքրիկ փայլաններ...
Ափսո՛ւ... ուրեմըն՝ լույսերն են վառում:

26. XI. 83

Երևան

Ա Գ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Գ Ի Ն Ը

Եվ պե՛տք է արդյոք
Քեզ միշտ ունենալ իմ կողքին: Ինչո՞ւ:
... Ու ես ծխում եմ,
Որ ծխի տեսքով
Այս շլախախտիչ ազահությունը դուրս փչեմ ինձնից,
Ջանամ գոհանալ իմ ունեցածով,
Որ շա՛տ է այնքան:
Մի՞թե, տե՛ր աստված, շատ չէ իսկապես:

Բայց կյանքի փշոտ շարժումներից, ինչպես կետերից,
Կախված ճոճվում են
Ու մեզ են կանչում ազահ ըղձանքներ:
Բայց կյանքի փշոտ շարժումներից, ինչպես կետերից,
Կախված ճոճվում են
Կարկատանները մեր ծվատ հոգու...
Ես չե՛մ կամենում, որ իմ պատրանքը փոխվի պատանքի
Եվ հետո, ծվա՛տ, կախվի աշխարհի կետերից փշոտ:
Ես սիրում եմ քեզ
Ու քեզ հետ նաև... անհնարինը՝
Ա՛յն գոհությունը,
Ում չի՛ հանդուրժում մեր գոյությունը:
Ուրեմն ի՞նչ անել,
Ի՞նչպես սիրել քեզ— սիրվել քեզանից և...
...Էլ չուզենալ
Ոչի՛նչ ավելի.
Սեփական իղձը, դավաճանի պես,
Գամել չորս մեխով,
Սեփական ցավին
Չորստապակ մեղր քսել ու կլել՝

Տհաճ, բայց բուժիչ դեղահատի պես,
Սեփական մտքից
Կտրել ուղղանկյուն մի քառակուսի
Ու վրան գրել սեփական արյամբ.
«Եղա՛ծն էլ շատ է»,
Գրել ու մեխել սեփական ափին,
Եվ ամեն վայրկյան ընթերցել ծածուկ՝
Դասը չիմացող աշակերտի պես...

11. III. 64

Դիլիջան

ԶԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Սիրո կապանքի և տառապանքի
Հարցերն են անվերջ պատասխան փնտրում,
Եվ բառերն իրար ձգում են կրկին,
Ինչպես ողնաշարն՝ իր իսկ ողերը,
Եվ... ստացվում է
Ահավո՛ր խոսքի ահավո՛ր կմախք.
— «Այսպես ապրելը անկարելի է»...

12. III. 64

Դիլիջան

Հ Պ Ա Տ Ա Կ Ի Խ Ռ Ո Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Ասում են, թե մի բան կա լուկ,
Որ անձնապես ու մեծ-մեծակ են սովորում՝
Գիտությունը տառապանքի...

Ու կսկիծն է տիրակալի հովեր առնում:

Ա՛խ, տե՛ր Կսկիծ, հարկավոր չէ՛,
Բավակա՛ն է, տե՛ր, ողորմյա՛:
Այս դժվարին գիտության մեջ
Հմտացել են ես շա՛տ վաղուց:

Ու չլինեք թե ինքնածին բարությունըս,
Կարող էի ի՛նքս դառնալ
Ուսուցչապետն ա՛յս գիտության,
Որ անձնապես ու մեծ-մեծակ են սովորում:
Ա՛խ, տե՛ր Կսկիծ,
Այսքանն արդեն բավակա՛ն է,
Է՛լ ավելին հարկավոր չէ՛, տե՛ր, ողորմյա՛...
Չե՛մ ուրանում.
Ես քո նախկին ու մշտական հպատակն եմ:
Ուրեմն այլևս ինչի՞ համար
Ուժը փորձել հպատակի հլու մեջքին:
Ինչի համա՛ր, տե՛ր, ողորմյա՛...
Եվ չափազանց զգո՛ւյժ եմ ես,
Նույնիսկ վախկո՛տ.
Անջատումից եմ վախենում,
Երկյուղում եմ տվայտանքից չվտարվող,
Կարոտի սև արյունումից եմ սարսափում...

Ա՛խ, տե՛ր Կսկիծ,
Քո բարձունքից ամենազոր
Մի պահ անսա հեզ ու հլու հպատակիդ.
— Դժվա՛ր բան է մարդ լինելը,
Դժվար է, տե՛ր:
Ամբողջ կյանքում
Ես եղել եմ ազնիվ, ինչպես... խաղալիքը:
Ուրեմն ի՛նձ էլ պետք է ջարդել
Խաղալիքի նման: Ինչո՞ւ:
Հարկավոր չէ՛, տե՛ր, ողորմյա՛...

Չէ՛ որ նույնիսկ ավերվելուց հետո
Վանքը վանք է կոչվում
Եվ կամուրջը՝ կամուրջ կրկին:
Ուրեմն ինչո՞ւ գուր ուժ փորձել:
Չէ՛ որ, տե՛ր իմ, փորձը մեկի
Մյուսի համար շատ հաճախ է փորձանք դառնում:
Հարկավոր չէ՛, տե՛ր, ողորմյա՛...

Կրկի՞ն ասեմ,
Որ չափազա՛նց զգույժ եմ ես,
Նույնիսկ վախկո՛տ:
Վախենում եմ
Մինչև անգամ... հայելու մեջ ինձ նայելուց.
Կարեկցանքից վատթար բան է միշտ հարուցում
Իմ... ծպիտը:
Ա՛խ, տե՛ր Կսկիծ,
Քո բարձունքից ամենազոր
Մի պահ անսա հեզ ու հլու հպատակիդ.
— Անտանելի՛-անե՛ղ բան է,
Երբ խղճում է մարդ ինքն իրեն:
Առավել քան բավական է հենց այսքանը,
Իսկ ավելին հարկավոր չէ՛,
Տե՛ր, ողորմյա՛...

Երբ կսկիծն է դառնում արդեն անտանելի,
Ասում են, թե մոտենում է նրա վերջը.

Ջո'ր են ասում:

Սո'ւտ են ասում:

Մի՛շտ կասեին,

Եթե իրո՛ք մենք անձնապես

Ու մեն-մենակ սովորեինք

Գիտությունը տառապանքի:

Բայց մենք, կարծես, միասի՛ն ենք այդ սովորում

Մի վիթխարի լսարանում,

Որտեղ... սերն է դասախոսում... մնջախաղով՝

Խուլ-համրերի համար կարծես:

Եվ չի՞ օգնի «տեր-ողորմյա»-ն:

Մնում է, որ դու ի՛նձ սիրես,

Ես քե՛զ սիրեմ,

Մենք թե՛ իրար, թե՛ մեզ սիրենք՝

Ընդդեմ այս խուլ տառապանքի,

Կույր կսկիծի,

Համըր ցավի.

Սիրենք իրար... հավիտենից հավիտյա՛նըս,

Եվ թող նույնիսկ չգտնվի գոնե մե՛կը,

Որ բարությանը «ամե՛ն» ասի:

Ո՛չ «ողորմյա»

Ո՛չ էլ «ամեն»:

Բավակա՛ն է:

Հարկավո՛ր չէ...

14. III. 64

Գիլիգան

Բ Ե Ռ Ա Ն Ն Ե Ր Ք Ո

Անցնում էիր:

Ողջ երեկոն քոնն էր կարծես,

Ողջ երեկոն՝ իր բույրերով ու ջերմությամբ:

Երկարափեշ եթե լիներ հագուստը քո՝

Ես կասեի,

Որ երեկոն քարշ էր գալիս քո ետևից՝

Քո հագուստի փեշի նման:

Սակայն կարճ էր հագուստը քո:

Եվ երեկոն

Ամփոփվում էր քո ծնկների ծալերի մեջ՝

Կարճ հագուստիդ կարճ փեշերի կնարի ներքո...

Վերջալույսի արևը շեղ գտել էր քեզ

Ու շուրջվել քո հագուստի կոճակներին:

Վերջալույսի շեղ շողերի միջնորդությամբ

Երկարում էր քո ստվերը՝ հմայքի՛դ պես,

Ու քայլում էր քեզնի՛ց առաջ՝ հմայքի՛դ պես...

Եվ արթնացավ մեջըս հանկարծ

Ինքնաձաղկման և ամոթի

Տարօրինակ մի ցանկություն.

Եթե կյանքում կա քեզ նման մի թանկություն,

Ես ինչպե՛ս եմ կյանքին նայել էժան աչքով՝

Ոչ թե անո՛ւշ մի հիացքով,

Այլ մի տտի՛պ,

Հաճախ դա՛ռն,

Նաև կծո՛ւ մի հայացքով:

Եվ ինչպե՛ս եմ հաճախ իջել-ստորացել՝

Բարկանալու և դատելու աստիճանի,

Չարամալու և ատելու աստիճանի,
Ու թույլ տվել, որ նողկանքը տեղից հանի
Հիացմունքի՛ն:
Հոգով-արտո՛վ ներողություն...

Այսուհետև, ինձ հավատա՛,
Է՛լ չպիտի ես խառնըվեմ ո՛չ իմ գործին.
Է՛լ չպիտի այսուհետև
Հակվեմ կյանքի աղտ-աղարտի ծանրության տակ:
Առանց այն էլ ես հակված եմ բեռան ներքո
Ա՛յն վիթխարի երգեհոնի, որ ի ծնե
Սապատվել է իմ շալակին:
Թող հնչի նա՛:
Եվ անցիր դո՛ւ:

Միայն թե դու... «մե՛ք քիչ կա՛մաց գնա, գո՛գալ»,
Որ քո կամաց և անշտապ քելքի չափին համաչափվի
Մեր խեղճ սրտի տրոփյունը հաճախակված,
Որ քո տեսքից հանգստանան աչքերը մեր,
Եվ քեզ թաքուն ունենալուց
Ջղերը մեր քիչ խաղաղվեն,
Ու երկարի այս անդորրը՝ շուքի՛դ նման,
Ու կարճանա հոգնությունը՝ փեշերի՛դ պես...

26. XI. 63
Երևան

Ա Ր Գ Ե Լ Ա Ն Ո Ց

Երկու նոնակ՝ կրծքիդ վրա...
Երանի՛ թե նրանց պայծառն ինձ սպաներ
Անտառի մեջ՝
Փասյանների ներկայությամբ,
Կամ սենյակում՝
Վարագույրի վկայությամբ...

Ու երկու աչք՝ հոնքերիդ տակ.
Պատերազմի երկու հրձի՛գ...
Ե՛կ, գրավի՛ր, միացրու քե՛զ.
Ես մի ամբողջ տիրություն եմ անտիրական,
Որ վաղուց է զգում կարիք
Քեզ պես վայրագ ու բարբարոս տիրակալի...

Ու երկու ոտք՝ նազանքիդ տակ.
Մկրատ մի նուրբ, որ կոպտորեն
Կտրատում է թելն ըղձանքիս,
Ինչպես լույսի էլեկտրական լարն են հատում,
Եվ խավարը անհուսության
Ինձ է ներսից շրջապատում...

Եվ զույգ սկանջ՝
Ցորենագույն գանգուր մսե
Սևամազե գանգուրիդ տակ անթափանցիկ...
Եվ զո՛ւր մի կանչ.
Դու չե՛ս լսում,
Որովհետև... մտքիս մեջ եմ հետըդ խոսում,
Որովհետև մինչև անգամ... ծանո՛թ չեմ քեզ...

Ու թերևս դու կի՛ն էլ չես,
Այլ գուցե մի... արգելանո՞ց,
Ուր հասնում են նոճե՛ր վայրի,
Ուր փասյաններն են զբաղվում հրձիգությա՛մբ,
Ուր հրազեն չի արձակում ո՛չ մի որսորդ...

Արգելանո՞ց... արգելանո՞ց:

Ես հասկացա՛,
Բայց... ոտքե՛րըս չեն հասկանում
Եվ, ինքնաշարժ կարկինի պես,
Բնա՛վ կամքրդ չհարցնելով՝
Հետևում են դեռևս քեզ
Եվ չափում ա՛յն,
Ինչ կոչվում է «անմատչելի»
Ու ձգվում է
Իմ հիացքից մինչև անձիր հմայքը քո,—
Մի անսահմա՛ն տարածություն,
Որ թերևս հաղթահարվեր,
Թե աստղային օրացույցով մենք ասրե՛կնք
Կամ թերևս չլինե՛ինք այսքա՛ն... այսքա՛ն օրինապահ:

26. XI. 63

Ծրկահ

Մ Ի Ա Մ Տ Ո Ի Թ Յ Ա Կ, Խ Ա Ղ Ը

Բոլորակի մեջ հայելիների,
Հայելիների քառակուսու մեջ
Տանջում են նրանք իրենց վարսե՛րը,
Դե՛մքը, հագուստի փոթ ու դարսե՛րը,—
Ամե՛ն ինչ անում, որ նայե՛նք իրենց,
Իսկ երբ նայում ենք՝ չեն նայում, դիտմա՛մբ:

Իրենց են տանջում
Ու... մեզ են տանջում:

Չե՛ն նայում, դիտմա՛մբ, ու քայլում այնպե՛ս,
Վճռել են կարծես իրենց թու՛յլանքով
Եվ իրենց անհաս-անմատուցությամբ
Ցողել փողոցը,
Պողոտան ջրել,
Իսկ մեզ էլ վառել երաշտով հրե:

Չե՛ն նայում, դիտմա՛մբ:
Կրկին քայլում են:
Եվ եթե նրանց զիստերն են դողում,
Մեր էլ՝ սրտերը:

Քայլում են կրկին:
Եվ արեգակը ուրիշ ո՛չ մի տեղ
Իր ազդեցությունն այնքան չի զգում,
Որքան որ նրանց դեմքերի վրա.
Նույնիսկ արևի փոթանցիկ խաղից
Երանգ են տալիս ու առնում երանգ:
Եվ նրանց խոսուն մաշկին նայելով՝

Փշաքաղվում է մաշկը մեր այնպես,
Ինչպես զգայուն լճակը՝ քամուց:

Յուրաքանչյուրը յուրովի նազում,
Օրո՞ր-շորորո՞ւմ, քայլում է կրկին,
Իրեն նայողին չի՛ նայում, դիտմա՛մք,
Եվ մեզ մտքի մեջ համարում գուցե
Այնքա՛ն միամիտ, անգե՛տ ու անփո՛րձ,
Որ հավատում է, թե մենք չգիտենք
Իր պահվածքն ուրիշ՝ ինչ-որ ծառի տակ,
Ինչ-որ անկյունում, ինչ-որ սենյակում,
Ինչ-որ մեզ նման մի ինչ-որի հետ,
Որին տիրում է— անձնատուր լինում,
Որին հաղթում է և հաղթվում որից,
Որպեսզի... կյանքը նորի՛ց ու նորի՛ց
Հաղթանակ տանի՝
Բարուն հակվելով
Եվ, ընդդեմ մահվան, շարունակվելով...

Եվ մի՞թե չարժե,
Եվ չարժե՞ արդյոք,
Որ կյանքի հավերժ հաղթության համար
Նրանք հավիտյան մե՛զ տանջեն այսպես
Եվ... իրե՛նց տանջեն:

17. 11. 64

Երևան

Ա Ն Ս Պ Ա Ս Ե Լ Ի Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Գեղեցիկ չէր, ես էլ գերված-տարված չէի:
Կար պաղ գինի միայն ու նույնքան պաղ զրույց:
Ո՛չ ես, ո՛չ էլ ինքը սիրահարված չէինք,
Ո՛չ էլ խոսում էինք հիմար սիրուց:
Հետո... ինչպես եղավ... ու տաքացա՛վ գինին,
Ու տաքացավ խո՛ւքը, ու... տաքացա՛վ:
Ինչքան խմեցի ես՝ ասաց «ան՛ջ լինի»,
Ինչքա՛ն խմեցի ես՝ այնքան գեղեցկացա՛վ,
Այնքա՛ն գեղեցկացավ, որ չեմ հիշում հիմա,
Թե մինչև այդ ինքը իր ինչի՞ն էր նման...

Հետո, երբ դուրս ելանք, թվաց, թե նա
Երջազգե՛ստ չի հագել, այլ փոթորի՛կ:
Հետո... փոթորիկն այդ տեղափոխվեց իմ մեջ,
Հետո... փոթորիկն այդ փոխանցեցի նրան՝
Իմ մատների միջով—միջոցով իր թևի:
Հետո... փոթորիկն այդ մեզ երկուսիս քջեց,
Թավալզուր տարավ չգիտեմ ուր,
Բանալիով ջարդեց ինչ-որ մի դուռ,
Եվ քանի որ արդեն հոգնած էր շատ՝
Փոթորիկը պառկեց մահճակալին,
Հսկա՛ փոթորիկը նեղի՛կ մահճակալին,
Որպեսզի մի փոքր հանգստանա...

Հանգստացավ, երբ որ... առավոտն էր բացվում...

Հիմա, կանգնած այդ նույն մահճակալի դիմաց,
Փոթորկի հետքերն եմ զննում ու տնտրում
Ո՛չ անկողնու վրա, այլ իմ ներսո՛ւմ: Հիմա

Մինչև Յունկըս խրված ինքըս իմ մեջ՝
Ինչպես ծառը հողում,
Ես ճոճվում եմ տեղում:
Մեջըս սկսում եմ արմատ ձգել
Եվ ծառայի՛ն մտքեր, ծառի՛ մտքեր:
Ու ես ծառի նման չեմ կարենում լքել
Այն տեղն, ուր տնկված եմ:
Հիմա ինչպե՛ս պոկեմ,
Ինչպե՛ս ինքըս պոկեմ ինձ ինձանից
Ու վեր կենամ գնամ.
Քայլող ծառի՞ նման...

30, 31. X. 65

Զահախի

Գ Տ Ն Վ Ա Ծ Մ Ի Ա Վ Ո Ր Ը

Ասացի՛ ի՞մն ես:
Ասացիր՛ քո՛նն եմ:
Ու լուռ ենք հիմա...
Իմ մազերն ես դու մատներով սանրում
(Թե՛ ակամայից ուզում ես նաև
Կարդալ ծերության այբուբենը պարզ՝
Արդեն ճերմակող մազերն իմ գլխի):

Ու լուռ ենք դարձյալ...
Ես քեզ մտքիս մեջ փո՛րձ եմ պարտք տալիս,
Իսկ դու, կարո՞ղ ես, ժամանա՛կ փոխ տուր,
Որպեսզի կյանքը՝ փորձարարն այս մեծ,
Նորի՛ց հաստատի
Նո՛ր օրինակով,
Որ կյանքում հաճախ այնպես է լինում,
Երբ սիրողները դեռ ողջ են-առողջ,
Իսկ սերը նրանց դառնում է լեզե՛նդ
Եվ... ապրում կյանքով հազարապատիկ...

Մենք լուռ եմք դեռ...
Իսկ դրսում,— մի պահ, խնդրո՞ւմ եմ, լսի՛ր,—
Թուշուններ ինչ-որ՝
Յուրաքանչյուրը մի-մի լարովի խաղալիք արես,
Նույն երգն են երգում՝ լարաթափելով,
Վերալարվելով՝ նո՛ւյնը նորերգում
Ու նորերգելով կարծես թե հերքում
Քամուն այս մաղձոտ՝
Սկեպտիկոսին այս վաղնջական,
Որ փնթփնթում է՝ «ամե՛ն ինչ կանցնի»,

Ու «կանցնի», իբրը, լոկ ա՛յն պատճառով,
Որ 1×1 հավասար է 1 և ոչ թե 2...

Ի՞նչ լավ է, որ քեզ
Հասկանալի չէ բարբառը քամու,
Դու ամենամե՛ծ հավատացյալն ես աշխարհում հիմա:
Ու ես էլ ահա հավատափոխվում-դարձի եմ գալիս,
Լցվում քո լեցո՛ւմ-լեցո՛ւմ հավատքով:

Ի՞նչ լավ է, որ դու
Ընդամենը քեզ կոչում ես «քո՛ւն եմ»
Ու չե՛ս հասկանում,
Որ ընդամենը «ի՛մբս» չես միայն,
Այլ նա՛ն...

Նաև միավո՛ր է պետք:
Միավո՛ր է պետք՝
Երջանկությունից կամ թուլությունից մշտապես ծնվող
Գլխապտույտի զերոյի՛ համար,
Զերոյանման մեր գլխի՛ համար,
Զերոյանման մեր սրտի՛ համար
Եվ զերոյացող ա՛յն կյանքի համար,
Որ ինքն իրեն է նարմանդած պահում:

Միավո՛ր է պետք:
Միավո՛ր է պետք
Ա՛յն հսկայական զերոյի համար,
Որ... Երկրագունդն է գծում պտույտով...

Իսկ դու,— ի՞նչ լավ է,—
Քեզ ընդամենը կոչում ես «քո՛ւն եմ»
Ու դեռ,— ի՞նչ լավ է,— չե՛ս էլ կռահում,
Որ ընդամենը «իմբս» չես միայն,
Այլ ինքդ ես նաև այդ... Միավո՛րը:

25—29. 11. 64

Երեան

Ծ Ա Մ Փ Ո Ր Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Դ Ե Պ Ի Ե Տ

Իսկ ինձանից
Ինչո՛ւ ես դու այսպես քաշվում և ամաչում:
Ի՞նչ է, մենք նո՛ր ծանոթացանք,
Իրար դեռ լավ չե՛նք ճանաչում:
Բայց, ամաչկո՛ւտ իմ սիրելի, ես քեզ գիտեմ
Ու սիրում եմ առնվազն մի 40
Կամ... 4000 կարճիկ տարի:
Դու ինչպե՛ս ես դա մոռանում
Ու քեզ պահում այնպես քաշված և ամոթխած,
Կարծես նոր եմք ծանոթացել
Ու դեռ կարգին չեմք ճանաչում մեկըս մեկին:

Ձե՛, սիրելի՛ս,
Մենք նորասեր զույգ չեմք, բնա՛վ:
Միրո քայլող հուշարձա՛ն եմք՝
Վաղնջակա՛ն և հինավո՛րց:
Ես քեզ անգիր ու գոց գիտեմ՝ կրակի՛ պես,
Ա՛յն կրակի,
Որ ստվերով մեզ նկարեց քարանձավի պատի վրա
Եվ բոցեղեն իր տազնապով ճիշտ թարգմանեց
Քո խի՛րսը,
Իմ խայտա՛նքը,
Իրարատենչ մարմինների մեր փոխադարձ ընդգրկո՛ւմը,
Որից դիցեր և աստվածներ ծնունդ առան՝
Մեր մեծացած մանուկների ծանոթ տեսքով...

Եվ դարերը մենք կարող եմք հաշվել այնպես,
Ինչպես մանկան ատամները՝
Գորովանքով մի կաթոգին...

Մեր սիրո մեջ ձմեռում են առասպելներ,
Ասքեր գիրհող,
Որ մեր ամեն մի հպումից
Արթնանում են հանգստացած,
Դրանից էլ հին աշխարհն է միշտ նորանում
Յուրաքանչյուր նո՛ր սիրո հետ՝

Մե՛ր սիրո հետ:
Եվ նոր սիրով հին աշխարհի նորացումն է
Մինչև անգամ կրկնությունը թո ամոթխած շարժումն է,
Այս թո երկչոտ տատամսումը,
Անգիտակից այս թո վախը,
Առանց որոնց սկի՛զբ չկա, սկի՛զբ, սկի՛զբ...

Իսկ սիրո մեջ ամեն՛ն սկիզբը միշտ տարբեր է.

Վերջն է նույնը:

Վերջն է նման:

Սակայն մե՛զ ինչ վերջը սիրո:

Վերջի մասին թող մտածի վերջացողը:

Մերն սկիզբն է:

Եվ ուզում են, որ սկիզբը լինի այնպես,

Ինչպես (հիշի՛ր) ա՛յն ժամանակ,

Երբ կրակը մեզ նկարեց իր ստվերով

Քարանձավի խոնավ պատին

Ու բոցեղեն իր տագնապով ճիշտ ու ճկուն կերպավորեց

Քո սարսո՛ւռը.

Իմ թրթի՛ռը,

Իրարատենչ մարմինների մեր փոխադարձ ճարակո՛ւմը,

Որով կյանքի կրակը միշտ մնաց անշեջ՝

Ծխանման տառապանքով

Եվ բոցածն երջանկությամբ:

Իսկ աշխարհում

Երջանկությունն ավելի է տարողունակ,

Քան տանջանքը,

Թե չէ սողուն ժամանակը այսպես արագ չէր սլանա՝

Երջանկության ժամը վայրկյան դարձրնելով...

Ուրեմն արի մենք իրարից զուր չամաչենք՝

Ծառ չծխանք,

Որ սերն ազատ շարունակվի, իբրև զուտ բոց,

Իբրև սնունդ մերատիպար աստվածների...

Ա՛յն, ինչ կյանքում մոռացվում է, միշտ չէ, գիտե՛մ,

Որ իսկապես արժանի է մոռացության:

Բայց մոռացի՛ր թո վարանքը,

Քո ամաչկոտ շարժումը,

Որովհետև մերպեսների համար, գիտե՛ս,

Ամաչելն է արդեն ամոթ:

Բացվի՛ր:

Բացվե՛նք:

Եվ մոռանանք,

Որ մենք նոր ենք ծանոթացել:

Բացվի՛ր:

Բացվե՛նք.

Որ արթնանա

Մեր հոգու մեջ դարեր գիրհող

Մտերմությունն ամենահաղթ,

Եվ մենք՝

Բռնած իրար ձեռքից,

Ե՛տ ճամփորդենք՝ հեքիաթի պես՝ դեպի այնտեղ,

Որտեղ էինք մի 40 կամ... 4000 տարի առաջ,

Եվ այնտեղից նո՛ր սկսենք

Ծանապարհը մեր նո՛ր սիրո.

Վերադառնանք մենք... դեպի մեզ,

Մենք... դեպի մեզ...

10. 111. 64

Դիլիջան

Օ Դ Ա Հ Ա Ն Ջ Ա Ն Գ Ի Տ Ա Կ

Ջմեռային ինչ-որ թռչուն
Երեկոյի մոտալուսն է օրհնաբանում հիմարաբար՝
Չիմանալով,
Որ վերահաս երեկոյից
Ամե՛ն անգամ քո զգլխիչ հոտն եմ առնում
Եվ որ բոլոր թռչունների կանչերի մեջ
Ես ջանում եմ միայն որսալ քո անունի վանկարկումը...

Ջյուն էր տեղում ամբողջ օրը,
Գուցե մի ձյուն համատարած-համազգային՝
Հեռվից հեռու
Մեզ իրար հետ մի ցանցի մեջ միացնելով:
Եվ լռությունն արդեն թրջված-ծանրացած է հիմա այնպես,
Ինչպես որ իմ կոշիկները
Կամ թերևս քո վերարկուն:

Ա՛խ այս ծանր լռությունը:
Ասես մեկի հետաքրքիր ձեռքը հիմա
Այս վիթխարի լռությունն է թաքուն կործել
Կյանքի վրա և աշխարհի՝
Մեծ օդահան զանգի՝ նման.
Կամենում է կարծես փորձել,
Թե վիթխարի այս օդահան զանգի ներքո
Մեր սիրուն ինչքա՛ն կդիմանա,
Ե՛րբ կճայթի...

Մուրը, իբրև լակմուսյան թուղթ, լույսն է ծծում:
Ջմեռային անտառն ասես պրկախտով է հիվանդացել:

Ինձանից դուրս
Ես փնտրում եմ ինչ-որ մի բան վատահելի,
Որից կառչել կարողանամ:
Ու չեմ գտնում ոչի՛նչ.
Չկա՛ս...

Եվ... փնչում եմ ակամայից,
Խուլ փնչում եմ ու հասկանում,
Թե ինչո՛ւ եմ թռչունները ճտտում այդպես:
Նրանք ճայթում կամ պայթում են
Այս օդահան զանգի ներքո:
Իմ փնչոցը
Այդ միևնույն ճայթումն է հեևց՝
Նո՛ւյն օդահան զանգի ներքո...

Փորձը կարծես ավարտվում է:
Եվ ազդարար քամին հիմա կսկսի տալ
Այդ ավարտի ազդանշանն ամենազորի՝
Պրկախտավոր այս անտառը վերածելով ընկճավորի,
Թպրտալով լուսամտոտի ու դռան տակ,
Թպրտալով ձների մեջ՝
Ինքը նո՛ւյնպես մի ընկճավոր...

Խավարն արդեն խորանարդում է ինքն իրեն
Եվ իր սևը խառնակելով ձյան ճերմակին՝
Ստանում է մի գորշություն
Ու տարածում կյանքի՛, մարդկա՛նց,
Նույնիսկ մարդու շնչի՛ վրա:
Իսկ երբ նաև գորշանում է շունչը նույնիսկ՝
Սկսում են մարդիկ քնել,
Որ... գույնզգույն երազներով
Ներկեն կյանքի գորշությունը:

Իսկ ես քնել չեմ կարենում:
Եվ պտտվող Երկրի վրա,
Ինչպես հսկա խարտաբարի,

Հեսանվում է իմ գիշերը,
Որպեսզի միշտ սրված մնա զգացումը՝
Կտրատելով ա՛յն թաղանթը,
Որով սերը
Վերածվում է շրջանառու սովորության...

Դիլիան
15. III. 64

ՕՏԱՐ ՍԻՐՈ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ձմեռային նվազ արեգակը կրկին
Ծողն իր դարձրել է ճոպանուղի մի շեղ,
Որով ճամփորդում է անվախ փոշին միայն
Վաղո՛ւց չմաքրված իմ սենյակում:

Ցավի պտտահողմից կյանքիս ամբողջ փոշին
Բարձրացել է տեղից ու աչքերըս խցել,
Եվ իմ արցունքները դրանից են գուցե...

Ու վերստին ես ինձ դուրս եմ գցում փողոց:

Քաղաքային նեղիկ ամեն պատշգամբում,
Ինչպես ճորատեսակ տապկոցի մեջ,
Ձյունն է հիմա եռում մարմա՛նդ-մարմա՛նդ՝
Արձակելով բարակ գոլ գուրջի:
Իսկ շեղ կտուրներից ու քիվերից, հանկարծ,
Ձյան կույտեր են երբեմն այնպե՛ս փոփում գետնին,
Ասես հարբա՛ծ լինեն՝
Արեգակի՛ց հարբած...

Ես աչքերիս խորքում կասկածներս եմ ճմռում
Իմ բարեկամ ձեռքի պարզ օգնությամբ,
Ու բութ կոշկաքթով կտրատում եմ կրկին
Խուճում հանգույցները փողոցների:

Հավատ չընծայելով իր իսկ խոսքին ճոռոմ՝
Կեղծ-դասական մի հողմ հավատի՛ց է ճառում,
Խոսում է սրբությունի՛ց,
Հավերժական սիրո՛ւց:

Իսկ ես... իսկ ես, կարծես երազի մեջ,
Ինձ զգում եմ փնջ-որ վանքի գավթում՝
Լեցուն խեղվածներով ու մուրացողներով,
Եվ չմեկնած ձեռքիս ասիում դատարկ
Եթե մինչև անգամ տասնոց դնեն,
Ես— փորձե՛լ եմ արդեն— չե՛մ գոհանա.
— Ես քո կոպեկների՝ կարիքն ունեմ:

Բայց ես աշխարհ չեկա, որ «գթացե՛ք» նվամ,
Ես ծնվել եմ, որ գութ ու բարություն ցրեմ...

Եվ ինքնասեր-հպարտ ջղե՛րս եմ ինձ ցնցում,
Թե՛ քամին է սարսում ամեն վայրկյան՝
Էլեկտրական ուրույն հոսանքի պես:

Մութը ստանձվում է հոգուս և աչքերիս:

Լարի վրա թառած ագռավը սև
Հանկարծ— ինձ տեսնելո՞ւց— ճշում է խոպածայն.
— Դեմքըս, հավանաբար, ահավոր է սաստիկ:
Ու խեթ նայելով ինձ՝
Շունն էլ է գոմոում,
Քաղաքայի՛ն շունը, որ չի հիշում նույնիսկ,
Թե մինչև դա մեկ էլ ե՛րբ է հաչել:

Ու երբ տուն եմ մտնում ու հայելուն նայում,
Հասկանում եմ շա՛նն էլ, ագռա՛վին էլ.
— Բո երեկվա սերն է լուսավորում դեռ ինձ,
Բայց և մեր բաժանման շուքն է ընկել վրաս,
Եվ զգում եմ ես ինձ ա՛յն վիճակում ծանրը,
Որ և պատահում է արեգակին նույնիսկ
Եվ (քանի՛ դար արդեն) «խավարում» է կոչվում:

Եթե խավարում է՝ թող որ լրի՛վ լինի
Եվ ո՛չ թե մասնակի:
Թող մթընդի այնպե՛ս,
Որ երևան երկնի բոլո՛ր աստղերն անգամ.

Ամեն մեկը՝ մի կին,
Ամեն մեկը՝ աղջիկ,
Որոնց ես շա՛տ վաղուց չեմ նկատում՝
Բո խաբուսիկ սիրո՛ ցուլանքի մեջ:

Թող խավարում լինի լրի՛վ-լրի՛վ-լրի՛վ...

Ու ես լույսն եմ վառում իմ սենյակի,
Միացնում եմ նաև երգասիյունն էլ իսկույն,
Որ... տառերը սերտեմ նո՛ր մի սիրո,
Օտա՛ր-օտա՛ր-օտա՛ր-օտա՛ր սիրո...

20. 111. 61

Մոսկվա

ԱՆՆԱՄԱԿ ԾՐԱՐ

Ծրթունքներըս անգիր գիտեն
Վայելքների օրենքները,
Բայց ես հիմա
Ծա՛տ եմ նման այն խեղճ մարդուն,
Որ ծանրորեն հիվանդանում օրվա մի օր
Եվ իմացած երկրորդ լեզուն մոռանում է բոլորովի՛ն...

Ու մտքերըս հարթ են հիմա, բայց սրանկյուն՝
Ինչպես էժան հուշարձանի քառակուսի պատվանդանը.
Իմաստներն են անհետացել
Ու մնում են լոկ բառերը՝
Դատարկ ու փուչ պարկերի պես
(Թե դեն նետես՝ քիչ ափսոս է,
Թե դեռ պահես՝ խանգարում են):

Եվ աննամակ ծրարի պես
Սոսնձում եմ շրթունքներըս...

Իսկ եթե ես հանկարծ վերցնեմ
Մի աննամակ ծրար ճամփեմ քո հասցեով,
Երբ դու բանաս՝
Կզարմանա՛ս:

Զե՛ս զարմանա:
Կհասկանա՛ս,
Որ այս տտիպ սպասումն է թթվում արդեն,
Մի թթվություն,
Որ դառնում է վտանգավոր...

Վտանգում ես, եթե ունես,— այսպես է միշտ:
Ու երկյուղն է մեջս խոսում
Ծղթայական ա՛յն ցնցումով,
Որ ծխախոտն է ընծայում մեր թոքերին:
Ա՛յն, ինչ միտք էր
Կամ կարող է միտք հորջորջվել,
Հիմա իմ մեջ
Գլխիվայր է քայլում անվերջ, ինչպես ջուրը,
Եվ, ջրի պես, չի հանգուցվում.
Իմաստներն են անհետացել
Ու մնում են լոկ բառերը՝
Դատարկ ու փուչ պարկերի պես
(Թե դեն նետես՝ մեղք է մի քիչ,
Թե դեռ պահես՝ խանգարում են)...

Եվ այնպես եմ ինձ անհարմար ու վատ զգում,
Կարծես կնոջ բարձրակրունկ կոշիկ հագել
Ու վազում եմ վերևից ցած,
Վերևից ցած:
Ե՛րբ պիտի ես քերանքսիվայր գետնին փովեմ:
Բերանքսիվա՛յր:
Փովեմ մնա՛մ:

Հանգստանա՛մ այս գլխիվայր թավալումից
Եվ ակամա, մինչև անգամ չուզենալով,
Լսեմ հողի մեծ թոքերի տուրևառը,
Եվ ակամա համեմատեմ
Ծղթայական ա՛յն ցնցումին,
Որ երկյուղն է ինձ ընծայում,
Երիտասա՛րդ այն երկյուղը,
Թե քե՛զ կյանքում ունենալով՝
Վտանգում եմ ես իմ կյա՛նքը,
Որ կախված է հանգստության հեղձ ա՛յն մազից,
Ինչով, կարծեմ, մի ժամանակ
Ծիճում էին նաև կամուրջ՝
«Դժոխք-Դրախտ» ուղեցույցի սահմանի մոտ,

Մի ահա՛վոր գետի վրա,
Որի անունն, աստվա՛ծ վկա, մոռացել եմ,
Ինչպես որ իմ շրթունքները, կամա՛ց-կամա՛ց,
Մոռանում են մի ժամանակ անգիր արած օրենքները
Վայելքների...

14. III. 64

Դիլիջան

Դ Ո Ւ Մ Ի Հ Ա Ր Ց Ր Ո Ւ

Դու մի՛ հարցրու. «Սիրո՞ւմ ես ինձ»:

Ինչպես կույրը իր ճեռնափայտն է միշտ հիշում,
Դու էլ հիշի՛ր,
Որ երբ իզուր հարց չեն տալիս՝
Մուտ պատասխան չե՛ն ստանում:
Եվ դու բնավ իմ այս խոսքից մի՛ վշտանա,
Այլ մտածիր,
Թե ջրհորի մութ խորության չափման համար
Իր սեփական մանկանն ո՛վ է ջրհորն անում:

Դու մի՛ հարցրու, իսկ ես ասեմ
Քո ուզածից շա՛տ ավելին:

Եվ ասում եմ ե՛ս՝ միօրյա՛ հավատացյալ,
Իսկ դու լսի՛ր, իմ նորօրյա՛ աստվածուհի:
Պաշտամունքի մի ծե՛ս պիտի արվի այսօր,
Խոստովանքը էլ ո՞ւմ է պետք:

Դու՛ անծանոթ մի նոր աշխարհ,
Ես՛ մի հմուտ աշխարհագետ,
Որ վա՛տ գիտեմ, շա՛տ վատ գիտեմ
Բազմախոստում տեղանքը քո:
Ու խոսում է մեջս կրկին
Մոլի ոգին հետազոտման.
Ուզում եմ քեզ անգիր անել,
Մտքով գծել քարտեզը քո,—
Հարց ու փորձը էլ ո՞ւմ է պետք:

Եվ առավել լավ չէ՞ արդյոք,
Որ մարդու ո՛տքը սայթաքի,
Քան թե լեզո՛ւն:
Ուրեմն արի ոչ թե խոսենք,
Այլ մտովին քայլենք առաջ
Այս անծանոթ ճանապարհով,
Մինչև հասնենք հանգրվանի՝
Հեքիաթական ինչ-որ մի տեղ,
Որ չկա՛ տեր ու տիրական՝ մեզնից բացի,
Որ մենք պիտի լինենք թվաւո՛ ջրի՛ նման,
Եվ լինենք կույր՝ կրակի՛ պես,
Որ՝ հակառակ մեր իմացած թիւ օրենքի՛
Մարմինները ջերմությունից չե՛ն լայնանում,
Այլ կծկըվո՛ւմ,
Եվ լուծվում են բոլոր հարցերն՝ աղի՛ նման,
Դառնալով համ մեր բերանում,
Մեր լարաթափ ջղերի մեջ,
Ծփոթահար մեր դեմքերին...

Այնժամ գուցե բնազդաբար ե՛ս քեզ հարցնեմ.

«Միրո՛ւմ ես ինձ»:

Ե՛ս քեզ հարցնեմ՝

Պատասխանիդ չապասելով,

Այլ օգնելով, որ ստանաս

Նախկին տեսքդ աստվածուհու,

Նախկին տեսքդ ա՛յն աշխարհի,

Որ դեռ չունեք գծված քարտեզ:

Եվ իմ հարցին ի պատասխան

Այնժամ գուցե ինքդ ինձ ասես.

«Ասում եմ, թե դուք օգնում եք լոկ հանկելիս:

Իսկ դու օգնում ես հազնըվել:

Դու ուրի՛շ ես:

Միրո՛ւմ եմ քեզ»...

11. XII. 69

Երեւն

Ս Ի Ր Ո Փ Ո Ս Ա Ր Ե Ն

Դու մի՛ լինիր այսքան բարի:
Բարությանը
Ես կարող եմ լոկ մե՛կ բանով փոխհատուցել՝
Իմ անարժե՛ք շփոթությամբ
Եվ թերևս ա՛յն թախիծով,
Որ տարորեն շատ է նման
Անվերջ մեռնող ու հարություն անվերջ առնող
Հին դիցերին...

Ձեի՞ ուզի:

Ծա՛տ կուզեի

Առաջվա պես հրճվել գեղջուկ այս կանաչով,

Որ հիմա քո

Զսպանակվող կողի տակ է զսպանակվում,

Եվ բարբարոս երգը լսել այն առվակի,

Որ հիմա քո

Մերկ ոտների կաղապարն է ուզում հանել:

Ձեի՞ ուզի:

Ծա՛տ կուզեի

Մե՛կ անգամ էլ

Չճանաչել ո՛չ մի արգելք ու խոչընդոտ,

Դանդա՛ղ գնալ-շտա՛պ հասնել

Մեր մարդկային հայրենիքը սկզբնական,

Այսինքն՝ իմ ափով ապրել քո ափի մեջ,

Ինձ կապել ու շաղկապել քեզ

Այնպե՛ս,

Որ մենք երկուսովըս մեկտեղ դառնանք

Անքակտելի՛ խաչբառի՛ պես:

Չէի՞ ուզի:
Ծա՛տ կուզէի:

Բայց, սիրելի՛ս, չի հոգնում նա՛,
Ով գնում է շատ հեռավո՛ր հանդիպումի:
Իսկ ես հիմա
Զբոսնում եմ միայն ի՛մ իսկ արվարձանում
Եվ զբոսնում
Ձեռքերովըս փորագրած մակնիշները ընթերցելով,
Ու քերծելով շատ ավելորդ գրություններ,
Ու քերծելով առանց մուրճի և տաշիչի՛
Եղունգներով իմ սեփական...
Եվ իզո՛ւր ես քո բարությանը,
Քո այս ծածուկ-հայտնի սիրով
Չանում ասբել իմ կալվածքի մի անկյունում:
Ու ես հիմա
Այս ասում եմ ո՛չ լսելուդ համար արդեն,
Ո՛չ էլ իմ իսկ արդարացման,
Ո՛չ էլ իմ իսկ արդարացման:
Եթե կուզես ճիշտն իմանալ՝
Ասելիս էլ բա՛ն չեմ ասում, ամենևի՛ն,
Այլ պարզապես զբաղմունքս եմ շարունակում՝
Իմ սեփական կալվածքի մեջ
Հոգնածորեն զբոսնելով,
Եվը՛ս մի նոր
Գրություն եմ ավելացնում ջնջածիս տեղ.
«Չի հոգնում նա՛,
Ով գնում է շատ հեռավո՛ր հանդիպումի»:
Իսկ դու... իսկ դու շա՛տ ես մոտիկ:
Ու ես... ու ես շա՛տ եմ հոգնած...

25. X. 65
Չահախի

Ս Ո Վ Ո Ր Ա Կ Ա Ն Հ Ր Ա Ծ Ք

Մենք հանդիպեցինք...
Եվ ի՛նչ կատարվեց, հասկացա՛ր արդյոք.
Կարծես թե կյանքը հանկարծ լվացվեց՝
Անվերջ խաղալուց կեղտի մեջ կորած մանուկի նման:
Օղբ, որ կարծես գորշ մշուշով էր կեղևակալված,
Կեղևաթափվեց՝
Տեսքով անձրևի,
Զյան կերպարանքով,
Եվ... օդի համը զգացինք կրկին.
Այնպես է համե՛ղ-առարկայացա՛ծ,
Որ... չե՛ս կամենում ուտե՛լ պարզապես...

Մենք հանդիպեցինք...
Եվ ի՛նչ կատարվեց, արդյոք հասկացա՛ր.
Հարազատության ա՛յն զգացումին.
Որ կյանքն էր ջոկ-ջոկ երկուսիս տվել,
Որից ստացվեց մի... սե՛ր անվախճան,
Քնքշանք խառնըվեց կրկնակի՛ չափով,
Ինչպես անվախճան ջուրն է ստացվում,
Երբ ջրածինն է կրկնակի չափով մարսում թթվածին...

Մենք հանդիպեցինք...
Եվ— անավասիկ այսպե՛ս— տապալվեց
Բանաստեղծության պարիսպը խարխուլ.
Գիտությունները սիրով լուծվեցին աչքերում քո թաց,
Ոտներըդ իրենց դրոշմը դրին պատմության դեմքին,
Ծարժումը ձեռքիդ օդի ձևերը քանդեց ու սարքեց՝
Հարստացնելով երկրաչափությունն ա՛յն օրեցրեքով,
Որ սպասում եմ իրենց երջանիկ հետազոտողին...

Մենք հանդիպեցինք...
Եվ խոր քուն մտան «բայց»-երը բոլոր,
Որ խնդությունը զարթնելով հանկարծ՝
Ընդոստ վե՛ր ցատկի
Եվ պտտահողմի ահարկո՛ւ տեսքով
Աշխատի մի կերպ շաղափել-ծակել
Բոլո՛ր շերտերը կարծրը երկնքի,
Եվ երկրի վրա, շաղափված անցքից,
Գլխավայր կախվի խենթ ուրախության ցայտուն շատրվա՛ն,
Որին բացվել կա՛ և... չկա՛ փակվել...

Մենք հանդիպեցինք...
Եվ հանդիպեցինք
Ծառ սովորակա՛ն-հասարա՛կ ձևով,
Որ հրաշքները իրե՛նք էլ դառնան
Ծառ սովորակա՛ն-հասարա՛կ բաներ...

18. III. 64

Գիւիշահ

Ն Յ Ա Ր Դ Ի Թ Ր Թ Ի Ռ Ը

Նորից են զանգում
(Ռ՛րերորդ անգամ),
Զանգում են... գարնան դեսպանատնից.
Օտարսիրային անձնագիր են ինձ նրանք խոստանում:
Իզո՛ւր:
Չե՛մ գնա:

Ինձ՝
Քո աչքերի մութ ուղեծիրով թռած ու դարձած
Հին ու բազմափորձ աստղագնացիս,
Խաբելը բնավ այնքան էլ հեշտ չէ,
Որքան թվում է:
Ես տառապալից իմ փորձից գիտեմ,
Որ խաբուսիկ են օտար սերերը՝
Աստղերի մեան.
Մեծ ու շողշողուն թվացողները ավելի փոքր են
Ռ- հաճախ անլույս,
Քան փոքրիկները,
Որ իրականում հսկայական են...

Դու՛ փոքրի՛կ ու մե՛ծ,
Ինչպես իմ ու քո այս հայրենիքը,
Դու ինքնավստահ ժպիտով լսիր
Օտարսիրային այդ դեսպանատան
Բոլո՛ր զանգերը.
Թող զանգեն այնքա՛ն,
Մինչև որ հոգնեն:
Իսկ դու քայլ արա ու նստիր կողքիս

Այս սենյակ կոչված անեզրության մեջ,
Ռրտեղ բյուրավոր մուսիաներ մանրիկ,
Ռրոնք հայտնի են փոշի անունով,
Անմահացել են
Այն բազմակերպար գրքերի վրա,
Ռր իրենց դեմքով դարձած են դեպի պատը.
Կարծես թե
Պատժել են (ինչո՞ւ) երեխայի պես...

Եվ բավական չէ՝ ինձ նայես այսպես՝
Երեխայի պես պլշած հարացքով:
Զե՞ս զգում արդյոք,
Ռր ապստամբած քո ձևերի տակ
Մենակությունն է ճիւղել ինքն իրեն,
Հաճույքն է կտրել մազե կապերը իր գույգ թևերի
Ու կամենում է
Մտնել-գրավել մեր մարմինների դատարկ տեղերը,
Մեր ամբողջությունն ասես դարձնելով նյարդի մի կտոր՝
Կենտ աչքի ներքո մի ամենատես խոշորացույցի:
Եվ այդ մի կտոր նյարդի թրթիռը
Անցնում է հիմա... ո՞ղջ տիեզերքով...

Իսկ, նայի՛ր, դրսում
Մութն իրեն վրա նոր շերտ է քսում:
Լույսը մի՛ վառիր.
Բացված ծնկներիդ լուսամտիփային ճերմակությունն էլ
Մեզ համար շա՛տ է:
Ի՞նչ, հեռախոսն է զանգում: Ամո՞թ քեզ,
Ռր դեռ կարող ես լսել զանգի ձայն:
Խլացի՛ր: Զքվե՛նք:

Նյարդի թրթիռը
Թո՛ղ կտրի անցնի անեզրությունը
Ու ետ գա կրկին.
Խոշորացույցի կենտ աչքը նրան մի՛շտ սպասում է...

22. III. 64
Գիլիզան

Տ Ա Ք Ս Ի Ն Ե Ր Ի Հ Ա Ն Գ Ր Վ Ա Ն Ո Ւ Մ

Երբ լուսաբացն է լրտեսում ապակիները մեր խավար,
Ու կիսամութն է խուզարկում անկյունները մեր տների,
Դու երևի արթնանում ես՝
Աքևի հետ:

Մեզն է մեկնում արձակուրդի:
Հավաքարար քամու ձեռքով
Ավելվում է գիշերային երագների կտորտանքը:
Ժամանում է օրը՝ իբրև վերաքննիչ:
Տարագրված տագնապներն են վերադառնում
Ու ծեծում են արդարության փակ դռները...

Իսկ դու ձեր փակ դռան ետև
Ի՞նչ իմանամ ի՞նչ ես անում:
Դու երևի նախ և առաջ լվացվում ես,
Ռր... թարմանա ողջ աշխարհը...
Հետո մազերդ ես հարդարում, հավանաբար,
Ռր շփումից քո մազերի ու քո սանրի
Առաջանա էլեկտրական հոսանք մի մեղմ
Եվ դրանից... բոլոր մարդիկ զգան սարսուռ
Ու հաճելի փշաքաղվեն ամբողջ մաշկով...
Հետո գուցե սուրճ ես խմում,
Քո աչքերի՛ գույնն ունեցող
Ու նո՛ւյնքան էլ այրող տաք սուրճ,
Ռր... աշխարհի երակներով անվերջ շՐՅԻ
Հոտը սրճի...
Հետո արդեն փոխում ես դու զգեստը քո
Ու դուրս ելնում,
Ռր... երբ անցնի ամբողջ մի դար,

Դարավերջին

Ինձ հանդիպես տաքսիների հանգրվանում
Եվ աչքերիդ անմեղ-անմեղ մեղմեղանքով
Ուշանալուդ համար, շիկնա՛ծ, չքմեղանաս՝
Ծննչալով՝ «չնեղանա՛ս»:

Չե՛մ նեղանում:

Քշի՛ր, վարո՛րդ:

Ո՛ր:

Չգիտե՛մ:

Քշի՛ր, վարո՛րդ:

Արեգակը՝

Ծնիկի՞ պես, թե՞ քալիկի,

Տնից ելել և ինչ-որ տեղ մոլորվել է:

Գնանք գտնենք ու ետ բերենք:

Քշի՛ր, վարո՛րդ...

23. III. 64

Գիլիշահ

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Պ Ա Հ Ա Ն Ջ

Իմ ուզա՛ծը...

Իմ ուզածը կարծում եք թե մեծ բա՛ն է:

Ես չե՛մ հայցում երջանկություն,

Չէ՛.

Տանջում է ինձ հասարա՛կ մի ցանկություն՝

Պա՛րզ տեսնելու,

Պա՛րզ տեսնելու ցանկությունը:

Ա՛խ, տրվե՛ր ինձ պարզ տեսնելու

կարողությունն աստվածային...

Եվ ո՛չ միայն խավարի մեջ պարզ տեսնելու,

Այլ մինչևիսկ կրքի պահին

Պա՛րզ տեսնելու ա՛յն ստվերը,

Որ հինավուրց արևային ժամացույցի սլաքի պես

Պիտի նշի ժամանակը մեր հոգեկան՝

Այնշտայնին հաստատելով կամ հերքելով:

Պա՛րզ տեսնելու ինչպես մե՛ր իսկ,

Այդպես նաև Երկրագնդի ընդերքներում

Մեր ու նրա ա՛յն մարմաջը,

Անանցնելի ա՛յն հին քորը,

Եվ ա՛յն եռքը անտանելի,

Որ տանջում է մեզ ու նրան,

Տանջում սաստի՛կ՝

Ստիպելով անվերջ քսվել ու քսմսվել

Մեր սեփական առաստաղին

Ու երբեմն էլ նո՛ւյնիսկ ծակել առաստաղը...

Պա՛րզ տեսնելու

Հրահեղուկ այդ մարմաջը-եռքը-քորը,

Ինչպես որ մենք տեսնում ենք պարզ

Խլուրդների խոսք խլիրտը
Այն խաղալիք-բլուրների ծանոթ տեսքով,
Որ վերև եմ մղում սրանք հողի տակից...

Բայց ո՞վ կտա ինձ այսքան բան՝ մե՛կ կոպեկով:
Չէ՛, տալիս եմ
Մի հասարակ բանի համար՝
Իմ բովանդակ կարողությունն ու կայքը ես
Պա՛րզ տեսնելու գեթ այն բանով ճանապարհը,
Որով քայլում ենք բոլորըս՝
Չհմանալով, թե մինչև ո՞ր,
Ինչի՞ համար
Եվ արդյոք ի՞նչ նպատակով...

Պատասխանիր ինձ գոնե դո՛ւ, ի՛մ սիրելի.
Պա՛րզ է արդյոք գեթ մեր սիրո ճանապարհը:
Ո՞ր ենք գնում:
Ո՞ր կհասնենք:
Արժի՞ գնալ:

Դու լսո՛ւմ ես.

Ծտերն ասես ո՛չ թե երգում,
Այլ «ի՞նչ... ի՞նչ» եմ ճշում անվերջ
Եվ դրանով պատառոտում երկնի մովը,
Իսկ լորերն էլ ո՛չ թե երգում,
Այլ «չէ՛... չէ՛»-ի իրենց մեխն եմ մխում անվերջ
Այդ կապույտի պատովածքում:

Ես նրանցից որի՞ն լսեմ:
Ի՞նձ չես խղճում՝ խղճա նրա՛նց.
Պատասխանի՛ր...

19. 111. 64

Դիլիշան

Փ Ա Կ Ի Ր Ա Չ Ք Ե Ր Դ

Պատահում է և... շա՛տ հաճախ,
Մարդ մտովին կրակում է իրեն վրա՝
Հստակ ջրի կամ հայելու,
Ինչ-որ մեկի աչքերի մեջ արտացոլված իր պատկերին,
Եվ տեղն ու տեղն սպանվում է:
Բայց մնում է նրա երկրորդ օրինակը՝
Ինքն է մնում = մնում ենք մենք:

Եվ ինքներըս առանց ողբի մեզ թաղելով՝
Սկսում ենք ապրել նորից
Նախ՝ բուսական-կենդանական,
Իսկ բյուրավոր դարեր հետո՝
Նաև մարդու կյանքով ծանր ու դժվարին:
Եվ տևում է այս ամենը
Անծայրածիր մի պահ գուցե,
Գուցե շաբաթ մի անսահման
Կամ թերևս մի կարճ տարի...

Տե՛ր իմ աստված, դու լա՛վ գիտես,
Թե ես քանի՛-քանի՞ անգամ
Այս սրախիճ-տատասկապատ ճանապարհը
Կրկնել եմ ոտաբորիկ:
Եվ հոգնե՛լ եմ,
Ծա՛տ եմ հոգնել
Թե՛ ինքըս ինձ սպանելուց,
Թե՛, առավել, վերապրելուց...

Եվ կարիք կա՛,
Որ ես նորից նո՛ւյնը փորձեմ՝

Այս անգամ էլ ինքս ինձ վրա կրակելով

Այս աղջըկա աչքերի մեջ:

.

Փակի՛ր աչքերըդ, սիրելի՛ս.

Սարսափով եմ ես մտածում,

Որ կարող է այս անգամ էլ ե՛ս չսպանվեմ,

Այլ... ավիրեմ քո՛ աչքերը...

Փակի՛ր աչքերըդ, սիրելի՛ս...

20. III. 64

Գիւղեան

Կ Ե Ղ Ծ Ա Ն Ց Ա Թ Ղ Թ Ո Վ

Հմայիչ, որպես անծանոթուհի,
Քայլում է կրկին գարունն աշխարհով...

Դո՛ւ՛ իմ երեկվա անծանոթուհի՛,
Իմ մտատիպա՛ր ու մտասպառկե՛ր,
Հիմա՛ ստացած մարմին ու անուն,
Անծանոթուհու քո հին հմայքից
Բա՛ն չկորցրած
Ու դեռ վերցրած
Հարազատության տաքությունն ամբողջ...
Ու ե՛ս՛ պատրա՛նքը քո մշտադարձիկ,
Ու ե՛ս՛ գիշերվա հաճախա՛նքը քո,
Ու ե՛ս՛ փետուրե ասե՛ղը բարձիդ,—
Քայլում ենք հիմա մեկտեղ-թևանցուկ.
Դու այս գարնա՛ն հետ,
Իսկ ես էլ՛ քե՛զ հետ,
Քայլում ենք հիմա այսպես երեքով,
Եվ չի՛ խանգարում երրորդը բնավ...

Դեռ մեր քաղաքում փողոցներ կան անդ
Եվ այնպե՛ս ոլոր,
Այնպե՛ս ծուռումուռ,
Ասես չորացած գետի հուն լինեն:
Եվ գարունն այնտեղ
Այլ փողոցների համեմատությամբ
Ուշանում է քիչ:
Եվ հիմա այնտեղ
Կիսով չորացած ցեխ է դեռ:
Գնա՛նք.

Ուռնահետքերդ թող տպված մնան
Նրանց գորշ դեմքին՝
Լուսազդի նման...

Եվ մանուկներ կան մանկական այգում,
Որ համոզված են, թե իրենց մի օր
Հենց այս վարարած գետից են բռնել:
Գնա՛նք ու մտնենք աշխարհը նրանց:
Կընդունե՛ն իսկույն.
Նրանց աշխարհում
Անցաթուղթ հարցնող պահակներ չկա՛ն...

Եկ շնորհանք և պահակներին:
Գիշերը նրանք՝
Մեծ մասամբ ծերեր
(Լացրդ չի՞ գալիս... կո՛ւլ տուր ինձ նման),
Մրսած մատներով կրակ են վստում,
Որ... ցուրտ խորովե՛ն-եփե՛ն-տապակե՛ն
Ու տան... ո՛ւմ... բախտի՛ն.
Թող բկի՛ն մնա...

Եվ մի՛ ամաչիր,
Մի՛ քաշվիր բնավ,
Եթե այդպիսի մի խարույկի շուրջ
Անծանոթ մարդկանց հավաքված տեսնենք:
Դու չե՛ս նկատել, որ կրակը միշտ
Իր շուրջ հավաքված անծանոթ մարդկանց
Ծանոթացնում է— հարազատացնում՝
Երևի նրանց ներանձամբ մեջ վերաթեմացնելով
Իրենց դարավոր անցյալի հուշը...

Բայց բավական է, սիրելի՛ս, ո՛ւշ է:
Մեծերի աշխարհն անչափ է հեռու
Երեխաների ազատ աշխարհից.

Հենց մերո՛նք մեզնից անցաթուղթ կուզեն՝
«Ո՛ւր էիր» հարցով:
Մի սուտ անցաթուղթ կեղծելով՝
Գնա՛նք,
Միրելի՛ս, ուշ է...

22. III. 64
Գիլիշան

Փ Ր Կ Ա Ր Ա Ր Ք Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Մեզ բաժանող ձիգ ժամերը
Ես կարող եմ արդեն հաշվել
Կարճ համրանքով քո մատների,
Որ ես պիտի բռնեմ շուտով
Ու փնջելով սեղմած պահեմ՝

Էլեկտրական լարի նման:

Չվախենա՛ս իմ ցնցումից.

Էլեկտրական այդ հոսանքից ո՛չ թե մեռնում,

Այլ հարություն կրկին առնում,

Հոգեդարձվում-վերապրում եմ...

Իսկ դու գուցե բնավ էլ ինձ չես սպասում

Կամ սպասել-սպասում ես, որ լուկ ասես.

«Ես հասկացա, որ այլևրս մենք չպիտի...»

Եվ ականա ինձ դնում եմ ա՛յն դերի մեջ,

Որ իմը չէ,

Սակայն պիտի ճարահատյալ հիմա խաղամ

Դատարկ բեմում...

Բայց ես,

Ում դու գուցե մտքով անվանում ես ՆԱԽԿԻՆ սիրած,

Զգում եմ պարզ, թե ինչպես է փակվում լեզուս,

Որովհետև... մարդը մարդ է հենց այնքանով,

Որ մշտապես ելք է ճարում չընկճվելու

Եվ չի ուզում կոչվել ՆԱԽԿԻՆ

(Հասկանո՞ւմ ես.

ՆԱԽԿԻՆ էլ մա՛րդ, տե՛ր իմ աստված)...

Ու փակվում է, փակվում լեզուս

Դռան նման ՆԱԽԿԻՆ մի տան,
Որտեղ հիմա բնակվում եմ
Ա՛յն հինավուրց ոգիները,
Որոնց անգո գոյությունը զուր եմք ժխտում
Եվ դրանով
Է՛լ ավելի աղքատացնում մեր կյանքն աղքատ,
Եվ դրանով օտարացնում ինքներըս մեզ...

Ու փակվում է ՆԱԽԿԻՆ լեզուս՝
Քո ԱՅՍՕՐՎԱ սրտի նման,
Որտեղ, գիտե՛մ, բանտարկված է իմ սուվերը՝
Իբրև ծանրը մի հանցագործ.
Նա փորձել է քո սրտի մեջ անմահանալ,
Իսկ դա, իրո՛ք, հավասար է մահափորձի,
Որովհետև... նորությունն է հավատքը մեր:

Դու մի՛ փորձիր արդարանալ,
Հարկավոր չէ՛:
Բայց երբ կանգնի
Ամեն անգամ վերջալույսը քո հանդիման,
Ու երբ կանգնի՝ քրմուհո՛ւ պես,
Հիշի՛ր, որ դու չե՛ս վերջանում,
Որ դու պիտի վերսկսվես թեկուզ վա՛ղը:
Բայց և հիշի՛ր, որ սկսվել
Բնավ էլ չի նշանակում փոխել հավատ,
Ինչպես նաև ուրացում չէ մոռացումը:
Ուստի և մեր անջատումն էլ վերջնական չէ,
Այլ անցողիկ.
Մե՛կ էլ տեսար, դարե՛ր հետո,
Մենք վերստին հանդիպեցինք՝
Այս լճակի
Կամ այն առվի ափին կանաչ,
Որ ծառերը պիտի պտկեն,
Պիտի կրկին կապեն կոճակ,
Որ գորտերը, մեզ հետ մեկտեղ,

Պիտի կրկին դասը սերտեն իրենց սիրո՛
Ըստ աստղային այբուբենի:
Կրկին գարնան հոտը քնկոտ
Պիտի պառկի քո ռունգներում
Եվ արթնացնի արյունը քո՛
Ամբողջությունըդ հպելով
Իմ արթնացած ամբողջության
Եվ վերստին արծարծելով անծուխ հրդեհ:
Ամենակույ այդ հրդեհից մենք չենք այրվի՛
Ազբեստի պես,
Այլ արևից սուսացածը կդարձրենք կրկին իրեն՝
Մեր հինավուրց ու նորոգվող պարտքի դիմաց...

Իսկ առայժմ
Ես հաշվում եմ մեզ բաժանող կարճ ժամերը
Չեռքերիդ ա՛յն տասը մատով,
Որ ես պիտի բռնեմ շուտով
Ու փնջելով սեղմած պահեմ՝
Էլեկտրական լարի մման:
Չվախենա՛ս իմ ցնցումից,
Եթե անգամ էլեկտրական այդ հոսանքը մահացու է.
Էլեկտրահար մարդուն, գիտե՛ս, հողում թաղում
Եվ դրանով հարություն են տալիս կրկին՝
Չորս ժա՛մ հետո—չորս դա՛ր հետո,—
Մեկ չե՛ միթե...

27. III. 64

Դիլիջան

9. XII. 64

Նրեան

Ա Ս Տ Ծ Ո Ւ Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր Ը

Ձորակն ասես լինի մի նեղ թանաքաման,
Ու նրա մեջ շեղ տնկված է հին ջրվեժը՝
Այնպե՛ս նման փղոսկրե գրչակոթի:
Կողքին՝ մի դաշտ քառակուսի և գույնզգույն,
Ասես մի մեծ նամականիշ, որ կնքված է
Դեմի լեռան մեծ դրոշմով...

Եթե բառերն էլի՛ բռնեն
Իրենց նախկին իմաստների տեղը լքված,
Եթե բայերն իրո՛ք դառնան գործողություն,
Ածականներն իրո՛ք դառնան հատկանիշներ շոշափելի,
Ինչպես որ, տե՛ս, այս հին հողը
Եվ քարքարոտ այս լեռները
Հիմա կրկին՝
Միջնորդությամբ ամառնացող արեգակի՝
Իրենց նախկին— հրահեղուկ շեկ ջնրմության
Գեթ մի մասն են վերստանում,
Եթե նաև ե՛ս մոռացած չլինեի
Ծատ հեռավոր նախնիներիս առողջ լեզուն.
Որ ամեն բան կոչում էր միշտ իր անունով.
Ուներ խոսքեր ոչ թե մաշված ու լպրծուն՝
Ինչպես ողորկ գետաքարը,
Այլ սրակող և արյունող՝
Ինչպես ցասկոտ որձաքարի թարմ բեկորը...
Ա՛խ, թե լինե՛ր,
Այսպե՛ս լինե՛ր,—
Ես համարձակ կմեկնեի հիմա աջըս,
Կիլեի փղոսկրե այդ գրիչը,
Թաթախելով

Նեղլիկ ձորի շրջադարձող սահանքի մեջ՝
Ծերմակ-փրփուր այդ թանաքով կգրեի
Թավ անտառի միատարած մուգ կանաչի լայնքի վրա,
Կգրեի հին գրքացի՝— կախարդի՛ պես,
Կգրեի
Հնամենի մի հմայի՛լ,
Հուռո՛ւթք մի հին,
Որ... չի՛ կարող չկատարվել:
Ու... երկո՛ւ բառ կգրեի ընդամենը.
«Տենչա՛մ զքեզ»:

Կգրեի՛,
Տեղն ու տեղն էլ կվառեի՛,
Որ երկինքը
Ջոհի ծխի խարկանքն զգար,
Ու ծխայիր այդ տենչանքով ցաւ ի՛նքըդ...

Այնժամ նորից գրչակոթը
Կվերածվեր հին ջրվեժի,
Թանաքամանն անմիջապես ձոր կդառնար,
Դաշտ կդառնար անականիշն իսկույններթ,
Ու չէր լինի լեռը դրոշմ:
Բայց բառե՛րը
Կմնային նո՛ւյնքան սուրսայր ու սրակող,
Հնչյունի տակ՝ իմաստները չէի՛ն մեռնի,
Ուստի ինքս էլ կդառնայի մի բանաստեղծ
Կամ... հի՛ն աստծու նո՛ր քարտուղար...

23. 111. 64

Գիւլիշահ



ԱՄՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ի Ծ Ն ՈՒ Ն Դ Ը

Այն օրն էն միայն բանաստեղծ դառնում,
Երբ հասկանում էն,
Հանկարծ ըմբռնում,
Որ իրենց գործը այն շիշն է միայն,
Որ ծով է նետում նավորդը մեռնող՝
Փրկություն հայցող տողով մի քանի:
Եվ ժամանակի ծովը քմահաճ
Ծիշն այդ երբևէ ծովափ կհանի՞...

31. XII. 61

Երևան

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն Ե Ր Ը

Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Անկարող են ապրել առանց թթվածրնի:
Սակայն նրանք
Ամեն վայրկյան նախ այրվում են անթթվածին,
Հետո՝ միայն հրդեհվում են՝ քարածխի պես:

Նրանց լացը չի կտրվում
Ամեն տեսակ քաղցրավենիք ստանալով:
Թե լալիս են՝
Ընդերկրյա անցուղո՛ւ պես:

Նրանք նաև ծիծաղում են,
Ու ծիծաղը
Զրնգում է մաքրահունչ դրամի՝ պես,
Եվ դրանից աշխարհն ինքն է հարստանում,
Բայց ո՛չ իրենք:

Թե քրտնում են՝ ո՛չ ամոթից,
Այլ միմիայն... ապակու՞ պես՝
Իրենց ներսի՝ տաքությունից,
Երբ որ... սաստիկ ցուրտ է դրսու՛մ:

Ու թե նրանք սուտ են լսում,
Ապա՝ շա՛տ-շա՛տ՝ որսորդի՞ պես,
Ո՛չ ավելի:

Իսկ թե ուրիշ կերպ են ստում՝
Այդ իրե՛նք չեն,

Այլ ծպտված ճարպկորդիք,
Որ գործում են միայն նրանց անձնագրով:

Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Անկարող են ապրել առանց հաց ու ջրի,
Սակայն նրանք
Չեն էլ կարող ապրել միա՛յն հաց ու ջրով...

Անկեղծ ասած՝
Նրանց, իրոք, չնախանձել չի՞ կարելի,
Բայց լինում են և այնպիսի՝ ժամանակներ,
Երբ որ նրանց... պետք է խղճա՛լ:

9. X. 61

Երևան

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ի Բ Ա Ն Տ Ը

Թեկուզ և ձեռքդ գրչից էլ զրկեն,
Դու, միևնույնն է, պիտի՝ որ երգես:
Թո՛ղ չտամ ոչ մի լիազորություն,
Դու, մե՛կ է, սուտը պիտի՝ որ հերքես:

Քեզ կույր են կոչում,
Բայց տեսնում ես այն,
Ինչ որ շատերը չե՛ն կարող տեսնել:
Քեզ կաղ են կարծում,
Բայց այնտե՛ղ ես դու,
Որ արանք երբե՛ք չեն կարող հասնել:

Բախտի ճամփեքը տարբեր են լինում,
Նա ամեն մեկին տարբեր է սիրում
(Թատ անգամ անյնիսկ ատելությունը
Շուտ տված սիրո պատկեր է կրում):

Հաջողությունը թո՛ղ երես թեքի,
Հաջողությունը թո՛ղ քեզնից տա խոյս...
Թո՛ղ արանք լինեն հաջող որսի շում,
Իսկ դու կմնաս ձախողի հետախո՛ւյզ:

Թո՛ղ արանք լինեն հայտնի թարգմանիչ,
Իսկ դու ուզում ես մնալ վերժանո՛ղ:

Թո՛ղ արանք լինեն անցավ մանկաբարձ,
Իսկ դու մնում ես կարեվեր ծնո՛ղ:

Թո՛ղ արանք լինեն դարի մունետիկ,
Իսկ դու մնում ես դարի գաղտնարա՛ն,
Նրա՛նք՝ թեկուզև ծառայեցընող,
Դո՛ւ՝ ժողովրդի ինքնակամ ծառա՛ն..

...Բախտի ճամփեքը տարբեր են լինում,
Բախտն ամեն մեկին սիրում է տարբեր:
Նրանք ծնվել են, որ ապրեն հարբած,
Իսկ դու՝ որ քեզնով երբևէ հարբեն...

(1961)

Ե Ր Ե Ս Ո Ւ Ա Ս Տ Ա Ռ

Ուռենիները նրա՛ համար են,
Որպեսզի... ցույց տան ջրին ճանապարհ:

Եվ ծուխը, նու՛յնպես, նրա՛ համար է,
Որպեսզի... ցույց տա ուղղություն քամուն:

Ծղրիդներն, լանջո՛ւշտ, նրա՛ համար են,
Որպեսզի... մամլեն մութն իրիկնային
Իրենց նվագի նո՛յն ձայնանիշով:

Եվ արտույտները նրա՛ համար են,
Որպեսզի... իրենց երգով չորացնեն
Ծաղն ու եղյամը վառ առավոտվա:

Իսկ ուշ աշունն էլ նրա՛ համար է,
Որպեսզի...

...Դանդաղ-դանդաղ լայնացնի տարածությունը՝
Տերևաթափո՛վ...

Բանաստեղծնե՛րը:

Նրա համար չե՛ն,

Որպեսզի... այսպե՛ս

Ամե՛ն քան շրջեն աստառի վրա...

23. VI. 65

Երևան

Ք Ա Ղ Յ Ը Ք Ա Ղ Յ Կ Ե Ղ

Նորի՛ց՝ բառի սո՛վ,
Խոսքի խեղճություն:
Ուզում ես խոսել,
Իսկ բառե՛ր... չկա՛ն:

Եվ ինքո՛ւ տնկված ոտնաթաթերիդ,
Մի սնարօրինակ լրտեսի նման,
Ականջդ էս հպում սրտիդ պատերին,
Ու... հազն՛ր ու մի անկե՛րպ, անմա՛ն,
Տարտա՛մ ձայներից գլուխդ է պտտում:
Այսպես՝ անտատում ծառե՛րն են փտում,
Թե՛ քարտեզներում գետերն են ստում՝
Խաղալով խշշոց, կարկաչ ու սահանք:

Այսպես՝ մի անքուն գիշերապահակ
Ձայներն է լսում քնած՝ քաղաքի,
Որ շուտով պիտի դառնան ահագին,
Հորդե՛ն-վարարե՛ն անկարգ ու հախտոն՝
Նման... հանճարեղ սևագրության:

Իսկ հիմա... քնած քաղաքն է տխուր,
Քարտեզի վրա գետերն են տխուր,
Աճող ու փտող ծառերն են տխուր,
Եվ նման է դա ա՛յն գեշ դրրության,
Երբ խոսքի քաղցը դառնում է քաղցկեղ,
Ու բառի սովը՝ ցավագարություն:

Ո՛ր ես, հանճարե՛ղ սևագրություն....

13. I. 62—25. X. 62

Երևան

Ե Ր Ե Ս Ո Ւ Ա Ս Տ Ա Ռ

Ուռենիները նրա՛ համար են,
Որպեսզի... ցույց տան ջրին ճանապարհ:

Եվ ծուխը, նու՛յնպես, նրա՛ համար է,
Որպեսզի... ցույց տա ուղղություն քամուն:

Ծղրիդներն, խնշո՛ւշտ, նրա՛ համար են,
Որպեսզի... մամլեն մութն իրիկնային
Իրենց նվազի նո՛յն ձայնանիշով:

Եվ արտույտները նրա՛ համար են,
Որպեսզի... իրենց երգով չորացնեն
Ծաղն ու եղյամը վառ առավոտվա:

Իսկ ուշ աշունն էլ նրա՛ համար է,
Որպեսզի...
...Դանդաղ-դանդաղ լայնացնի տարածությունը՝
Տերևաթափո՛ւլ...

Բանառտեղծնե՛րը:
Նրա համար չե՛ն,
Որպեսզի... այսպե՛ս
Ամե՛ն քան շրջեն աստառի վրա...

23. VI. 65
Ծրեան

Ք Ա Ղ Յ Ը՝ Ք Ա Ղ Յ Կ Ե Ղ

Նորի՛ց՝ քառի սո՛ւլ,
Խոսքի խեղճություն:
Ուզում ես խոսել,
Իսկ քառե՛ր... չկա՛ն:

Եվ ինքդ՝ տնկված ոտնաթաթերիդ,
Մի ստարոթիմակ լրտեսի նման,
Ականջդ՝ ես հպում արտիդ պատերին,
Ու... հազա՛ր ու մի անկե՛րպ, աննմա՛ն,
Տարտա՛մ ձայներից գլուխդ է պտտում:
Այսպես՝ անտատում ծառե՛րն են փտում,
Թե՛ քարտեզներում գետերն են ստում՝
Խաղալով խշշոց, կարկաչ ու սահանք:

Այսպես՝ մի անքուն գիշերապահակ
Ձայներն է լսում քնած՝ քաղաքի,
Որ շուտով պիտի դառնան ահագին,
Հորդե՛ն-վարարե՛ն անկարգ ու հախտոն՝
Նման... հանճարեղ սևագրության:

Իսկ հիմա... քնած քաղաքն է տխուր,
Քարտեզի վրա գետերն են տխուր,
Աճող ու փտող ծառերն են տխուր,
Եվ նման է դա ա՛յն գեշ դրրության,
Երբ խոսքի քաղցը դառնում է քաղցկեղ,
Ու քառի սուլը՝ ցավազարություն:

Ո՛ր ես, հանճարե՛ղ սևագրություն....

13. I. 62—25. X. 62
Ծրեան

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր ապառաժ անտաշ քարի մեջ
Տեսնում են Ֆորում, տեսնում Զվարթնոց,
Ժայռի զանգվածում տեսնում Աջանտա, Էլլորա, Գեղարդ,
Անգույն կտավին՝ սրբազան ընթրիք ու Մագթադինե,
Եվ ամեն անցնող երիտասարդի հոգու խորքերում՝
Մի անջող Համլետ, արթուն Օթելլո...

Ծ Ա Ռ Ա Գ Ա Յ Թ Ա Յ Ի Ն Ա Ն Տ

Ծառագայթային այս ախտը բնավ նո՛ր չէ, բարեկա՛մ.
Նա նորածի՛ն չէ,
Այլ առնվազըն ութ հազար և ութ հարյուր տարեկան:

Այդ ախտով էին տակավին հիվանդ
Հին հելլենացիք, հնդիկները հին:
Եվ Հոմերոսի կուրությունն իրոք այդ ախտից էր հենց:
Եվ այդ նույն ախտով գերեզման իջան
Ձե՛ր Նարեկացին, Օեքրսպիրը մե՛ր,
Ու բոլո՛ր նրանք, ովքեր թոք ունեն՝
Մեր մոլորակի կիսագնդերի մեծության չափով
Կամ այնքա՛ն մեծ սիրտ,
Որ գրավում է տեղն էլ թոքերի...

Այս ախտով մարդիկ չե՛ն վարակվում, չէ՛,
Այլ վարակված են ծնվում մայրերից:
Այս ախտը միայն նրա՛նց է բռնում,
Ովքեր յոթ հազար յոթ գույն են տեսնում ծիածանի մեջ,
Ովքեր լսում են
Մոլեկուլների խելահեղ վազքի համանվազը
Ա՛յն մուրճերի մեջ կամ կացինների,
Ռոռնք մինչևիսկ զնգոց չեն հանում,
Այլ համր են ու լուռ՝ կուռքերի նման...

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր նայում են սևուկ գոմեշին,
Իբրև մի քայլող սև դաշնամուրի,
Որ նվագում է լոկ իրե՛նց համար:

Ծառագայթային այս հիվանդությանը տանջվում են նրա՛նք,
Լոկ նրա՛նք,
Ովքեր մենակության մեջ
Միանգամից են ողջ մարդկության հետ նստում զրույցի.
Լոկ նրա՛նք,
Ովքեր այս Երկրագնդի պտույտն զգում են կրունկո՛վ իրենց
Եվ արմըտիքի աճումն զգում են իրենց ափերո՛վ,
Եթե մինչևիսկ իրենց ափերը պահում են օդում.
Լոկ նրա՛նք,
Ռոռնց չեն կարողանում ո՛չ մի կերպ սիրել
Բոլո՛ր դարերի արքաներն ամեն
Եվ կործանում են սրանց ո՛չ միայն աքսորով, բանտում,
Այլ նաև սրանց պալատ քերելով
Ու... սուտ սիրելով...

Ծառագայթային այս ախտը բնավ նո՛ր չէ, բարեկա՛մ...

15. XI. 63

Երևան

Հ Ի Մ Ն Բ Ա Ր Ա Ն Ձ Ա Վ Ի

Մենք դուրս ենք եկել մութ քարանձավից
Միլիոն ու միլիոն տարիներ առաջ:

Մենք դուրս ենք գալիս նույն քարանձավից
Ամեն ակնթարթ:

Նոյն քարանձավն է մեզ հետապնդում
Մեր ներսից արդեն:

Ու մեր երգածի կեսից լավելին
Նոյն քարանձավի արձագանքն է հենց:

Մնացած կեսով մենք հիմնն ենք երգում
Նոյն քարանձավի՝

Անեծքանման խոսքերով այն կույր,
Որոնց իմաստն ենք հասկանում այնքան,

Որքան պատվը՝ իր հմայական խառնակ խոսքերը,
Որքան երեխան՝ իր խառնիճաղանճ շուտասելուկը...

11. XI. 65
Զահարյի

Մ Ե Ծ Ո Ւ Ղ Տ Ի Փ Ո Բ Ր Ի Կ Ա Կ Ա Ն Ջ Ո Ւ Մ

Ի՞նչ-որ ժամանակ,
Մեզանից առաջ, մեզ անհայտ մարդիկ
Նստել-մտածել ու հորինել են զանազան բաներ,
Այս մեկը՝ անե՛լ,
Այն մեկը՝ չանե՛լ,
Այս՝ համարել ճի՛շտ,
Այն՝ մերժել-վանե՛լ,—
Սահմանել ինչ-որ հերթականություն,
Կոչել պատիվ ու... պարտականություն...

Ու մենք էլ ահա անցնում ենք հանգիստ
Անհերթությունաց այս թանգարանով,
Եվ ծվատում ենք ո՛չ մեր հազուսուրը,
Այս հոգի՛ն մեր խեղճ,
Որի հատակում
Կա անտանելի նույնպիսի մի բան,
Ինչպես ավազը՝ մեր կոշիկի մեջ,
Ինչպես սուր փուշը՝ մեր եղունգի տակ:

Եվ անց է կենում
Երգապնակի շրջագծային խազի վրայով
Ասեղը կյանքի՝
Կորզելով միշտ նույն
Ու մի՛շտ տանջալից ա՛յն եղանակը,
Որ վաղու՛ց արդեն անհեղինակ է,
Բայց համարվում է
Անառարկելի հեղինակություն...

Եվ մի արտասոց,
Շատ տարօրինակ ու տա՛ք ցանկություն
Հալածում է ինձ

Ու հետապնդում օրը ցերեկով,
Ես կամենում եմ (և ձե՛ր փոխարեն),
Ո՛չ թե լոկ մոռալ կամ թե գոմալ,
Այլ զազանի պես մոնչա՛լ ազդու՝
Մոռությո՞ւ դրած այս քարի՛ն արդյոք,
Թե՛ այս նորածն կյո՞ր սեղանի՛ն:
Ու չե՛մ կարեկցում... արհամարհո՛ւմ եմ
Ա՛յն թշվառական կենդանիների՛ն,
Որոնք «ընտանի» պիտակն են կրում,
Իրենց կարծիքով՝ իբրև ուսադիր,
Իսկ իմ կարծիքով՝
Իբրև խոր խարան խայտառակության:
Դուք նախընտրում եք վիթխարի ուղտի՛ն:
Իսկ ես լրջորեն նախապատվում եմ
Նույնիսկ մկա՛նը, առնետի՛ն անգամ,
Որոնք ընտանի չեն դարձել ցայսօր...

Ու երբ քնի մեջ մղձավանջային
Ձեզ առնետները կրծոտեն սիրով,
Դուք՝ արթնանալով՝ մի պահ մտածեք,
Թե արժի՞ արդյոք դարեր շարունակ
Քնել մե՛ծ ուղտի փոքրի՛կ ականջում...

14—20. XI. 63

Երևան

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Նորի՛ց մեջըս խոսեց **Ֆրանսիացին...**
Եվ ակամա, նորի՛ց, ես չանսացի
Իմ պապերի ձայնի՛ն՝ խոհեմության՛ն,
Հա՛յր Սուրբ Խոհեմության,
Որին պիտի
Հիմա խոստովանեմ իմ մեղքերը:

Հա՛յր Սուրբ, ես կուզեի կյանքի՛ս գնով
Զնչել «զգույշ» բառը:
Մեծ մե՛ղք է սա:

Հա՛յր Սուրբ, ես կուզեի դարձնել կանոն
Անկանոնությունը:
Մեծ մե՛ղք է սա:

Կարելի չէ՞, Հա՛յր Սուրբ, որ ոտքերը,
Գեթ ոտքե՛րը լինեն ինքնագլուխ,
Գեթ ոտքե՛րը, Հա՛յր Սուրբ, ո՛չ գլուխը...
Թե՛ մեծ մեղք է դա էլ:

Եվ մահի չափ հոգնած մի կա՛րճ պահի
Կարելի չէ՞ արդյոք «մարդ եմ» բառին
Զհագցրնել ո՛չ մի գեղ ածական...
Թե՛ մեծ մեղք է դա էլ:

Հա՛յր Սուրբ, եթե մարդը հավատացյալը չէ,
Որտե՛ղ պիտի նա իր մեղքը խոստովանի:

Խո՛ւ-տո՛-վա՛-նո՛-թյա՛ն եմ կարոտ, Հա՛յր Սուրբ՝
Զներվելու՝ գնով
Եվ բանադրվելու՛:

Որտե՛ղ խոստովանեմ,
Եվ ու՛մ խոստովանեմ,
Հա՛յր Սուրբ Խոհեմություն...
...Ո՛չ սուրբ և ո՛չ էլ հայր...

14. VII. 63

Երևան

Շոյելու պես ապտակում եմ
Այս պարզերես լուռ երկնքին

Ու ժպտում եմ՝
Մանուկի պես
Եվ կամ 'մոգի'
Նորից ցվա՛ծ-լրիվացա՛ծ...
Եվ... հասկանում եմ աստղծուն:

Ց. XII. 62

Երևան

Մ Ի Ա Յ Ն Ա Կ Ջ Բ Ո Ս Ա Ն Բ

Հիմարացած ու վերացած, խեղճ ու վսեմ՝
Կանգնել եմ ես այս պարզերես երկնքի դեմ

Ու նայում եմ՝
Հորթուկի պես
Եվ կամ քրմի՝

Լիությունից թեթևացա՛ծ.
Եվ... հավատում եմ աստղծուն:

Ձեռքըս գցում այս ծոմոված առվի վզից
Ու ձգելով-քարձրացնելով գլխիցըս վեր՝
Ստեղծում եմ մի պսպղուն աղեղ-կամար,
Որ չի՛ փլվի,

Քանի դեռ ես չեմ կամեցել:
Մտնեցնում եմ հետո երկու ափըս իրար՝
Ծափ տալու պես,

Եվ՝ հնազանդ իմ ափերի այդ շարժումին՝
Քարափները գալի՛ս իրար,
Միանում են իրար անձայն...
Եվ ինքըս ինձ հավատալով՝
Է՛լ աստղծուն չե՛մ հավատում:

Ափս եմ քսում հողի դեմքին,
Անբաղաձայն
Ու նախնական մի կենտ բառ եմ ասում նրան,
Ու նա— շոյված՝ կատվի նման— մեջքը ցցում
Եվ իր երկար պոչն է շարժում՝ գետի տեսքով:
Ու ես կրկին հիմարացած և ինքնագոհ՝

ԱՆՕԳՈՒՏ ՓՆՏՐՏՈՒՔ

ԿԱՄ

ԵՐՋԱՆԻԿ ԳՅՈՒՏ

Ա՛խ, իզուր է,
Շա՛տ իզուր է որոնումը այն ամենի,
Ինչ իր անցած ուղիներում
Կորցրել է մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղու՛ց մաշված-ծակծկված են:
Ու բարի է հողը՝ պառավ մամիկի՛ պես.
Ինչ որ կորավ՝
Անմիջապես նա պահում է ու թաքցնում
Իր փեշի տակ մամիկային
(Ծածկաբերան մի խոռոչում,
Փռչու ներքո,
Սառույցի մեջ հավերժական,
Մինչև անգամ ածխի շերտում) ...
Իսկ անփույթ են ճամփաները՝
Պատանո՛ւ պես
(Ինչ որ կորավ՝
Շուտ կորչում է կորցրնողի ի՛ր իսկ ոտքի,
Մեքենայի անիվ-ակի.
Ձիու-ջորու սմբակի տակ,
Նույնիսկ ամպի սևանկար-պատճենի մեջ՝
Ա՛յն ստվերում,
Որ հինավուրց հափշտակիչ-ալվազակ է) ...
Եվ իզուր է,
Չէ՛, իզուր է որոնումը ա՛յն ամենի,
Ինչ դարավոր իր ճամփեքին կորցրել է

Մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղու՛ց մաշված-ծակծկված են...

Ու երջանիկ է իսկապես,
Բախտավոր է նա՛ միմիայն,
Որ դարավոր ճամփաների
Ինչ-որ մի նեղ խաչմերուկում՝
Ամենևի՛ն չփնտրելով,
Այլ ակամա-հանկարծակի
Հեզ մարդկության կորուստներից մեկն է գտնում
Արեգակի
Կամ իր աչքի մատնիչ շողի միջնորդությամբ:
Գտնում, սակայն չի թաքցնում,
Այլ տալիս է իր տիրոջը՝
Մարդկությա՛նը,
Վերադարձնում նրա կորած գեղեցկության
կամ բարության,
Ազնվության և կամ սիրո
Մի նշխարը,
Մի մատուցքը:

Միայն այսպես է գտնվում
Հեզ մարդկության կորուստներից ինչ-որ մեկը,
Թե չէ իզու՛ր, շա՛տ իզուր է
Ակնկալված և ակնկոր որոնումը ա՛յն ամենի,
Ինչ իր անցած ճամփաներին կորցրել է
Մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղու՛ց մաշված-ծակծկված են...

4. XII. 64

Երևան

ԾՇՄԱՐԻՑ ԵՐԳԸ

Ճշմարիտ երգը ծնվում է,
Ինչպես կրակը զենքի մեջ.

Ետհարվածով ետ է մղում կրակողին,
Իսկ ում դիպավ՝ տեղնուտեղը սպանում է:

11. VII. 61

Մուկվա

Ծ Ա Ր Ա Վ

Նույնիսկ ե՛ս էլ գիտեմ ճառել
Ու խրատել գիտեմ, անշու՛շտ:
Սակայն պատիվ ու փառք նրա՛ն,
Ով կարող է հոգի վառել,
Հուրհրատել մեկ վայրկյանում
Երկու անսուտ գոյականով
Եվ անխարդախ բայով երկու:

Ձույզ թվերը ե՛ս էլ գիտեմ:
Բայց փառք նրա՛նց,
Ովքեր տիրում են կենտերին,
Տիրում այնպե՛ս,
Որ հեշտությամբ քաժանում են զույգի վրա
Ու քանորդում զույգ ստանում
Առանց մի կենտ մնացորդի:

Մկանն ի՛նչ է. բոլո՛րն ունեն:
Փառք ջղերի՛ն,
Որ լարվում են թեթև քամուց,
Օվկիանոսի և երկնքի խոնարհից,
Կանանց երբեք չկրկնվող ուղեծրից.
Մինչև անգամ քաղաքային բառարանից՝
Ա՛յն լվացքից,
Որ չի փոփում այբուբենի կարգ ու սարքով.
Հետք չթողնող ա՛յն այրվածքից,
Որ կոչվում է հիշողություն.
Ա՛յն ասեղի կաղ քայլվածքից,
Որ մաքրությանն է շուրջում հոգին մարդու՝
Անվանելով իրեն գրիչ,
Մաքրությունը՝ թուղթ սպիտակ:

Գրելն ի՛նչ է. ե՛ս էլ գիտեմ:
Փառք ու հարգանք ստեղծողի՛ն,
Որ գալիս է և ազատում
Մեզ... մեզանից,
Մեզ... մեզանից հատում-զատում,
Ապա բերում կրկին զողում,
Մեզ միացնում նախ... մեզ, հետո... Անհայտի հետ:

Բոլորն այժմ կարդալ գիտեն,
Ուրեմըն փառք... կարդացածը հասկացողի՛ն...

27. VII. 63

Երևան

Ծ Ե Ր Ա Ն Ո Ւ Մ Ե Ն Ք

Ծերանում եմք, Պարո՛յր Սեվակ,
Ծերանում եմք, սիրելի՛ս,—
Հասակակից կանանց արդեն մենք նայում եմք եղբոր պես,
Նկատում եմք մատղաշներին,
Որոնք մեզ չեն նկատում.
Ամեն մի նոր ծանոթություն չի վերջանում էլ սիրով,
Ոչ էլ երգով մի անարվեստ, բայց պոռթկուն ու կրակված...

Ծերանում եմք, Պարո՛յր Սեվակ,
Ծերանում եմք, սիրելի՛ս.—
Մեր ապստամբ մազերն արդեն կա՛մ պատըծվել են մահով,
Կա՛մ իշխանաց իշխան սանրի խեղճ հպատակն են դարձել.
Մեր խոովկան մատներն արդեն դարձել են հեզ ու լսկան,
Իսկ դավադիր մեր ոտքերը՝ ընտանեւեր-տնատեր...

Ծերանում եմք, Պարո՛յր Սեվակ,
Ծերանում եմք, սիրելիս.—
Մե՛կ օր խմում
Եվ երկու՛ օր արդեն խումար եմք ընկնում,
Մե՛կ ժամ քայլում
Եվ երկու՛ ժամ խոսում դրա օգուտից
Կամ վնասից,
Եվ ըստ որում խոսում այնպե՛ս լրջորեն,
Կարծես մի մեծ գյուտ եմք արել
Կամ հերքում եմք մի հին գյուտ.
Եվ «բուծվել» կամ «հիվանդություն» բառերն արդեն օրեցօր
Հողովվում են ու խոնարհվում ավելի շատ և նույնիսկ
Առավել քիչ դժգոհությամբ,
Քան թե թաքուն պարծանքով...

Ծերանում ենք, Պարույր Սեփակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Թափառելու ժամ չի մնում,
Չենք հասցընում ձանձրանալ.
Քիչ ենք թախծում մենք անատիթ,
Շատ ենք տխրում առիթով.
Քիչ ենք կարդում, շատ ենք գրում,
Շատ ենք խորհում, քիչ քնում,
Որովհետև «անքնություն» բառը դարձել է սոսիճձ
Եվ ուզում է մեր քրքրված ջղերն իրար կպցընել...

Ծերանում ենք, Պարույր Սեփակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս,
Ծերանում ենք, սակայն կարծես
Դարձյա՛լ խելքի չենք գալիս.—
Դեռ հիմա՛ էլ զարմանում ենք.
Դեռ կարո՛ղ ենք զարմանալ.
Ժամացույցի սլաքները ետ ենք տալիս մտովին,
Ի՛նչ է թե մեր արդեն չարածն իբրև անենք աշխարհում.
Անկարելի հաղթանակի էք ենք ճարում ինչ-որ կերպ.
Երբեմն էլի այս աշխարհն ենք դեռ չափչփում հուսալից
Դոճ-կիխոտի ոտքեր կոչված նո՛ւյն կարկիճով ծալքամաշ.
Իսկ երբ մեկը խոր քնի մեջ մեր երազն է կոխկրտում,
Առաջվա՛ պես... առաջվա՛ պես վեր ենք ցատկում ճշարով...

Ծերանում ենք, Պարույր Սեփակ,
Սակայն... խելքի չե՛նք գալիս...

10. XII. 63

Երևան

Պ Ա Հ Կ Ա Ս Կ Ա Ծ Ի

Թե իսկապես հավատացած ես լինեի,
Որ իմ երգը ձեզ կարող է օգուտ բերել,
Ձեզ երգերով բանակի՛ պես կզիճեի:
Բայց ի՛նչ օգուտ՝ նստել ինչ-որ երգեր գրել:

Ի՛նչ է երգը. ցաված հոգու մխիթարանք...
Տեղ էլ հասնի՛ չկատարվող ապսպրրանք...
Վալերյանի երկու կաթիլ պղտոր հեղուկ...
Թե խայթում է՝ իր իսկ խայթից սասկող մեղու...

Իսկ թե երգը մինչև անգամ զենք է դառնում,
Ո՛ր է ձեռքը, որ ինքնակամ զենք է բռնում...

20. IV. 57

Մոսկվա

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԵՐԹԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն սերունդ
Նախ և առաջ մտածում է լուսայան մեջ,
Իսկ երբ խոսել է սկսում՝
Բարկացնում է ավագներին
Եվ բարկացնում անկեղծորեն,
Որովհետև... կրտսերը՝ մի՛շտ անհասկացող,
Իսկ ավագը... հասկացող է:

Ավա՛գ աստված,
Մի՞թե իրոք համանիշ են ու համազոր
Հասկացողն ու կասկածողը...

Վե՛ն սերունդ,
Նախ և առաջ մահանում է կասկածելով:

9. XI. 65
Զանախչի

ՀՈՐԴՈՐ

Դիմավորեցեք... կասկա՛ծը: Նա է
Թակում ձեր դուռը:
Նա է, հե՛նց ի՛նքը:
Դիմավորեցեք և մի՛ վախեցեք.
Ես նրան արդեն ընդունել վաղու՛ց
Եվ մինչև անգամ ճամփել եմ կրկին:

Դիմավորեցեք նրան ծիսաբա՛ր՝
Նոր ու հնօրյա Տերընդառաջո՛վ՝
Ձեր իսկ կրծքի տակ վառելով խարույկ.
Որպեսզի... եթե ընդմիշտ չչքվի,
Ապա գեթ ճեղքվի մութը ձեր հոգու:
Դիմավորեցեք նրան գեթ հիմա՛,—
Ես նրան վաղու՛ց ճամփել եմ արդեն:

Դիմավորեցեք... կասկա՛ծը: Ես իր
Ո՛չ մունետիկն եմ, ո՛չ էլ մարգարեն:
Իր երախտապարտ փրկյա՛լն եմ ես լոկ:
Դիմավորեցե՛ք, քանզի ամենքիս
Լոկ հավա՛տք է պետք, ո՛չ հավատալիք:
Լոկ հավա՛տք է պետք, ո՛չ հավատալիք...

11. II. 63
Երևան
Ձ8. VIII. 65
Զանախչի



ԵՆԻՉԱՅՆ ՊՆՏԱՐԱԿ

Երկնքից առկախ մի լեռնակղզի՝
Հայաստան աշխարհ:

Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ կենտրոնում՝
երկու զանգ հսկա և անձեռագործ:
Եվ այնքա՛ն հսկա, այնքա՛ն վիթխարի,
որ չէին կարող որևէ կեռից ոչ մի կերպ կախվել,
ուստի պարզապես կործված են հողին:

Անունն՝ Արարատ
կամ
Միս ու Մասիս:

Նրանց ռումբաձև զույգ լեզվակները խրված են հողում
և, խարսխի պես, հասնում են մինչ հրահեղուկի մթին հատակը:
Ու երբ գործում են այդ լեզվակները՝
երկրաշարժային բոլոր սարքերը
իրենց տազնապն են արձանագրում
լրագրերի գունատ երեսին՝

սև-սև տառերով...
Իսկ ով ունի ունի,
հավատո քլթակ՝

նա լսում է միշտ և նրանց ձայնը,
դողա՛նջը նրանց:

Եվ ե՛ս չեմ, ոչ էլ դու՛ք եք դողանջում.
Միսն ու Մասի՛սն են դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւլ:
Գողթան երգերի չափ ու կշռույթով,
բամբ բամբիռների նվագակցությամբ,

շարականների ելևէջումով պատարագատու՝
Միսն ու Մասիսն են դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւլ.

ով ունի ականջ,
քլթակ հավատո՝
նա լսում է միշտ,

լսում է նրանց զանգը երկնաչու,
որ թարգմանվում է լոկ երկու քառով՝

Ո Ղ Բ Ա Մ Մ Ե Ռ Ե Լ Ո Ց

Այս լեռնակղզում լեռնաքարե՛րն են շատ,
թե՛ կերպաձևված շիրմաքարերը:

Եվ ծառե՛րն են շատ այս լեռնակղզում,
թե՛ վեր ծառացած սուրբ խաչքարերը:
Եվ ավելի շատ անտա՛ն է հատվել,
թե՛ անսուրբ ձեռքով խաչքար է ջարդվել
դարեր կելծեժ այս լեռնակղզում...

Սակայն ես այսօր և ամենայն օր
մշտական վշտով նրա՛նց եմ ողբում,
ովքեր չունեցան շիրմաքար-չ՛...
ինչպես չունեցան պատանք-պատարագ:

— Ողբամ մեռելո՛ց,
անթա՛ղ մեռելոց:

Մե՛կ չէին նրանք
և ո՛չ էլ երկու:
Նրանք՝ բյո՛րք-բյուրո՛ց,
նրանք՝ ա՛զգ-ազի՛նք,

և չվախճանվեց նրանցից ոչ ոք
իր անկողնու մեջ մահով բնական,
ո՛չ մանուկ, ո՛չ ծեր,
ո՛չ կին և ո՛չ այր...

Չմեռա՞ն նրանք, այլ սպանվեցի՞ն՝
լեզեռն առ լեզեռն,
փաղանգ առ փաղանգ:

Չմեռա՞ն նրանք, այլ սպանվեցի՞ն՝
ո՛չ գոտեմարտում,
ո՛չ խրամատում,

այլ իրենց տանը, այգում և արտում,
իրենց սրտի պես լեցուն ցորենի հորերում իրենց,
իրենց հոգու չափ խոր-խորհրդալի ձորերում իրենց,—
մահապարտվեցին հազա՛ր ձևերով,

ամենքն՝ անխնա,

ամենքն՝ անխտիր...

— Ողբամ մեռելո՛ց,

բյո՛ւրք-բյուրո՛ց ողբամ:

Ես ի՞նչ իմանամ, և այդ ո՞վ կասի,
թե ո՞վ էր արդյոք այն առաջինը,

ում սպանեցին,

ա՛յն առաջինը,

որ ընդամենը դեռ միավոր էր:

Բայց միավորի կողքին շարվեցին նոր-նոր զերոներ,
և զերոների թիվն անցավ հինգից ու հասավ վեցի՝

կես միլիոն

ու

մեկ,

մեկ միլիոն

ու

կես,

և ամենքն՝ անպարտ,

և ամենքն՝ անմեղ...

— Ողբամ մեռելո՛ց,

միլիո՞ն մեռելոց:

Ու ջնարակվեց հողը արյունով,
լուսն քերանը՝ սարսափով խոսուն,
օդը՝ տագնապով անտեղիտալի,
խնկ ահից կապտած եր՛կիները լեղակ՝
անխուփ աչքերի մեռելախայրով...

— Ողբամ մեռելո՛ց,

Կապտա՞ծ մեռելոց:

Ջարդված ազդրերի ու սրունքների,
անջատված թաթի ու կրունկների
չչափագրված ձևերն այլազան
պահանջում էին էվկլիդեսական գիտություն մի նոր,
որ նոր էր միայն սկզբնավորվում
էվկլիդեսների շիրիմին պզգած
ահեղ Գորշ Գայլի մութ ուղեղի մեջ՝
ի տես արածվող մի ամբողջ ազգի,
որ հնամենի իր հողի վրա
մի պտղունց հողով աչքը փակելու
բախտից էր զրկվում...

— Ողբամ մեռելո՛ց,

անհո՞ղ մեռելոց:

Բոլոր բանտերից ազատել էին մարդասպաններին

և զինել քեռով

ու հրազենով.

— Կեցցե՛ն Բարսաբա՞ն...

Եվ լցվել էին բոլոր բանտերը մարգարեներով՝

խուսքի՝ ու երգի՛,

մտքի՝ ու ձեռքի՛,

հու՛յս ու հավատքի՛ մարգարեներով.

— Հխուսի՞ն ի խաչ...

— Կախաղաններից ճոճվող սրբերի դուրս ընկած լեզվից
հպարտությունն էր անընդհատ ծորում,

արհամարհանքն էր շողիքն իր թորում
մարդկության վրա,

ա՛յն խեղճ ու կրակ— թշվառ մարդկության,
որ ինքն էր նաև խեղդամահ լինում,
քանի որ նրա կոկորդում նեղիկ
մարդկայնությունն էր խրվել-մնացել...

— Ողբամ մեռելո՛ց,
խեղդվա՛ծ մեռելոց:

Իրենց միևուճար ու սրտահատոր դիակի վրա
մայրեր-մանուկներ,
քույրեր-ծերուկներ

կաղկանձում էին, տակայն... անարցո՛ւնք.
սպառվել էին նրանց արցունքի պաշարները ողջ,
ինչպես որ իրենց անբան թշնամու գանձարան-խազներն:
Ու երբ հասնում էր մահը ցանկալի,
իրենց ոսոխից վրեժ լուծելուն այլևս անկարող,
գեթ աստծուց էին վրեժն այդ լուծում՝

թքելով դեպի երկինք,
մի երկինք.

որ աշխատում էր նրանց հետ խոսել
աստղերի լեզվով խոլ ու համբալկան.

— այլևս այդ լեզուն հասկացո՛ղ չկար...
որ ասույներ էր շաղ տալիս հերթով,
ասես թե պատավ գուշակի նման օստի էր գցում.

— ո՛վ կհավատար այսքանից հետո...

որ արշալույսով, հարալեզի պես,
լիզում էր նրանց կարմիր վերքերի բոցերը.

— իզո՛ւր...

որ լույսնալույսով ցողում էր նրանց խոցերը.

— իզո՛ւր...

Հասնում էր մահը՝ ցանկաղին միակ.
և ամուր սեղմած ատամն ատամին,
մահանում էին՝ քա՛ց ատամներով,
ատամների տակ վրե՛ժն անկատար...

Եվ Արարատից մինչև Արաֆաթ, Սիփանից՝ Սիևա,
Սև ծովից՝ Կարմիր, Կարմիրից՝ Մեռյալ
փոված-սփոված մեռելներն իրոք
վրե՛ժ լուծեցին թշնամուց իրենց՝
արտաշնչելով ժանտա՛խտ, տե՛նդ ու տի՛ֆ...

Եվ երկնից առկախ այս լեռնակղզին
դարձրեցին այնժամ մի թշվառ... թատրո՛ն,
ուր կրակը լոկ՝ ողբերգա՛կն այդ կույր,
խաղաց քազմաթիվ-քազմազան դերեր:

Ծուխն էր համբարձվում՝ Հիսուսի նման,
կրակն էր մնում՝ Մուհամմեդի պես...

Եվ հրից-մրրց

երկնքի կապույտ սպունգը ցամքեց ու ճմուռորվեց՝
վաչկատունների տրեխի նման:

Ու ճմուռորվեց հողն էլ ներքևում՝

փլատակներով,

ու ճմուռորվեց ա՛յն դրամի պես,
որ շարտում են... պոռնիկի ղեմքին:

Եվ երկրի վրա,

այրվող տներից-շեներից բուրո,
ողջ կենդանի բյուր կիզվողների ճիչի հետ մեկտեղ
փովեց զառանցանքն՝ ազանի՛ նման:
Սարսափն էլ երկրի ձայները բուրո

հավաքեց բոում,

կախեց մատներից՝

նվազավարի-խմբավարի պես,
և անիրավված-տարաբախտ երկրի
ողբերգախաղաց բացօթյա բեմում

հնչեց մի համե՛րգ,

մի համանվա՛գ,

որ մղձավանջն էր՝

շարունակելի՛ն...

Ջարդեցի՜ն այսպես՝

ոչնչի՛ համար

և

ամե՛ն ինչի:

Ոչնչի՛ համար

և

ամե՛ն ինչի:

2 000 000 մարդ ի խաչ բարձրացավ,

2 000 000 խաչ չտնկվեց հողում,

2 000 000 խաչ տապանաքարին չփորագրվեց,

քանզի... հասարակ տապան-դագաղը

կարծես թե դարձավ աստծու պես մի բան.

մա՛րդ չարժանացավ նրան տեսնելու եզակի բախտին...

Ինքը երկիրն էր մի անկախարիչ դագաղ վիթխարի,
մինչ նրա բոլոր բնակիչները՝ անդագաղ դիեր...

Եվ ահավասիկ էս ասում եմ ձեզ՝
տասնըմեկերորդ պատվիրանի պես.

— Ամենից առաջ

փայտե դագաղի՛ պաշտամունք պիտի ուսանալ կյանքում,

փայտե դագաղի՛,

նաև պատանքի՛:

դագաղ-պատանքի՛ պաշտամունք պիտի ունենալ, այո՛,

վասնզի եթե չի ճարվում դագաղ,

ուրեմն արհավիրք-աղետ է ահեղ,

վասնզի եթե դին չի պատանվում,

ուրեմն ամենի-ահարկու օրհաս,

մահ-տարածան է,

եղեռն ու նախճիր...

Եվ դո՛ւ չես ասում, ոչ էլ դո՛ւք,

այլ ե՛ս,

ես՝ Միս-Մափսջս,

այս էս եմ ասում

անդու՛լ-անդադա՛ր-անվե՛րջ զնգացող իմ անքուն զանգով:
Գողթան երգերի չափով ահագորու,
բամբ բամբիռների հնչումով խրոխտ
Միսն ու Մափսն դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւլ...

ով ականջ ունի,

հավատո քթակ՝

նա լսում է միշտ

լսում է նրանց հանգերգն ահագորու,
որ թարգմանվում է նույնպես զույգ բառով.

Բ Ե Կ Ա Ն Ե Մ Ծ Ա Ն Թ Ե Ր

Բեկանեմ շանթեր

իմ գլխի՛ վրա,

որ ճերմակել է ո՛չ լոկ հարանքից ու չարչարանքից.

որ ճերմակել է բեկված-բեկբեկված բազում շանթերի

դարավոր փոշո՛ւց,

աճյունի՛ց ճերմակ...

Բեկանեմ շանթեր՝

իմ աչքերի՛ մեջ,

որոնց բիբերը խառնարաններ են ծփացող հուշի

և որոնց համար սպիտակուց է դարձել նո՛ւյն փոշին՝

բեկված-բեկբեկված բազում շանթերի փոշին սպիտակ...

Բեկանեմ շանթեր՝

իմ հոգու՛մ մթին,

կուպրանե՛րկ հոգում,

որ գահավիժված հրեշտակներն են անբառ մորմոքում

մեռած հավատի

և մարած հույսի դիակի՛ վրա՝

միակի՛ վրա...

Բեկանեմ շանթեր

և լեզվի՛ս վրա,

իմ թվա՛տ-կակա՛գ-կա՛պ ընկած լեզվի,

կա՛պ ընկած՝ ի տես մի իրողության,

որ երբևիցե չէր եղել... եղավ,
որ չէր կատարվել երբեք... կատարվեց...
կա'պ ընկած՝ նաև ի նշան անգոր-անկարողության՝
ասելու համար ողջ անասելի՛ն
և անպատմելի՛ն պատմելու համար...

Եվ իրոք.

այդ ո՛վ կարող է հիմա
թեկուզ կցկտոր և անկապակից խոսքերով ասել,
թե ի՛նչ կատարվեց:

Նախ՝

Քրիստոսը մեծացավ, ինքնին, ևս մի տարով,
և երկրագնդի պտտվող կողին՝
հասարակածի լայնության վրա
սառցե գրիչով մեծատառ գրվեց

նրա տարիքը՝

1914 թիվը:

Եվ օրացույցը՝

կրկեսի քեմին կյանքն իր նվիրած
ձեռնածու կնոջ հայտնի նազանքով,
սկսեց մեկ-մեկ ուտերից նետել իր հագուստները.
ամեն օր՝ մի շոր:

Ունայնությամբ էր արևն զբաղված,
երկինքը՝ անվերջ դիմակ փոխելով.
կոիվ էր տալիս օղը օդի հետ,
օդն օդից պարտվում,
հաղթում օդն օդին,

և կնքվում էր այն հաշտությունը կարճ,
որ ծանոթ է մեզ գարուն անուռով:

Մարդկանց ու կանանց գրկաշփումից
լույս աշխարհ էին գալիս մանուկներ՝
իրենց ճիչերով մարգարեական:

Հողի և ջրի շփումից տամուկ
թթխմորվում էր և գինի, և հաց:
Թուղթ ու թանաքի հպում-շփումից
քոնկվում էր միտք ու ժայթքում էր երգ:
Իսկ բթամատի ու ցուցամատի շրջում շփումից
ծնվում էր գրամ...

Բայց բթամատի ու ցուցամատի շխկուն շփումից
շատ հաճախ նաև հրդեհ է ծագում,
եթե ցուցամատ-բութ մատի տերն է մի բութ բարբարոս:

Ո՛վ շրխկացրեց իր ցուցամատով ու բթամատով:
Եվ այդ շրխկոցը մահացու փոթկաց
ինչ-որ տաքգլուխ մի իսաանողի ատրճանակից,
ու գնդակը տաք ոչ թե մխրճվեց
ինչ-որ Ֆերդինանդ Ֆրանցի սրտում,
այլ հեզ մարդկության ուղեղի հեռաց ա՛յն կենտ քջիջի մեջ,
որ մարդկայնության կենտրոնն է միակ...

Աշխարհը շրջվեց բերանի վրա և ապա մեջքի՝
աշխարհն ինքն իրեն կործեց ու շտկեց,
շուտ ու մուտ եկավ ջղաձգվելով՝
ալիազախրված-խեղդվող ձկան պես,
և թավալ տվեց՝

գոռեխ-մոզերից կարեվեր խոցված մտրուկի նման,
ու հանեց փոշի՛,
այնպիսի փոշի՛,

որ խցեց աչքերն ամբողջ մարդկության,
փակեց երկինքը և ծածկեց աստծուն,
ա՛յն աստծուն,

որի որդու տարիքը նույն այդ ժամանակ
ավելացել էր և՛ս կես տարով...

Եթե մինչև այդ դիվանագետներն անուշ ժպիտով
քարկտիկ էին իրար հետ խաղում՝
րոպեն մեկ երկինք (աստծո՛ւն) նայելով,

խկ մի պահ հետո՝ սեփական ափին,—
դիվանագետներն այժմ տեղ տվին տերերին իրենց,
որ... ոտնագնդակ խաղան մոլեզուն՝
արկով հեռահար
և հեռաթոխչք ռումբ ու ականով...

Գնդացիները

խեղճ արտույտներին ու տատրակներին գործազրկեցին:

Հրացանների

թոքախտավորիկ հազն էր վերջանում արճահոսումով:

Թնդանոթները

իրենց երախի քրքիչով խենեշ
ծանակում էին պարսատիկավոր Դավթին խղճալի,
խկ սպանվողը ինչ-որ Գողիա՞թ չէր,
այլ մի մարդկություն՝ իր մարդկայնությամբ...

Թթվել էր կարծես հողը բովանդակ,
ու թթվել էին ծովերը բոլոր,
և թթվածության խմորիչ մանրէն արկ-ականն էր նույն,
որ հող ու ջրի պղպջակներ էր պայթեցնում ահեղ՝

դեպի վե՛ր, երկի՛նք,

որտեղ Հիսուսը, Աստած Հոր աջում,
ինքնին մեծացավ արդեն մե՛կ տարով,
և երկրագնդի կիսարյունաքամ-գունատ ճակատին
արյունոտ մատով աղվեսագրվեց

1915 թիվը...

Եվ գուրջու պես մանեման եկող տագնապն անմեռուկ,
որ հարկահանն է համայն աշխարհի
և տանուտերն էր այս լեռնակղզու,
ցրտից կծկվեց.

կարկուտ դառնալու անքեկ վճիռով՝
նա խտանում էր:

Եվ խտանում էր վտանգը նաև՝

համայն աշխարհի մշտական քեռին
և խորթ հայրիկը այս լեռնակղզու,
խտանում այնպե՛ս,
ինչպես արյունը, երբ լերդանում է:

Ծպտյալ ոճիրը հանդերձ էր փոխում՝
տեսակցությունից ուշացող բոզի անապարանքով:

Քենը քողարկված, ոխը դավադիր
իրենց վզերի կապն էին կրծում՝
շղթայի զարկված շների նման,
նո՛ւյն այն շների,

որոնց աղոթքը թե հասներ աստծուն՝
երկնքից ոսկրի շանճրև պիտի գար:

Ծների աղոթքն իսկապե՛ս լսվեց...

Եվ մահը՝ մեծըն մաթեմատիկոս,
Գորշ Գայի արնոտ ժանիք-գրիչով
գրանցման մատյան = թահրիր դեֆտերում
համարակալեց մի ամբողջ երկիր՝
իր քաղաքներով, շեներով ամեն
և մինչև անգամ վերջի՛ն քողտիկով:

Համարակալեց բովանդակ մի ազգ՝

ծե՛ր ու մանուկո՛ւյ,

կին ու էրիկով

և մինչև անգամ խելառո՛ւ վերջին:
Անգլուխ-անպոչ այդ պետության մեջ
չէ՛ր եղել երբեք ու երբևիցե
այսպիսի ստու՛յգ, այսքան ճշգրիտ

մի մարդահամար,

այնքա՛ն ճշգրիտ

և ստույգ այնքան,

որքան որ իրենց փեղամբարների
և կամ հարեմի հարճերի թիվը:

1915 թիվը...

Եվ եղավ... կյանքի ճոխ տոնավաճառ,
բարբարոսության աճուրդ մեծագին
և մարդկայնության փակ գրավատուն...
Եվ եղավ... մի ճոր՝ երկրորդ ջրհեղեղ,
որ իր տակ առավ—առաջին հերթին—
ա՛յն երկիրը հենց, որ Նոյին փրկեց:
Եվ իր տակ առավ այն ժողովրդին,
որ 15 դար

սրտով ու շրթով հայցեց իր աստծուն՝
«Արձակեա՛ր զմեզ»,
բայց Տերն արձակեց նրա ոտխի՛ն՝
միայն սաստումի թելով ձերբակալ
ու սուտ խոստումի մազով թևակապ
ոտխի՛ն նրա:
Եվ ինչու՞:

Արդյոք ո՛չ այն պատճառով,
որ աստվածները տանե՛լ չեն կարող իրենց նմանին,
ինչպես որ ազգը՝ իրենից բարձր իր հարևանին...
Եվ եղավ, օ ո՛չ, և եղեւ... խավար,
այսինքըն՝ սկիզբ,
այսինքըն՝ մարդու տարեգրության ճոր՝ դարագլուխ,
հիմնադրումը գիտության՝ մի ճոր.
— առաջին դեպքը ո՛չ կոտորածի,
առաջին դեպքը... ազգասպանության՝:

1915 թվին...

Եվ այդ թվին էր,
որ մի ողջ ազգի աղոթքը սատեց շրթունքի վրա,
լերդացավ բերնին՝
բերնից դուրս ժայթքող արյան հետ ու պես
մինչդեռ շների աղոթքը լսվեց անտեր երկնքում...

Եվ ոսկրով ծածկվեց մի հսկա երկիր,
ուր (ճիշտ են ասել ու ճիշտ են ասում)
եղել էր ու կար շնից շատ իշխան,

բայց իշխանություն չի՛ եղել երբեք.
եղել էր ու կար թերևս արդար,
բայց արդարություն... այլա՛հը թող տար.
երկի՛ր, որ տրվեց դարեր շարունակ սղան-թալանի,
ուստի չէր կարող չլինել աղքատ ու դատարկափոր:

Եվ ասում են ձեզ՝
պատվիրանի պես.

— Պետք է վախենալ յոթակիր ցուլի՛ց,
գահակալ ձիո՛ց,
բայց ավելի շատ՝

գայիսոնակիր մորացկանների՛ց պետք է սարսափել,
վասնզի եթե փորը թափուր է և ափն է դատարկ,
սպա գլուխը լեւի-լեցուն է միշտ ոճիր-նախնիրով:
Պետք է սարսափել մորացիկներից գայիսոնակիր,
վասնզի եթե այդ գայիսոնը ոսկուց է անգամ
ու զարդարված է եթե մինչևփակ աղամանդներով,
իմացե՛ք, որ դա խաբկանք է աչքի.

— նրանց գայիսոնն ու մականը միշտ ոսկորն է միայն՝
մարդու ող կամ կող,
ազդըր կամ սրունք:
Եվ ի՛նչ աստծու էլ նրանք դավանեն՝
դարձյա՛լ ոսկորի պաշտամունք ունեն,
ոսկորի՛,
ո՛չ թե տապան-պատանքի:

Եվ ասում են ձեզ՝
պատվիրանի պես.

— Վախեցե՛ք կյանքում սովազարներից
ատավել, քան թե խելազարներից,
որ գահին՝ ինչպես մրջյունին՝ բազմում
ու ձեռքն են առնում ուղտին ածդաֆա:
Իսկ երբ սովազարն ու խելազարն են միություն կազմում
ինչ-որ ազգի մեջ,

Ուղտն էլ դառնում է խորհրդանշանն ուրիշ մի ազգի:

Այն այդ Ուղտը խեղճ...

Իր կուզ-սապատով դիզում էր նա գա՛նձ,
կերակրում էր մի ո՛ղջ պետություն,
իսկ ինքը սնվում միայն տատասկով,
բայց և որոճում... միրածնե՛ր լուսե,
ոսկեղեն տեսի՛լք:

Ոսկեկար բանված և ընդելուզված
կոշիկ-ոտնաման-մուճակ էր տալիս
մի սմբակավոր ու բազմապճեղ հսկա տերություն,
իսկ ինքն՝ անպճե՛ղ,
իսկ ինքն՝ անսմբա՛կ,
բայց և՛ իր ոսկե՛ տեսիլքների մեջ,
բայց և՛ իր լուսե՛ միրածների հետ...

Բեկանեմ շանթե՛ր՝
անարդարությա՛ն:

Երբ ուղտն, ասում են, կոտոջ է ուզում՝
նա կորցնում է և ականջները:
Սակայն կոտո՛ջ չէր Ուղտի ուզածը:
Նրա երազը նույնքան փոքրիկ էր,
որքան ուղտային իր իսկ ականջը.
Ճարավից ճայթող իր աչքերի մեջ
մի հորդ աղբյուր էր մտովին տեսնում,
մի աղբյու՛ր, որին հասնելը հեշտ էր,
որքան... անելով ջրհոր փորելը...

Եվ... Բողտն այս ասգաս ո՛չ միայն ականջ,
ականջների հետ կրա՛նք էլ կորցրեց...

Եվ արարական անբեղ-անմորուք անապատներում
ծաղկեց... ոսկո՛րը՝
ավելի՛ ճերմակ,
քան թե շուշանը՝ Մշո դաշտի մեջ,

քան թե հասնիլը՝ Բյուրակնի լանջին,
ու կեռասենին՝ Ակնի շորջբոլոր:

Ոսկո՛րը ծաղկեց՝

Մի նորատեսակ մարիամածաղիկ,
որ չի թառամում ամսոս ու ձմեռ
և չի թորշոմում տալիճներ քազում...

Եվ ձեզ ե՛մ ասում,

ձե՛զ, որ չեք տեսել.

— Այդ արարական անապատներում

գիշեր ժամանակ
մինչև հիմա էլ,

կես հարյուրամյակ անցնելուց հետո,
պաղ ֆոսֆորային փայլ է արձակում ավազը մթին.
ուղտի պես ծունկի քերված ու մորթված
մի ամբողջ ազգի փտող ոսկորի՛ ֆոսֆորափայլը:
Փտող ոսկորի ֆոսֆորափա՛յլը,
որ չի կուրացնում մի՛միայն նրանց,
որոնց աչքերի ցանցաթաղանթը
ջնարակված է նո՛ւյն այդ ֆոսֆորով.
և այսպիսին են գայլի աչքերը,
իսկ մեծատառված-խորհրդանշված Գորշինն՝ առավել...

— Բեկանեմ շանթե՛ր

իմ աչքերի՛ մեջ՝

անապատային ֆոսֆորափայլից կիսակուրացող

իմ գո՛յգ աչքերի:

Եվ գո՛ց աչքերով ես ասում եմ ձեզ.

— Եթե Փոքր ու Մեծ Մասնաները դուք զանգ չեք համարում,
անթ համարեցեք քրածոյացած-փիթխարի սապատ՝
ա՛յն, ինչ որ մնաց Ուխտավոր Ուղտից...

— Բեկանեմ շանթե՛ր՝

ձյան փոթորիկով ինքն իրեն ծեծող,
ինքն իրեն կոծող
իմ գլխի՛ վրա...

Եվ հիմա արդեն՝ գլուխս բռնած՝ ես ձե՛զ չեմ ասում,
ես ի՛նձ եմ հարցնում՝ գլուխըս բռնած.
— Այս ի՛նչ անհիծյալ հունդից ծիլ առավ
և արմատ ու բուն ձգեց աշխարհում

այս տոհմածառը՝

իմը և ձերը,

որ ցգվեց իբրև կանաչ-կենդանի մի ուղեփակոց
չորս չար խորշակի քառուղում բանուկ.
և մեզ ամենքիս դարեր ստիպեց
և ստիպում է ասել վերստին.
«Կորիցէ՛ օրըն յորում ես ծնայ»...

Թողե՛ք ես լռեմ

և թող անլեզու քարերը խոսեն քարեղեն լեզվով.

— Այս ազգը որի՛ց և ինչո՞վ է վատ,—
պատասխան տվե՛ք, քարե՛րն են հարցնում,—
այս ազգը ումի՛ց և ինչո՞վ է վատ,
որ դատապարտվեց ա՛յսչափ վատության,—
պատասխան տվե՛ք, քարե՛րն են հարցնում:
Եվ ո՞վ, և ինչու՞ սրանց «հայ» կոչեց,
որ հանգավորի միմիայն «վայ»-ով:
Եվ ինչպե՛ս, և ե՛րբ, ի՛նչ ուժով արդյոք
(թեկուզ և՛ ինչպես ատոմն ատոմից,
թեկուզ և՛ ահեղ պայթյունի՛ գնով
ու կործանումի սպասմա՛մբ թեկուզ)
իրարից «հայը» ու «վայը» պոկե՛լ,
ինչպես ես հիմա շանթեր եմ պոկում
և խշրտոքով բեկանում-բեկում
իմ խավարադեմ-կուպրածեփ հոգում,
որ գահավիժված հրեշտակներն են մորմոքում անխոս

մեռած հավատի

և մարած հույսի դիակի՛ վրա՝

միակի՛ վրա...

Ա՛յս, եթե հիմա կարողանայի և ձայնըս պոկել
իմ իսկ կոկորդից,

ինչպես զանգերի լեզվակներն էին Տարոնում պոկում
և լեզվակի տեղ կախ տալիս շներ,
որ ժամերգության փոխարեն սրանք,
իրենց ոռնոցով ու վնգստոցով,
ծաղրեն Հիսուսին և Հորը նրա՝

Տիրոջն Անտերաց.

«Ծունք բազումք եղեն զինե:

Արի՛, Տէ՛ր, ես փրկեա՛ դու զիս»...

Ա՛յս, եթե հիմա կարողանայի ես ձայնըս պոկել
կոկորդից իմ խեղճ

և օգտագործել իբրև խարազան՝
չգիտեմ, թե ո՛ւմ մեջքին կամ դեմքին,
միայն թե մեզնից նա բա՛րձրը ոռնար
և իր ոռնոցով մի պահ լռեցներ

մեր ցա՛վը,

ցա՛վը՝

մեր անլռելի՛ն...

Բայց ո՛չ, թողե՛ք ես իմ ճիշը խեղդեմ,

ինչպես որ մայրն էր խեղդում մանուկին,
որ կուրանալիք աչքերով իր գոյգ
չտեսներ նրա

կոկոն գլխիկի քարազանումը խուժանի ձեռքով...

Չէ՛, թողե՛ք հեծնեմ իմ տատապանքին,
ինչպես հեքիաթի ա՛յն խոյին ծանոթ,
որի գույնն է լոկ որոշում, թե մենք ու՛ր պիտի ընկնենք՝
Լո՛ւյս, թե՛ Մոյթ աշխարհ:

Եվ հաջողություն կոչվածը մարդու
կամ բախտ ասվածը մի ամբողջ ազգի

կախված չէ՛ արդյոք

այդ խոյի գույնի՛ց, գույնի՛ց միմիայն՝

սև կամ ճերմակից:

Ու եթե միայն գույնից է կախված ամեն բան կյանքում՝

թողե՞ք, որ ես այդ գույները ջնջե՛մ,

ո՛չ թե սպունգով,
այլ իմ երեսո՞ւմ,

որ և իմը չէ, այլ մարդկությանը:
Եվ մարդկությունն էլ թող որ մումիանա
ձառագայթային ախտի այս դարում

ու մնա այդպես՝

մի երեսը սև, երկրորդը ճերմակ...

Եվ թողե՛ք նաև...

Օ ո՛չ, մի՛ թողեք,

որ վերստին գան ու հասնեն օրեր՝

ա՛յն օրերի պես,

երբ կես մի երկիր, կանացի ձայնով,
իր սրտակեղեք «երանի»-ն գոռաց՝

ի լուր աշխարհի,

պատմությանն ի հուշ.

— «Երանի՛՜ ամլոց և որովայնի, որք ոչ ինչ ծնան»...

Իսկ երկրորդ կեսը միևնույն երկրի,
այս անգամ արդեն այրերի ձայնով,

անգորությունից կիսացնորում,
ի տես լրբենի ապիրատության՝

լեռների քունքին իր ճիշտ մեխեց.

— «Լերի՛՛նք, անկերո՛ւք դուք ի վերայ մեր»...

Եվ բլուրների կողերից կախեց

իր աղերսանքը տղամարդկային.

— ...«Ծածկեցե՛ք զմեզ»...

Բայց նրանց վրա լեռները չընկան
և չծածկեցին բլուրներն անսիրտ:

Ո՛չ.

վրա ընկավ, ամենից առաջ, օրե՛նքն անօրեն:

Խլված էր և՛ զենք,

և՛ դանակ, և՛ ձեռք,

մինչև անգամ ձե՛ռք, բոո՛ւնք ու կոո՛ւփ.

կապկպված էին թե՛ ու ձե՛ռք անգամ:

Մնում էր... ատամ

ու

մնում էր... ոտք.

ցլամարդկանց ամորձիքների՛ն հասցեագրված,
և ատամ՛մ՝

ստո՛ւյգ հասցեագրված

մարդ-գազանների փրչոտ կոկորդի՛ն...

Բայց խլվում էին ա՛յդ զենքերն անգամ,
ատամներն էին քարերով ջարդում
ու ոտքերն էին մարմնից անջատում
ինչո՞ւմ որ կուզեք, ինչո՞ւմ կամենաք.

թրով ու քարով,

սրով, տապարով,

սրոցով քահի,

մանգաղ-գերանդով,

և կամ պարզապես հողալուծությամբ,
և այս ամենը

ո՛չ միայն հանգի՛ստ-անվրդո՞ւմ-անդո՞ղ,

և ո՛չ էլ միայն մոլի եռանդով,

այլև մի տեսակ արբշիո ցնծությա՛մբ...

Գնդակն ափսոս էր.

մեկ գլխի համար

մեկ գնդակն արժեր երկու հատ ոսկի,
որ հանգիստ մեռնել ցանկացողն ինքը պիտի վճարեր,
բայց, դժբախտաբար, չկա՛ր... խլված էր...

Գնդակն ափսոս էր,

իսկ ձեռքն էլ՝ հոգնած.

քթացել էր մահ-մանգաղ-կացին,

և ուժաբազակի դաստակ ու բազուկ...

Հոգնած չէր ջուրը,

բայց նա՛ էլ հոգնեց.

իրենց մեջ առած բյուր դիակներից
հունավոր գետերն ասիերից ելել-մոլորվել էին.
խորունկ ջրհորներն իրենց վզերը հանել էին դուրս,
առաջի՛ն անգամ իրենց կյանքի մեջ՝ հանել էին դուրս,
և օդից հարքած ու լուսից գինով՝
ուշաթափ փովել-մոլորվել էին

դիակների պես,
դիակների հետ...

Դո՛ւք վկա չեղաք, ե՛ս եղա վկա,
թե ինչպես դարձավ այս լեռնակղզին

թատրոնից բացի
նաև մի կրկես,

որ՝ կրակի հետ մրցության մտած՝
և ջուրը խաղաց բազմաթիվ դերեր:

Ջո՛ւրը, նո՛ւյն ջուրը՝

ապակահիշ էր և լվացարար՝ միաժամանակ,
կործանարար էր, բայց նաև փրկիչ՝ միաժամանակ,
գոհասեղան էր, բայց և վաշխառու՝ միաժամանակ.
մի բաժակ ջուրը՝ Եփրատի ասիին,

Տիգրիս գետի մոտ,
Բյուրակնի վրա,

մի բաժակ ջուրը մեկ ոսկի արժեք,
որ չկա՛ր, ավա՛ղ, խլված էր վաղուց...

Ախ, ջո՛ւրը, ջո՛ւրը...

Վայրենիների վայրենի վարքով
մարդընտելացավ ջուրը վայրենի.
մրցակցում էին իրենց շատությանը
թոչունների չուն՝ խանձված երկնքով,
դիակների չուն՝ ջրերի վրա,
և ձկների չուն՝ նույն ջրերի մեջ:

Ն ո վ ր ու զ ք ա յ Ր ա մ էր ձկների համար,
մի ն ո վ ր ու զ ք ա յ Ր ա մ,

որ հարատևեց ամբողջ յո՛թ ամիս,
խսկ հետո նաև՝ ամբողջ յոթ տարի՛.

— Եյո՛ւքըր ալլահա...

Ամբողջ յո՛թ տարի ջուրը տառապեց

չար աչքացավով՝
արնակոխությամբ:

Եվ մեքքայական Ջեմ-Ջեմ աղբյուրից
ոչ պակաս պաշտված ու սուրբ աղբյուրներ
նույն աչքացավից հավե՛տ կուրացան.

— Ո՛ւր ես, կույրերին բժշկող Հիսուս...

Ջուրն էին նետում մայրերը մանկանց,

ու նետվում իրենք
ու նետվում այնպե՛ս,

ինչպես նետվում են գիրկը սիրածի...

Անպատվությունից փրկվելու հույսով
ջրացույներից ջուրը նախընտրած բյուրավոր կանանց,
դեռ կնիքավոր-չմատնահպված բազում կույսերի,

դեռ մեղրամիսի

ծանձաղ հատակը չհասած անծին հարսների վրա
կարմիր ծին-խալ էր հապշտապ դաջում
ջրացույների գնդակը կուրաչ՝
գեղեցկացնելով վախճանը նրանց,
այլանդակելով ջուրը գեղեցիկ...

Օ՛, տառապանքը բյուրհազար կանանց և աղջիկների,
ա՛յն տառապանքը,

Որ իր ծանրությամբ պիտի՛ որ ազդեր
ապուշի նման անվերջ թափալվող
այս հողագնդի պտույտի վրա...

Օրացույցն էլի՛

ձեռնածու կնոջ հայտնի նազանքով
շարունակում էր իր հագուստները կուսերից նետել,—
ամեն օր՝ մի շոր,—

և մինչև հասներ իր կրկեսային ծանոթ վիճակին՝
մինչև մերկանար,

պիտի անցնեին շուրջ 365 օրեր,
այնինչ բյուրհազար քույրերին նրա,
կիսացնորված-խելազարվելիք նրա քույրերին,
նույն այդ վիճակին հասցընում էինք երեք վայրկյանում.
բազմությամբ առաջ, մահվան երթի մեջ,
յճեպում էին ու կլպում նրանց՝
հասած ու դեռ խակ ընկույզների պես,
և կլպողների ձեռքերը բնավ չէին սևանում.
կեղտից ու մրից, լերդ-լերդ արյունից
ընդմիջտ սևացածն ինչպե՛ս սևանար մեկ ուրիշ սևով...

Արևի երես երբեք չտեսած
և նշխարի պես սպիտակ ու սուրբ
նրանց մերկացած մարմնի վրա
իրենց արևատ ու հողմնահարված գլուխը կարծես
ոչ թե սեփական,

այլ փոխառնըված՝ գլուխ էր թվում,
մի գլուխ օտա՛ր,
ասես դնովի՛...

Եվ հարսներ բազում՝ արդար կաթնակեր,
միշտ մեծահարգո ու դեռ շխտական,
մոռացած ախանդ ու սովորություն՝
առաջին անգամ ձայն արձակեցին,
ճչացին հանկարծ՝ առաջի՛ն անգամ,
մերկ թևերն իրենց հագուստ դարձնելով
իրենց մերկանդամ ազդրերի համար
և ազդրերն իրենց՝ մերկ որովայնի...
ճչացին հանկարծ՝ առաջի՛ն անգամ,
իրենց կեսուրի փեշից կախվելով,
իրենց կեսարայրի ոտքը պագնելով...
Ձայն արձակեցին-ճչացին հանկարծ

առաջի՛ն անգամ՝
ու վերջի՛ն անգամ՝

իրենց նետելով քարափի քթից,
անդունդի շրթից,
ծայրի եղջրրից,

իրենց հանձնելով փրկարար ջրին՝
եթե կար քարափ, անդունդ, ծայր ու ջուր...

Իսկ եթե չկա՛ր...

Ջուր էր արևը նետում նիզակներ
մարդացույների թիկունքի վրա.
նրանք արևից չէին ամաչում,
և ոչ էլ իրենց ատյանից աստծո...
Եվ իզուր էին երկնքից թափվում աստղ-աստղներ,
ինչպես որ Կեանս պտղաբեր ծառից խնձորներ հասած.
Եվան այլևս ուտել չէր կարող,
քանզի նա հիմա... բռնաբարվում էր օձից մարդակերպ,
բռնաբարվում էր՝ բազմության առաջ,
իր զավակների սահմոկած-սառու՛ծ
հայացքի ներքո...

Եվ ո՛վ ձեզ կասի՝
ի՞նչն էր առավել.

գարշա՛նքը նրանց, թե՛ սահմոկումը:

Եվ ո՛վ ձեզ կասի՝
ի՞նչն էր առավել.

նրանց տանջա՛նքը, թե՛ վրեժն անլուր...

Նետերով լեցուն կապարճներ դարձան
նրանց ափերը,

նրին-մոմաբույր մատները նրանց
նիզակներ դարձան,

նրանց հինայված եղունգները՝ տեգ:
Կուլեցին նրանք՝ կատվի պես վայրի,
մայր վագրի նման,
սոյուծի պես էգ:

Կուլեցին նրանք ատամով, թուքով,
կուլեցին նրանք մարմնով ու հոգով
և, աստված՝ գիտի, հաղթեցին՝ նրանք

իրենց հնօրյա անարգ թշնամուն՝
ոչ միայն իբրև նորօրյա Հուրիք...
Թեպետ կապկպված ու գերի տարված,
թեպետ կեղեքված ու բռնաբարված,

փերթվելով թեպետ,
թեպետ ջարդվելով,
թեպետ պարտվելով՝
հաղթեցի՞նք նրանք:

Հաղթեցին նրանք՝ թողնելով մի հարց,
որ ես եմ հիմա տալիս աշխարհին.

— Որտեղի՞ց արդյոք, թուրքին հարց տվեք,
որտեղի՞ց այսքան վայրագ մոլություն:
Մարդկության համար չհայտնագործված այդ ի՞նչ ակունքներ,
բոլորին անհայտ այդ ի՞նչ ջրհորներ ունի տակավին
հաճույք ասվածը նրանց ընդերքում՝
հոգի հորջորջված իրենց որջերում գազանաբնակ:
Եվ ո՞վ կարող է, իրենցից բացի, հասկանալ մի կերպ
հեշտին հաճույքը, վսեմ վայելքը այն վեհ վայրկյանի,
երբ Մարիամ-Մարի-Սրբուհի կոչվող
տակավին մանուկ աղջնակներին
կեղեքում էին՝ բոլորի առաջ,
կեղեքում էին՝ ամբողջ ոհմակով,
կեղեքում էին՝ տաճարների մեջ, սուրբ խորաններում,
և մինչև անգամ մեկ ա՛յլ Մարիամի՝
միա՛կ Մարիամի սրբանկարի կտավի վրա...
— Եվ դո՛ւ, Կո՛ւյս Մարիամ, չմիջնորդեցիր,

որ Որդիդ գոռա.

— Բեկանեմ շանթե՛ր...

Եվ ո՞վ կարող է, բացի իրենցից, մի կերպ հասկանալ
այն վեհ վայրկյանի վայելքը վսեմ, հաճույքը հեշտին,
երբ կախում էին այսպես կեղեքված-տանջահար կանանց,

կախում... ոտքերի՞ց,

գլխիվա՛յր կախում,

և այնպե՛ս կախում,

որ մայրակառկառ ձեռքերը մանկանց մորը չհասնեն
և հողախախտվող բազուկները մոր չհասնեն մանկանց...

Եվ դու, Տիրամա՛յր, լուցի՛ր կրկին
նրանց շարշարանք-հարանքի հանդես,

ու Որդիդ չասաց.

— Բեկանեմ շանթե՛ր...

Եվ այսպես՝

բոլոր իսկուհի կանայք
մեռան Գորշ Գայլի որջերում մթին,
մարմնապե՛ս մեռան, մեռան հոգեպե՛ս:
Տիկնայք փափկասուն, գգրալ ու գգվյալ,
խորդենու նման տնաբույս կույսեր
նահատակվեցին անապատներում
և՛ արմատախիլ, և՛ քնակոտոր,
փլատակվեցին քարափներն ի վար,

ու թե փրկվեցին՝
խեղվեցի՞նք հավետ,

խեղվեցին և՛ մամ, և՛ աղջիկ, և՛ թոռ.
կանացի մի ո՞ղջ մահապուրծ աշխարհ
դարձավ խեղանդամ և անդամալուծ...

Եվ դու, Տիրամա՛յր, դու չեղար միջնորդ,
որ Որդիդ ասեր.

— Տալի՞թա, կոմի՛ր...

Փոքրի՛կ, շա՛տ փոքրիկ գութն էլ է ազդում
մարդկության վրա համայն աշխարհի՝
գազանի մորթուց և՛ս պնդարմատ մի մազ պոկելով.

Այդ գո՛ւթը չկար:

Փոքրի՛կ և նույնիսկ շա՛տ փոքրիկ սիրուց
փոխվում է օդի բարեխառնությունն ամբողջ աշխարհում:

Այդ սե՛րը չկար:

Կար մի հրաման, անխախտ հրաման.
— Բովանդակ մի ազգ իր պետ ու ծետով,
մի ողջ ժողովուրդ ճոաքաղ անել՝
մոռացած ալլահ, փեղամբար ու խիղճ,
խիղճ, որ միհնչևիսկ շունը չի ուտում,
իսկ սրանք նույնիսկ լափեցի՛ն, շտա՛պ,
և թվում է, թե... մարսեցին նաև...

Ճոաքա՛ղ անել և արմատախի՛լ,
բոլո՛ր ձևերով ու միջոցներով...

Եվ սրածումին թիկնապահ դարձավ
անլուր աքսորը,
ու ծարավի հետ սովը դաշնակցեց՝
ամենագորը:

Ու տրոփեցին բզկտված սրտեր՝
մերկ թաթերի մեջ ու կրունկների,
սրանց բարախուն ցափին համաչափ:
Տրոփեց նաև մի կտոր տաք կամք՝
նույն կրունկների ու թաթերի մեջ,
սրանց բարախուն ցափին համաչափ...
Ամենուր փոված անթաղ դիերից հողն էր որդնոտել՝
Հոբ երանելու խեղճ մարմնի նման,
իսկ սրանց ոտքերն՝ ավելի՛ կըս...
Կարևեր ոտքից թունոտ փուշ կամ մեխ ձգել-հանելը

արգելված էր իմաստ,
արգելված այնպե՛ս,

իհնչպես փեղամբար Ալիին Վալի վերանվանելը:
Իսկ եթե նույնիսկ իրավունք լիներ՝

փաթաթա՛ն չկար,
լաթի մի կտոր՝

նրանց վրայի հագուստ կոշվածը արդեն չէր պահում

նույնիսկ կարկատան,

որ խղճի նման մի բան էր դարձել...

Իսկ ազոավների ու ցիների հետ

սրանց ամենուր միշտ շրջապատող
վաչկատուների կանայք գիշատիչ
զարդարված էին սրանցից խլված հագուստ-կապուստով.

փոթ-փոթ զգեստներ

(գարնան ու ամռան ճոխ մանրանկա՛ր),
զառ-վառ գոգնոցներ և ուսանոցներ

(աշո՛ւն պահածո),
ակներ՝ հազվագյո՛ւտ
(կարեկցանքի՛ պես),

նույնքան հազվագյուտ զարդեր ու զուգեր,
որոնց միամիտ շողարձակումը տալիս էր նոր փայլ
իրենց նորահայտ տիրուհիների վայրի հայացքին...

Իսկ հապա նրանց դև տղամարդի՛կ...
Իրենց մարմինը դեռ գազանների մորթիով ծածկող,
տակավին քեչա ու փալաս հագնող այդ նախամարդիկ
դեգերում էին հիմա ամենուր՝

զուգված-զարդարված

արծաթաբանյալ ու ոսկեներկար այն շուրջատներով,
այն էմփորոն-վակաս-լանջանոց-խույրով շողշողուն,

որ պոկել էին

իրենց սպանած

քամանա-երեց-եպիսկոպոսաց անթաղ դիերից...

Ո՛վ պիտի ասի սրանց անեղի երեմիականը:

Կրակի տալով սրանց ալեզարդ բեղ ու մորուքը՝
տաքացնում էին սառնասրտորեն
իրենց խոշտանգիչ պես-պես զենքերը,
որ արեզակի կենտ աչքի առաջ
կտցելով հանեն նրանց աչքը զույգ,
որ գամեր մեխեն նրանց բունքի մեջ,
չիկացած մեխեր գամեն կրծքերին,
մեջք ու միջակը սղոցո՛վ հատեն՝
իրենցից պաշտված Եսայու նման...

Ո՛վ պիտի գոչի նրանց ահարկու էսայիականը:

Իսկ ով տակավին հետն էր իր հոտի,
ովքեր տակավին չէին սրբացել,
հոտի հետ մեկտեղ ու հոտի նման

գլխաքաց ու մերկ
քայլ էին փոխում

և արնադրոշմ իրենց ոտքերով քարշ էին տալիս
իրենց մարմինը՝ թիապարտի՝ պես,
կաշվի մեջ միայն ոսկոր պարփակող,
փետրի պես թեթև իրենց մարմինը,

որ ծանրացել էր

տիղմի մեջ խրված մեծ նավի՝ նման...

Ո՛վ պիտի գոռա նրանց ահարկու եսայիականը...

Եվ խոտաճարակ ու քրձահանդերձ այդ հոտի տեսքից
զարհուրում էին

ու կաղկանձելով փախս էին տալիս նույնիսկ շները:
Իսկ երբ պատկերու իրավունք էին հանկարծ ստանում՝
մարդընտելացած թռչուններն էին հարձակվում

նրանց խմբերի վրա՝

նրանց դնելով ծանոթ դիերի ու լեշերի տեղ

ու թույլ չտալով, որ հանգչեն մի քիչ,

մի փոքրը քնեն:

Իսկ ինչու՞ քնել,

եթե թռչնային նրանց քունն անգամ
լեցուն էր ահով ու զարհուրանքով:

Նրանց երազում

գիշերը միայն վհուկ չէր կարծես,

այլ նաև կավատ,

որ ծախում կույսեր

ու կուտակում էր անտաակություն...

Իսկ ինչպե՞ս քնել, իսկ ինչպե՞ս քնել,
եթե սատանան, քաղցի տեսք առած,
բնակավայր է դարձրել ներսը՝

խեղճ աղիքներդ,

որ գալարվում են՝

բռնաբարումից խույս տալ ջանացող

հեզ աղջիկների

մերկ մարմինների վտառի նման...

Եվ մի ժողովու՛րդ,

որ հացն էր պաշտում՝ նշխարի տեսքով,
մեռնում էր ահա առա՛նց նշխարի...

Եվ մի ժողովու՛րդ, որ իր գոյությամբ
հանապազօրյա հաց էր քիչտ եղել

մի հսկայական կայսրության՝ համար,

մի ո՛ղջ ժողովուրդ մեռնում էր հիմա

հանապազօրյա հացի՝ կարոտով...

Մարդն էր հաց ուտում,

իսկ հիմա արդեն... հացն էր մարդ ուտում...

Ես՝ քրքր ալլահա:

Եվ այսպես՝

անհաց-անշուր-անհագուտ,

հաճախ անհավատ,

քայց և անվհատ՝

նրանց կարել էր քայլն էր տրոփում

անծանոթ-անհայտ ճանապարհների անհատության մեջ,

անապատային հորիզոնների խուսափուկության,

ակամա տեճչված հանգրվանների անհայտության մեջ

և ինքնահողով-ինքնակրկընող հուսաբեկության:

Եվ քայլում էին...

Ետ նայող չկա՛ր:

Ետ նայողն իսկույն մեխվում էր տեղում՝

թշնամու թրով

կամ սրով սովի:

Եվ մահացածի վաղուց ցամաքած կուրծքը ծծելով՝

բյուրավոր մանկունք դուռն էին ծեծում

ա՛յն Քավարանի՝ ա՛յն Ալ Արաֆի,

որ ասես լիներ զնդան թուրքական.
ասեղ զգելու տեղ անգամ չկար...

Իսկ ով չէր մեռնում այսբանից հետո,
ով համառում էր տակալին ապրել՝
մի բարեխնամ ձեռքով հավաքվում,
տարվում էր մոտիկ որբանոց մի տաք,
ուր սովալըլուկ-կիսամեռ որբին
ճաշ էին տալիս, սուլթանավայել,
մի ճաշ, որ ուներ լոկ մի թերություն՝
աղն էր քիչ պակաս
և շատ էր... թույնը...

Փոքրի՛կ, և նույնիսկ շա՛տ փոքրիկ սիրուց
փոխվում է օդի բարեխառնությունն ամբողջ աշխարհում:
Այդ սե՛րը չկար:

Փոքրիկ, շա՛տ փոքրիկ գույն էլ է ազդում
մարդկության վրա համայն աշխարհի,
Այդ գո՛ւյթը չկար:

Կար մի չգրված-բնագրով տրված հրաման անգույթ.
Եթե կանգ առնել, ապա կանգ առնել
հարևանությամբ հացի փոերի,
որ յուրաքանչյուր բջիջըդ ոռնա,
և ամեն ջիղըդ ապստամբ դառնա,
և ամեն մազըդ քեզ ցնցի հուժկու...

Եթե կանգ առնել, ապա կանգ առնել
գետերի ափին, աղբյուրների մոտ,
և ոչ մի դեպքում... մի կում չխմել,
որ հրատոչոր քո լեզուն դառնա
կախվածի բերնից դուրս ընկած լեզու,
և քո պտղտվող աչքերն էլ դառնան
արևածաղկի նման ջրծաղիկ...

Իսկ եթե քնել՝ ապա լոկ քնել

դափ-դատարկ ու տաք իջևանատան,
զորանոցի մոտ դափ-դատարկ ու տաք,

բայց ոչ նրանց մեջ,
այլ երկնքի տակ՝
արյունով թրջված,
թարախով թացված

քարին ու փշին ընկողմանելով
և վերհիշելով կեղեքիչ տեսքը անկողիների՝

քրոջ պես մաքուր,
սիրած կրծքի պես ճերմակ ու փափուկ
ու երեխայի ափի պես տաքուկ
այն ավանդական անկողիների,
որ սրանց առջև փակ էին արդեն՝
դարպասի նման Օտոման բանկի,

ա՛յն ծանոթ բանկի,
փորձանո՞թ բանկի,

որ դանայական տակառի նման
կլլելով սրանց՝

բյուր մեռնողների ու բյուր մեռելոց
արյուն-քրտինքը,
միլիոն միլիարդը,

չէր թողել նույնիսկ մեկ ուրիշ տակառ՝
Դիոգենեսի՝ տակառը ծանոթ,
որի մեջ սրանք ապրեին գոնե
և հիմա այսպես չմրմնջային.

«Աղուեսանց գոն որքք,
թոչնոց երկնից՝ բոյնք,
այլ որդույ մարդոյ

ն՛չ գոյ ուր դիցե զգլուխ իւր իսկ»...

Դիոգենեսի տակառից էլ զուրկ՝
յուրաքանչյուրը այս խլյակներից
Դիոգենես էր մի յուրատեսակ.
մահվամբ ճառագող աչքերով երկու,

իբրև ճրագով,
օրը ցերեկով

մարդ էին փնտրում, սակայն... մա՛րդ չկար:

Մարդը կորել էր,

ինչպես որ հանկարծ կորչում է ջուրը՝
անապատներում կամ լեռնածերպում:
Եվ նա կորել էր ո՛չ այստեղ միայն՝
այս Գորշ Գայլ սրաշտող միլիոնների մեջ,

այլև ամենուր.

աշխարհում ամբողջ

մարդն զբաղված էր մարդասպանությամբ,
իսկ սրանք՝ նաև... ազգասպանությամբ՝
աչքերի առջև բոլո՛ր ազգերի,
և մե՛ծ ազգերի, հաղթո՞ղ ազգերի,
այս լեռնակողմ ազգովին խաչվող
բնակիչներից բարեկամ կոչվող
ազգերի սառած աչքերի առաջ:

Ա՛խ այս գերազնիվ-գերքաղաքակիրթ բարեկամները,
որոնց սուտ ու փուտ բարեխոսություն-բարեբանումը

դարձավ այն պագը,

որ անմահացրեց հայտնի Հուդային,
իսկ հանրահայտնի մի ազգ... մահացրեց՝
հոգեվարքի մեջ նո՛ր հասկացնելով,
թե ով աշխարհիս այս ջոջերին է հավատ ընծայում
միամտաբար և ասպետորեն՝ Դոն-Կիխոտի՛ պես,
նա վերջ ի վերջո մենախոսում է... Համլետի՛ նման՝
չկարենալով խլացնել մեկ այլ մենախոսություն.
«Հայոց հարց չկա, քանզի... հայ չկա»...

Սակայն հայ դեռ կա՛ր,

և հայե՛ր կային:

Կար արտոյալի մի քայք երերուն,
կար սովազարի աչք անմարդկային,

և անապատ կար՝

տա՛ք,

իրև ասպտակ:

Կար սողք ու թռիչք համաճարակի,
բայց և կար կամքի մի կենտ արագի,
որ փլատակվող երկինքների տակ
ու մշտաբորբոք անշեջ կրակի
շեկ շեղջի վրա կանգնած էր արդեն

ո՛չ թե մեկ ոտքով,
այլ երկու՛ ոտքով...

Կար եռամատնյա մի խաչակնքում
և եռամասնյա մի մեծ նպատակ,
որ պիտի սրանք դեռ կատարեին:

Նախ՝

կատարեցին միակ կարեղին.

թրի-սրի դեմ,

հրի դեմ, ջրի,

հրանոթի դեմ ու գնդացրի,
երեկվա նման ու վաղվա նման
մարտնչում էին ակոս-ատամով,

կովում կրունկով,
թաթով ու ծունկով՝

Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա,
Գարահիսարի կիսավեր քերդում...
...անխուսափ մահվան կարմիր սգերթում,—
անհայտ-անվանի սրբազա՛ն խե՛ղթեր,
որ մահվան շնչից չտատանվեցին՝
և... դրոշակո՛վ չպատանվեցին,
այլ լոկ հեռվահաս ու բազմադարյան
իրենց ծփացող ծիրանի արյամբ...

Եվ կատարեցին կիսակարեղին.

անի՛-մահի դեմ,

հովի-սովի դեմ,

արնահոսի դեմ

ու բարբարոսի՝

ջուրն էին նետում իրենք թե՛ իրենց,
թե՛ իրենց որդոց,

թույն տալիս իրենց սիրասուն կանանց

և աղջիկներին,

սպանում մորը,

սպանում հորը

և... խելագարվո՞ւմ,

և... խելագարվո՞ւմ,—

արդեն կրկնակի՝ սրբազան խենթեր,
որ զորեղ էին, ո՛չ ամենազո՞ր՝
այլևս անհաղթ ու անպարտելի,
այլևս հաղթած ոսոխին, աստծուն...

Կատարում էին և... անկարելին.
այսքանից հետո չէի՞ն մահանում՝
պահվելով իրենց հարազատների դիակների տակ,
ապաստանելով ոչ երկոտանի, այլ չորքոտանի
զազանի որջում,

ապաստանելով այն միակ աստծուն,
որ դեռ չէր ժխտված

և որ կոչվում էր ինչպես Պատահմունք,
այնպես էլ Դիպված...

Ապաստանելով, վերջապես, նաև... կանանց տարազին:

Եվ առյուծաձև-արջակոխ լաճեր.

ճետեր արծվաձագ

ու մանչեր կորյուն,

որ ծնվել էին կարծես գլխարկով,
հիմա՝ զինագուրկ և ունայնաձեռ,
հիմա՝ նշանված կնիքով մահվան,

այլևս ուժաթափ,

նաև ուշաթափ՝

լաչալ կապեցին իրենց գլխերին
և խառնվեցին թափորին կանանց,
որպեսզի գուցե հաջողեն փրկվել:

Կարծես գլխարկո՞վ ծնված մայրերից՝
լաչակը հիմա այս խակ այրերի

գլուխն էր այրում առավել գուցե,
քան թե շիկացած թասն այն պղնձե,
որ դրվեց գլխին իրենց հայրերի՝
լաչակի տակից փայլակ արձակող աչքի դեմ իրենց:

Եվ շրջագգեստը կպչում էր նրանց՝
թերևս ավելի խենեշ ձևերով,
քան առևանգիչ վաշկատուների բազուկները պիղծ
իրենց մայրերի կողին սուրբխորան
և քույրիկների երկզմբեթ վանքին:

Եվ այս ամենը՝

լաչակի տակից շանթեր արձակող իրենց աչքի դեմ...

Եվ ճողոպրեց, փրկվեց մազապործ՝
ո՛չ մի ակնթարթ նա չմոռացավ
ու երբևիցե չի՞ մոռանալու
իր կրած անլուր անպատվությունը
և անպատմելի ողջ պատմությունը
յուրյանոց՝ ու յուր...

Եվ ասում էմ ձեզ՝

մարգարեի պես.

— Օ՛, կնատարազ այրերի ռիսի՛ց վախեցեք կյանքում
և սարսափեցեք նրանց վրեժի՛ց անբեկանելի:
Եվ ո՛ր էլ լինեն այդ կնատարազ այրերի որդիք,
ինչքա՞ն էլ լինեն իրարից բաժան, իրար անճանաչ՝
նրանց հաշվեցեք հատու՛կ զորագունդ,
և նրանց շնչից դեռ օդը պիտի լցվի սարսուռով,
ու հողն ունենա երկրաշարժային գլխապտույտներ...
Օ՛, կնատարազ այրերի քենի՛ց դողացեք անվերջ
և սահմոկեցեք վրեժի՛ց նրանց,
որ սրբազան է այն շարժումի պես,
ինչ երդում տվող աջն է կատարում
կրծքի ձախ կողմին՝ սրտին դրվելիս...

— Ուխտող ուխտակա՞ն, ո՛վ սրբազան խենթ,

Ուխտող ուխտակա՞ն...

Եվ դո՛ւ չես ասում, ո՛չ էլ դուք,
այլ ե՛ս,
Ես՝ Միս-Մասիսըս,
այդ ես եմ ասում

անդո՛ւյ-անդադա՛ր-անվե՛րջ զնգացող իմ անքուն զանգով,
Գողթան երգերի չափով մարտական,
բամբ բամբիռների հնչումով հատու
Միսն ու Մասիսն են դողանցում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւյ.

ով ականջ ունի,
հավատո բլթակ՝
նա լսում է միշտ,

լսում է նրանց հանգերգը թնդում,
որ թարգմանվում է դարձյալ գույգ բառով.

Կ Ո Չ Ե Մ Ա Պ Ր Ո Ղ Ա Յ

Հեռագրական մեքենաները
իրենց երկաթե սուր ժանիքներով
անվերջ կծոտում ու խածոտում են
թղթե բարախիկ ժապավենները,
որ խուսափելով այդ խածոտումից՝
տարածվում են շուտ ու գոտևորում համայն աշխարհը՝
«Վերջին լուրեր»-ով.

- Ինչ-որ փլուզված հանքում մեռել են
մի քանի հոգի...
- Ինչ-որ տեղ մեկին աքսոր են քշել
կամ սպանել են...
- Ինչ-որ տեղ ինչ-որ մի հանցապարտի
չեն մահապարտում...

Եվ անմիջապես գոռում-ճչում են
Աշխարհիս բոլոր օրաթերթերը՝
տազնապից-ցավից-ցասումից չոված մեծ-մեծ տառերով,
և ձայնասիյուտի կետ-կայաններից
հաղորդավարներն իրենց թավ-թավշյա թունավոր ձայնով
ողթերգականի շեշտերն են շարում

ամեն մի բառի ու տառի վրա.
շարժանկարի սարքերն են իսկույն չիկում ու վիկում.
և ամենուրեք ժողովներ (ճառե՛ր) ու ցույցեր (բողո՛ք),
թաքուն-բացահայտ սպառնալիքներ
(կառավարական հուշագրերի՛ բառերով շխկուն)...

Սակայն, դեռ երե՛կ, մի հա՛նք չէր փլվում,
այլ մի բովանդակ երկի՛նք անողոք,
և փլվում ո՛չ մեկ, ո՛չ էլ տասնըմեկ,
այլ միլիո՛ն ու մեկ թշվառի գլխին
և փլվում-փո՛վում աշտարակի պես բաբելոնական.
մարդիկ այնուհետ մոռացան իրենց մայրենի լեզուն՝
մարդկայներե՛նը...

Եվ երեկ ո՛չ մեկ, ո՛չ էլ տասնըմեկ,
այլ միլիո՛ն ու մեկ մարդ էր հոնդում
մի համատարած-բացօթյա բանտում...
Եվ սովամահ էր լինում, բոնությունամբ,
բարից հաց քամող մի ամբողջ երկիր...
Աքսոր էր քշվում բովանդա՛կ մի ազգ
ու տաշվում-մաշվում բովանդա՛կ մի ցեղ...
Եվ այն ժամանակ, երե՛կ տակավին,
ու՛ր էր աշխարհը և ի՛նչ էր անում,
ու՛ր էր ականջը հանուր մարդկության,
որ չանասց, օ ո՛չ, չուզեցա՛վ լսել
մի ամբողջ ազգի կանչը կաղկանձում.
— Կոչեմ ապրողա՛ց...

Եվ այն ժամանակ, երե՛կ տակավին,
ու՛ր էր աշխարհը և ի՛նչ էր անում,
ու՛ր էր օրենքը հանուր մարդկության,
որ հանցապարտին չմահապարտեց...

Նա հանցապարտին չմահապարտեց
Եվ դրանով իսկ բրդեց մի ապուր,

որ 20 տարի անցնելուց հետո
հենց ինքը խոթեց ամբողջ 10 տարի:

Եվ ասում եմ ձեզ՝
ուշացածի պես.

— Մե՛ր, նա՛խ մեր, լու՛կ մեր ապրածը հետո
վերապրեց ինքը աշխարհը համայն՝
երբ Վիլհելմ Հաշին Հիտլերին ծնեց
և Թալեաթը ծնեց Հեքթելսին.

երբ չեթեմ իրեն էսէս անվանեց,
և եմիչերին կոչվեց գեստապո,
չեհիդն ու միլիցի՝ պատերազմ տոտալ,
Նոր կարգ՝ հիքսմեթի (հոքսլումեթը հին,
հագոգ դին ասվածը՝ նորակոչ նացիզմ,

և ցեղը՝ ոսասա,
ժոյն թուրքը՝ ֆաշիստ...

Եվ ասում եմ ձեզ՝
ուշացածի պես,
կրկնում եմ նորից.
որ կրկնեք և դուք.

— Հին Չանգըրըից իր սկիզբն առավ Բուխենվալդը նոր,
Օսվենցիմների սկիզբը դրվեց Դեր-Չորում միայն,
Մայդանեկները Ջիարեթներում հիմնադրվեցին,
Դախաունները՝ Էնկյուրիներում, Ռաքքայում, Բաբում...

Մեր ականջները՝

յուրաքանչյուրը մի զանգակատուն,
լցված են ցայտոթ կաղկանձ-կոռցով,

քրքիջով խենեշ,
լացով ու կոծով,
ճիշով օգնության,
վրեժի գոշով,

որ աաղընտում են թմրկաթաղանթը մեր ականջների:
Ու մեր աչքերի ցանցամաշկը խեղճ
իր մեջ է ցայտոթ վանդակած պահում
ա՛յն պատկերները անպատկերելի,

որ կրկնվելով նորացան էլի
20—25—30 տարի անցնելուց հետո՝

լեհերի հողում,

ոուսական բազում քաղաքների մեջ
ու պատերի տակ Հիրոսիմայի...

Կրտսերը դատվե՛ց

և (ողջ աշխարհն է վերստին գոշում),
դեռ պիտի՝ դատվի այսօր ու վաղը.
սպանությանը վաղեմիության ժամկետ չի կաշում,
ինչպես չի կաշում ներկը կրակին:

Կրտսերը դատվե՛ց

ու դեռ կդատվի՛,

մինչդեռ ավա՛գը... ճանաչվեց անպարտ,
մինչդեռ ավա՛գը... քայլում է հպարտ՝
ալլևըս մաքո՛ւր, օսլայվա՛ծ, կոկի՛կ,
երեսին ժպի՛տ՝ դիմա՛կ չհանվող,
և ձեռքն է մեկնում ու ձեռք է սեղմում:
Ու ես չեմ կարող կամա՛ց չգոչել.
սեղմելուց առաջ դուք ստուգեցեք

նրանց ձեռքե՛րը:

Դուք ստուգեցեք նրանց ձեռքե՛րը

և... հիմա՛՝ նույնիսկ,

կես հարյուրամյա՛կ անցնելուց հետո,
նրանց խնամված եղունգների տակ
դարձյա՛լ կտեսնեք... լերդացած արյո՛ւն...

Մի՛ նայեք նրանց այս կոկոզավիզ-գոռոզ քայլվածքին:
Ինչքան էլ նրանք առաջոք քայլեն քթները տնկած՝
գլխահակ են միշտ նրանք մեր հանդեպ,
ինչպես անպտուղ-փչակված ուռին՝ կենարար ջրի...

Ու եթե նրանք

քայլում են այսպես փքված-բարձրավիզ՝

լոկ ա՛յն պատճառով,

որ խուսափում են մեր հայացքներից գեթ հանդիպելուց...
Մեր ազգանունից՝ այս «յան»-ից միայն,

պիտի՛ որ նրանք սուկան առավել,
քան թե Մակրեթը Դունկանի շուքից...

Այլընդ նրանց կանայք միգուցե

իրենց երեսին չարսավ չեն գցում,

բայց տղամարդկանց երեսն ու դեմքը

պիտի՛ որ ընդմիշտ չարսավված մնա՛

ամոթի՛ անմաշ և անպոկելի տաք սարդոստայնով
և զարհուրանքի՛, և զարհուրանքի՛ ցանցով գունաթափ...

Ու եթե հիմա ե՛ս չասեմ, ապա մեռելներն անթաղ

պիտի հաստատեն իրենց սուր ճիշո՛ւմ,

որ թոչուն-գազան որքան էլ կտցեն-գիշատեն իրենց՝

մեռելներն անթաղ մսակալվում են կրկին ու կրկին

և ամեն գիշեր սուսուփուս մտնում

պաղ մարդասպանի անկողինը տաք՝

պատկելով նրա ու կնոջ միջև...

Որքան էլ դիերն արյունաքամվեն՝

հողն իրենց արյամբ արծնապակելով,

ամեն առավոտ, դարձյա՛լ ու կրկի՛ն,

իրենց արյունը խառնում են նրանք

ու պիտի խառնեն, դարձյա՛լ ու կրկի՛ն,

արյունահեղի և իր լակոտի

ըմպելիք սուրճին կամ օշարակին...

Բյուր մեռելների անխուփ աչքերն են նրանց հետևում՝

ա՛յն արևի պես, որ պոկ չի գալիս

իրեն նայողի հայացքից մթնած:

Եվ բաց մնացած միլիոն աչքերի մեռելափայլը՝

իբրև ածելի՛,

մահվան ահռելի իր երթևեկն է անվերջ կատարում

սրանց ինքնագոհ երեսի վրա, որ օճառվում է

կտրված գլխի արյամբ համակված գիսակ-վրձինով

ու լվացվում է լեղի և աղի արցունքով միայն...

Եվ նախատակված-լկված կույսերի, հարսների, կանանց

էլեկտրահաղորդ անփուտ մազերը, ինքնահյուսվելով,

դարձել-դառնում են ու դառնա՛ն պիտի
փափուկ-մետաքսե մի գիշերանոց՝

նրանց դուստրերի,

նրանց հարսների

ու կանանց համար,—

մի գիշերանոց,

որ իրականում այրող ու վառող զսպաշապիկ է...

Հրաշքով փրկված,

աշխարհեաշխարհ զարկված որբերի ողբը ողորմուկ

և այրիների անեծքը անծոխ,

որ բռնի կլլված զսպանակի պես թոչում անդրադարձ,

բայց չհասնելով ո՛չ սատանային և ո՛չ էլ աստծուն՝

վերադառնում է զսպանակաթափ,—

վերադառնալով բնակվում է նա

այս անգամ արդեն նրա՛նց տներում,

ովքեր հատեցին ջիղը այրության

և այրիության գիրը տպեցին

ճակատի վրա մի ո՛ղջ աշխարհի.

բնակվում այնտեղ՝ ալլահի տեղակ,

վարձք ու օրհնության տեղը գրավում՝

նրանց տներից դուրս վճռելով

եղած ու չեղած ջիներին բարի,

ծղրիդին անգամ,

ճոկիկն նաև...

Կապված ենք, այսպե՛ս, կապված ենք իրար՝

ո՛չ սիամական երկվորյակի պես,

այլ իբրև երկու խեղճ տաժանակի՛ր.

մենք՝ մեր ցավերի ծանրությանը տանջող

ու մեր հատուցման արդար պահանջով,

խսկ նրանք՝ իրենց ամոթով (գուցե՛),

խսկ նրանք իրենց սուկումով (հաստա՛տ):

Կապված ենք, այսպե՛ս, կապված ենք ամուր

ու չե՛նք բաժանվում ու չե՛նք բաժանվի,

մինչև կաթ թափած, ո՛չ, արյո՛ւն թափած

կատուն պատժվի ա՛յն վագրի նման,
որ Պոտըսդամում պատիժն իր կրեց
առափել արդար և ծանր ավելի,
քան Նյուրենբերգի աֆել ատյանում...

Եվ դարերն անգամ չեն տա թողություն
թե՛ բոլոր նրանց, ովքեր զրկեցին,
թե՛ բոլոր նրանց, ովքեր լքեցին:

Սրա՛նք ու նրա՛նք...

Նրա՛նք ու սրա՛նք

աշխարհն այս անմեղ դարձրին մի մոտ
և կրակ տվին... երկու՛ ծայրերից:
Եվ այրվում է նա, դարեր շարունակ,
այրվում-կարճանում երկու՛ ծայրերից...
Իսկ ժողովուրդը՝ ծայրերի մեջտեղ,
երկու կրակի սղվող արանքում,
և քանի՛ անգամ գոչեց սրտողած
ու քանի՛ անգամ դեռ պիտի գոչե.

— Կոչեմ ապրողա՛ց,

ապրողա՛ց կոչեմ...

Եվ մի՛թե, իրո՛ք, անհնարին է աշխարհում լինել
հսկա կայսրություն ու մնալ արդար:

Ժխտեցե՛ք, խնդրեմ, ի սե՛ր աստըծու...

Եվ մի՛թե, իրո՛ք, անկարելի է աշխարհում լինել

ո՛չ նաև ճարպիկ, այլ միայն ճարտա՛ր:

Ժխտեցե՛ք, խնդրեմ, ի սե՛ր աստըծու...

Ժխտո՛ւմ է մեզ պետք, ո՛չ արդարացում,

եթե դրանից դյուրին քան չկա

և արդարանալ կարող է նույնիսկ Գորշ Գայլ պաշտողը,

որ դար ու դարեր ուսուցանում է գայլաճագերին,

— «Արդարանալու մի հնար ճարեք

և... գորգ գողացեք մեջեթից թեկուզ»...

Բայց արժի՛ արդյոք հայելի ծախել կույրերի թաղում:

Ավելի լավ չէ՞ մեռելների մեջ որոնել ողջեր
ու գոչել նրանց ականջների մեջ՝

թե աջ ու թե ձախ.

— Բավակա՛ն է, ա՛խ,

է՛լ բավական է բղավենք «մեր մե՛ջ»:

Եկեք այսուհետ շճջանք «մեր շո՛ւրջ»,

որպեսզի գոնե վաղը հասկանանք,

թե անբռնելի-անհասանելին

միշտ սկսվում է մի՛միայն այնտեղ,

ուր ավարտվում է ամենաերկար մեր միջնամատը...

Ձե՛, բավակա՛ն է շճջանք «մեր մեջ»:

Այսուհետ պիտի բղավենք «մեր շուրջ»,

որպեսզի ընդմիշտ հիշենք, թե ինչպես

մեր երազանքը, դարե՛ր շարունակ,

մենք լեցունի մեջ լցրինք՝ չլցվեց,

մենք դատարկի մեջ լցրինք՝ չմտավ,

և... մեր լեցունը մեզնից դատարկվեց,

և... մեզնով լցվեց դատարկն օտարի...

Մեր... հայրենի՛քը մեզնից դատարկվեց:

Բայց... ո՛չ մի վայրկյան, ո՛չ մի ակնթարթ,

մենք չե՛նք դատարկվել մեր հայրենիքից:

Մե՛նք սպանվեցինք մեր հայրենիքում,

բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՛ց,

ո՛չ, ապրում է նա կրկնակի՛ կյանքով:

Իսկ ով չսպանվեց, փրկվեց պատահամամբ,

նա աքսորված է իր հայրենիքի՛ց...

Սակայն... ճշմարիտ-իրավ աքսորը գալիս է հետո,

երբ որ քեզանից ինքդ ես աքսորվում,

երբ որ քեզանից գատվում է կարծես կյանքդ սեփական,

օտարվում, ապրում անկախ քեզանից,

և ապրում այնտե՛ղ,

ա՛յն բնագավառ-բնաշեններում,

որոնց երեսն է երեսիդ կարոտ,

որոնք արթմնի ու երազի մեջ

երազում են քեզ,
ուրբե՛րդ անգամ...

Վաչկատուններից հալածված այսպես՝
քաղաքակրթված մի վաչկատուն ենք հիմա ինքներս:
Սակայն վաչկատուն-օտարականի
թափառաշրջիկ մեր հայացքն առմիշտ նստակյաց դարձել,
կարոտի մեխով ու երազանքի ցցով գամվել է
իր նախնիների ոտնահետքերում...

Եվ ամենուր են մեր մարմինները,
բայց մեր աչքերը մի՛շտ էլ այնտեղ են՝
նույնիսկ անունի՛ց զրկված այն երկրում,
որ տաճարների բազում խաչերը
տեղագրության դաս էին տալիս
երկնքի անգետ և անգրագետ հավքերին անգամ,
որ մոլորվել են հիմա թերևս՝
հարավ-արևելք,
նյուսիս-արևմուտք խառնելով իրար...

Եվ ամենուր են մեր մարմինները,
բայց մեր աչքերը այնտեղ են,
այնտե՛ղ,
որ ստվերներն են հսկումսի կանգնում
ավերակների դիակի հանդեպ.
որ բույսերն անգամ փոխել են իրենց հիմ ձեռագիրը՝
դառնալով խառնակ-անընթեռնելի.
որ մորուքավոր թոնիրները ծեր՝
վաղո՛ւց ածիված հրով ու ջրով,
պարարտացնում են իրենց մոխիրով եղինջ ու տատասկ,
որ բեղավորվի հողը՝ վագրի պես,
բայց և չհնձվի ու դեզ չդառնա
ա՛յն անտիրական-անտեր աշխարհում,
որ ինքն է խոտի մի դեզ վիթխարի,
և... շունն է նստած այդ դեզի վրա...

Իշխում է այնտեղ կիսատ ու պոստ մեծակությունը,
որ չի երկարում ու չի կարճանում...
Եվ իր մատնային թվաբանությամբ
կարող է հաշվել նույնիսկ մանուկը
այնտեղ բնակվող հատուկեմտներից,
որ սովահարի իրենց կարմըրուկ քունը ներկում են

մեր ճերմակ հացով,
ինչ չկա՛ արդեն,

և իրենց դատա՛րկ-դատա՛րկ գրպանի քար լուռությամբ
ձայն են ընծայում ա՛յն ոսկիներով,
ինչ մեզնից խլել-խժոել են վաղու՛ց...

Մի անփառունակ կյանքի հետ մեկտեղ,
որ խառնիխուռն է Կորանի նման,
այնտեղ կա միայն փոշի փառավոր,
որ միշտ լցվում է նրանց ճաշի՛ մեջ,
իսկ մեր՝ աչքերի՛,
մեր ա՛յն աչքերի,
որ միշտ այնտեղ են,
մինչ մեր մարմինը ամենուրեք է,
սակայն ոչ այնտեղ...

Եվ ապրում ենք մենք՝

մեզնից դատարկված մեր հայրենիքը
ու քաղաքակիրթ վաչկատուն դարձած իր զավակները,
ապրում ենք այսպես՝ կրկնակի՛ կյանքով.
կրկնակի՛,
բանգի ամենագորեղ բանը աշխարհում
հիշողությունն է,
որ եթե նույնիսկ և ծակոտկեն է,
ապա ոչ երբեք տոպրակի նման,
այլ ա՛յն վանդակի, ա՛յն ամուր ցանցի,
որի մեջ ցմահ դատապարտվածն է ստիպված ապրում...

Կամ անուծ մարդիկ՝ ինչքա՛ն ցանկանաք,
բայց անհո՛ւշ մարդիկ՝ միայն փնտրեցեք

այն գերիրական Էլիորադոյում,
որ հիմա ունի ամեն մի քաղաք
և որ կոչվում է «խելագարանոց»...
Ուստի, խնդրում եմ, սղագի՛ր բերեք:
Սղագի՛ր բերեք, որ սղագի մեր հուշերի չուն՛
նետված քարերից անվերջ փշրտվող,
իրար հետամուտ-իրար ջարդոտող
նրանց լճային ալիքումների տագնապը,
որ մեզ՝

փետուրի նման կամ տաշեղի պես,
ցուցադրում է աստղերի առաջ և արեգակի,
իբրև աճուրդի հանված առարկա,
որին գին տվող չկա՝ ու չկա՛...

Եվ հուշերը մեր՝

երեկ-եռանդվա և հազարամյա՛ մեր հուշերը կեռ,
թե՛ ինձ են կախում, թե՛ ձեզ են կախում
պատմության ժանգոտ հարցականներից՝
այս անգամ ո՛չ թե մագործի պես,
այլ այնպես, ինչպես թռչունն են կախում,
ողջ և կենդանի՝ թռչունն ընտանի,

որ մի՛շտ թարտա,
անվե՛րջ թարտա...

Եվ հիմա բերեք ձայնագրական նորոյս մի սարք,
որ ձայնագրի

մեր թարտոցի առթած աղմուկի ծվեաները գեթ,
մեր մկանների խաղի ժխորը
ու մեր ջղերի լարման ճայթումը,
որ կարիք չունեն ո՛չ մի աճուրդի.
փռել ենք ձրի՛, վերցրեցե՛ք-կերե՛ք,
անու՛շ մարսական...

Բայց այս հուշերը

երեկ-եռանդվա և հազարամյա այս հուշերը մեր,
ա՛խ, կույ չեն գնում.

կես ճանապարհին վոլում են-մնում՝

խակ ստուղի պես,
ո՛չ, կատվի ձագի,

վոլում-մնում են մեր կոկորդի մեջ,
մեր ա՛յն կոկորդի, որի շուրջ բոլոր
կորած-կորցրած մեր գավառների, շեն ու քաղաքի
տեղանունները շարան առ շարան
հյուսվել-ոլորվել-դարձել են պարան
ու խեղդում են մեզ
սպանելու պես,

բայց-դիտավորյա՛լ-չեն էլ սպանում...

Եվ մեզնից ծնված 'մանուկների' մեջ,
մինչև իսկ նրանց կերակուրների՛,
նո՛ւյն տառապանքը՝ աղի փոխարեն,
անլույծ է մնում՝ ավագի նման,
նո՛ւյն անկրկնելի-եզակին-մեկը,
որ չի հասկացվում ամբողջ աշխարհից
և չի հասկացվում լոկ ա՛յն պատճառով,
որ անկրկնելի՛-եզակի՛-մե՛կ է:

...Տասնհինգ դար է, ինչ լսում ենք այն,
որ անգիր գիտի նաև աշխարհը.
«Խնդրեցե՛ք՝ տացի՛»:

Ո՛չ, սուտ է, Հիսու՛ս,

ո՛չ, կարելի է շարունակ փնտրել,
փնտրել մեզ նման,

բայց ն չգտնե՛լ:

Եվ կարելի է չգտնել ոչի՛նչ,
նաև ամե՛ն ինչ չգտնել կյանքում,
նաև ամե՛ն ինչ, բայց ոչ... հայրենիք:
Հայրենիքն այն է, որ չեն որոնում:
Հայրենիքն այն է, որ գտնված է
ի սկզբանե, ի ծնե և միշտ,
ուրեմն նաև նա չի էլ կորչում:
Իսկ մերը... կորա՛վ...

Եվ ընդմիջում:

Օ, ո՛չ:

Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում,
այլ ընդամենը հափշտակվում է,
ինչպես որ ձեռքի ափը չի կորչում,
երբ նա փակվում է,
բայց և չի կարող միշտ մնալ փակված,
ինչպես հայրենին՝ միշտ հափշտակված...

Եվ չի շփոթում մարդն էլ իրերին

լոկ ա՛յն պատճառով,

որ հույս-հավատի լքումից հետո
մնում է դարձյալ հրաշքի անմեռ ակնկալիքը,
վասնզի մեր մեջ ամեն՝ բանից վերջ,
ամենա՛յն կարգի մահից հետո է մեռնում մանուկը՝
հրաշքներ ծնող-սնող մանուկը:

Իսկ մերպեսներից ամեն մեկիս մեջ, միաժամանակ,
ապրում է արդեն մի՛ քանի մանուկ՝
նրա՛նք, որ մեռան չծնված նույնիսկ,
ընդմիշտ Պամրացան՝ խոսելուց առաջ:

Եվ ճիշտ է, ավա՛ղ, որ մեր ձեռքերը դատարկ մնացին,
բայց մեր աչքերը... լեցո՛ւն-լեցո՛ւն են,
և արդեն լեցուն

ո՛չ թե արցունքով և ո՛չ էլ արյամբ,
այլ հոժ հավատով, խտացած հույսով՝
ա՛յն մշտանորոգ անմարմին կույսով,
որին ջանճաթի հուրիի նման
ինչքա՛ն էլ լկեն ողջ գիշերն ի լույս՝
լուսաբացի հետ միշտ դառնում է... կույս:
Ահա թե ինչու երբ էս գոչում եմ.

— Կոչեմ ապրողա՛ց,

ինձ ձայն են տալիս ոչ թե գիշատիչ ագռավ-ցիները,
արձագանքում են ոչ թե բորենի-գայլաշները,
այլ բոլո՛ր նրանք, ովքեր քաջ գիտեն,

որ... կոճղ է դառնում մարդը գլխատված
և իր վզի շուրջ աճած սունկերով
թունավորում է իր ողջ բոլորքը,
բայց երբ փորձում են մի... ա՛զգ գլխատել՝
դառնում է կարծես սա մի... թթենի՝

նորի՛ց նորանում,
դալարո՛ւմ դարձյալ...

Նրա՛նք են լսում և արձագանքում,

ովքեր քաջ գիտեն
(իրենց աչքերո՛վ),

թե մեր սան ծխնին ինչպե՛ս է մաշվել՝
աղետի առաջ բացվել-փակվելուց.
ովքեր քաջ գիտեն, որ այլոց համար
մինչ նահանջ տարին չորսից մեկն է լոկ՝
մեզ համար մի՛շտ էլ նահանջ էր տարին
ու փետրվարը՝ միշտ 28 օր...
Բայց գիտե՛ն նաև, քա՛ջ գիտեն, որ մենք
մե՛նք էլ, վերջապե՛ս, մարդ ենք հատարակ,
ոչ թե տանջանքի մի սարք ու սարված,
և պիտի՛ պրծնի տանջանքն այդ մի օր,
մանավանդ որ կան պատեր այնպիսի,
որոնք քանդվում են ճակատով նաև,
եթե չեն պահվում թիկունքով օտար,
օտա՛ր թիկունքով, որ հոգնե՛լ գիտի:

Լսում են նրանք և արձագանքում:
Ու... չեն պահանջում արյան գի՛նն իրենց,
այլ պահանջում են թե՛նց այդ արյու՛նը,
որ հեղեղել է սարեր ու ձորեր,
որ ծեր ծերպերի ներսն էլ է ծորել,

սակայն չի՛ կորել,
ինչպես չե՛ն կորել

մեր միլիոնավոր մեռելներն, այո՛,
քանզի... չեն ելնում շիրիմից իրենց
լոկ նրա՛նք, ովքեր ունեն շիրմաքար,
որ նրանց ելքի դռնակն է փակում,

մինչ միլիոնավոր մեռելները մեր՝
զրկված և՛ շիրմից, և՛ շիրմաքարից,
մի՛շտ էլ ելել են ու ելնում են դուրս՝
քառապատկելով շարքերն ապրողաց.

— Կոչեմ ապրողա՛ց:

Մեր մեռելները մեր հաշվի՛ մեջ են,
մեր հաշվի՛ մեջ են ու... կաշվի՛ մեջ են,
քանզի մենք, իրո՛ք կապված ենք նրանց հիշատակներին,
ինչպես մանուկը իր մորը՝ պորտով:

Մենք նրա՛նց մեջ ենք
ու մե՛ր մեջ՝ նրա՛նք,

մեր բջիջների՛, մեր ոսկորի՛ մեջ,
մե՛ր, մեր ծնւթիւթ թոռ ու ծոռի՛ մեջ:
Ու եթե նույնիսկ մե՛նք հոգնենք մի օր,
նրանք՝ ապրելով մեր մեջ ու սրանց,
մեր հողերի՛ մեջ, սրանց մատների՛,
աստվածաշնչյան Այրի կնոջ պես՝ առա՛նց հոգնելու,
մի՛շտ Դատավորի դուռը կբախեն՝ այնքա՛ն ժամանակ,
մինչև չասեն. «Եկ, դատեցայց գայրին»...

Ու երբ գոչում եմ.

— Կոչեմ ապրողա՛ց,

ինձ ձայն են տալիս նրա՛նք, որ երեկ
խեղճ գաղթականի ցուպի փոխարեն իրենց ձեռքն առան
անթաղ-անշիրիմ մի նահատակի ազդր կամ սրունք,
և, Ահարոնի գավազանի պես, ոսկորն այդ ծաղկե՛ց՝
անարգ թշնամուն ռայացուցելով,
որ թեպետ մեջերսն ավերակված է,
բայց Այ Մեհրաբը դեռ մնացել է,
դեռ մնացել է... Արարատի՛ շուրջ...

Եվ իսկապես էլ.

այն, ինչ կատարվեց,

մի նորադարյան ջրհեղեղ էր խոլ,
որ անմարդկային աշխարհում չապրող
մի ողջ մարդկության ջնջել սպառնաց,

սակայն մոռացավ ու մտահանեց,
որ Արարա՛տն էր, հե՛նց Արարատն էր Նոյան փրկիչը,
որ Արարատի՛, հե՛նց Արարատի ստորոտներում
ապրեց, բազմացավ մարդու սերունդը:

Նաև այս անգամ նո՛յնը կատարվեց:

Ու մղձավանջը գնալով քաշվեց իր ափերի մեջ,
որոնք վերստին կանաչ ներկեցին իրենց շուրթերը,
որ ամպազատված բիլ երկնքի հետ համբուրվեն հեռվում
և ծնեն զավակ՝

մոտավոր տեսքով պարզ հորիզոնի:

Գիշերվա ամբողջ բովանդակությունն ինքն իրեն շրջեց՝
աստառի վրա,

և բյուր երկրային աստղերն օրեցօր
կետադրեցին խառնակ գիշերը
իրենց լուսամիտ կենսիմացությամբ:
Բոլոր սրբազան խենթերի գանգից ժայթքած արյունը
դարձավ դրոշակ:

Կախադաններից ճոճված սրբերի վերջին խոսքերը
դարձան անուններ նորածինների:

Եվ ջրհեղեղից մասա՛մբ ազատված երկիրն այս փոքրիկ
մեծ ոզնու նման փշերն իր ցցեց
կեռ ատամի դեմ օձացող մահվան,
և ամեն մի փուշ տնկվեց տունկի՛ պես,
ծաղկի՛ պես բացվեց,
շիվի՛ պես լցվեց

ավշով ու հյութով, խոստումով մրգի...

Եվ մինչև անգամ մեր բռունցքները
արմատ ձգեցին ու հազան սաղարթ՝

դառնալով ծառե՛ր...

Մեռնողը հարյավ,
ապրողը ապրեց...

— Կոչեմ ապրողա՛ց:

Եվ հիմա այն տունն, ուր մենք չենք ապրում,
եթե լեցուն է չարք ու շեյթանով,
ապա այն տունը, ուր ապրում ենք մենք,
դարձել է արդեն սրբության խորան,
մասունքի ծաղկոց, տապկոց Աշխարհի:
Ու եթե երեկ թվերը թշվառ չունեին լեզու,
այսօր՝ այլևս պերճախոսության ուսուցիչ դարձած՝
դասեր են տալիս և՛ թվատներիս, և՛ կակազներիս,
վերածննդի ու վերապրումի գրգռի՝ չ դասեր՝
ճույնիսկ ակամա ապացուցելով,
որ սրածումից չի անհետանում թովանդակ մի ազգ,
ինչպես որ սեզը՝ քաղ ու քաղհանից,
ճույնիսկ ակամա ապացուցելով,
որ մոլախոտի ու հացաբույսի վեճը դարավոր
միշտ ավարտվում է հնձով, աղացով,
փոռվ ու հացով

և ապրողների կոչունք-կնունքի խնդությամբ թնդուն...

— Կոչեմ ապրողա՛ց:

Եվ ո՛վ է ասում, թե դուք ծով չունեք:
Ձեր Արյան ծովը ավելի մեծ է Մեծ կամ Խաղաղից,
ծովը Քրտիների՝ Ատլանտականից ավելի խորունկ,
Վրեժի ծովը՝ ավելի ահեղ, քան Սառուցյալը,
իսկ ծովն Արցունքի՛...

Պե՛տք չեն արցունքներ:
Նրանց փոխարեն

թող հոսի ավյո՛ւն, թող հոսի քրտի՛նք
ու սրբագրի վրիպակները ճույնիսկ բնության՝
ապառաժները՝ դարձնելով հնձան ճմլելիք գինու,
առապարները՝ բաց շտեմարան հացի և մրգի,
անապատները՝ շեն-ապատների բաց ցուցահանդես,
որպեսզի ամեն կտորի ներքո, ամեն հարկի տակ,
բախտավորության հարսները մահճում
նորածնի հետ, երկվորյակի պես,

ապահովություն՝ն բերեն լույս աշխարհ,
և ամեն տան մեջ խոսուն շշերը
երազկոտ գինու շուրթերը բացեն,
և ամեն տան մեջ, «Հայր մեր»-ի նման,
հողովի մեր նոր Աշանաբանը.

— Մեր թափված գինին
մեր ջարդված շշին թող մատաղ լինի:
Գինի՛ն, բայց երբեք ո՛չ արյունը քորք,
շշի՛ն, բայց երբեք ո՛չ երկրին ավեր...

Եվ պետք չէ հիմա շարոց-շարական,
նաև պատարագ ու հոգեհանգիստ:
Հողն ինքն է երգում իր ընդերքների մթին կոկորդով,
նվազակցությամբ իր ջրվեժների,
իր քամիների խմբերգով գորեղ,
Մասսյաց անլեզվակ զանգերի հուժկու մենակատարմամբ՝
ի տես բյուրաբյուր ա՛յն հանդիսատես լամպ ու լույսերի,
որ հիացմունքից թարթում են իրենց աչքերը շողուն
և ավելի են թրթռուն-ապրող,
քան թե առկայծող աստղերը վերին:

— Կոչեմ ապրողա՛ց,

կոչեմ վերապրած ժողովո՛րդ իմ, քե՛զ,
որ ունես աչքեր, այն էլ ի՛նչ աչքեր,
բայց ավելի ես տեսնում, առա՛յժմ, քո ականջներո՛վ:

Եվ ես, որ եղա տարաբախտ վկան լացիդ ու կոծիդ
և տառապանքիդ անոթը դարձա,
կործվա՛ծ անոթը.

որ վկան եղա սուկումիդ ահեղ
և զարհուրանքիդ պահեստը դարձա,
անտա՛կ պահեստը.

որ վկան եղա ցասումիդ նաև,
և ծառացումիդ, և ընդվզումիդ,
ու դարձա նրանց խորհրդանիշը՝
հողի մեջ խրված հսկա Աիզակի սպառ ցցուն.

որ նաև ցայսօր դեռևս անկատար
երազանքդ եմ քո, իդձդ երկկատար,
բայց նաև վկան, բախտավոր վկան
նահատակներիդ վերածննդի,
վերապրողներիդ խանդ ու եռանդի,—

ես ստում եմ քեզ՝

պատվիրանի պես.

դո՛ւ որ վաղուց ես կոչվում ժողովուրդի,
թեպետ ականա դեռ ժողոված չես,
տակավին ցիր ես, ցան ես և սփյուռք,—
դու այսուհետև ժողովվես պիտի

նախ՝ ինքդ քո մե՛ջ,

և ապա՝ քո շո՛րջ՝

հիշելով, որ այս ջարդ-կոտորածը, նախճիր եղեռնը
երե՛կ չսկսվեց, երե՛կ չսկսվեց...

5000 տարվա,

500 տարվա,

և 50 տարվա

պատմություն ունի այդ ջարդ-սպանդը, նախճիր-եղեռնը,
որ չի՛ ավարտվել ու չի՛ ավարտվում.

կարմիր էր, հիմա ճերմակ է դարձել,

և հիմա արդեն նա գանգ չի հատում,

այլ գրավում է,

չի կտրում ձեռքեր, այլ վարձում ընդմիջտ,

չի առևանգում, այլ թմայում է,

չի հեղում արյուն, այլ ծախ է առնում

և, միացնելով երակ-երակի,

իր ամենակույ արյանն է խառնում...

Ու կրկնում եմ ես՝

ահազանգի պես.

— Այս ջարդ-սպանդը երե՛կ չսկսվեց,

և ոչ էլ վաղն է նա ավարտվելու,

ուստի վախեցե՛ք սպանդից ճերմա՛կ

ավելի, քան թե եղեռնից կարմի՛ր.

ուստի կրկնեցե՛ք ինձ հետ միատեղ,
ինչպես երդումի խոսքերն են կրկնում.

— Բռնի ձուլվելիս թունավորում են ձուլողին՝ արյամբ,
ինքնին ձուլվելիս թունավորվում են իրենք՝ արյունով:

Ուստի թող գործեն ձեր հին զենքերը՝

ձեր ատամնե՛րը ու ձեր ոտքե՛րը.

ձեր ատամնե՛րը՝

կովելու համար ու պաշտպանվելու
կամ ժողովվելու ինքներդ ձեր մե՛ջ,

իսկ ձեր ոտքերը՝

վերադառնալու, տուն գալու համար
կամ ժողովվելու ինքներդ ձեր շուրջ...

Եվ արժի՞ ասել, որ ինչպես երեկ, այնպես էլ այսօր
օտարության մեջ ազատ լինելն էլ ա՛յլ գերություն է,

իսկ տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ազատություն:

Եվ արժի՞ այսօր, որ ես ինքքս ինձ մանրեմ՝ հարդի պես:

Թողե՛ք ես մնամ ինչպես կամ՝ ցողուն:

Եվ թուլե՛ք նաև ես մնամ իմ նոր դավանանքի հետ,

որ Երրորդության փոխարեն ունի լոկ Երկրորդություն:

Եվ անգիր արե՛ք իմ աղոթքը նոր.

«Յանուն Մոլորեալ Ոչխարի, Յանուն Անտակ Որդու»...

— Կոչեմ ապրողա՛ց՝

մոլորյալների՛ն:

Աքսորը միայն բռնի չի լինում,

այլև կամովին,

և առավել է տխուր ու տրտում ոչ մեռելոցը,

այլ գերելոցը:

Օտարության մեջ ազատ լինելն էլ ա՛յլ գերություն է,

և տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ազատություն:

Իսկ տունն էլ տո՛ւն չէ, այլ հայրենի՛ք է,

և ի՛նչ հայրենիք.

գայի երախից ձեռքերով խլված մի Դավիթ մանուկ,

երկանքաքարի ակուսից արծած ողջանդամ մի սերմ...

Եվ ո՛վ կգտնի, որտե՛ղ կգտնի
այսպիսի մեկ այլ՝ երկրո՛րդ հայրենիք
և ի՛նչ հայրենիք...

Թերևս աշխարհում ո՛չ մի հայրենիք,
մե՛ծ ու վիթխարի, զորե՛ղ ու կարող ո՛չ մի հայրենիք
յուրայինների սրտում ու հոգում չի ճարուցանում
այնքա՛ն սեր անանց ու կարո՛տ այնքան,
որքան այս մի բուն—բուն սեղմըված երկիրը Հայոց.
ո՛չ ոք աշխարհում իր հայրենիքով մեծ ու մեծանում
չի հպարտանում այնպիսի մանուկ միամտությամբ,
այնքա՛ն ինքնամոռ և անվերապա՛հ,

ինչքան որ սրանք.

ո՛չ ոք աշխարհում իր հայրենիքը չի տենչում այնպես,
ինչպես որ սրանք.

և չի հավատում այնպիսի մանուկ միամտությամբ,
ինչպես որ սրանք.

և չի դողդողում նրա այսօրվա ու վաղվա վրա,

ինչպես որ Սրա...

Սիրածի գրկում՝

միշտ Սրա՛ մասին.

բաժակի առաջ՝

միշտ Սրա՛ մասին.

աքսորում-բանտում՝

միշտ Սրա՛ մասին.

աշխարհի բոլոր քառուղիներում՝

միշտ Սրա՛ մասին.

ապրելիս՝ Սրա՛,

մեռնելիս՝ Սրա՛,

միշտ Սրա՛ մասին...

Եվ Սրան բնավ չճանաչողը պիտի որ կարծի,

թե սա երկիր է մի հսկայական՝,

վիթխարի՛ աշխարհ,

հայրենիք հզո՛ր...

Եվ իսկապես էլ՝ Սա երկիր է մե՛ծ,
վիթխարի՛ աշխարհ,
հայրենիք հզո՛ր:

Եվ մի՛ պահանջեք, որ ես ինքքս ինձ մանրեմ՝
հարդի պես:

Թողե՛ք ես մնամ ինչպես կամ՝ ցողուն:
Ու թողե՛ք նաև ես մնամ իմ նոր պաշտամունքի հետ
և ամբողջ սրտով ցանկանամ տեսնել,
որ դուք էլ՝ ինձ պես նորադարձվելով՝
հին աստծու նման, նրա փոխարեն,
պաշտում եք արդեն մի... ծա՛ն՝
թթենի՛ն,

որ գլխատումից ո՛չ թե շորանում,
այլ նորանո՛ւմ է...

— Կոչեմ ապրողա՛ց՝

նորադարձների՛ն:

Մա՛րդ եմք, ո՛չ մանրե,

որ բազմանում է՝ իրեն կիսելով:
Միանալով է մարդը բազմանում.

եկեք միանա՛նք:

Եկեք միանա՛նք,

որ մեր այս փոքրիկ, շա՛տ փոքրիկ հողի երազանքը մեծ
մարմին ստանա մեր միս-ուկորով,
և մարմնավորված մեծ երազանքի բուժիչ բարությամբ
մենք էլ ազատվենք մեր ոյս ու քե՛նի ցածր զգացումից,
որ դրանով իսկ չնսեմանանք անգամ մեր ներսում,
այլ մնանք մեր վե՛հ հպարտության՝ հետ,
նաև մեր վսե՛մ արհամարհանքի՛,
բայց ավելի շատ՝ մեր ծով բարության՝
ու մեր բնածին այլասիրության՝,
որից զրկվելով՝ մենք կարծես մե՛նք չենք,
կիսավերակ ենք և կանգուն չե՛նք չենք...

Մենք այսպիսի՛ն ենք
ու պիտի՛ լինենք:

Թողած ցավը մեր, ցավը լեռ ու բեռ՝
կրում ենք ցավը համա՛յն աշխարհի:
Թողած հոգսը մեր, հոգսը քար ու սար՝
հոգում ենք հոգսը համա՛յն աշխարհի...
Թո՛ղ որ համեցող, բայց չանհամացող արդարությունը
ամենից առաջ հասնի ամենքի՛ն,
մեզ՝ միայն վերջո՛ւմ...

Եվ մեր կսկիծը զսպանակելով՝
մենք մասնակցում ենք այլոց հանդեսին,
մասնակցում սրտա՛նց-անմախա՛նք-անքե՛ն...
Թո՛ղ ուրախության ուղտը գեթ վերջո՛ւմ, ամենա՛վերջում,
իր ծունկը ծալի մեր դռան առաջ՝
թեպետ ուշացած, բայց միշտ ցանկալի ուխտավորի պես...

Բայց սպառվում է մինչև իսկ սրբի համբերությունը,
ինչպես հոտում է մինչև իսկ ջուրը՝ արգելակումով:
Մենք հաջորդներն ենք Սուրբ Նահատակաց,
սակայն բնավ էլ սուրբ չենք ինքներըս,
մա՛րդ ենք հասարակ

և... հավատում ենք, որ պիտի դառնա
մեր յուրաքանչյուր խլլակը՝ այլակ միատեղումի,
և յուրաքանչյուր փշուրը՝ պաշար մոտալուտ վաղվա,
մնացորդն՝ անորդ,
մասունքը՝ մսուրք,
սփյուռքը՝ ապառք,
նշխարը՝ աշխարհ...

Եվ այս ասում եք ո՛չ դուք, ո՛չ նրանք,
այլ ե՛ս եմ ասում,
ես՝ Սիս-Մասիսըս,

անդո՛ւլ-անդադա՛ր-անվե՛րջ զնգացող իմ անքուն զանգով:
Գողթան երգերի չափով այլազան,

բամբ բամբիռների հնչումով պես-պես,
ամենատարբեր ելևէջումով շարականների
Սիսն ու Մասիսն են զրնգում անվե՛րջ- անդադա՛ր-անդո՛ւլ.
ոլ ականջ ունի,
բլթակ հավատո՛՛
նա պիտի՛ զգա
իմ եռադողանջ զանգի ասմունքը,
իմ եռաբանյա ասքի դողանջը,
իմ եռամատնյա խաչակնքումի շնչող ստվերը.

— Ո Ղ Բ Ա Մ Մ Ե Ռ Ե Լ Ո՛ Ց...

— Բ Ե Կ Ա Ն Ե Մ Շ Ա Ն Թ Ե՛ Ր...

— Կ Ո Չ Ե Մ Ա Գ Ր Ո Ղ Ա՛ Ց...



ԳԻՐԷ ՄԵԱՅՈՐԱՅ

ԴԱՐՎԻՆԻԶՄԻ ՀԵՐՔՈՒՄԸ

Ասում են՝

մարդը կապկից է սերել:

Ասում են սակայն՝

Կապիկների մեջ ձախլիկներ չկան,

Իսկ որտեղի՞ց են ձախլիկ-ձախերն այս:

Ումի՞ց են սերել...

21. 3. 64

Դիլիշան

Տ Ո Ղ Ա Դ Ա Ր Զ Վ Ա Ծ Ս Ե Ր

Ես ուզում եմ գրել քեզ երկու տող:

Ահա՛ գրիչ ու թուղթ:
Թանաքամանն ահա՛:

Թանաքամանն ահա՛...

Պատվանդան չէ՞ կարծես,

Որի վրա պիտի ինչ-որ արձան տնկվի:

Եվ այդ պատվանդանին... արձանանում ես դու,

Այն էլ գիտե՛ս՝ ինչպես:

Գիտե՛ս, չասե՛ս սակայն.

(Կան գաղտնիքներ, որոնք գերեզման են գնում,

Եվ կա անկեղծություն, որ չի բացվում երբեք,

Իսկ թե բացվեր՝

Կյանքում այդքան քիչ չէր լինի

Թիվը պոետների)...

Ու չե՛մ գրում ես քեզ,

Ու չե՛մ ասում ես քեզ,

Որ դու իմ կյանքի մեջ այնպես էիր հաշվված,

Ինչպես սուղ էջերը մի շատ փոքրիկ գրքի:

Ու ես ինչպե՛ս հիմա պոկեմ ու տամ քամուն,

Ինչպե՛ս պոկեմ, ասա՛, որ գեթ կապվի մի կերպ

Քեզ նախորդած էջի և հաջորդող էջի

Ա՛յն իմաստը, որ ես հասկանալ եմ ջանում:

*Պարույր Սեակի այս անտիպ բանաստեղծությունը հրատարակչությունը տրամադրել է գրականագետ Յուրի Խաչատրյանը:

Եվ իզո՛ւր եմ ջանում,
Որովհետև գիտեմ,
Որ դու սկսվեցիր սխալ տողադարձով
Եվ չես ավարտվում էլ.
Տողադա՛րձ ես արվում...

1961 թ. [մարտ]
Մոսկվա

Ա Ն Պ Ա Շ Տ Ո Ն Գ Ի Շ Ե Ր Ա Պ Ա Հ Ը

Եթե լինեի ես գիշերապահ,
Ո՛չ մի գողություն չէր էլ կատարվի:
Հանգիստ կքնեք ամեն տուն ու բակ
Հին «նանիկ»-ի տակ նորամայր առվի:

Եվ խանութների ցուցափեղկերում
Բազում-բազմազան իր ու առարկա
Ի՛նձ ցույց կտային և հեռվից հեռու
Աչքով կանեին մեկմեկու. «Եկա՛վ»:

Եվ գործ կածեինք մենք ամբողջ գիշեր
Խաղալիքների յեզուն անհողով:
Մութը մոռացված բաներ կհուշեր,
Ու կկապեինք մենք հինը նորով:

Հարցեր կտային հազար մի տեսակ
Անհասկանալի մեր մարդկայինից՝
Ադամ-արքանյակ-ատոմ-Կայենից,
Եվ նրանց «իմչո՛ւ»-ն, նրանց «մի՞թե սա»-ն
Խեղճիս կղեր ճիշտ այն վիճակում,
Ինչ լույսն է զգում ծակուռ-փչակում:

Բայց հետո քամին կգար օգնության,
Ու խոսք կբացվեր խոտից ու ծառից:
Ի՛վ թավշե արջուկն առանց հոգնության
Կսկսեր պատմել թղթե անտառից:

Ու նապաստակներ ուտինակաշի՛
Օդանավերի թևերին պազած,

Կիւշտեիճն ականջները ժիր
Ու կլսեիճն մանկորեն ասշած:

Հետո... կանացի լաշակներ պես-պես,
Զգեստներ գունեղ, նրբիճն կոշիկներ
Կսարքեիճն մի ճոխ պարահանդես,
Որից փակուղու մուջն էլ կշիկներ:

Եվ մուջն իսկապես մաշվում է-մաշվում,
Լույսը դառնում է խավարիճն դրկից...

.

Կիսամերկ մի կիճն հիճնգերորդ հարկից
Նկատում է իճնճ ու ետ է քաշվում:

Իսկ ճա կհիշի՛ անկողնում իր տաք
Այճն տարօրինակ միայճնակ մարդուն,
Որ ման է գալիս այս պատերի տակ
Եվ այս ուշ ժամիճն տակալիճն արթուն՛
Խաղալիքների լեզվով անհողով
Հարցեր է լուծում համաշխարհայիճն,
Կանանց անմարմիճն հագուստ ու շորով
Սարքում է շքեղ հանդես պարաշիճն՛
Այճն ապակեպատ թղթե անտառում,
Որտեղ թավշամաշկ արջուկն է ճառում՛
Հետն էլ լիզելով թաթն իր անմեղր...

.

Թե գողութուն է կատարվել երեկ՛
Ի՛ճնճ իճն. պահակ չեմ, ուրեմճն՛ անմեղ եմ...

24. X. 62
Երևան

ԽԻՂԾԸ ԵՎ ԻՐ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԻՄԱԿԸ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՐՈՂ ԷՐ
ԿԱՏԱՐՎԵԼ ՆԱԵՎ ԱՐԹՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Նա լուռ ներս եկավ և ասաց... աչքով.
-- Լյո՛ր ես եմ՛ խի՛ղճըդ:

Նա եկավ այճպես, իճնչպես գալիս է.
Ոչ թե տան դռնի՛ց, այլ լուսամտի՛ց:
(Խիղճը երբևէ դռնից չի մտնում):

ԵՍ

Եկել ես՛ ճստիր:
Ամենից հարմար աթոռը իմ տան
Այս ճոճոսանն է:

ԽԻՂԾ

Որովհետև ճա իր ճոճոցով
Հիշել է տալիս, որ դեռևս կա՛մ:

Ո՛չ: Որովհետև ճա չի հասկանում,
Թե ի՛ճն թան է այդ «որովհետև»-ը,
Իսկ դու հենց լոկ այդ «որովհետև»-ն ես
Եվ ուրիշ ոչի՛ճն:

(Բաց պատուհանիցս ներս խուժեց Ավտորուսը՝ Տրամվայի հետ և մի
ճշացող երեխայի ուղեկցութեամբ, և իսկույն էլ դուրս թռավ բակին
նայող պատշգամբիցս՝ Տրամվայը դեռ թողնելով սենյակիս մեջ, իսկ ճշա-
ցող ծրեխային՝ պատուհանիս գոգին):

ԵՍ

Մի քիչ սպասիր,
Որ տրամվայն էլ դուրս թոչի.
Թե չէ քեզ վատ եմ լսում:

ԽԻՂԾՍ

Իսկ երեխային, շո՛ւտ արա, Ան՛րս առ.
Չէ՛ որ այստեղ եմ ե՛ս, հասկանո՞ւմ ես:

ԵՍ

Երեխաների հարցում, դու գիտե՛ս,
Քո այստեղ լինելն ու չլինելը
Միշտ ավելորդ է եղել ինձ համար:

(Տրամվայն էլ դուրս սողաց պատշգամբիցս, իսկ ճշացող ծրեխային տա-
րավ Մայրը, որ դուրս պրծավ Հացի խանութից):

ԵՍ

Ինձ դու չես թողնում կարգին գործ անել:
Ասա՛, իմ վերջը ի՞նչ պիտի լինի:
Եվ ի՞նչ եմ դեռ ես.
Ինչ-որ մի քոսո՛տ վարչության անդամ
Եվ մինչև անգամ ո՛չ վարչության պետ:

ԽԻՂԾՍ

Ես մեղավոր չեմ, որ պատուհանորդ
Երկաթե ճաղեր կամ վանդակ չունի,

Ու ես կարող եմ Աերս ու դուրս անել:
Երկաթե ճաղերն ու վանդակները
Լինում են, գիտե՛ս, և քնարածն:
Ճաղե՛ր պատրաստիր,
Եվ... չեմ մտնի Աերս.
Օ՛դ չեմ, որ մտնեմ ճաղերի միջով,
Մանավանդ օդն էլ հիմա համարյա
Զրկվել է ինձնից:

(Օգր շրիկոցով բացեց պատուհանիս օդանցքը՝ հիշեցնելով, որ ինքը քնած
չէ և որ իր հետախուզութունը հրանալի է աշխատում):

ԽԻՂԾՍ

Հը՛, տեսա՛ր. չէ՛ որ ես ասում էի,
Որ հարկավոր է ճաղեր պատրաստել:

ԵՍ

Ի՛նքս եմ պատվերներ ընդունում, ի՛նքքս:
Իսկ դու չես թողնում՝ պատվեր կատարել:

(Նորից մի Ավտորուս ներս ցատկեց և մի քանի վայրկյան կայանելով
սենյակումս՝ թուռակի պես զուաց, ուղիղ ականջներին տակ):

ԽԻՂԾՍ

Մեքենայական այս հաճախակի այցերը և այս
Մեքենայացված զոոցները քեզ
Մի՞թե ավելի քիչ են խանգարում,
Քան թե ես, այո՛:

ԵՍ

Ես ժամանակի սերմն ու ծնունդն եմ,
Զավակն օրերի:
Իսկ դու շարունակ քարոզ ես կարդում,

Աստվածաշնչյա՛ն հինավուրց քարոզ:
Եվ քո գրաքար խոսքերից արդեն փոշոտված եմ ես
Եվ որտեղ որ է ցեցոտվեմ պիտի:

ԽԻՂԾՍ

Բայց ինձ գցել են նույնիսկ շան առջև,
Եվ անգամ շո՛ւնը
Ձի կարողացել ինձ ուտել, հարա՛:

ԵՍ

Իսկ մարդիկ, կարծես, քեզ ուտում են հեշտ
Եվ լավ էլ մարսում:

ԽԻՂԾՍ

Բայց դու... մա՛րդ չես դու,
Թեպետ և ունես կաղապար մարդու:

ԵՍ

Իսկ քո կարծիքով ես... ի՞նչ աղբ եմ ես:

(Այս խոսքին վրա խիզճս ցատկեց ճոճուհի, ինչպես դա լինում է վատ խաղացված լավ կատակերգության մեջ, և ձեռքը մեկնելով ինձ՝ ճոճուհից էլ ճոճուհի ձայնով սգեց):

ԽԻՂԾՍ

Դո՛ւ... գիտե՛ս, դու այն անքնությունն ես,
Որից խուսափել չեն կարողանում մինչև իսկ նրանք,
Որ ինձ ուտում են և լա՛վ էլ մարսում:
Չգիտե՛ս. դու այն նմանությունն ես,
Ինչից չի կարող խույս տալ զավակը,
Որ քանի գնում՝ այնքան ավելի

Նման է դառնում իր հորը, մորը,
Պապին կամ քեռուն, — այդ միևնույնն է:
Իսկ երկրագունդն էլ իր վրա չուցի
Միջօրեական-հորիզոնական կոչված գծերը:
Մե՛նք, մե՛նք ենք քաշել այդ գիծ ու միծը,
Որ... չմոլորվենք:
Դո՛ւ... այդ գծե՛րն ես:

(Ուզեցի զարմանքս հայտնել, բայց ես շարունակեց՝ փշացած ձայնով պնակի պես):

Դո՛ւ... քնավ դո՛ւ չես:
Դու պարզապես իմ հավատարմատար-դեսպանն ես միայն
Անիշխանության այն դղյակներում,
Որտեղ իշխում են
Ինձանից զրկված ու զերծվածները:
Դու, եթե կուզես, դու իմ լրտեսն ես չպարտավորված,
Չվարձակալված իմ գործակալը,
Անաշխատավարձ իմ թղթակիցը,
Իմ... անապակի ակնոցը նաև:
Դու, եթե կուզես, պատանդն ես նրա՛նց՝
Ինձանից զրկված ու զերծվածների՛,
Նրա՛նց պատանդն ես, ի՛մ ձեռքերի մեջ.
Թե քեզ սպանես՝
Նրանք կմեռնեն անմոխս-անժառանգ
Դո՛ւ... դո՛ւ... դո՛ւ...

ԵՍ

Ե՛ս... ե՛ս...

(Ու բարկությունից այլևս բառ չգտա: Ամենազովար բանը «ես» ասելն ու շարունակելն է: Ուտտի ակամա «ես»-ը թողեցի ու բռնեցի «գու՛ն»: Ու շեկատեցի, որ պատասխանիս մեջ ոչ մի նոր բան չտեսցի, այլ պարզապես եզճիս ասածը շրջեցի իրեն վրա):

ԵՍ

Դո՛ւ... հենց դու ի՛նքը ես... իմ գործակալ՛ը...
Եվ իմ... լրտե՛սը...

Եվ իմ... ակնո՛ցը...

Դո՛ւ... դո՛ւ ես պատանդ իմ ձեռքերի մեջ.

Ուզեմ՝ կխեղդե՛մ... կփոխանակե՛մ... կծախե՛մ... կը՛... կը՛...

(Գոռացի և արթնացա, որովհետև՝ ինչպես քիչ հետո հասկացա՝ սենյակս էր մտել ու խորհնչում էր այս անգամ ոչ թե Ավտորուսը, այլ դռանս էլեկտրական զանգը: Դեռ դուրը շրացած՝ կռահեցի, որ եկել են կանչելու... վարչության նիստի. կարևոր հանձնարարություն են տալու...):

Ց. XII. 62

Երևան

Մ Ե Ջ Ա Ն Ի Ց Մ Ե Կ Ը

Մեզանից մեկը, անշուշտ, այստեղ չէ,

Մեզանից մեկը՝

Եամ ես, կամ թե դու:

Թե դու չես այստեղ՝

Ապա ինչպես է,

Որ ինձ հետ ես միշտ՝

Իմ սենյակի մեջ,

Իմ մատների տակ,

Իմ լեզվի վրա:

Թե ես չեմ այստեղ,

Ապա ինչպես է,

Որ ես հետդ չեմ՝

Քո սենյակի մեջ,

Քո մատների տակ,

Քո լեզվի վրա:

Ծիշոն այն է գուցե,

Որ մենք երկուսս էլ այստեղ չենք լինում.

Ինքս այնտեղ եմ, որտեղ որ դու ես,

Իսկ դու այնտեղ ես, որտեղ որ ես եմ:

Այսպես զայիս ենք մենք դեպի իրար,

Ինձ՝ ինձ մոտ,

Ես՝ քեզ

Եվ... չենք հաճոհւում... այս քանի տարի:

18. VII. 62

Երևան

Խ Ե Ղ Մ Ռ Խ Ն Ղ Մ Ո Վ

Խեղճ ու անխիղճ իմ սիրելի,
Այսուհետև միշտ թփրտա
Հզոր ձեռքում ամենասուրբ այն զորության,
Որ քառերի ցուցակի մեջ կոչվում է «խիղճ»:
Եվ թփրտա երջանկորեն՝
Քեզ զգալով երանելի:

Ես՝ ի ծնե երանելիս,
Երանի եմ տալիս և քեզ,
Եթե պիտի այսօրվանից գերի ընկնես
Ու չազատվես,
Ու չուզենաս գեթ մի վայրկյան
Ազատվել այդ սակավադեպ գերությունից:
Այնժամ միայն կհասկանաս քո ջղերով,
Թե կա մի տեղ, ուր խրատը ձանձրալի չէ,
Եվ քարոզն էլ չի սպանում երգ ու տաղին:
Այնժամ միայն դու դիտապատ քո մազերով կհասկանաս
Շատագալթի շիտակությունն ավանդական,
Նաև նրա նմանությունն ասեղի հետ:
Եվ քանի որ թելն է մտնում ասեղի մեջ:
Ոչ թե ասեղը թելի մեջ.
Եվ քանի որ գալարվողը թելն է միայն,
Ոչ ասեղը.
Եվ քանի որ, եթե պետք է,
Ասեղով են ծակում, ոչ թե նրա թելով,—
Ուրեմն այսօր և հավիտյան թող ասեղը կոչվի և խիղճ,
Իսկ սիրելի՛ս, խեղճ սիրելիս,
Դու մի՛ հոգա թելի համար.

Թելը կգա, քեզ կգտնի,
Ինչպես մեղքն է մարդուն գտնում...
Եվ դրանով դու չես դառնա
Ու չես կոչվի երբեք Դերձակ:
Դու կդառնաս ու կկոչվես Արվեստագետ,
Որ մի հոգնած-ազնիվ պահի
Կարող է և իջնել... խրատ տալու ցածրությամբ,
Որովհետև այդ ցածրության լայնածավալ արոտներում
Եթե անգամ ծիլ է տալիս,
Ավա՛ղ, արմատ չի հաստացնում խիղճ ասվածը:
Թե քո ջղերն այդ արմատի մազանոթներն են տարածուն,
Ու երբևէ չեն քաղհանվի,
Ու չեն լինի արմատախիլ,
Ուրեմն այժմ և հավիտյան երանի՛ քեզ,
Լիմ խղճով ու խեղճ սիրելի...

7. VII. 63

Ծրեան

Մ Ե Կ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց Ե Ր Կ Ո Ւ Կ Ա Տ Ա Կ Ե Ր Գ
Ե Ր Ե Ք Ա Ղ Զ Կ Ա Վ Ր Ա

Ծերանում ենք, Պարույր Սևակ,
Ծերանում ենք, սիրելիս...
Գ. ՍԵՎԱԿ

Երեք աղջիկ քայլ են քայլում փողոցով:
Երեք աղջիկ փայլ են փայլում փողոցով:
Քայլո՞ւմ-փայլո՞ւմ, չե՛ն էլ նայում ոչ մեկին,
Բայց և այնպես տեսնում են պարզ ու մեկին,
Որ բոլո՞րն են իրենց նայում դողոցով:

Երեք աղջիկ ծիծաղում են անառի՞թ
Ու թվում են... ու թվում են անառիկ:
Տեսնես՝ ո՞վ է նրանց անուն հորինել:
Երկուսինը՝ ի՞նչ ուզում էր թող լիներ,
Միսյն մեկին... մեկին լիներ Քնարի՛կ:

Երեք աղջիկ դաս են սերտում մեկուսի:
Տեսնես՝ ո՞վ է փարվում նրանց մերկ ուսին:
Մեկին ինչ-որ մեկը սիրեր, մինչդեռ ես,
Ես սիրեի գոնե... գոնե երկուսին:

Երեք աղջիկ գուցե ասեն ինձ «քեռի»՝
Նայելով իմ ճերմակացող քունքերին:
Իսկ ես ինչպե՞ս իմ հայացքով չգրեմ
Բիբերի մեջ նրանց ծիծղուն աչքերի.
«Մեկիդ մերժման ցավը մի կերպ կկրեմ,
Իսկ երկուսի՞դ, գեթ երկուսի՞դ... կսիրե՛մ»:

Նրանք՝ դալա՛ր, իսկ ես՝ անա՛ս յս տարիքին:
Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.
Մեկին ի՛մ պես,
Մյուսին՝ ի՛նձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ իրար բնա՛վ չեն ճանաչում,
Ես դրանից անկեղծ ասած, չե՛մ ամաչում,
Որովհետև ես չեմ խաբում և ո՛չ մեկին.
Ինձ՝ երեքը, իսկ ես սիրում եմ երեքին՝
Մեկին՝ ի՛մ պես,
Մյուսին ի՛նձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ երջանիկ են, ես՝ առավե՛լ:
Ո՛չ մի անգամ ո՛չ մեկն ինձնից չի՛ խոսվել,
Տառապանքից չի՛ պատավել
Ու կարոտից չի խորովվել,
Որովհետև նույնիսկ հիմա՛ այս տարիքին,
Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.
Մեկին՝ իմ պես,
Մյուսին՝ ինձ պես,
Ու երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ թե հանդիպեն մի օր իրար,
Պիտի խոսե՛ն-խոսե՛ն իրենց սիրուց իրավ,
Ու չիմանան, որ սիրում են մեկին՝
Նրա՛ն,
Ով սիրել է իրենց մեկտեղ.
Մեկին՝ իմ պես,
Մեկին՝ ինձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն...

3. XI. 63
ՍԵՎԱԿ

Պ Ի Տ Ի...

Ա՛յս այս անվերջ «պիտի»-ն
Վերջ ունենա՛ պիտի...

«Պիտի... այսպես անենք,

Պիտի... այնպես անենք:

Պիտի... այսպես լինի,

Պիտի... այնպես լինի:

Պիտի... պիտի... պիտի»...

Այսպես «պիտի»-ն պիտի

Նստի գահի վրա,

Իսկ մենք մնանք ոտքի,

Երկրպագենք նրան...

3. XI. 63

Նրեան

Հ Ա Վ Ե Ր Ժ Ե Ե Ր Կ Ա Ն — Բ Ա Ց Ա Կ Ա Ն

Աչքեր ունի նեղ-երկարուկ,

Ասես լինեն կորիզ հոնի,

Ունի հայացք մի հեռախույս,

Նման մթին հորիզոնի:

Տիրուհի՛ է— տիրուհի չէ:

Սիրուհի՛ է— սիրուհի չէ:

Քո՛ւր է— քուր չէ:

Կո՛ւր է— կուր չէ:

(Երբ որ պետք է՝ կնկատի,

Երբ որ պետք չէ՝ չի նկատի)...

Անպարտադիր և անհրաժեշտ,

Հավերժ ներկա և բացակա՝

Թե «սեր» ասես՝ խնդրում է շեշտ,

Թե ասես «կին»՝ վեհ ածական:

Եվ էակ չէ վերացական,

Այլ կենդանի՛, միս-ոսկորո՛վ:

Իսկ անո՛ւնը: Ասեք Խոնարհ,

Ասեք Օնորհ, ասեք Գորով:

Եվ մի՛ հարցրեք, ումն է նա...

Այս մեկը թող զաղտնիք մնա...

14 XI. 63

Նրեան

ՃԱՄՓԵԶՐԻ ԽՈՏԸ

Իմ բախտը բերեց.
Ես ո՛չ մի անգամ
Չշփոթեցի իմ անեղ դարը օրացույցի հետ,
Եվ ո՛չ մի անգամ
Չկարողացա (չկարողացա՝ -չկարողացա՝)
Դստնայ խոսափող ա՛յն անցողիկին,
Որ համարժեք էր հաջողությանը...

Իմ բախտը բանեց.
Ես բոլորի՛ հետ ու մեկտեղ էի,
Բայց ո՛չ նրանց հետ,
Ովքեր գոռգոռում
Ու բոռում էին բոլորի՛ անվամբ,
Բոլորի՛ն անվերջ վկա բերելով,
Մինչ այդ «բոլոր»-ի
Սնունը թե կար՝ ամառում չկար...

Իմ բախտը բերեց.
Ես գրչիդ կո՛թը հաճախ ծծեցի
Ու հենց դրանով հաճախ կշտացա,
Բայց ո՛չ երբևէ գրիչ ծախելով...

Իմ բախտը բանեց,
Ինչպես բանում է բախտը այն... խոտի,
Որ ճանապարհի եզրին է բուսնում.
Մի՛շտ կոխկրտվելով՝
Ես ցողունի տեղ, ստիպվա՛ծ, արմա՛տ երկարացրի...

Գ. XII. 62
14. XI 63
Երևան

ՄԻ՛... ՉԻ՛...

Մի՛ անիր (այս),
Մի՛ անիր (այն),
Մի՛... մի՛... մի՛... մի՛...

Չի՛ կարելի (այս բանն անել),
Չի՛ կարելի (այն բանն անել),
Չի՛... չի՛... չի՛... չի՛...

Այս «մի»-ն ու «չի»-ն աջից-ձախից,
Իբրև երկու փակագծեր,
Սնունծելի խնդրի նման
Մեր ողջ կյանքն են մեջտեղ գցել:
Եվ այս խնդիրն ո՛վ կլուծի..

26. XI. 63
Երևան

Ծ Ա Ռ Ե Ր Ի Օ Գ Ն Ո Ւ Ք Յ Ա Մ Բ

Չէ՛, շա՛տ եղավ,
Էլ շա՛տ եղավ այս թովադեմ փնթփնթոցը...

Ծառերն անգամ
Ռնեն իրենց բարությունը՝ զով ստվերը,
Որ անվճար մեզ են հաւնձնում,
Որպեսզի մենք նստենք նրանց բարության մեջ
Ու... չարանա՛նք՝
Եթե անգամ ոչ խեղճ հողի,
Ապա նրա թեկուզ և վատ տիրո՛ջ վրա...

Բայց ծառերը նաև կանաչ սլաքներ են,
Որ մեզ անխոս հրավիրում
Ու խնդրում են նայել... վերև՝:

Կույրե՛րն են միշտ քայլում՝ դեմքը վերև տնկած:
Իսկ մշտապես ցած նայողը կույր չէ՛ արդյոք...

Եկեք մենք էլ վերև նայենք՝
Ո՛չ թե կույրի, այլ ծառի՛ պես,
Որպեսզի մեզ երբեմն զգանք
Քիչ ավելի մոտիկ օդին, քան թե հողին...

Իսկ շատ չեղա՛վ մեր այս տոնիպ քմծծաղը
Սրա՛-նրա՛
Ամե՛ն ինչի,
Կյանքի՛ վրա:
Բավակա՛ն է.
Եկեք ծպտա՛նք,
Եվ ո՛չ թե լոկ մեր շուրթերով ու աչքերով,

Այլ ո՛ղջ մարմնով՝ այնպե՛ս, ինչպես
Ամբողջ մարմնով է կատարվում ամեն մի պար:
Թե չէ անվերջ փնթփնթալով կյանքի վրա՝
Արդեն կյանքն ենք վիրավորում շա՛տ ավելի,
Քան կյանքն է մեզ վիրավորել...

Խող ծառերը գրկախառնվեն
Իրենք իրենց բարության հետ՝
Զով ստվերի,
Ու քիչ քնեն,
Որ... չլսե՛ն մեր քացախած քրթմնջոցը,
Իսկ մենք
Նրանց մատնանջիչ սլաքներից հետևելով՝
Նայենք վերև՝,
Լ՛տերմանանք ա՛յն օդի հետ,
Որ իշխում է ոչ թե հողի տիրո՛ջ վրա,
Այլ հենց նաև հողի՛ վրա, նաև հողի՛:
Մտերմանանք ա՛յն օդի հետ,
Որ չի անցնում լոկ մարդկային շնչափողով,
Այլ փողով արդարության՝
Ծեփորելով և՛ արյունող կարեկցանքի,
Ե՛վ արյունոտ հաղթանակի,
Ե՛վ ծանրագին ուրախության
Բեթեփոփեցյան երգը հուժկու...

Ու եթե դեռ ոմանք պիտի կրկին գրկեն
Ծանոթ թառը
Եվ օրորեն իբրև մանկան, որ... լաց լինի,
Ապա ինքս
Չե՛զ են ուզում իբրև մանկան իմ գիրկն առնել,
Ի՛նձ են ուզում իբրև մանկան իմ գիրկն առնել
Եվ օրորե՛լ,
Եվ օրորե՛լ,
Որ այսուհետ... չթնգթնգաք,
Որ այսուհետ... չթնգթնգամ...

Հ Ա Ջ Ը

Ծա՛տ է շատացել աղմուկն աշխարհում,
Ծատացել այնքա՛ն,
Որ լուսությունը բարկացել է խիստ,
Եվ դրանից է սնդիկը ելնում ջերմաչափն ի վեր՝
Բանտարկված ինչ-որ վիտիկի նման՝
Մեզ վախեցնելով ու վկայելով,
Որ Երկրագունդը թոքերի աճող բորբոքում ունի,
Եվ մենք ամենքս էլ ջերմություն ունենք:
Մեր ջերմությունը
Լուսության սաստիկ բարկությունն է հենց,
Եվ նրա ցասում-բողոքն է նաև

Հա՛գը,
Այս հա՛գը,

Որ կարծես արդեն տիրակալական հուվեր է առնում
Եվ համատարած աշխարհը բռնում...

Ու սաստկանում է այս հագը նաև... ծխից ու մխից,
Ուտի՛չ, թունավո՛ր ծխից ու մխից,
Որ շատացել է աղմուկի չափով,
Քանի որ ծուխը նրա շունչն է հենց...

«Ծուխ էր դուրս ելնում եղեգա՛ն փողից»...

«Օ ծո՛ւխ ծիրանի»...

Իսկ այժմ արդեն

Ծուխ են դուրս փնչում ո՛չ միայն կանայք,

Նույնիսկ ո՛չ միայն աղջիկներն անկոնք.

Ծխող են դարձել իրե՛րը նաև,

Առարկանե՛րը,

Մետաղնե՛րն անգամ.

Ամեն մեքենա ծխով է շնչում,

Ամեն գործարան ծուխ է դուրս փնչում:

Ծխնելուզափն գլանակների ցցելով երկինք՝

Նրանք ծխի հետ տարածում են հազ...

Հա՛գը

Այս հա՛գը

Բռնել է հիմա նաև երկինքը.

Կապույտ երկինքը

Սուր վարակվել է ա՛յն կապույտ հագով,

Որ այլևս արդեն

Միայն մանկական հիվանդություն չէ,

Այլ հիմա նաև երկնայի՛ն մի ախտ,

Տիեզերակա՛ն մի հիվանդություն:

Եվ ամեն տեսակ օդանավերի

Հա՛գը

Այս հա՛գը,

Այս կապո՛ւյտ հագը

Հնչում է հիմա մեր գլխից վերև,

Նաև մեր գլխի վերևից վերև,

Որտեղ ծխում են ոչ միայն ամպեր հնավանդական,

Այլև անիմաց ինչ-որ մի ոռի,

Որի անունն էլ չեն ուզում ասել,

Ինչպես որ չարքին անվամբ չեն կոչում...

Արքա՛ն: Երկների ծխին համաչափ

Ծուխն է խառնրվում ա՛յն հրթիռների,

Որ ունեն ելեք, չորս ու հինգ գլուխ՝

Քաղաքակրթված դևերի նման...

Եվ լուսությունն է բարկանում կրկին

Ու ջերմաստիճան դառնում երկնքին,

Որ տենդի մեջ է
Եվ ում քրտնքի
Անձրև կոչեցյալ կաթիլներն արդեն
Հաճախ են դառնում ախտ սողոմական,
Որ բուժում չունի
Եվ որի ճշան նախանշանը

Հա՛զն է,
Ա՛յս հազը...

Հազի՛ց,
Ա՛յս հազից

Բուժվե՛նք շուտափույթ,
Որ քամի՛ն հազա
Քարանձավների՛,
Խողովակների՛,
Փչակների՛ մեջ
Եվ փողոցային լուսամփոփների կենտ կուպերի՛ տակ,
Հազա մշտական թրթիռով սրտի ու խորհրդավոր՝
Ա՛յն հավերժական սիրահարի պես,
Որ իր գալուստն է ավետում հազով...

Հազի՛ց,
Ա՛յս հազից

Բուժվե՛նք շուտափույթ,
Որ ամեն մի տան դռան մոտ հազա
Ավտոմեքենա՛ն հարմար ու էժան՝
Հրավիրելով մի զբոսանքի,
Որի վերջն ունի «համբույր» գրություն...

Հազի՛ց,
Ա՛յս հազից

Բուժվե՛նք վերջապես,
Որ հազը դառնա տեր ու տնօրեն
Աշխարհի ամեն նավահանգստում,
Կայարաններո՛ւմ համայն աշխարհի,
Նաև երկնքո՛ւմ,
Նաև երկնքո՛ւմ,

Որ Առ՛յնպես ունի լայնացման կարիք:

Երկրին
ու
Երկնին

Թոքերի առողջ լայնացո՛ւմ է պետք...
Ո՛չ թե թոքերի ահեղ բորբոքում...

7. 11. 64
Երևան

Կ Ե Ս Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Բ Ն Ա Ն Կ Ա Մ

Քամին փոշուց ծուխ էր սարքում,
Ծուխ անկրակ,
Ու տարածում պուրա՛կ-պուրա՛կ,
Իսկ դրանից ձանձրանալով՝
Վճռում խաղալ պահմտոցի,
Եվ պահվում էր,
Այնպե՛ս պահվում,
Ինչ գյուղացիք ասում էին «շոգից մեռա՛նք»:

Օրը քակել իր ծալքերը
Ու փռել էր աշխարհով մեկ.
Մի ծալքից՝ շո՛գ,
Երկրորդից՝ տա՛պ,
Երրորդից՝ տո՛թ:
Տառապում էր նույնիսկ օդը՝ դողերոցքից:
Տաքության մեջ զառանցում էր ամեն մի բույս:

Լոռություն էր մի այնպիսի՛,
Սեսն ծերուկ բնությունն էր ուշաթափվել:
Եվ այդ անեղ լոռությունից մանկան մման վախենալով,
Միակ ջուրը՝ աղբյուրը խեղճ,
Կարծես ոչ թե կարկաչում էր առու դարձած,
Այլ հեկեկում-ջղաձգվում...

Ջրով լի դույլն ստիպում էր, որ աղջկա
Բոլոր թոփիչ պահուստները բացահայտվեն՝
Նույնիսկ իրեն վարագուրող հագուստի տակ:

Իսկ ես նաև նայում էի դույլի ջրին,
Որ աղջկա քայլվածքի հետ
Էր ողջ կապույտ մակերեսով
Աջ էր գնում—ձախ էր գալիս,
Ասես լինե՞ր մեկ միաձույլ սկավառակ.
Ջուրն՝ աղջրկա քայլվածքի հետ,
Ջրի հետ էլ՝ երկինքը մով:
Եվ ջուրը չէր ելնում-իջնում,
Կարծես երկինքն էր դույլի մեջ
Գլխապտույտ զգում անվերջ...
Եվ այս ամենն՝ ա՛յն պատճառով,
Որ քունն ինձնից անմեղ տեղը,
Խռովել է ու... լքե՛լ ինձ:

6, 12. 11. 64
Էրեան

Բ Ա Ր Ի Օ Ր

Իմ օրը երեկ աղքատ էր այնքան,
 Նրբան դրախտի նկարագիրը՝ սուրբ գրքերի մեջ:
 Քանի որ լինել նշանակում է մասամբ ունենալ,
 Իսկ ինձ թվում էր, թե չկա՛ էլ սեր,
 Թե դարձել է նա արդեն սովորույթ...
 Եվ երեկ աղքատ ու խեղճ էի ես,
 Չար չէի բնավ, բայց աղքատ էի,
 Անսովեր էի՝ անապատի պես.
 Տա՛լ էի ուզում՝ տալո՛ւ բան չկար:
 Ու ծանր էր մարդկանց «բարի օր» ասել.
 Թվում էր, թե ես այդ «բարի օր»-ով
 Նրանցից ինչ-որ բան եմ հայցելու,
 Որ նրանք պիտի տան չկամությամբ...

Իսկ իմ օրն այսօր այնքան է բարի,
 Նր կարելի է հացի տեղ ուտել,
 Խաղալիքի տեղ տալ լացող մանկան,
 Ծալել՝ իբրև թարմ հրավիրատոմս,
 Բաժանել մարդկանց, որ երբ բաց անեն՝
 Իրե՛նք ողողվեն ցուլով բարության:

— Ծանո՛թ-անծանո՛թ մարդիկ, բարի օ՛ր...

Եվ օրն իմ այսօր այնքան է լեցուն,
 Նր եթե նույնիսկ ինձ գետին զարկեն՝
 Ես կփշրվեմ իբրև... գանձանակ,
 Եվ հարստությունն ու կայքը հոգուս
 Բարի զնգոցով շա՛ղ կգա չորս կողմ՝

Ծփոթեցնելով և ապշեցնելով
 Նաև ջարդողի՛ն,
 Նո՛ւյնիսկ ջարդողին:

— Բարի օր... և ինձ ջարդողի՛ն անգամ...

Եվ կա կանչ արյա՛ն, որով մեր նախնիք
 Դարերի խորքից մեր մեջ են խոսում,
 Մեզ հետ են խոսում մե՛ր իսկ բերանով:
 Եվ կա բնության անմերժ հրավեր,
 Որից ընտանի կենդանին անգամ
 Վայրենանում է հանկարծ վերջստին:
 Արյան այդ կանչն է հիմա իմ բերնում դառնում
 — Բարի օ՛ր,
 Եվ քեզ է ահա հասցեգրելում,
 Քե՛զ, իմ սիրելի՛, ում անմեղ մեղքով
 Ես աղքատ էի երեկ տակավին,
 Ինչպես դրախտը՝ սուրբ գրքերի մեջ,
 Իսկ այսօր՝ բարի՛,
 Իսկ այսօր՝ լեցո՛ւն... Տոլստոյի՛ չափ:

Թո՛ղ թագավորի այդ բարին այնտեղ,
 Նր դեռևս կա թագավորություն,
 Թո՛ղ նույն այս բարին նախագահ դառնա ամեն մի երկրի,
 Աշխարհիս բոլոր պետություններին դառնա վարչապետ,
 Վառելիք դառնա շարժիչների մեջ,
 Իբրոշակ դառնա նավերի համար,
 Ու ճակատագիր՝ ամեն մի մարդու...
 Մենք էլ մտովին, ճամփորդենք սիրով,
 Լինենք ամենուր՝ «բարի օր»-ի պես,
 Եվ ամենուր էլ դասեր տանք սիրո՛
 Ապացուցելով, որ սերն իսկական
 Ընդամենը լոկ փոխում է ձևեր,
 Երբեմն թվում սովորույթ անգամ,
 Մինչդեռ իսկապես նա նույնն է մնում
 Եվ կյանքի միջով, մեր ձեռքից բռնած,

Ապահովարար առաջ է տանում,
Որ հրե խոսքով մուօր ետ հրենք,
Մեր ուսով մղենք ժամանակն առաջ,
Օրվա ճակատից, որպէս հին հուռութք,
Կախենք միեւնոյն զանգը.

— Բարի օ՛ր...

18. 17. 11. 64

Էրեան

Յ Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հանդիպումը բաժանումի սկիզբն է հեւց...

Հանդիպեցինք այդ ե՛րբ արդյոք,
Որ գնում ես, գնում արդեն:

Իմ գտնըվա՛ծ— միա՛կ մակդիր,
Ամենաճի՛շտ բաղդատություն.
Դեռ նո՛ր գտած՝ թռչո՛ւմ ես դու մտքիցս արդեն:

Համ չեն զգում միայն քերնով:

Համ զգում են հոգո՛վ նաև:

Եվ գնո՛ւմ ես, գնո՛ւմ արդեն,

Որ հոչակի անհամությունն իրեն արքա
Ու դարձնելով հոգիս ուստան ու տնքացո՛ղ աթոռանիստ,
Իշխի նաև իմ կեղեքվող ծայրամասո՛ւմ...

Եվ համբուրված իմ շուրթերին դողդողում են սիրո խոսքեր,
Ինչպէս ցողի կաթիլները ա՛յն թփերին,
Որոնց վրա անհոգ քամին դասն է սերտում իր գծությամբ:
Ու ես անվերջ փորձ եմ անում
Իմ թափանցիկ լոռության տակ պահպել մի կերպ:

Քո փեշերը փաթաթվում են գիրգ ծնկներիդ.

Խանգարել են ուզում կարծես, որ չգնաս:

Ծխախոտն է մեջըս հազում:

Ստվերները հոտոտում են հողը կրկին.

Կամենում են կարծես զգալ

Անցած տեղիդ բուրմունքն անանց:
Քաղաքային փողոցների լույսերն աղոտ
Փոշոտ քամուց իրենց աչքերն են շուտ թարթում,
Ինչպես մարդը, երբ ուզում է լաց չլինել...

Պիտի գնա՛ւ...

Պիտի գնա՛ւ,
Որ քանի դեռ չենք հանդիպել՝
Փողոցն այնպե՛ս ինձ կարոտի,
Ինչպես ես քե՛զ:

Պիտի գնա՛ւ,
Որ անխացած սպասումը
Բոլորագիծ քաշի իմ շուրջ՝
Ինձ դարձնելով սուր շատավիղ,
Սիրտըս՝ կենտրոն,
Որ ամեն ուտ իր ստվերով
Տույց տա ժամը՝ պաքի պես,
Ու շրշումով գրընգացնի նույն ժամն էլի.
Որ ես զգամ, ուշացումով,
Թե ինչպես է սահում-անցնում
Կյանքն իմ կողքով,
Ես էլ՝ կյանքի,
Չդիպչելով երբեք իրար:

Պիտի գնա՛ւ,
Որ ես անվերջ իմ մտքի մեջ,
(Թութակի պես կամ անվտանգ խելագարի)
Նո՛ւյնը կրկնեմ.
«Ծատը... գը-նաց, քի-չը մը-նաց»...

Եվ քանի որ պիտի՛ գնաս՝
Դե, շո՛ւտ գնա, որ շուտ էլ գա՛ւ, շատ չմնա՛ւ:
Տե՛ս,
Օրորվող այս լապտերից
Ես մի շող եմ քաշում-պոկում.

Ա՛ն,

Փաթաթիր ցուցամատիդ՝
Իբրև գունեղ մի հուշաթել,
Որ... վայրկյա՛ն իսկ չմոռանաս
Ու... շո՛ւտ դառնաս:
Իսկ քո երգուն քայքի թելն էլ թող փաթաթվի
Մայթի՛ն այս գորշ, այս տա՛նր գորշ և իմ հոգո՛ւն,
Որ... բողբոս էլ (մա՛յթ, տո՛ւն, հոգի՛)
Մեկ վայրկյան իսկ չմոռանանք
Եվ սպասենք քեզ անհամբեր.
Իսկ ոլորուն-կպշուն ձայնը մեր համբույրի
Թող համերգվի այս վիրավոր լռության մեջ
Ու որքացած մեր սեփական ականջներում,
Իսկ հեռվահաս ժպիտները մեր իոխանցիկ
Թող դրոշմեն իրենց վրա ապակիներն այս լուսադող՝
Սպասումի կնիքի պես...

— Ցտեսություն:

Ի տեսություն...

20. 11. 64
Երևան

Բ Ա Ր Ո Վ Տ Ե Ս Ա Ն Ք

Նեպիին, ծննդյան օրվա առթիվ

Ինձնից հեռու էր նա՛:
Ինձնից հեռու էր նա՛,
Ում ես հազա՛ր անգամ անվանել եմ կյանքում. «Իմ մտրիկը»:

Նա՛,
Ով բոլորովին անծանոթ էր նաև,
Կարծես կարոտ էր սուկ,
Լոկ ցնորք էր:

Եվ ամե՛ն ինչ կարծես հետքս բողոքում էր...
Կարծես լեռներն անգամ շուռ-մուռ էին գալիս՝ իրենց ստվերներով,

Ինչպես ամեն գիշեր կողքից կողք է շրջվում մեզանից ամեն մեկը,

Երբ քունն անհանգիստ է ու երազն է խառնակ:
(Թվում է, թե հիմա է՛լ չպիտի լինի ո՛չ մի ստվեր).
Պիտի լինի լոկ շո՛ղ,
Եվ շառավի՛ղ լինի,
Ծառա՛յլ լինի,
Լինի երազներով խորանարդված խոր քուն,
Որովհետև...
Հիմա ես ասում ես սիրով.

— Բարո՛վ տեսանք իրար,
Հազա՛ր բարով:

Բողոքում էր նաև,
Բողոքում էր նույնպես,
Բողոքում էր նույնիսկ... հորիզոնը՝

Իր մեռության՝ն համար,
Մեռակության՝ն համար,
Միայնության՝ն.
Այնտեղ ժամադրվում ու հանդիպում էին երկիրն ու երկինքը,
Միա՛յն ու լոկ նրանք, ուրիշ ո՛չ մի հոգի:
(Է՛լ մեռակ չեն նրանք.
Հանդիպել ենք և մե՛նք՝
Մեր հանդիպմամբ կծկած մեզ բաժանող անձիր հորիզոնը):

— Բարով տեսանք իրար,
Հազա՛ր բարով:

Մթնած երկնքի մեջ, իրիկնացող օդում,
Ինչ-որ անտես ձեռքով ինչ-որ անտես բան են գողում:
Ջրգողությամբ հիվանդ սև ամպերը
Ապաքինվում կրկին ու լալիս են ուրախ,
Եվ անձրևը հիմա թթխմորվում,
Ուռչում-ուռճանում է պղպըջոցով:
(Թող խմորվի նաև երջանկությունը մեր
Ու դառնա հաց օրվա, ձրի նպա՛ստ՝
Իրար փնտրողների,
Բայց չգտնողների,
Միջահատված-զատված խեղճ սիրազույգերի
Ու սիրազուրկերի ափի վրա):

— Բարո՛վ տեսանք իրար,
Հազա՛ր բարով:

Երեքշաբթին, վախո՛վ, վիզն է քորում՝
Կամենալով խոսել օրենք-իրավունքից:
Բայց կիրակին, հեռվի՛ց, բիթում նրան,
Բայց կիրակին նրան սաստում է խեթ.
(Թող մե՛կ շաքաթվա մեջ զո՛ւյգ կիրակի լինի)...
— Բարո՛վ տեսանք իրար,
Հազա՛ր բարով:

Մ Ն Ա Ս Բ Ա Ր Ե Վ

Իր վերջն ունի ամեն հեքիաթ,—
Ես դա գիտեմ այնքան վաղուց,
Որքան անունն ամիսների:
Եվ հասել է հրաժեշտի պահն անողորմ...
Պառկոտել եմ լեռներն ահա՝
Դեմքը ցցած դեպի երկինք,
Ու դաշտերն եմ ահա պատկել՝
Բերանքսիվայր, մեջքը տնկած,
Որ... ոչնչով չմասնակցեմ
Հրաժեշտին մեր այս տրտում:

Ծուռ ժպիտով պարտակում եմ տխրությունըս
Ու նայում եմ մի հայացքով,
Որ հատուկ է մողեսներին.
Ո՛չ դեպի դուրս,
Դեպի նե՛րս եմ կարծես նայում:
Եվ քշում եմ ինձնից մտքեր,
Ինչպես ամուսն տոթ-խեղդողին
Գլխով ճանն է քշում խեղճ ձին...

Ա՛խ ճանճերն այս, որ չեն պոկվում ինձնից հիմա,
Ինչպես ահա քեզ մեկընդմիջտ առևանգող
Այս գնացքը՝ զույգ զծերից այս երկաթե,
Ինչպես ահա տոտիպությունն՝ այն խնձորից,
Որ խաճում ես,
Ռոովհետև... լացն է գայիս զուցե և քո...

Գիտե՛մ.

Միրուց խոսելն արդեն

Հավասար է հիմարության,
Սակայն ինչպե՛ս վերջին անգամ կրկին չասեմ,
Որ ինձ հիմա,
Նո՛ւյնիսկ հիմա
Թվում է, թե ամբողջ կյանքում
Ժամանակըս ես վատնեցի
Ամե՛ն տեսակ (լուրջ թե դատարկ) բանի վրա
Եվ... ժամանակ է՛լ չմնաց
Մի լա՛վ-կարգի՛ն-կո՛ւշտ սիրելու.
Ինչ որ եղավ՝ նախափորձ էր կարծես միայն,
Ընդամենը... սևագրություն,
Որ դեռ պիտի
Սրբագրվեր-մաքրագրվեր ներշնչանքով,
Մինչդեռ ահա պահն է հասել,
Որ քեզ ասեմ.
— Մճաս բարև՝...

Էլեկտրական լույսերն ասես լինեն փողեր
Մի վիթխարի նորահնար երգեհոնի,
Եվ քամին է նրանց հիմա աշխատեցնում՝
Նվագելով մի այնպիսի՝ ողջերթ ցավոտ,
Որից նույնիսկ սարսըռում է
Մետաղալարն էլեկտրական,
Ու դողոցով օդն է մղվում
Դեպի առաջ. ո՛ր՝ չգիտի՛:
Իսկ դու բնավ չե՛ս էլ լսում.
Է՛լ այստեղ չես դու մտովին,
Այլևս դու հեռո՛ւ ես շատ
Եվ դրանից այնպես ես դու գեղեցկացել,
Ինչպես մանուկն իր քնի մեջ:

Ես կհիշեմ քեզ հենց այսպես՝ գեղեցկացա՛ծ:
Իսկ իմ դե՛մքը...
Երբ դավաճան ինչ-որ երազ
Երբևիցե ինձ վերստին հիշել տա քեզ,
Աղաչո՛ւմ եմ.

Դու մի՛ հիշիր իմ դեմքն այնպես,
Ինչպիսիսն է այս վայրկյանինս:
Անշարժացած մկաններս վկայում են անհատելի,
Որ դա կարծես դե՛մք չէ հիմա,
Այլ մի... դիմա՛կ:
Եվ իզո՛ր են ծիծաղեցնել փորձում սրա՛նք՝
Այս սյունեքը.
Ես չա՛յլ գիտեմ,
Որ ս՛յս պահին հմ՛ ժպիտը
Գիտի դառճա մի դասական ծառածուանք...

Բայց... քանի դեռ բոլորովին դու չես մեկնել,
Ես չե՛մ շրջվի:
Է՛հ, կան բաներ,
Որ շրջվելու իրավունք էլ չունեն կյանքում:
Ի՛նքո խորհիւ, թե իսկապես ի՛նչ կլինեն,
Եթե շրջվել կամենային... կամուրջները կորաքամակ,
Ղր իմանան, թե... երկինքը ի՛նչ գույն ունի...
Ես չե՛մ շրջվի՝ քանի դեռ դու չես հեռացել
Սահմաններից... մեզ կամրջող հիշողության:
Այնժամ միայն ես քեզ կասեմ.
-- Մնաս բարև՝...

24. 11. 64

Նրբան

Ի Ն Չ Ն Ի Ց, Թ Ե Զ Ե Չ Ն Ի Ց

Թեպետ ինքըդ մորիկի մեջ,
Ինքդ էլ մորիկ մի կատաղի,
Այսուհանդերձ մի՛ մոռացիր, որ մորիկը
Տանիքներ է քշում-տանում
Ու ջարդում է ծառեր հսկա,
Բայց արմատից ճա չի հանում
Ո՛չ խոտ, ո՛չ էլ դաշտածաղիկ...

Երբ վերջանա մորիկն այս մեր,
Ես կգնամ, հավանաբար, զբոսնելու
Եվ կավերեմ իմ ոտքերով
(Յուրատեսակ մորիկի պես)
Ծաղիկների միատեսակ սանրվածքը
Եվ թերևս կխաղաղվեմ՝
Մտածելով,
Որ ավագ է իմ սերն ինձնից.
Նա ծնվել է ինձնից առաջ՝
Իմ հեռավոր նախնիների սրտի խորքում,
Նրանց գործոն շնչերակի դադարի մեջ,
Բայց և ինձնից շատ ավելի կրտսեր է ճա
Ու երբևէ չի ծերանա՝
Փոխանցվելով...

Իսկ քանի դեռ փոթորիկը չի վերջացել,
Թույլ տուր գոնե կառչել հիմա ձեռքին քո պաղ,
Որ մեկնում ես անցատումի այս վայրկյանինս
Այնպե՛ս դյուրին և անտարբեր,

Ինչպես օտար մեկի հետ են ծանոթանում:

Բայց մենք... ա՛յլ կերպ ծանոթացանք,
Եվ այս ձեռքն էր նուազինը,
Ինչ քեզանից ունեցա ես:
Նա դառնում է և վերջինը,
Ինչ քեզանից ինձ է մնում:
Եվ արժի՛ նա երախտագետ իմ սեղմումին...
Իսկ մենք հիմա, այս մրրիկով, անջատվում ենք,
Որ... ձեռքն իմ այս
Այս սեղանից մնա առկախ,
Ինչպես... լքված մի առարկա...
Որ... աչքերիս հին թաղանթին
Մնան նոր-նոր կարկատաններ...
Ու դաջվածքներ՝ մարմնին և՛ իմ, և՛ գուցե քո,
Ինչպես մարմնին ա՛յն կենդանու,
Որով բախտ ու սեր են փորձել
Եվ որին մեր նախնիները
Մկրտել են «զատիկ» անվամբ...

Անջատվո՛ւմ ենք...

Բայց մեզ վրա, անջատ-անջատ,
Թող իրե՛րը չգերիշխեն
Եվ չհեծնեն դեպքե՛րը մեզ:
Թող դու գտնես գոնե այնքա՛ն,
Որքան, ասե՛մ, ես եմ կորցնում...
Թող ծառերը իրենց ճոճքով
Մշո՛ւշն ավլեն մեր կտրելիք ճանապարհից,
Ու հա՛րթ լինի ճանապարհն այդ՝ գոտո՛ւղ նման,
Հենց ա՛յն գոտոուղ,
Որ չգիտեմ և չգիտես՝ ո՛վ կարձակի...

Իսկ մե՞ծ քա՞ն ես դու համարում
Մեր նետվելը այսկողմ-այնկողմ:

Օ՛ֆ, հասկացիր գոնե հիմա՛.

--- Երբ ինքներս ենք փախչում մեզանից՝

Մոտենում ենք մեզ առավե՛լ...
Ծայրամաս ենք ուզում գնալ,
Բայց խրվում ենք մեր կենտրոնո՛ւմ...

Գոնե հիմա՛ դու հասկացիր...
— Լուսավոր է կյանքը թվում
Լոկ այնքանով և լոկ այնժամ,
Երբ գնում ես քեզնի՛ց այնկողմ,
Ազատվում ես ինքրդ քեզնի՛ց...

Իսկ դու հիմա, հեռանալով,
Ազատվում ես ինքրդ քեզնի՛ց,
Թե՛ ընդամենն ինձանից միայն...

24. 11. 64

Երեան

ԱՆԱՀԻՏ

Դու օտա՛ր չես, չէ՞:
Բայց ի՞մն էլ չես, հա՛...

Դու՛ վաղընջական հինավուրց բագին
Փակ շրթունքներով ու բաց աչքերով:
Ես՛ մի հեթանոս առայսօր ծպտյալ:

Դու՛ հավերժարուխ աղբյուր տասնակույնք,
Քո ամեն մատից՝ մի ակըն ցայտիչ:
Իմ թաց աչքերի երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ըմպում եմ ես քեզ:

Անշարժությունը քո պիրկ ոտների
Դարձնում է ինձ մի խոյ օրուկված,
Որ պտտվում է չորսքուրքը քո
Ողջ շառավիղով իր ոտնակապի:

Նա արածում է այն, ինչ աճում է
Լր ոտների տակ և քո շուրջքուրք,
Բայց որոճում է... միայն քե՛զ ու քե՛զ
Ո՞ր բառաչում է... միայն քե՛զ համար:

Քո ստինքները պարսատիկի պես,
Սպառնում են միշտ ջարդել զանգն իմ պիղծ,
Երբ ասում եմ քեզ, որ դրանք հետո
Կաղապար դարձան... սկիհի՛ համար:

Թվում է, թե քո շրթունքների փակ
Ուր որ է պիտի բարկությամբ բացվեն,
Երբ ասում եմ քեզ, որ հետագայում
Քեզ գրկել տվին մի... թո՛ւխ մանուկի:

Բայց ամեն անգամ խաղաղվում ես դու,
Երբ թաց աչքերիս երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ես ըմպում եմ քեզ:

Եվ հասկանում եմ, որ ամեն անգամ,
Երբ սկսվում է ձո՛ր դարագլուխ,
Ջանում եմ մի կերպ խուսափել քեզնից,
Իսկ դարագլխի ավարտի վրա՝
Ինքնակամորեն քե՛զ վերադառնում:

Անտեսանելի վերջի՛դ ժամանակ,
Անտեսանելի սկզբի՛ս պահին
Հանդիպում ենք մենք ու... տրվում իրար:
Եվ չե՛ն տեսնում մեզ... չի տեսնում նույնիսկ
Ո՛չ պատվանդանըդ,
Ո՛չ կոշկատակըս...

Դու դիցունի՛ ես:
Բայց և ի՞մն ես դու...

9. VII. 61

Սոսկվա

24. II. 64

Երևան

Ե Ր Ե Ն Ա Յ Ի Լ Ե Ջ Վ Ո Վ

Ասում են, որ մենք՝ տղամարդիկրս,
Անչափ նման ենք երեխաների,
Միայն թե, իբր, մենք այդ չգիտենք:
Ես գիտե՛մ, գիտե՛մ,
Ծա՛տ լավ էլ գիտեմ:
Բայց ես չգիտեմ, թե ո՛վ է ասել,
Որ եթե մայրը ծեծում է նույնիսկ,
Երեխան դարձյալ «մայրի՛կ» է կանչում:
Ես եմ, սիրելի՛ս, հենց այդ երեխան
Ու նրա լեզվով անա վերստին
Քեզ եմ ձայն տալիս օգնության կանչով.
— Ցավում է, ցավո՛ւմ...

Ինչ քեզ իմ մասին ոչինչ չեմ պատմել
(Մեզ ժամանակը երես չի տալիս):
Այսքա՛նը գոնե իմացիր այսօր.
Մանուկ ժամանակ
Մանուկին էի ես մեջքս ատում
Ու նախանձելով ես սիրում էի մեծերին միայն:
Իսկ հիմա իմ մեջ մեծին եմ ատում
Ու սիրում իմ մեջ ապրող մանուկին,
Որ կծկվել է, բայց ամբողջացել:
Հիվանդանում է նա հիմա հաճախ,
Բայց վերստին է նա առողջանում,
Երբ ցավն ուզում է սնվել... արցունքով:

Ու երբ որ ցավն է արցունքով սնվում,
Ես էլ մանկան պես ու նրա լեզվով,

Ինչպես քեզ հիմա,
Ձայնում եմ կրկին
Կանչով օգնության.
— Ցավում է, ցավո՛ւմ...

Իսկ դու ինձ ասա փաղաքո՛ւշ խոսքեր
(Ի՛նչ փույթ, թե նրանք չեն կատարվելու):
Հեքիաթներ պատմիր՝ իրար խառնելով
(Ես չեմ ջոկելու ճիշտը կեղծիքից):
Ու եթե ոչի՛նչ էլ չի մնացել,
Կրկնիր ա՛յն խոսքը, որ չի հնացել
Եվ որ իսկապես շա՛տ լավ է օգնում:
Չե՛ս հիշում:
Հիմա հիշեցնեմ:
Ասա,
Որ... կմեծանամ ու կմոռանամ:

Կրկնիր այդ խոսքը.
Նա շա՛տ է օգնում՝
Թալիսմանի՛ պես,
Հուռուքի՛ նման...

11. 111. 64

Գիհրահ

Խ Ե Ն Թ Ը

Ես նայում եմ իմ ձեռքերին,
Այնպես նայում,
Որ դիտողը ինձ կարող է խենթ համարել:
Նայում-նայում,
Ծռու ու մուռ եմ տալիս այնպե՛ս,
Քաճկըստի կ եմ կարծես խաղում առանց քարի:
Ու նրանց հետ խոսում եմ ես
(Նաև խոսում)
Եվ համարյա նույն լրջությամբ,
Ինչպես Համլետ արքայազնը՝ լերկ գանգի հետ,
Որովհետև.. այս ձեռքե՛րը,
Միայն սրա՛նք,
Սրա՛նք պիտի լոկ վկայեն
Թե եղե՛լ էս դու իմ գյանքում,
Ունեցե՛լ եմ երբևէ քեզ,
Զգացե՛ եմ քեզ՝ համի պես,
Ապրե՛ եմ քեզ՝ ցավի նսան:
Այս ձեռքե՛րը,
Միայն սրա՛նք,
Սրա՛նք պիտի լոկ վկայեն,
Որովհետև...
Ինձ եղածը մտապատրաստ է լոկ թվում,
Կարդացած վե՛պ,
Ռոբիշ մեկի պատմած երա՛զ:
Ու չեմ հիշում միևնչև ննգամ քո դեմքը ես.
Տանջում եմ ինձ,
Չեմ ներում ինձ,

Ատում եմ ինձ,
Բայց... չե՛մ հիշում դեմքդ ննգամ:

Միայն սիրված ու համբուրված աչքերը քո,
Ասես քեզնից ընդմիջտ պոկված,
Որ նայում եմ՝ ինձ եմ նայում,
Որ թեքվում եմ՝ գտնում եմ ինձ,
Այն Բախտի պես,
Որ դիցապաշտ հին հույճերին
Հետևում էր ամբողջ կյանքում...

Անգամ դեմքդ չեմ հիշում ես...
Ու թե հիշե՛մ՝
Միայն սրա՛նք,
Լոկ ձեռքե՛րըս պիտի հիշեն
Ու վկայեն, որ դու կայի՛ր,
Որ դու եղա՛ր:
Իրո՛ք եղար:
Միայն սրա՛նք պիտի հիշեն
Քո ձևե՛րը,
Մա՛շկը,
Հո՛տը,
Սարսո՛ւղը,—
Քեզ՝ ամբողջովի՛ն...

Ու չնայե՛մ իմ ձեռքերին
Ու չնայե՛մ այնպե՛ս, այնքա՛ն,
Որ դիտողը ինձ կարծի... խենթ:

Ու թե կարծի՛ կսխալվի՛...

11. III. 64
Դիլիշան

ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Ավելի շուտ է ապագան գալիս,
Քան թե՛ չուզելով՝ մեկնում է ներկան:
Եկել ես... այդպես:
Ու ես՝
Ծփոթված-շաղված ժպիտով
Ժպտում եմ անվերջ,
Ծարունակ ժպտում՝
Բուդդայի նման...

Ու գարմանում եմ,
Զայրանում նաև,
Որ երջանկության մրցանակ չկա
Համայն աշխարհի ո՛չ մի անկյունում:
Իսկ եթե նման մրցանակ լիներ,
Հիմա դափնեկիր ե՛ս կդառնայի,
Եվ ողջ աշխարհը՝
Դարձած ցուցամատ,
Ի՛նձ պիտի նշեր բարի նախանձով,
Քիչ կակազելով բարի նախանձից.
«Տե՛...սե՛ք ա՛շ...խա՛ր...հի՛՝ երջանիկ մարդուն»:

Իսկ երբ աշխարհի երջանիկ մարդն է սկսում խոսել,
Լսում է նրան... տարե՛րքը նույնիսկ:
Եվ գուր մի կարծիր,
Թե սովորական մի ձյուն է տեղում:
Չէ՛.

Ես պարզապես «սեր» բառն եմ հիմա հողովում մտքով,
Եվ դա հնչում է իբրև հրաման,
Որ մեծափաթիլ ձյունն էլ հողովվի պարզ ու վեհորեն,
Եվ նրա ճոխնչն իմ ոտների տակ ինձ շփոթեցնի՝

Մի՛շտ հիշեցնելով մի բան,
Որ իսկույն չի մտաբերվում
Ու երկա՛ր-երկա՛ր մտածելուց վերջ
Գլխի ես ընկնում, հասկանում հանկարծ,
Որ խնդությունից
Սիրտը ճխում է հենց այս նո՛յն ձևով...

Եվ գուր մի՛ կարծիր,
Թե մատախողն է ձորն ի վեր ելնում՝
Դեպի ետ հոսող ջրվեժի նման,
Դրա համար էլ դանդաղ-ճանրորե՛ն:
Չէ.
Ե՛ս եմ կրկին շնչում ձորն ի վեր՝
Քնքշանքի խոսքեր արտաբերելով:

Եվ գո՛ւր ես կարծում,
Թե համն ես առնում նորելուկ գարնան,
Եվ որ հալոցքի օրերն են հասել,
Եվ որ ծառերը պիտի աննկատ պտկեն նորից-նոր:
Չէ՛.

Ե՛ս եմ դարձյալ վերամկրտում
Նորադարձ սերըս իմ տաք շնչի մեջ,
Եվ դրանից է
Կոսպաշտ ձմեռն իր քեռր բարձած
Փախուստի դիմում ճամփով հալոցքի,
Եվ դրանից է ծառն էլ սկսում
Լնդերքը ճեղքել՝ երեխայի պես,
Եվ ասում հանել՝ բողբոջի տեսքով...
Ավելի շուտ է գարունը գալիս,
Քան թե՛ չուզելով ձմեռն է մեկնում:
Դո՛ւ էլ, սիրելի՛ս, եկել ես այդպես,
Եվ եկել, կարծեմ, իմ հրավերով կամ հրամանով,
Որ ուրիշ բան չէ
Քան «սիրելի» բայի խոնարհումը լուռ...

15. III. 64

Գիլբերտ

Կայուն ցեխն է հովեր առնում իշխելու:
Եվ ձների մարմնի վրա վտակները հալոցքի
Իրենց հունով բաց են անում նորանոր
Երակներ ու զարկերակներ սև ու տաք.
Սկսվում է մի նոր գարուն անհատա՛կ ու անհատա՛կ՝
Երազի մեջ մեզ պատահող անկումի՛ պես անհատակ...

Ինչքա՛ն կուգես «հարկավոր չե՛» գողգողա.
Ինչքա՛ն կուգես թող ուղեղդ երկմտանքի սև ջերմից
Ջրան պես հալվի,
Դառնա պաղած թանապուր.
Ինչքա՛ն կրու ես խաչ ու իր վրադ
Քո սեփական արյունով,—

Մինևո՛ւյն է.

«Հարկավոր չե՛»-ն իր իսկ կամքին հակառակ,
Ինքն իրենից թաքուն անգամ՝

Ի վերջո

Վերափոխվում ու դառնում է «ի՛նչ ուզում է թող լինի»
Որովհետև... մարդը մա՛րդ է, ո՛չ թե քայլող գաւափաբ...
Որովհետև... «չէ որ»-ները նո՛ւյնպես քե՛ն են ուզում...
Որովհետև... ինչո՞ գարնան վտանգավոր հոտ ունես.
Որովհետև... ինչս էլ գարնան վտանգավոր այդ հոտից
Միշտ զգում եմ գլխապտույտ,
Որ տևում է ամիսներ...
Որովհետև... պայ տվե՛լ, այո՛,
Ռե՛ի՛ց կուգես դու պարտվի՛ր,
Սակայն ո՛չ թե ինքդ քե՛րհից.
Ինքդ քեզից պարտվելով՝
Դու դառնում ես փտր ծամոն
Կամ ինքնաթափ պատի ծեփ
Եվ ոչ նույնիսկ մի մեքենա,
Կե՛ք մեքենա՛ խելացի,

Որ կուգեի՛ իրոք դառնալ,
Բայց ի՛նչ անես, ի՛նչ անես,
Եթե բնավ չի՛ ստացվում, ի՛նչ անես:

Գ Ա Ր Ն Ա Ն Վ Տ Ա Ն Գ Ա Վ Ո Ր Հ Ո Տ Ը

— Հարկավոր չե՛,— ասում եմ ես ինքքս ինձ,
Ասում եմ ես մտքիս մեջ
Ու մեկ-մեկ էլ՝ գծի նման՝ բարձրաձայն:
Հարկավոր չե՛ այս նոր սերը ո՛չ մեկիս՝
Ո՛չ քեզ, ո՛չ ինձ:
Ո՛չ մեկիս...

Բայց ակամա դերասանից (հասկանո՛ւմ ես, ակամա՛),
Հա՛, ակամա դերասանից ո՛վ է դժբախտ առավել...
Եվ կույր ձեռքս
Կույրին հատուկ խարխափումով ու դողով
Հեռվից-հեռու ձեռքդ, մեջքդ կամ աչքերդ է որոնում
Եվ մոլեգին շոշափումով կարծես նրանց վրայից
Զնջում է իմ «հարկավոր չե՛»-ն տառ առ տառ...

Վա՛յ քեզ, թշվա՛ն երջանկություն,
Տանջանքի հո՞ղը գլխիդ:
Մի՛թե նրա չափ էլ չկաս, որ չտանջես ինքդ քեզ,
Որ մոռանաս «միթե»-ները,
«Զէ որ»-ները քո երկասյր
Եվ անձնատուր լինես ինքդ քո ընթացքին
Գարնան պես:

Իսկ գարո՛ւնը...

Արձակվում է ճամփաների պաղն արդեն:

Է՛ղ ի՞նչ մնաց, որ ի՞նչ անեմ, սիրելի՛ս:
Մ՛նաց գոռա՛լ, թե երկուսիս՝ ինձ ու քեզ,
«Հարկավոր չե՛»-ն հարկավոր չե՛ իսկապես.
Մե՛նք ենք իրար հարկավոր...

17. III. 64
Գիւլիան

Ջ Ի Թ Ա Պ Տ Ղ Ի Ծ Ա Ռ Ը

— Ուրեմըն չե՛ս գալիս,—
Իմ իսկ տված հարցին
Ինքս եմ պատասխանում խոցված հպարտությամբ.
— Ի՛նքըդ գիտես...

Իսկ դու

Ինքդ էլ գիտե՛ս արդյոք, որ խուսափման ուղին
Կյանքում գուցե կարճն է ճամփաներից բոլոր
Եվ նույն տեղն է քերում արագորե՛ն, նորե՛ն:
Ուրեմն էլ ինչո՛ւ ես զուր խուսափել ջանում:

Մոռացե՛լ ես գուցե:

Բայց դու գիտե՛ս հաստատ,
Որ ես մոռացության բոլոր օրենքներից
Մեկն եմ լուրջ ընդունում՝
Ա՛յն, որ սահմանել է հպարտությունն ինքը,
Երբ խոցել են սրան՝ զազանի պես:
Իսկ ես... ու քեզ խոցե՛լ ինչ-որ բանով:

Եվ մի՞թե չես տեսնում դու իմ քնքշությունը
Եվ իմ մեղմությունը դեռ չե՛ս զգում միթե:

Ա՛խ այս քնքշությունը, որ ինձ կապտել է,
Ինչպես Գուլիվերին՝ թզուկները...

Ա՛խ այս մրրկանման մեղմությունը,
Որով պաշարված եմ և օղակված այնպես,
Ինչպես մայրցամաքը՝ օվկիանոսով:
Ա՛խ այս «ախ»-ը նաև,

Որ կպել է լեզվիս
Անթրոսթյան ծնած փառի նման,
Եվ ինձ կպատճառեր սրտախառնուք, անշո՛ւշտ,
Թե չլիներ համիդ Աշխար-մնացորդը,
Որով փաթաթվում եմ ես սրբորե՛ն, նորե՛ն՝
Առանց հաղորդություն սպասելու հույսի:
Թե չլինե՛ր համիդ Աշխար-մնացորդը...

Իսկ դու գիտե՛ս արդյոք, որ դո՛ւ բնավ դո՛ւ չես.
(Ո՛չ զարմացած նայիր, ո՛չ ծիծաղիր):
Հաստատ գիտեմ, որ դու դարեր առաջ
Զիթապտղի նազուն ծառ ես եղել,
Հետո (ի՞նչ իմանամ, թե քանի՞ դար հետո)
Երկրորդ անգամ կրկին աշխարհ գալիս
Կին ես դարձել արդեն...
Գիտե՛մ, հաստատ գիտեմ,
Թե չէ այդ ինչի՛ց է, որ քո շրթունքները
Հասուն ձիթապտղի համ են տալիս...

Հիմա ի՞նչ ես ասում. դու չե՛ս գալիս:
Ի՞նչ է, կամենում ես, որ ես մեռնեմ
մի անպտո՛ղ ծառի դանդա՛ղ մահո՛ւյ՝
Երկա՛ր հոգեվարքիս ողջ ընթացքում
Սնվերջ երազելով ձիթապտղի մի ծառ՝
Հեռո՛ւ-հեռո՛ւ ինձնից,
Քո՛ չափ հեռու...

17. III. 64
Գիիշահ

Ա. Ն. Ք. Ն. Ո. Ի. Թ. Յ. Ա. Ն. Դ. Ե. Ղ. Ա. Տ. Ո. Մ. Ս.

Ոչի՛նչ այնպես ինձ չի հուզում,
Ինչպես մի հարց միամիտ.
Խավարն ինչո՞ւ մաշեցնել,
Գիշերն ինչպե՛ս լուսացնել,
Եթե սրտիդ ճկումն էլի
Թույլ չի տալիս մտնել քուն...

Տե՛ս, ցղային այս անտառը
Հանգստացավ ինքն իրեն՝
Իր հեթական նոպան ապրած՝
Տառապած ու պարտասուն:
Իսկ ջրերը,
Հար տանջվելով անքնության բիրտ ձեռքից,
Բարձունքներից ցած են նետվում՝
Ինքնասպանի մոլուցքով,
Բայց, կատվի պես,
Միշտ բնկնում են իրենց ճկուն թաթերին
Եվ. մի վայրկյան շնչակտուր, ժլավում են քիչ հետո
Ու լուռության մեջքի վրա նո՛ր ու նորից փակցընում
Իրենց տենդոտ զառանցանքը՝
Խոտվության կոշի պես...

Իսկ ես՝ ներկա, մինչ հայացքս՝ բացակա,
Օտարվում եմ ինքրս ինձնից,
Ինքրս ինձ չե՛մ ճանաչում:
Զլախտավոր ինչ-որ խոհեր,

Ինչ-որ մտքեր ընկնալոր
Թարտում են, ընկնում-ելնում՝
Կարծես ո՛չ թե գլխիս մեջ,
Այլ... հեռավոր Լուսնի վրա կամ Մարսի...
Մեռելներն են ինձ այցելում՝
Կերպարանքով երազի,
Ու չեն թողնում, որ գրուցենք երկուստեք.
Իրենք իրենց մեհախոսում են անձայն,
Ապա թողնում-հեռանում են,
Որ ես լսեմ քիչ հետո,
Թե ինչպես է երկախոսում ճեպընթացը քքի հետ,
Թե ինչպես են երկախոսում խոհուն ծերպն ու սուր քամին,
Թե ինչպես են ջղաձգվում ա՛յն գեռերը հորդաջուր,
Տրոնց երբեք ես չեմ տեսել,
Ո՛չ, տեսել եմ... քարտեզին...
Հետո ինչ-որ արվարձաններ,
Ասես տված իրար խոսք,
Լերշավում են,
Որ կենտրոնի տեղը իրենք գրավեն,
Դրանով էլ հենց, իբր թե, արագացնեն ապագան...
Իսկ նույն պահին
Ինչ-որ ձայներ իմ կենտրոնում սեփական
Ընդդիմախոս այլ ձայների հայրն ու մայրն են անհծում...
Հետո ինչ-որ անո՛ւշ մի ձայն, անվստա՛հ ու տխրագի՛ն,
Հայցելու պես պահանջում է, որ փորձ անենք չսիրել,
Այլ միշտ մնանք բարեկամներ մերձավոր...
Հետո՛... Հետո՛...
Կարծես թե ես պառկած եմ հենց ի՛նձ վրա
Եվ ինձ վրա ի՛նքըս պառկած,
Ի՛նձ ճմլելով-ճզմելով՝
Հանգստանալ եմ ուզում...
Պարզ չե՛,
Որ ինձ էլ չի հուզում այն հին հարցը միամիտ,
Թե գիշերը ինչպե՛ս պիտի լուսացնեմ,
Թե խավարը ինչո՛վ պիտի մաշեցնեմ,

Երբ աչքերիս չի մոտենում քունն անգութ:
Պարզ չե՛ արդյոք.
Ինքըս պիտի, այսպե՛ս, պառկե՛մ ինձ վրա
Եվ ինձ վրա ի՛նքըս պառկած,
Ի՛նձ ճմլելով-ճզմելով՝
Հանգստանամ փառավո՛ր ու փառափե՛ղ...

17. 111. 64

Գիլիշան

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀՈՒՅՍԸ

Վախենում եմ վաղ զարունից, որովհետև, ճիշտն ասած,
Վախենում եմ, որ չքացվի՛, այլ... տրաքի՛ սիրտըս գոց...
Վախենում եմ սիրահարվեմ վերջին անգամ՝ մահացու,
Եվ առաջին անգամ մերժվեմ իմ այդ վերջին սիրածից...
Վախենում եմ, որ մոռացած նախկին փորձ ու նախկին դաս՝
Տանջանքի մեջ նորից միավեմ ու դուրս չգամ՝ մեխի պես...
Վախենում եմ...

Բայց զարունն է անվախորե՛ն մտենում:
Խուժան քամին խելքի գալիս վերջապես
Ու դառնում է լուրջ ու խոհուն սերմնացան.
Մար ու ձորում նա զարթոնք է շաղ տալիս:
Արևն ինքը՝ մեծ մոր նման՝ ձյան վրա
Այստեղ-այնտեղ կարկատաններ է գցում:
Հողն օրեցօր կարծես դառնում է յուղոտ,
Ու գոլորշին գրգռում է ախորժակ
Բողբոջումի՛, Բեղմնավորման
Ու սիրո՞

Կենդանո՛ւ մեջ,
Բույս ու ծառի՛

Եվ սրտի՛...

Եման ցրերն ասես ոչ թե ջուր լինեն,

Այլ գարեջո՛ր,

Պղպջացո՞ղ գարեջուր:

Եվ արթում է շրջակայքում ամեն ինչ՝

Մարդ ու գազա՛ն,

Բույս ու մրջյո՛ւն,

Սիրտ ու ծե՛րպ:

Եվ արթում են՝

Խմած կամ թե չխմած.

Եվ արթում են միայն տեսքից կամ հոտից:

Եվ արթում են...

Ես կրկնակի՛ եմ արթում.

Նաև քեզնի՛ց՝

Լիքված կամ թե չսիրված,

Ի՛նչ քեզնի՛ց՝

Լոկ քո տեսքի՛ց ու հոտի՛ց...

Եվ ո՞ր կորչեմ գլուխս առած,

Ո՞ր կորչեմ:

Հիացմունքից ու սարսափից կարկամած,

Նարծես հանկարծ հողախախտված

Ու ջլատված ակամա՝

Անտարբեր եմ ես ձևանում,

Դեմքըս փոխում դիմակով,

Բայց... շոյելու և շոյվելու մի ցանկություն կատաղի,

Ակնհայտի մի տենչանքի դավադրություն ծպտրված

Իմ աչքերի մատնըչությամբ բացահայտվում ի վերջո

Ու տրվում եմ դատապարտման...

Դատը պիտի դո՛ւ վարես:

Եվ մի՛թե դու

Մեղմացուցիչ դեպք հանցանաց չես գտնում

Թեկուզ և իմ ա՛յս վախի մեջ խոստովանված կամովին,

Գեթ գարնա՛ն մեջ այս խելքահան,

Այս խելքահան օդի՛ մեջ,

Նաև... քո՛ մեջ՝

Քո պահվածքի՛,

Քո նայվածքի՛,

Հոտի՛ մեջ...

Տե՛ս, հայցում եմ,

Բայց և մի քիչ սպառնում.

Չհասցրեն՝ ս բողոքարկման, դատավո՛ր...

18.111. 64

Դիվիզան

ԿՈՐՉԻ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ

Քեզանից հեռու
 Ես ապրում էի
 Կարծես թե ինքս էլ ինձանից հեռու:
 Ինձանից հեռու
 Դու ապրում էիր...
 Դու չէի՞ր ապրում բուսական կյանքով:
 Իսկ հիմա,
 Երբ մենք մեկտեղ ենք արդեն,
 Կարծես թե նորից շերտ-շերտ միացանք,
 Որ ամբողջանանք՝ նարնջի նման՝ մի կեղևի մեջ
 Եվ հյութավորվենք
 Հողի ավշային չորս բաժնին խառնած
 Չորս բաժին ավյուն արեգակնային,
 Ու երջանկորեն
 Նո՞ր կերպ ու նորե՛ն՝
 Բարբառենք անխոս.
 «Այս է մեր մարմինն, առե՛ք ու կերե՛ք»...

Ինձանից հեռու
 Դու նման չէի՞ր...
 Ես նման էի կարծես ա՛յն մարդուն,
 Որ սքանչելի ձեռագիր ունի,
 Բայց... գրագետ չէ կատարելապես:
 Իսկ հիմա,
 Երբ մենք մեկտեղ ենք կրկին,
 Նո՛ւյն կյանքը հիմա
 Իր սքանչելի նո՛ւյն ձեռագրրով
 Գրագիտության դասեր է տալիս

Թե՛ շնորհալի վազերին այգու,
 Թե՛ տաղանդավոր գետերին բոլոր,
 Թե՛ հայտնի դիսից գազազողներին,
 Բե՛ թաքուն սիրուց կակազողներին
 Եվ թե՛ աշխարհիս պետերին բոլոր,
 Որ վերջիններիս մատերից բոլոր,
 Մա՛նավանդ... ահեղ ցուցամատերից
 Մա՛հը չկաթի,
 Այլ կյա՛նքը ծորա
 Թշվառ ու փոքրիկ այս երկրի վրա՝
 Հեովից ետ դարձող
 Տիեզերախույզ հրթիռների պես...

Տեսնո՞ւմ ես.
 Այ տե՛ս.
 Ծաղկած ծիրանին դիմացի քակում
 Նշխար է բաշխում քահանայաբար
 Ամբողջ շրջանով իր մեծ շուրջառի,
 Իսկ մեղուները
 (Այդ նշխարները ծծելուց արքա՛ծ,
 Թե՛ գուցե դրո՞ված ուրիշ պատճառից)
 Ցույցեր են անում փեթակի առջև,
 Ինչպես որ մարդիկ՝
 Ծենքերի առջև պատլամենտների...

Ով ի՛նչ ուզում է՝ թո՛ղ այդ էլ անի:
 Իսկ ես ուզում եմ... իսկ դու չե՛ս ուզում,
 Որ գեթ ա՛յս անգամ,
 Գոնե ա՛յս անգամ
 Հեռավորությունն ինձ ու քեզ երբեք
 Չկիսի՛ այնպես,
 Ինչպես... հինգշաբթին շաբաթն է կիսում:
 Կորչի՛ հինգշաբթին...

18. 111. 64
 Դիլիջան

Բ Ա Ճ Ա Ն Ռ Ի Թ Յ Ո Ւ Ն Տ Ե Ղ Ն Ռ Ի Տ Ե Ղ Ը

Անտառը հիմա անչափ է նման
Չին-ճապոնական մի ակվարելի:
Ու ես էլ հիմա
Անգարդ եմ, ինչպես մանկական նկար:

Եվ լուռությամբ է՝
Ծայրահեղ այնքան,
Որ սարսափահար վիսկաց մի շնիկ
Եվ տեղն ու տեղը սարսափած լռեց:

Հետո՛, շա՛տ հետո,
Ինչ-որ մի որսորդ կրակեց հանկարծ,
Ու ներքև ընկավ... մի ձայն թռչնային՝
Չձայնագրվող ճնգոցով մի կարճ...

Բաց լուսամտից ես նայում եմ դուրս:
Հետո՛, շա՛տ հետո,
Նայում եմ նաև բաց լուսամտին.
Կարծես թե ներկը այս լուսամտի,
Լուռ լաց է եղել ինչ-որ ժամանակ,
Եվ արցունքներն են կարծրացել հետո,
Հետո՛, թե գուցե տեղն ու տեղը հենց...

Խնձորի այգին այգի չէ կարծես,
Այլ... մի բացօթյա դիահերձարան.
Մահի պես ճերմակ սավանների տակ
Ծառերն են իրենց դողը փաթաթում...
Խեղճ պատշգամբը ողջունում է ինձ

Եվ տեղն ու տեղն էլ հրածեշտ տայիս.
Ես ներս եմ մտնում,
Եվ իմ ետևից դուրս փակելով՝
Հենց տեղն ու տեղը մկրատում-զցում
Մուրսայր-սրակող ցրտի մի պատառ,
Որ իմ սենյակի սուտ ամառվա մեջ
Իրեն զգում է մի վտարանդի
Կամ խեղճ ու կրակ մի աքսորական
Եվ տեղն ու տեղը մեռնում է իսկույն...

Ա՛խ, ո՛ր էր հիմա չար արեգակը հանկարծ բարկանա՛ր,
Ելման գետերին վերստի՛ն զցեր զառանցանքի մեջ,
Այս հերձարանը կրկի՛ն դարձրնեք խնձորի այգի,
Այս սուտ ամռանը ստիպեք գործել ինքնասպանությո՛ւն,
Այս խեղճ անտառը դուրձներ կրկի՛ն յուղաներկ կտալ,
Այս լուսամտի ներկին ստիպեք նորի՛ց արտաբո՛լել,
Ինձ էլ ստիպեք, որ այս ամենը լքեի՛ մեկից,
Եվ մինչև անգամ թե չպատահեք ավտոմեքենա՛
Կիլոմետրերը կուլ տայի ոտքով
Ու... հասնեի քե՛զ:
Իսկ եթե հանկարծ դու զարմանայիր
Իմ անակնկալ-անսպասելի այս այցի վրա՛
Վիրավորանքըս
Հենց տե՛ղն ու տե՛ղը մեզ կբաժաներ...

18. III. 64

Գիւիշաճ

Ա Ն Յ Ա Շ Ս Ե Ր Ե Ր Ը

— Իմ սերե՛րն անցած...

Նախ՝ ևորի՛ց ասեմ,
Որ սերը չունի շարունակություն,
Այլ միայն սկի՛զբ,
Որ չի՛ կրկնվում,
Ինչպես... ծննդյան եզակի օրը:
Եվ հետո... հետո՛
Որքան էլ ջանանք ու ձգտենք սիրել՝
Երբեք ավելին չե՛նք ունենալու,
Ինչպես չի լինում... ավելորդ ատամ:

Սիրո համեմատ

Թիվն ատամների շա՛տ ես համարում:
Բայց մի՛ մոռացիր, որ ես, ճիշտն ասած,
Դեռ չեմ բաժանվել ո՛չ մի սիրածից.
Իրենք են փոխել անուններն իրենց,
Կերպարանքն իրենց,
Իրենց հասակը,
Իրենց տարիքը,
Սակայն ո՛չ իրենց:
Եվ ի՛նչ փոխել են՝ իրե՛նք են փոխել,
Իրե՛նք, ո՛չ թե ես,—
Այս մի՛ մոռացիր:

Եվ գուր մի՛ հարցրու,
Թե ո՛րն է եղել իմ ամենամեծ սերը:
Իր՛ հարցրու:
Սերերը, պե՛ր իմ,

Եթե մինչև իսկ անհավասար են՝
Անհավասար են, ինչպես... մատները.
Ո՛ր, մատդ կտրես՝
Պիտի շատ ցավի կամ պակաս ցավի:
Էլ ի՛նչ ամենա...

Ախ այս ամենա-ն...

Իսկ երևիցե չե՛ս խելագարվել գեթ այն աստիճան,
Որ հանկարծ մի օր լրջորեն խորհես,
Թե դժբախտության մեր զգացումը
Գալիս է հենց այդ... այդ ամենա-ից.
Անծանոթ է դա ո՛չ միայն բույսին,
Այլև կենդանո՛ւն,
Ապուշի՛ն անս,
Եվ սրանք իրենց... դժբախտ չե՛ն զգում...

Ամենա չկա՛:

Վատ ու լավ կա լոկ:
Ու եթե սեր է՝
Էլ ի՛նչ վատ, ինչպե՛ս,
Ու եթե սեր է՝
Էլ ի՛նչ ամենա...

— Իսկ անցած սերերն, ի՛նչ է, չեն մեռնում:

Իսկ եթե նույնիսկ, աստված չարացե, մեռնում են նրանք,
Դարձյա՛լ ապրում են մեր տարողունակ հիշողության մեջ,
Ինչպես մեր... մեռած երեխաները...
Ահավոր ցավը չե՛ն վերհիշեցնում:
Գրկի՛ր ինձ:
Մեղք եմ...

19. 111. 84
Գիլիշան

Կ Ա Կ Ա Ջ Ո Ղ Լ ՈՒ Յ Ս Ե Ր Ը

Մթնեց:

Այնպես, որ չեմ տեսնում
Նույնիսկ ոտներն իմ սեփական:
Ու ներքնաձիգ գետական է լոկ
Մթան շունչը ձայնագրում
Ուղղահայաց այս քարափի
Եվ անսաղարթ այս ծառերի բնի վրա:

Գիշերվա մեջ այս ծովական
Երևում են լոկ լեռների մեջքերը գորշ՝
Կես ձկան պես.
Հեքիաթական ինչ-որ ուժով
Կարծես դյուրավել-կախարդվել է
Մշտախաղաց օվկիանոսը՝
Իր փոքր ու մեծ ալիքներով քարացել է ու մնացել
Մի վիթխարի
Միջահատված-զատված զանգի ուղեղի պես.
Ո՛չ մի շարժում,
Ո՛չ մի խայտանք:

Ես չգիտե՛մ, իսկ ո՛վ կասի,
Թե առավել սարսափելի՞ն ի՞նչն է կյանքում.
Անշնչացած օվկիանո՛սը,
Թե՞ քարացած ուղեղն արդյոք՝
Նույնքան խայտուն ու բազմալիք...

Մթան ահը
Գերաճում է ու դառնում է սպառնալիք,

Եվ հատուկենտ խեղճ լույսերի լեզուն ճարտար
Կապ է ընկնում.

Ձիգ ժամերով

Կակազում են նրանք միշտ նո՛ւյն վանկի վրա,
Ինչպես ինքքս,

Երբ ուզում են

Իմ հարազա՛տ հորն ու մորը թունդ հայհոյել՝

Իմ այս իզո՛ւր շիտակության,

Իմ անօգո՛ւտ այս տաքության,

Իմ սիրո այս անտակության՝—

Իմ այս հիմար

Կյանքի՛ համար,

Որ այլ բան չէ, եթե կուզեք,

Քան կույրերին... հեռուստացույց նվիրելը:

19. 111. 64

Գիշերահ

Ա Ս Ա « Ա Մ Ե Ն »

Կրկին՝ ձնհալ:

Վտակները ձմռան քարտե՞զն են ավարտում,
Թե՛ սկսում գարնան քարտեզն այսօր միայն՝
Նկարելով շատ փոքրացած տարբեր գետեր
Ոչ թե կապույտ, այլ գորշ գույնով:

Երկրաչափ է դարձել քամին.
Էլիպս է նա գծում անվերջ,
Գալարագիծ է նկարում,
Հևող, կարծես սխալվելով,
Տարուքերվող մերկ ծառերի
Ստվերներով ջնջում է լա՛վ,
Որ սկսի նորից գծել:

Մարդ երբեմն վախենում է լուռ մտածել:
Ու ռս ահա բարձրախոսն էմ գործի պոստ:
Սրտագրքավ ինչ-որ մի ձայն աղջրկական
Իր անարվեստ ու պարզ երգով
Կոչ է անում ինքնամոռաց—անվիշտ սիրել,
Կոչ է անում հավատարիմ ու միշտ սիրել:
Իսկ ծաղրարար քամին դրսում,
Երկրաչափի իր պաշտոնից արդեն հոգնած,
Աղջրկան է իբր կապկում՝ ծանակելով:

(Դու բանի տեղ մի՛ դիր, քույրի՛կ, ե՛րգող երգիր,
Հե՛րն անհիծած այս ծաղրարար ու չար քամու):

Մակայն հիմա մեկ ուրիշն է երգում արդեն՝
Սիրո՛ւց կրկին:
Սա ուզում է,
Որ մեր սրտերն անվախ բացենք
Ցավի՛ առջև,
Տառապանքի՛:
Բացե՛նք: Բացե՛նք:
Բացե՛նք: Թող գա՛ն:
Թո՛ղ գան վարձկան գինվորների ախորժակով.
Մեկ է՝
Վերջում խնդումն ու սերն են հաղթելու,
Այսինքն՝ մենք:
Տառապանքը թող ինքն իրեն գլխել ջանա:
Իսկ երբ գլխվի՛
Մենք կվերցնենք ամանի պես ու կկործենք՝
Հետևելով,
Թե ինչպես է թունավորվում՝
Ինքն իր շնչով ապականված...

(Երգի՛ր, քույրի՛կ, միշտ ես երգում.
Խնդու՞թունը միշտ է կարմիր,
Տառապանքը միշտ չէ բուսր:
Երգիր...):

Մակայն համերգն արդեն ավարտվում է
Եվ սկսվում մի պաղ գրույց՝
Ստիպելով,
Որ ես անմեղ բարձրախոսի հոգին առնեմ
Ու հայացքով դուրսը խառնեմ:

Դրսում՝ գարուն անկասելի:
Իսկ իմ ներսում՝ նորելուկ սեր:
Օր-ցերեկով նորած լուսին:
Անվիշտ կարոտ:
Արև:
Կեսօր:

Իսկ ծաղրարար ու չար քամին
Խոռվել է միանգամից
(Արդյոք ինչի՞ց, արդյոք ինչո՞ւ)
Ու խաղում է պոչուկի հետ շան լակոտի,
Որ հաչում է ցերեկային լուսնի վրա
Եվ սպառնում իր պոչուկով ինչպես մատով...

Հե՛րն անիծած տխրողների
Է՛լ բարև տալ— բարև առնել չկա՛ր արդեն.
Տխրողներից խոռվում են հավիտենից հավիտյանըս,
Իսկ դու, սե՛ր իմ, այս անգամ դո՛ւ «ամեն» ասա,
«Ամեն» ասա տատիկի՛դ պես՝
Հավատալո՛ւմ և ի սրտե՛...

19. III. 64

Գիւիշահ

ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ,
ՈՐ ԼԱՎ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԱՅԼԵՎՍ ՉԼԻՆԻ

Ես քնիս մեջ տխուր էի,
Այնքա՛ն տխուր,
Այնպե՛ս տխուր,
Որ արթնացա վեր ցատկելով
Ու... լաց լինել սկսեցի...
Հավատացե՛ք, սկսեցի՛...

Դարի չափ ձիգ ժամ է անցել:
Ես այլևս, վաղո՛ւց արդեն, լաց չեմ լինում,
Բայց դեռ տխուր, դեռ տխուր եմ,
Այնպե՛ս տխուր,
Այնքա՛ն տխուր,
Որ ավելի լավ կլինեիր,
Եթե նորից ես լաց լինել կարեճայի:

19. III. 64

Գիւիշահ

ԱՆԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՏԱՊԿՆՈՑՈՒՄ

Ինչի՞ց, տե՛ր աստված, ինչի՞ց է, ինչո՞ւ
Որ ամենից շո՛ւտ և ամենից շա՛տ
Իրեն՝ մարդու մեջ հենց մարդն է կորչում:

Եվ դրանից չէ՛ արդյոք, տե՛ր աստված,
Որ երբ մարդիկ են ծնվում՝ լալիս են

Եվ ոչ թե ժպտում,

Ինչպես անում է անհիշ-անծայտուն

Աստղը նորածին.

Եվ ոչ թե բուրում,

Ինչպես անում է հացը նորաթուխ.

Եվ ոչ թե պարում,

Ինչպես անում է խոտը նորածիլ...

Եվ դրանից չէ՛, որ մարդն աշխարհում
Ո՛չ մի բանի դեմ այնպես անպաշտպան,
Անգոր չէ այնքան ո՛չ մի բանի դեմ,
Որքան որ մարդո՞ւ՝ ի՛ր իսկ նմանի...

Եվ դրանից չէ՛, որ մենք շարունակ
Այլ բան չենք անում, քան թե լնանում,
Մինչդեռ հոսելն է պարզ կոչումը մեր...

Եվ ինչի՞ համար, ինչի՞ համար են
Մեր բազմատեսակ այս գրպանները,
Եթե հոգին էլ

Մի յեցուն ու փակ գրպան է միայն,
Որ շա՛տ է կարոտ գրպանահատի:

Եվ արհեստական բուծարաններում
Ինչո՞ւ չեն բուծում գրպանահատներ,
Հոգի՛ արձակող գրպանահատներ,
Որպեսզի փոքր-ինչ մենք թեթևանանք

Ա՛յն ծանրը քեռից,

Որ մի կողքի է մեզ ճկում-թեքում՝

Մեզ ստիպելով կաղալ ու խեղալ,

Մե՛զ, որ չենք ծնվել ո՛չ կաղ, ո՛չ էլ խեղ...

Եվ դրանից չէ՛, որ տապակվելով՝
Տապակվում ենք մենք անարժեքությամբ...

Ու տապակվում է անարժեքությամբ

Ինքը բարիքը,

Եթե մեր ձեռքից կերակրվողը մեր ձեռքն է խածում

Եվ զորեղացած իր ատամներով

Կրծում մեր բուկը:

Ու տապակվում է անարժեքությամբ

Նույնիսկ չարիքը,

Եթե նրա դեմ կա ամենազոր արհամարհանքը:

Ու տապակվում է անարժեքությամբ

Եվ ամենազոր արհամարհանքը,

Եթե ոչ մի կերպ սա տեղ չի հասնում՝

Եթե ընկալողն իրեն զգում է ա՛յն երկնքի պես,

Դեպի ուր ճամփած քարը վերստին

Ընկնում է ներքև...

Ինչպե՞ս, տե՛ր աստված,

Մենք ինչպե՞ս անենք,

Որ չտապակվենք անարժեքությամբ,

Անարժեքությա՛մբ,

Անարժեքությա՛մբ...

Ն Ե Ր Կ Ա — Բ Ա Ց Ա Կ Ա

Ներկա են ոտքերըս. ինքնաշարժ քայլում են:
Ներկա են աչքերըս. երևի փայլում են:
Բացական հայացքս, այդ նա է. ես նայում
Եվ սակայն չեմ տեսնում. ոչինչ չի հմայում:

Ներկա է և մաշկըս. կարծես թե մրսում եմ:
Ծածկ ունեմ և չունեմ. տան մեջ էլ դրսում եմ:
Գարուն է— գարուն չէ. բացակա— ներկա է:
Բացական աստղերն են:
Բացական լուսինն է:
Բացական քամին է, շարժումը և... ինքը,
Որ տերն է կարոտիս:
Կարոտս ներկա է...

Թարմ օդից զարթնում են ռունգերըս, բայց իզու՛ր.
Իմ շնչած օդից է բացակա իր շունչը:
Զգում եմ ոզնու պես փշապատ մտքերըս,
Բայց նրանք վերստին կծկրվում-զնդվում են:

Ա՛խ, լինե՛ր մի քնքուշ-կոպիտ ձեռք. ինձ բացեր,
Ինչպես որ գրտնակով բացում են խմորը,
Ինչպես որ բացում են բառի խոր իմաստը,
Ինչպես որ... չե՛ն բացում, ոզնուն լոկ ճխում են:

Ա՛խ, լինե՛ր... լինե՛ին հաստ մեխեր, ժանգոտա՛ծ:
Այն խաչը,
Որին մենք կամովին զամվել ենք,
Մեխերի՛ պետք ունի,

Ժանգոտա՛ծ մեխերի:
Մեխն ի՛նչ է, անխիղճնե՛ր, մեխն ի՛նչ է.
Էծան է, հեշտությանը ճարվում է:
Մի քանի մեխն ի՛նչ է.
Ընտրեցեք հաստերը,
Որ ցավը բարակի ո... հատվի:
Հերի՛ք է...

20. III. 64

Գիլիզան

ԵՍ. ՈՐ ԵՍ ՉԵՄ

Չգիտեմ՝ ի՞նչ պիտի փոխվեր,
Սակայն ես նո՛ւյնը մնացի.
Ես նորից իմ տեղը դարձա՝
Որքան էլ հեռու գնացի:
Հազա՛ր խոչ ու քարեր կային
Իմ անցած ճանապարհի մեջ,
Կար սև ցավ
Ու կարմիր արյուն
Ամեն խոչ, ամեն քարի մեջ:
Ոտ տալով՝ գետին փռեցին,
Ջարդեցին իմ կողմ ու քիթը,
Բայց նույնիսկ իմաստո՛ւն դարձած՝
Մնացի նո՛ւյն միամիտը.
Գնացի նո՛ւյն ճանապարհով
Ու եկա նո՛ւյն ճանապարհով...

Չգիտեմ՝ ի՞նչ պիտի փոխվեր,
Սակայն ես նո՛ւյնը մնացի:
Իրենց քիրտ արարմունքներով
Ինչքա՛ն էլ մարդիկ վանեցին,
Ինչքա՛ն էլ սուր արմունկներով
Կողերիս հոգին հանեցին,
Նրանց դեմ ես քեմ չարեցի,
Հաշտության եզրեր ճարեցի՝
Մտնելով իմ հին դերի՝ մեջ.
Մնացի ընկե՛րը նրանց,
Բարեկամն ու մտերիմը...

Թվում է՝ դավաճանեցի
Սերերիս իմ ամբողջ կյանքում
Իմ ապրած վաթսուն դարի մեջ:
Բայց սուտ է.
Իմ ամբողջ կյանքում
Ես եղա ու միշտ մնացի
Էլի նո՛ւյն հավատարիմը:
Գեղեցի՛կն իր տեսքը փոխեց,
Միճչդեռ ես մնացի նո՛ւյնը՝
Գեղեցիկ մերկություն պաշտող
Հայ ծնված միևնույն հույնը,
Որ իր կարճ-անցողիկ կյանքում՝
Իր ապրած վաթսուն դարի մեջ,
Մի՛շտ մնաց իր պաշտամունքի՝
Իր սիրո հավատարիմը...

...Գուցե ես բնա՛վ էլ ես չեմ.
Պարզապես ցավի ծառան եմ,
Որից ես թակվո՛ւմ եմ, թակվո՛ւմ
Փռշտոված գո՛րգ թե թաղքի՛ պես:
Գուցե ես բնա՛վ էլ ես չեմ.
Պարզապես այն կացարանն եմ,
Որտեղ մեծ Սերն է բնակվում
Եվ կողպեք չունի դռանը.
Գերզգա զանգածաղկի՛ պես՝
Դուռն ինքն է քացվում ու փակվում...

21. 117. 64

Գիւլիան

24 Եղիցի 1919

Է Լ Ե Կ Տ Ր Ա Կ Ա Ն Ա Ղ Ե Տ

Լիճենք խելո՞ք:

Հե՛շտ է ասել...

Ծառը եթե խելոք լիներ՝
Պտուղների համեղ հյութով միշտ կաներ
Իր տոչորված արմատները
Եվ իր բնի չոր կոկո՞րդը:
Բա՛, սիրելի՛ս...

Գետն էլ եթե խելոք լիներ՝
Միշտ կհոսեր ուղիղ գծով,
Ամեն տեսակ շեղումներից ապահովված,
Եվ ինքն իրեն չէր ջլատի ոչ մի դեպքում՝
Բաժանվելով մանր ու խոշոր առումների:
Սա էլ գուցե մի առանձի՛ն խելոքություն,
Ուրի՛շ խելք է:
Բա՛, սիրելի՛ս...

Խելո՞ք լիճենք:
Սակայն եթե փոքր խելքը շատ մեծ բեռ է,
Մեծն էլ շա՛տ է վտանգավոր,
Բա՛, սիրելի՛ս...

Իսկ ի՞նչ անենք:
Բա՛ն էլ չանենք:
Պառկենք իրար դեմ ու դիմաց՝
Իրար ուղղված երկու սուրսայր սլաքի պես,
Ու կարոտով իրա՛ր նայենք,

Այնպե՛ս նայենք,
Կարծես թե դու լինես կադոտ,
Իսկ ես՝ անող.
Թո՛ղ մեզանից հուժկու հոսանք առաջանա
Ու լույս դառնա
Ողջ աշխարհի բոլո՛ր մթին տնակներում
Եվ անարև ծմակներո՛ւմ:
Ու երբ վառվեն այդ լույսերը հանկարծակի,
Մարդիկ իրար աչքով անեն
Ու ժպտալով ասեն իրար.
«Սիրողնե՛րն են իրար նայում»:
Իսկ երբ մարեն այդ լույսերը հանկարծակի,
Մարդիկ իրար աչքով անեն
Ու մտածեն լուռ տազնապով.
«Ի՛նչ վթար էր... չի անցնելո՞ւ»...

Լիճենք խելո՞ք:

Լիճե՛նք:

Այնպե՛ս,

Որ չմատնենք չար աղետի մեր սերը տաք
Ու... չթողնենք մարդկանց մթնում:

22. 111. 64
Դիվիզիա

Եվ ինձ անվերջ գետնով տալիս:
... Անվերջ... գետնո՛վ, գետնո՛վ տալիս...

Միշտ ընկնելուց ու ելնելուց
Տնքսոնքում են իմ կողերը,
Իմ ողերջ
Եվ իմ լեզուն,
Ցավում այնպե՛ս,
Որ պարզապես լացս է գալիս:
Եվ լալու պես թնգթնգում եմ մի խոսք մաշված,
Նույնիսկ տակմաշ կրկնակոշիկից շատ ավելի
Մաշված մի խոսք,
Որ լսողին, քեզնից բացի,
Պիտի թվա ծիծաղելի:

... Ծիծաղելի՛... ծիծաղելի՛...

Ես լալու պես թնգթնգում եմ.
«Միրում եմ քեզ»...
Ու կրկնում եմ երե՛ք անգամ
Եվ չո՛րս անգամ.
Թո՛ղ ծիծաղեն երե՛ք ձայնով
Ու չո՛րս ձայնով...

Թող ծիծաղե՛ն,
Թող ծիծաղե՛ն,
Որ... կտրվի թնգթնգո՛ցըս,
Լա՛ցըս գա... լացը՛ս չգա...

22. 111. 84

Դիլիշահ

Պ Ա Ր Տ Ք Ի Տ Ո Կ Ո Ս Ե Ե Ր Ը

Առավոտն է հասունանում՝ մտքի անան.
Պիտի պոռթկա՛նա շատ շուտով
Եվ սրտաքամ իր իսկ հյութով
Կրկին անրկի
Երկին-երկիր:

Օրն է գալիս
Պարտատիրոջ վստահությամբ,
Իբրև անգութ մի վաշխատու:
Պարտ եմ իրոք՝
Միրո՛ դիմաց,
Ու պարտավոր եմ վճարել մի կարտոտով,
Որի շահն է իրեն ծածկում...

Ու ես
Հոգնած ուրախությամբ
Հեռվից հեռու ժպտում եմ քեզ
Միրո՛ղ, անրո՛ղ ու համբերո՛ղ մի ժպիտով...
Հանկարծակի—միանգամից
Արբունքի է հասնում քամին,
Եվ ձները
Նրա տաք-տաք ակնարկներից ամաչելով՝
Տեղն ու տեղը հալվում են լուռ:

Վտիտ վտակն աչքիս առաջ
Նույնքան արագ
Հասունանում—դառնում է կին

Ու փոփելով փարթամ մեջքի՛մ՝
Սարսուռւմ է...

Միայն ես եմ, ես եմ մնում նու՛յնը կրկին՝
Նո՛ւյն մշտական պարտապանը
Իմ գերհասուն սիրո ղիմաց,
Եվ պարտավոր եմ վճարել մի կարոտով,
Որի շահն է իրեն ծածկում:

Իսկ քո սե՛րը...
Ե՛րբ պիտի նա հասունանա:
Թե չէ, գիտե՛ս,
Եթե անվերջ այսպես գնա՛
Ես երբևէ պարտք չե՛մ փակի.
Պարտքը, գիտե՛ս, նա՛, դռան պես,
Իր կողպեքով ինձ կփակի...

29. III. 64
Գիլիլաե

Ս Պ Ա Ս Ե Լ Ո Վ, Կ Ե Ս Օ Ր Վ Ա Հ Ր Ա Մ Ա Ն Ի Ն

Արթնացավ քամին,
Եվ դեռ անսաղարթ ողջ անտառով մեկ
Վլվլուկն ընկավ:

Ծանոթ լեռները հիմա թվում են
Մինչչրհեղեղյան—այժմ չքացած մեծ խլուրդների
Մթին աշխատանք:

Հորդորակ առուն այժ է հաստատում՝
Թութակի նման նույնը կրկնելով:

Նիհարիկ մի մուծ
Սուտ վկայություն տալու փորձ անում
Եվ արտաքսվում է անտառից անդին:
Հետապնդվելով
Մի շատ կարևոր-կարեւելք խոսքից՝
Միտքս խրվում է
Դիմացի լանջի մացառուտի մեջ,
Եվ... գրիչն այստեղ՝
Այս ճերմակ թղթին,
Իր սև ինքնահոս արյունն է հեղում...

Մի քանի ժամ է միայն մնացել,
Որ գա կեսօրը
Եվ քանտապետի դժգոհ կուպտությամբ
Անի. «Ազատ ես»,
Ու ես էլ ահա

Աճապարեկուց Աույնիսկ մոռացած
«Շնորհակալ եմ» կամ «մնաք բարև» գեթ միմնջալու,
Պիտի ինձ Անտեմ
Անկուշտ երախը մեծ ճանապարհի,
Որ պատահական ինչ-որ մեքենա
Իր անիվներին
Կծկելով կծկի կիլոմետրերը,
Եվ... սրտապատառ մի նորախոթյամբ
Ձեր տանը զնգա ձեր հեռախոսը:

Դու մի՛ շփոթվիր խոսափողի մեջ.
Իմ շփոթմունքն էլ մեզ բավական է:
Դու ընդամենը ասա «գալիս եմ»,
Թե չէ մեր լեզուն
Ինչո՞վ է ախար խեղճը պարտական
Եվ ինչո՞վ է նա պատասխանատու
Մեր սրտի՛ առաջ՝
Այս ընկնավորի և ջղագարի,
Որ թայրտում է՝
Մինչևիսկ հագած հեռախոսային զսպաշապիկը...

Բայց... առավոտը դեռ Աոր է բացվել,
Դեռ ո՛ր է որ գա մոայլ կեսօրը
Եվ բանտապետի դժգոհ կոպտությամբ
Գոռա. «Ազատ ես»:

Առայժմ դու ես, այդ դու ես ազատ
Ձեր հեռախոսի քմահաճույքից.
Թող նա համբանա՛ մինչև երեկո:
Թող նա համբանա՛, որ դու չտանջվես.

Իմ այս տանջանքն էլ մեզ բավական է...

27. III. 64

Գիլիշահ

Ը Ն Դ Դ Ե Մ Օ Դ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Կ Ա Յ Ա Ն Ի

Երբ մենք հանդիպենք,
Ես գիտե՛մ, թե քեզ ինչ եմ հարցնելու:
Իսկ որոշվա՛ծ է քո պատասխանը:

Երանի թե ես
Դադիո-ընդունիչ կոչված այս դևին
Թողնեի քնած
Ու չիմանայի,
Որ փոթորիկ է վաղը սպասվում՝
Օդաբանական ինչ-որ կայանի կամեցողությամբ:
Այդ կայանները
Հազարից մեկ են ճիշտ բան գուշակում:
Իսկ եթե հանկարծ
Հազարից մեկը վաղը կատարվի՛...

Ես գիտե՛մ, թե քեզ ինչ եմ հարցնելու,
Երբ մենք հանդիպենք:
Իսկ դու իմ հարցին պատասխանելիս,
Տե՛ս,
Չանե՛ս այնպես,
Որ արդարանա
Օդաբանական կայան հորջորջվող
Մարգարեն այս սուտ:

Եթե ինձ համար դու չես էլ հոգում,
Մտածիր գոնե աշխարհի՛ մասին.
Նա շատ է կարոտ
Մե՛ղմ—գարնանայի՛ն— երջանի՛կ օրվա:

Մեղք է աշխարհը.
Քանի՛ ամիս է նա սպասում է:
Մեղք է, սիրելի՛ս,
Գեթ նրան խղճա
Իմ պատրաստ հարցին պատասխանելիս.
Քո պատասխանով,
Տե՛ս,
Որ փոթորիկ չհանե՛ս իզուր...

27. 111. 64

Գիլիգուհ

ԱՆՄՈՌԱՏՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂԸ

Մոռացության օրենքները
Չե՛ն տարածվում ինձ վրա,
Որ ես կրկին, մանկան նման,
Քնին ասում եմ «մայրի՛կ»...

Ու փորձանուտ խավարի մեջ
Կաղակարկին քայլելով՝
Հողի վրա
Կրունկովրս ճակատագիր եմ դաջում:

Հողի վրա
Կրունկովրս ճակատագիր եմ դաջում,
Որ... կարելին չկատարվի՛
Եվ ապրելին չապրվի՛
Ի հեճուկըս... չգիտե՛մ ում,
Ի սփոփանք... գիտե՛մ ում.
Ի սփոփանք ի՛մ ու նրա՛,
Որ միշտ մոտս է— մոտըս չէ,
Ու ես անվերջ
Ինքս եմ խոսում իր փոխարեն և իմ տեղ՝
Ա՛յն մարդու պես,
Որ ինքն իր հետ, մեճա՛կ շախմատ է խաղում:
Բայց կուզեի
Եղունգո՛վրս խաղատախտակն այդ կտրել՝
Նրա ամեն քառակուսին
Մի-մի պիտակ դարձնելով
Մեզ քաժանող

Տարածությանն իբրև չափ ու չափանիշ:
Եվ կուզեի,
Որ նա ինքը ի՞ր փոխարեն, ի՞ր լեզվով
Խոսեր ի՛նձ հետ և ինձանից,
Ա՛յն ամենից, ինչ որ էս
Նույնիսկ ինքըս չեմ հասկանում.
Իմ վախերը թարգմաներ...
Վերծաներ իմ ուզածները՝
Իր թարթափի ակնարկով...
Եվ իր մատներն ուշանային
Իմ մարմնեղեն աշխարհի հենց ա՛յն տեղում,
Որ ուշացած սերը ատամ է փոխում՝
Համատարած լինող դարձնելով
Փլիսից մինչև գարշապար...

Ո՛ր է ծագը:
Ե՞րբ կբացվի գեթ առավոտն անսփոփ,
Որ արևը
Կրկին դառնա ծիծաղելի՝ մի պատկե՛ր,
Իսկ աշխարհի՞լ
Մի մանկական պատկերազարդ ամսագի՛ր,
Ես էլ՝ արդեն ո՛չ երեխա,
Որպեսզի գեթ միտածամ
Թճաթնգալով ինքս իմ ներսում՝
Քնին «մայրիկ» չկանչեմ...

28. 11. 65

Զահարյի

Մ Ե Ր Թ Ո Ւ Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

Մեզանից նրանք,
Որ լավագույնն են մարդկանց թոտի մեջ,
Հաճախ փորձում են,
Գոնե՛ փորձում են
Մի կերպ ազատվել իրենց հնօրյա թուլություններից,
Ինչպես լավերից լավը գյուղացու
Փորձում է կորցնել արդեն ծերացած իր անասունը՝
Նրան սպանել չկարենալով,
Խղճալով նրան:
Եվ ամեն անգամ
Նրանք՝ ծերացած անասունները,
Որ մեր մեջ բանող
Թուլություններն են մեզ նախընծայված,
Վերադառնում են ու գտնում են մեզ,
Ո՛ր էլ որ տանենք— որտե՛ղ էլ թողնենք,
Վերադառնում են ու գտնում դարձյալ՝
Հուսահատության դուռ հասցնելով
Մեզանից նրանց,
Որ լավագույնն են մարդկանց թոտի մեջ:

Հազա՛ր երանի վատագույններին,
Որ հուսահատվել չգիտեն բնավ...

28. I. 65

Զահարյի

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Աստված ձեզ հետ...

Իսկ թե իրոք աստված չկա,
Ձեզ հետ լինի թող երկի՛նքը՝
Իր փոփոխման անմեռ ոգով.
Գյուտի երկա՛ր-երկա՛ր ցավը՝
Կարճ, բայց կարծր իր խնդությամբ.
Արդարության կաղ նծույզը՝
Ծշմարտության իր խթանով.
Փոքրիկների պատվերն անմեռ
Ու Մեծերի մեծ ստվերը
Ձեզ հետ լինի...

30. X. 65

Չահախյի

Պ Ա Տ Ր Ա Ն Բ Ի Պ Ա Տ Ա Ն Բ Ը

Եվ շատ ավելի վատթար է ցավը,
Քան անարգանքն ու անպատվությունը,
Եթե այդ ցավը ծնունդ չի տալիս վեհ ու վսեմին:
Վե՛հ ու վսեմի՛ն,
Լսո՛ւմ եք, տղե՛րք,
Վե՛հ ու վսեմի՛ն:

Եզրիտուն ինքն է ավագ ներմուծում,
Այն էլ ո՛ւմ համար. իր... Սահարայի՛:
Ծաղրուծանա՛կ է: Կատա՛կ է հիմար:
Բայց Սահարայի ավագն իսկապես
Շինարարական շաղախ չի՛ դառնում.
Մանր է չափազանց:

Ապրելով նույնիսկ թամակ-անսպառ ավազի վրա՛
Մեզ հարկավոր է, հատկապես հիմա, ավագ ներմուծել
մեր շենքի համար,

Հարկավո՛ր ավազ:

Իսկ պատրանքներից և պատրանքներով հղիանալը
Մեղք չէ հասարակ, այլ մեղք այնպիսի՛,
Որ հավասար է... (բառը չե՛մ ասում):
Եվ բավական չէ՞,
Որքան մերպեսին
Այլասերեցին այդ պատրանքները՝

Այդ հանդերձափոխ գործակալները... (բառը չե՛մ ասում):

Թե բավական է՝
Հուղարկավորման լուռությամբ լռենք

Ու լուսոյան մեջ ճոր տաւեր կոենք՝
Իբրև ճորոյա աղվեսադրոջմ
Մին պատրանքների ճակատի համար...

Կորչելը, անշո՛ւշտ, աղետ է ահեղ,
Աղետն էլ գոնե լավ է այնքանով,
Որ ազատում է ելք որոնելու մտքաքամ հոգսից:
Սակայն պատրանքով փրկվելն էլ ախտ է (քաղը չեմ ասում):
Որ տարածվում է... խոնավոյթյան պես
Եվ ամե՛ն ինչի լնդերքի վրա
Բացում իր վերքը՝ բորբոսի տեսքով:

Անգե՛տ տղաներ, մի՞թե չգիտեք
Մեր միակ փրկչի սուրբ գերեզմանի վայրը սրբազան:
Նա հենց այնտեղ է,
Որտեղ պատրանքն են պատանքում, տղե՛րք,
Պատրա՛նք պատանքում:

Ամուլն ամուր չէ, ոչ էլ ամուրի:
Եվ Հայրենիքը ո՛չ մուրացկան է, ո՛չ էլ հարկաճան:
Եվ սերն էլ տուրք չէ, ոչ էլ գթոյթյուն,
Որ ամեն մեկը, կամ տա, կամ տածի,
Այլ սուրբ ավյուն է
Ու սուրբ արյուն է,
Որ պիտի տա ծիլ
Անկողիներում թե՛ մոր, թե՛ մանկան,
Որտեղ սավանը ճմուռորվում է ո՛չ սավանի պես,
Այլ իբրև... պատա՛նք,
Որ... պատառոտվի պատանք-պատրանքը
Եվ համբարձվելով հառնի ճո՛ր ոգին:
Նո՛ր ոգին, տղե՛րք,
Նո՛ր ոգին, ճո՛րը...

4. XI. 64
Երևան
9. XI. 65
Չանախչի

Ց Մ Ա Հ Բ Ա Ն Տ Ա Ր Կ Յ Ա Լ Ը

Հորիզոնական-միջօրեական սեղմ օղակներում
(Նայեցե՛ք մի պահ այս գրչորուսին)
Խեղճ Երկրագունդն է կապվել-կապանքվել:
Եվ չկա ո՛չ մի պետքական կացին, ուրագ կամ սղոց:

Ու երբ պարապ եմ
(Այսինքքն՝ երբ ինքքս ինձ հետ եմ,
Այսինքքն՝ երբ ես եմ իսկական),
Ատամներով եմ շարունակ կրծում
Ցմահ բանտարկված այս երկրագնդի
Ցանցը երկաթե՛
Ապավինելով ծով բարությանն իմ՝
Եվ բարությունից շատ ավելի մեծ համբերությամբ:

Բայց ես ո՛չ մի կերպ,
Ո՛չ մի հրաշքով
Չե՛մ կարող ապրել Աստվածաշնչի հերոսների չափ,
Ո՛չ 300, ո՛չ 100 տարի:
Ուրեմըն դուք էլ, որ մարդ եք կոչվում,
Դո՛ւք էլ օգնեցեք՝ ձե՛ր ատամներով,
Թերևս ազատենք
Ցմահ վանդակված այս խեղճ-անճարին...

10. XI. 65
Չանախչի

Լավագույն կապիկն աշխարհում (էլի)
Մարդն է երևի:

Լավագույն մարդն էլ (ո՛չ մի երևի)
Ներեցեք... ես եմ...

13. III. 67

Արգեի

Լ Ա Վ Ա Գ Ո Ւ Յ Ն Ը

Լավագույն ժպիտ ասվածը, անշո՛ւշտ,
Փա՛կ խչքերովն է:

Իսկ լավագույնը երազանքների՝
Բա՛ց աչքերովը:

Լավագույն երգը
Բաց պատուհանից—հեռվից լսածն է:

Լավագույն խոսքը
Լոռոջյան խորքում լռին ասածն է:

Լավագույն ազգը այն է, երևի,
Որ չի ունենում հսկա կայսրություն:

Լավագույն հավատն այն է, որ երբեք
Չի դառնում կրոն:

Լավագույն դիմակն այն է, անկասկա՛ծ,
Որ կոչվում է դեմք:

Լավագույն դերը՝
Վա՛տ խաղացածը:

Լավագույն սերը՝
Կիսա՛տ թողածը:
Լավագույն տանջված ու տառապածը
Վարդն է (երգերո՛ւմ):

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԳԻՏԵՄ ԻՆՉԸ

Ծա՛տ սպասելով,
Զո՛ւր սպասելով հարմար պաշտոնի՝
Ես ինքս եմ ահա ինձ նշանակում
Լուսավորությանն նախարա՛ր ասեմ,
Թե՛ կատարածու լուսավորության,
Այսինքըն՝ լույսի,
Լամպերի,
Զահի,
Որպեսզի... նույնիսկ կույր քարանձավի
Խույ մթությունը դահլիճ դարձընեմ
Կա՛մ համերգային,
Կա՛մ հարսանեկան...
Սեղմե՛մ մի կոճակ՝
Եվ մարդկանց հոգում
Ծաղիկների պես լույսերը ծաղկեմ...
Հո՛ւպ տամ մի կոճակ՝
Եվ ստվերները
Դառնան ցայտադրյուր ճառագայթների...
Աջ կամ ձախ պտտե՛մ մի երրորդ կոճակ՝
Եվ մութը իսկույն
Հին չարքի նման
Չքվի-չքանա,
Ու թե մութ մնա,
Մնա ի՛մ կամքով,
Ու մնա միայն իբրև փարագույր
Համբույրի համար խիրահարների,
Իբրև ծածկատեղ փակ կրծքի բացման
Եվ իբրև պայման մանկահղացման...

Ու եթե լինի՛,
Հենց այսպե՛ս լինի,
Իզուր չե՛մ գոչի ես «Եղիցի լո՛ւյս»,
Այլ կշնջամ արդեն. «Եվ եղև՛»:

Եվ լինի՛,
Լինի՛...

15. 11. 62

Երևան

17. 111. 67

Արզնի

Քեզնով երդվելիս
Ձեռքս դնում եմ իմ սրտի վրա՝
Սեղմելո՛ւ նման,
Որ... հանկարծակի չպայթի դողից...

Ինձնով երդվելիս
Ափրս դնում եմ քո մի ափ հողին,
Ինչպես իմ նախնիք՝ Սուրբ գրքին իրենց...

Եվ զո՛ւր, իզուր են մեզ ուսուցանել,
Թե յուղոտ մատով Սուրբ Գիրք չեն թերթում:
Ա՛խ, ի՛մ ժողովուրդ, Գի՛րք ժողովողի,
Սուրբ Գիրք... ծամո՛ւմ են... յուղոտ բերանո՛ւլ՝

Քո լավաշիդ պես,
Նշխարիդ նման...

Եվ աջից նայում
Տեսնում եմ հրդեհ,
Ձախից եմ նայում
Տեսնում եմ մոխիր:

Ի՛նչ է. քե՛զ տրվեց կրակը կրթել
Ու դաստիարակել մի ամբողջ նախիր...
Ճակատագրի բերումով դաժան
Ճակատող հիմա՝ փոքրի՛ց էլ փոքրիկ,
Մինչդեռ ճակատիդ գիրը՝ մեծից մե՛ծ:
Իսկ ո՞վ է դրա ընթերցողն, ո՞ր է...

11. XI. 63

Երևան

22. III. 67

Արշի

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Պ. Սևակի «Եղիցի լույս» ժողովածուն չարչարանաց ճանապարհ է անցել մինչև հրատարակվելը: Գիրքը ստորագրվել է տպագրության 1969 թ. դեկտեմբերի 10-ին, բայց շուտով կալանվել է, երկու բանաստեղծություն փոխարինվել են ուրիշներով, հանվել են բանաստեղծական ամբողջական հատվածներ ու տողեր: Այդպիսի աղճատված վիճակում էլ գիրքը ներկայացվել է ընթերցողին:

Գրքի խմբագրի՝ Մ. Սարգսյանի վկայությամբ «Եղիցի լույսից» հանված է մոտ 900 տող (հիմնականում «Եռաձայն պատարագ» պոեմից):

«Եղիցի լույսի» ձերկա հրատարակության մեջ վերականգնված է գրքի կալանված տարբերակը, ուղղված են նկատված վրիպակները, բանաստեղծությունների ստեղծման թվականն է նշված:

Հավելվածի բանաստեղծություններն աճյալանորեն առընչվում են «Եղիցի լույսին», մտահղացված են եղել որպես «Եղիցի լույս» գրքի շարքերի բանաստեղծություններ, սակայն հետագայում, տարբեր պատճառներով, Պ. Սևակը դրանք դուրս է թողել գրքից:

Բանաստեղծի արխիվում պահպանվել է մի մեծադիր մատյան, որը «Եղիցի լույս» տիտղոսաթերթն է կրում: Մուգ կանաչ գույնի մատյանը ժամանակակիցների վկայությամբ (Ս. Սարիճյան և Կ. Դանիելյան) Պարույր Սևակի ներշնչանքների ակնհաստեսն ու վրկան էր: Հավանաբար 1964 թվականից այն հիմք է ծառայել «Եղիցի լույսի» ստեղծման համար: Ժամանակի մամուլում մատյանից առնված շատ բանաստեղծություններ են տպագրվել, սրանց մի մասը, սակայն, Պարույր Սևակը ինչ-ինչ պատճառներով չպատակահարմար չի գտել տեղավորելու «Եղիցի լույսի» շարքերում: Գրքից դուրս մնացած բանաստեղծությունները (գրեթե բոլորը) Ալբերտ Արիստակեսյանը հրատարակեց բանաստեղծի Երկերի վեցերորդ հատրում (Երևան, 1974): Ինչպես նշում է վեցհատորյակի կազմողն ու հրատարակիչը, Պարույր Սևակը հետագայում մտադիր էր դրանք հրատարակել «Գիրք մնացորդաց» (Սևակի անվանումն է) հատորում: Ուստի և մենք պահպանել ենք այդ խորագիրը:

Այստեղ մտած բանաստեղծությունները նորից համեմատվել են մատյանում եղածի և մամուլում տպագրվածների հետ:

Հավելվածը կազմված է ըստ ժամանակագրության

Նորոքյա աղոթք, Դիմակահանդեսի գլխավորը, Անպասելի փոթորիկ, Մեծ ուղտի փոքրիկ ականջում, Տաքսիների հանգրվանում— տպագրվել են «Գրական թերթում» (1968 թ., 14 հունիսի):

Լույսի աղբյուրը հանված բանաստեղծության փոխարեն դրվել է «Լուսավորության չգիտեմ ինչը» բանաստեղծությունը:

Վառեցեք լույսերը, Քաղցր քաղցկեղ, Հպանցիկություն, Խաղալիք սարքողը, Աստծու քարտուղարը— տպագրվել են «Գարուն» ամսագրում (1969 թ., № 2):

Խարոյկ սառույցի վրա, Իրիկնամուտ, Քաղցր քաղցկեղ—տրպագրվել են «Ավանգարդ» թերթում (1969 թ., 27 փետրվարի):

Դիշերամուտ— տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրում (1966 թ., № 5):

Մաղրածուն— վերականգնվել է հանված 21 տողը:

Դիմակների փոփոխությունն հոգուտ անդիմակության— վերականգնել է հանված 14 տողը:

Առաջադրանք համայն աշխարհի— տպագրվել է «Գրական թերթում» (1962 թ., 30 դեկտեմբերի):

Մանկական ճոճք հանված բանաստեղծության փոխարեն դրվել է «Ճամփեզրի խոտը» բանաստեղծությունը:

Բարև, Բարեխոս եղիր իմ և իմ միջև, Մտառագայթային ախտ, Միայնակ զբոսանք— տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1965 թ., № 1):

Այսպես չեն սիրում, Ճամփորդություն դեպի ետ— տպագրվել են «Գրական թերթում» (1965 թ., 10 սեպտեմբերի):

Օդախան զանգի տակ, Մերանում ենք, Կարոտի տարրալուծումը— տպագրվել են «Գարուն» ամսագրում (1967 թ., № 1):

Սերունդների հերթափոխությունը— տպագրվել է «Ավանգարդ» թերթում (1967 թ., 14 դեկտեմբերի):

Շռաձայն պատարագ— Բանաստեղծի արխիվում, նրա ընկերների ու բարեկամների մոտ կան պոեմի ձեռագիր ու մեքենագիր մի քանի տարբերակներ: Դժվար է որոշել, թե որն է այս տարբերակներից վերջնականը: Ցավոք, չի պահպանվել հրատարակչություն հանձնած ձեռագիրը (մեքենագիր վերջնական օրինակը), այդ իսկ պատճառով պոեմը տպագրվում է անփոփոխ՝ այնպես, ինչպես «Նդիցի լույսում»՝ առանց գրաքննության կողմից հանված տողերը (մոտ 600 տ.) վերականգնելու:

Հատվածաբար տպագրվել է 1965 թվականից սկսած:

ՀԱՎԵԼՎԱԾ

Տողադարձված սեր— տպագրվել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում (1974 թ., № 1):

Անպաշտոն գիշերապահը— տպագրվել է «Գրական թերթում» (1972 թ., 16 հունիսի):

Մեզանից մեկը— տպագրվել է «Գրական թերթում» (1974 թ., 21 հունիսի):

Խեղճ ու խղճով, Մառերի օգնությամբ, Հազը— տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1972 թ., № 6):

Մեկի կողմից երկու կատակերգ երեք աղջկա վրա, Հավերժ ներկա-բացական, Կեսգիշերային բնակար, Անցած սերերը— տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1971 թ., № 10):

Ճամփեզրի խոտը, Լավագույնը, Հայրենիք— տպագրվել են «Գարուն» ամսագրում (1969 թ., № 2):

Ճամփեզրի խոտը— «Նդիցի լույս» գրքում դրվել է հանված «Մանկական ճոճքի» փոխարեն:

Բարի օր, Ես, որ ես չեմ, Ինձնից թե քեզնից, Ցտեսություն— տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1978 թ., № 3):

Բարով տեսանք— տպագրվել է «Գրական թերթում» (1974 թ., 8 փետրվարի) և «Սովետական Հայաստան» (1974 թ., 8 փետրվարի) թերթերում:

Մնաս բարև— տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում (1974 թ., № 2):

Խեցքը, Կորչի հինգշաբթին, Պարտքի տոկոսները— տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1974 թ., № 1):

Անահիտ— տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրում (1966 թ., № 5):

Երջանկության դափնեկիրը— տպագրվել է «Գրական թերթում» (1965 թ., 10 սեպտեմբերի):

Ձիթապտղի ծառը, Ասա «ամեն», Երջանկության նոր չափանիշ, Էլեկտրական աղետ— տպագրվել են «Գարուն» ամսագրում (1974 թ., № 1):

Եղելություն, որ լավ կլինի, եթե այդու չլինի— տպագրվել է «Նրեկոյան Երևան» օրաթերթում (1976 թ., 27 հունվարի):

Ներկա-բացակա— տպագրվել է «Արարատ» շրջանային թերթում (1972 թ., 17 հունիսի):

Ցմահ բանտարկյալը— տպագրվել է «Գրքերի աշխարհ» շաբաթաթերթում (1969 թ., 31 հունվարի):

Լուսավորության չգիտեմ ինչը— դրվել է «Նդիցի լույս» գրքից հանված «Լույսի աղբյուրը» բանաստեղծության փոխարեն:

Հավելվածում զետեղված մնացած բանաստեղծությունները առաջին անգամ տպագրվել են Պ. Սևակի Երկերի ժողովածուի 6-րդ հատորում (Երկերի ժողովածու 6 հատորով, կազմող՝ Ալ. Արիստակեսյան):

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՑԻ ԼՈՒՑՍ

Նորոթյա աղոթք	7
Առավոր լուստ	9
Լույս զվարթ	11
Ձայնիվ երկրորդ	14
Լույսի աղբյուրը	16
Վառեցեք լույսերը	18
Ծակատամարտ պատի հետ	19
Աշխարհի հին սպիները	22
Խարույկ սառույցի վրա	24
Աշխարհին մաքրություն է պետք	26
Ամպոտ եղանակ	29
Թախծի երկարությունը	32
Գիշերամուտ	35
Նամակի փոխարեն	37
Պարապություն	40

ԴԻՄԱԿՆԵՐ

Միաչքանին	46
Միոտանին	47
Հարբերցողը	48
Խեղկատակը	50
Ծաղրածուն	51
Խաղալիք սարքողը	54
Դիմակահանդեսի գլխավորը	59
Իրերի բնությունը	
Մասն Ա.	68
Մասն Բ.	65
Մասն Գ.	67

ԴԱՐՈՎԵՍԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

Դիմակների փոփոխություն	74
Դարակեսի հիմնը	77
Առաջադրանք համայն աշխարհի	84
Հիվանդություն	89
Անտարբերություն	91
Աշխարհ... աշխարհ	93

Միայ խոսք սխալի մասին	84
Կայանալիք զրոսանք	97
Մանկական ճոճք	102
Աշնանային վալս	103
Հպանցիկություն	105
Անորոշություն	106

ՈՂՋՈՒՅՆԻ ՔՄԱՅՔՆԵՐԸ

Բարև	109
Բարի լույս	112
Բարի աջողում	114
Բարի իրիկուն	118
Բարի գիշեր	119
Բարի գալուստ	121
Բարի ճանապարհ	124

ՆՈՐԻՑ ՉԵՆ ՄԻՐՈՒՄ, ՄԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

Մերը	130
Նորից չեն սիրում	132
Հագուստով ծնվածը	134
Հորիզոնական անուն	136
Սուրճի գավաթի դիմաց	138
Ավելորդ անհավատություն	140
Բարեխոս եղիր իմ և իմ միջև	141
Կարոտի տարրալուծումը	143
Աչսպես չեն սիրում	145
Դուան զանգի առաջ	147
Իրիկամուտ	149
Ազահության գիճը	151
Զգողականության նոր սահմանումը	153
Հպատակի խոսվությունը	154
Բեռան ներքո	157
Արգելանոց	159
Միամտության խաղը	161
Անսպասելի փոթորիկ	163
Գունված միավորը	165
Շամփոդդություն դեպի ետ	167
Օղահան զանգի տակ	170
Օտար սիրո այբուբենը	173
Աճնամակ ծրար	176
Դու մի հարցրու	179
Միրո փոխարեն	181
Սովորական հրաշք	183
Նյարդի թրթիռը	185

Տարսիների հանգրվանում	187
Հասարակ պահանջ	189
Փակիր աչքերդ	191
Կեղծ անցաթղթով	193
Փրկարար թվաբանություն	196
Աստծու քարտուղարը	199

ԱՍՏՇՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Բանաստեղծի ծնունդը	203
Բանաստեղծները	204
Բանաստեղծի բախտը	206
Երես ու աստուտ	208
Քաղցը քաղցկեղ	209
Մտագայթային պիտ	210
Հիմն քարանձավի	212
Մեծ ուղտի փոքրիկ ականջում	213
Խոստովանություն	215
Միայնակ գրոսանք	216
Անօգուտ փնտրտուք	218
Ծշմարիտ երգը	220
Ծարավ	221
Ծերանում եմք	223
Պահ կասկածի	225
Սերունդների հերթափոխությունը	226
Հորդոր	227
ԵՈՒԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ	229

ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

Դարվիհիզմի հերքումը	292
Տողադարձված սեր	293
Անպաշտոն գիշերապահը	295
Խիղճը և իր մարդկային դիմակը	297
Մեզանից մեկը	303
Խեղճ ու խղճով	304
Մեկի կողմից երկու կատակերգ երեք աղջկա վրա	306
Պիտի...	308
Հավերժ ներկան-բացական	309
Մամփեզրի խտը	310
Մի... Զի...	311
Մատերի շնորհակալություն	312
Հազը	314
Կեսգիշերային բնանկար	318
Բարի օր	320
Ցտեսություն	323

Բարով տեսանք	326
Մնաս բարն	328
Ինձնից, թե քեզնից	331
Անահիտ	334
Երեխայի լեզվով	336
Խեցքը	338
Երջանկության դափնեկիրը	340
Գ արնան վտանգավոր հոտը	342
Զիթնապտղի ծառը	345
Ձիթնապտղի ծառը	347
Անքնության դեղատոմս	350
Բողոքարկման հույսը	352
Կորչի հինգշաբթին	354
Բաժանություն տեղն ու տեղը	356
Անցած սերերը	358
Կակազող լույսերը	360
Ասա «ամեն»	363
Եղելություն, որ լավ կլինի, եթե այլևս չլինի	364
Անարժեքության տապկոնցում	366
Ներկա-բացակա	368
Ես, որ ես չեմ	370
Էլեկտրական աղետ	372
Երջանկության նոր չափանիշ	373
Տակմաշ իրկնակոշիկ	375
Պարտքի տոկոսները	377
Ապաստելով կեսօրվա հրամանին	379
Ընդդեմ օղաբանական կայանի	381
Անմոռացության պտուղը	383
Մեր թուլությունները	384
Օրհնություն	385
Պատրանքի պատանքը	387
Ցմահ բանտարկյալը	388
Լավագույնը	390
Լուսավորության շփոթեմ ինչը	392
Հայրենիք	393

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

393

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ

(Բանաստեղծություններ)

Խմբագիր՝ Յ. Լ. Քեժանյան
Նկարիչ և գեղ. խմբ.՝ Ա. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերատպող արքայգրիչ՝ Օ. Ղ. Քերզյան

ИБ 6863

Հանձնված է շարվածքի՝ 10.7.92 թ.: Ստորագրված է տպագրության՝
4.09.92 թ.: Յորմատ 84×108 1/32; Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակը՝
Նորթ; Տպագրություն՝ օֆսեթ: 21,0 պայմ. տպ. մամ., 21,2. պայմ. ներկ.
թերթ, 14,5 հրատ. մամ.: Տպարանակ՝ 50 000: Պատվեր՝ 323: Գինը՝ պայ-
մանագրային:

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երևան—23, Արշակունյաց
պողոտա 2: